

ՆՈՐ ՇՐՋԱՆ

III ՏԱՐԻ

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա.ՄՍԱԳԻՐ

№. 6

Յ Ո Ւ Ն Ի Ս

1903

ՀԱՅԿԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԹԻՖԼԻՍ

Արագատիպ ՄՆ. Մարտիրոսեանցի:

Գուշկինեան փողոց № 12.

1903

ԲՈՎԼԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 6

1. ՄԻՐԿԻ ՍՈՒՐԲԸ, (չար.) զէպ Ա. Ահարոնեանի	5
2. ԴՈՒ ՎԱՂ. ՅՈԳՆԵՅԻՐ. Բանաստ. Ա. Ժատուրեանի	29
3. ՎԱՆ-ՏՈՍՊ, նկարագրութիւն Դարսեցու.	30
4. ԷԼԻ ԵԿԱՆ... Բանաստ. Ա. Իսահակեանի.	38
5. ԱՆԱՏՈՂ ՅՐԱՆՍԻ ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐԻՅ, Թարգմ. Շ. Դ.	40
6. ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԵԱՆՑ, նրա գրակ. գործ. 40-ամ. աւի- թով, Մար. Յար.	48
7. ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԳՐԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ	
1) Les Affaires sont les Affaires, M. Octave Mirbeau	60
2) Joyselle, M. Maeterlinck, Ա. Ա.	67
8. ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ Հ. ԹԵՄԻ ՀԻՄՆ. ԿԱՆՈՆԱԴՐՈՒ- ԹԻՒՆԸ, յօդ. Սիրական Տիգրանեանի.	71
9. ՇԱՊԿԻ ԵՐԳԸ, Թումաս Հուլի, Թարգմ. Ա. Մ.-Ջհան- եան	83
10. ԽԱՌՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ, Ե. Փը- րանզեանի	87
11. ՇՎԷՅՍԵՐԱԿԱՆ ԳԻՒՂԸ, Կուրբալթ-Հարունի.	91
12. ԹԻՒՐԿԻԱՅԻ ՀԱՅՈՑ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԻ ԹԻՒՆ ԱՌ 1 ՅՈՒՆՈՒԱՐԻ 1903 Թ., Տ.	98
13. ՀՈՂԻ ՊԱՐԱՐՏԱՅՈՒՄԸ, յօդ. Շ.-ի	100
14. ՏԱՐԻԿԵԱՆ ՆԱՀԱՆԳԻ ՀԱՅՈՑ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵ- ՐԸ, Վ. Բաքիեանի.	107
15. ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ.— 1) Չաւիսեցի՝ «Կրակը». — 2) Յ. Խայկան՝ «Վրիժմանի շէքիմը». — 3) Աւման՝ «Արիւն». . — 4) Նեմ.-Գանչեկո՝ «Գրաշարունի», Թարգմ. — 5) Տու- ստոյ՝ «Աստուծոնէն, Թէ՛ Մամոնային», Թարգմ. — Տ. Թ. Հերցլ՝ «Հին-Նոր Երկիր», Լ. Բ.	113
16. ՎՐԱՅ ԿԵԱՆՔԻՅ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՅ, յօդ. Տ. Փի- րումեանի	125
17. ԳԱՒԱՌԱԿԱՆ ԿԵԱՆՔ, Գիֆտերիտը դաւառում, Բժ. Ա. Մ.	128
18. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.— Ռուսաց մամուլի զրուծիւնը.— Կրիպի քայլերով առաջադիմութիւն.— Մեր հասարա- կութիւնը եւ մամուլը 40 տարի առաջ եւ այժմ.— Պահանջ եւ առաջարկ.— «Արդարացուցիչ հանդամանք- ներ».— Պահանջ անողը գործ չ'ունի այդ հանդամանք-	

Նոր շրջան III տարի

Հրատ. XV տարի

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա.ՄՍԱԳԻՐ

№ 6

Յ Ո Ւ Ն Ի Ս

1903

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Արագատիպ Մն. Մարտիրոսեանցի:

Պուշկինեան փողոց № 12.

1903

Дозволено цензурою. Тифлісѣ, 25 іюля 1903 г.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 6

	Երև.
1. ՄՐՐԿԻ ՍՈՒՐԲԸ, (չար.) Վէյ Ա. Ահարոնեանի . . .	5
2. ԴՈՒ ՎՍՂ ՅՈԳՆԵՑԻՐ. բանաստ. Ալ. Ժատուրեանի	29
3. ՎԱՆ-ՏՈՍՊ, նկարագրութիւն Կարսեցու.	30
4. ԷԼԻ ԵԿԱՆ... բանաստ. Ա. Խահաղեանի.	38
5. ԱՆՍՏՈՂ ՖՐԱՆՍԻ ՊԱՏՄՈՒՄԾՔՆԵՐԻՑ, Թարգմ. Շ. Դ.	40
6. ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԵԱՆՑ, նրա գրակ. գործ. 40-ամ. տո՛ւ- թով, Մար. Յար.	48
7. ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԳՐԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ . . .	
1) Les Affaires sont les Affaires, M. Octave Mirbeau	60
2) Joyselle, M. Maeterlinck, Ա. Ա.	67
8. ԱՏՐՊԱՍԱԿԱՆԻ Հ. ԹԵՄԻ ՀԻՄՆ. ԿԱՆՈՆԱԴՐՈՒ- ԹԻՒՆԸ, յօդ. Սիրական Տիգրանեանի.	71
9. ՇԱՊԿԻ ԵՐԳԸ, Թումաս Հուդի, Թարգմ. Ա. Մ.-Զհան- եան	83
10. ԽԱՌԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ, Ե. Փը- րանգեանի	87
11. ՇՎԵՑՍԵՐԱԿԱՆ ԳԻՒՂԸ, Կուրբաթ-Հարունի.	91
12. ԹԻՒՐԳԻՍՅԻ ՀԱՅՈՑ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԻ ԹԻՒՆԸ ԱՌ 1 ՅՈՒՆՈՒԱՐԻ 1903 Թ., Տ.	98
13. ՀՈՂԻ ՊԱՐԱՐՏԱՅՈՒՄԸ, յօդ. Շ.-ի	100
14. ՏԱՒՐԻԿԵԱՆ ՆԱՀԱՆԳԻ ՀԱՅՈՑ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵ- ՐԸ, Վ. Բաքիեանի.	107
15. ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ.— 1) Զաւախեցի՝ «Կրակը».— 2) Յ. Եսայեան՝ «Լիսմանի Հէքիմը».— 3) Ասման՝ «Արիւն». — 4) Նեմ.-Գանչենկօ՝ «Գրաշարունի», Թարգմ.— 5) Տոլ- ստոյ՝ «Աստուծոն, Թէ Մամոնային», Թարգմ.— Ը. Ե. Հերցլ՝ «Հին-Նոր Երկիր», Հ. Բ.	113
16. ՎՐԱՅ ԿԵԱՆՔԻՑ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ, յօդ. Տ. Փի- րումեանի	125
17. ԳԱՒԱՌԱԿԱՆ ԿԵԱՆՔ, Գիֆտերիտը գաւառում, Բժ. Ա. Մ.	128
18. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.— Ռուսահայ մամուլի դրուժինը.— Կրիայի քայլերով առաջադիմութիւն.— Մեր հասարա- կութիւնը եւ մամուլը 40 տարի առաջ եւ այժմ.— Պահանջ եւ առաջարկ.— «Արդարացուցիչ հանգամանք- ներ».— Պահանջ անողը գործ չ'ունի այդ հանգամանք-	

ների հետ.—Պատահական գրականագէտներ եւ մամուլի
յատուկ մշակներ.—Ուսուցչութիւնը կապուած գրական
գործունէութեան հետ.—Գրական ֆոնդ եւ հոնորար.—
Մեր թեմ. դպրոցների տնտեսականը.—Նոր-Նախիջեւա-
նի թեմ. դպրոցի հոգաբ. մի որոշումը.—Ներսիս. դպր.
բիւզժէն.—Կամայական բեժիմի մի նոր արտայայտու-
թիւն մեր թեմ. դպրոցներում.—Ներսիս. դպր. տեսչա-
կան հարցը, Լ. Ս.

Աշակերտին ծեծելու համար պատժուած հայ
ուսուցիչ.—Ժողովրդական ձրի շրջիկ գրադարան-
ներ.—Առեւտրական ուս. աւարտածներին տարր ուս.
ուսուցչի վկայական յատկացնելը.—Բաթումի առանձին
շրջան.—Մարմնական պատժի ամենածանր տեսակնե-
րի վերացումը.—Կաղզուանի ոճիրը.—Թիֆլիսում ներ-
քին հիւանդութիւնների քաղաքային հիւանդանոց բա-
նալու հարցը.—Քաղաքային ուսումնարանների ուսու-
ցիչների համաժողով.—Մասնաւոր ուսումնարանների
ծրագրի հարցը.—Հայ-վրացական արձանագրութիւննե-
րի հրատարակութեան մասնաժողովը.—Հրէական հողա-
տիրութիւնը սահմանափակող նոր օրէնք.—Ազնական
կաղետեան ուսումնարաններ 136

19. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Չեմբերլենի նոր իմպերալիստա-
կան ծրագիրը.—Անգլիայի սահմանադրական ողին.—
Պարլամենտական ընտրութիւնները Գերմանիայում.—
Հակամաջառական ցոյցեր Խորվաթիայում եւ հակա-աւ-
ստրիական ցոյցեր Իտալիայում.—Բուլղարիայի եւ Թիւր-
քիայի յարաբերութիւնները.—Սերբիական յեղափոխու-
թիւնը.—Երկրաշարժը Թիւրքաց Հայաստանում, Լ. Ս. 150

20. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ 160

21. ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ 166

22. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ 167

23. ՅԱԻԵԼՈՒԱԾ, Ա. Ըօլլէսի՝ Հրաչալի դար, Թարգմ.
Ստ. Լիսիցեանի 97—128.

ՄՐՐԿԻ ՍՈՒՐԲԸ*)

XVIII

Կատաղի փոթորիկը ոռնում էր. շղթայազերծ եղած հողմերը ահաւոր մռմռոցով լցրել էին ողջ բնութիւնը: Մութ երկնքում կայծակը ճայթում էր անընդհատ. նրա վայրկենական փայլի տակ լեռներն ու դաշտերն ասես սարսռում, դողում էին երկնքի բոցերի հետ և կրկին ծածկւում թանձր խաւարի մէջ: Սև ամպերն իրար յետևից ճարճատում ու որոտում էին լճի վրայ, թւում էր, թէ Սինակայ լեռները մրկիով տեղահան եղած՝ տարւում են երկնքի երեսից, զարկւում են իրար, և շուտով վար կը թափուեն՝ իրանց հսկայական զանգուածի տակ կեանք և կենդանութիւն ճխելու, ոչնչացնելու համար: Լիճը ալեկոծ ու որոտալի, թափ առած՝ փախչում էր իր ափերից, ուր էլ հանգիստ չունէր, և ալիքներն իրար անողորմաբար տրորող, կոխկռտող գաղանների պէս ձգւում էին հեռու, հեռու, զարկւում էին ժայռերին ողբ ու հեծեծանքով, կամ իրարից կախկիտւած՝ կարծես փորձում էին լեռն ի վեր բարձրանալ, ապա յետ էին ընկնում խլացուցիչ աղմուկով, եռում, փրփրում, կըրծոտում իրար: Հողմածեծ անձրևը թափւում էր անընդհատ, մթութեան մէջ լսւում էր ջրային յորդ կաթիլ-

*) Տես «Մուրճ» № 5:

ների շրփոցը, որ խառնուում էր քամիների մոմոցի, ալիքների գոռոցի, ամպերի սրտախ հետ՝ կազմելով բնութեան կրճքից դուրս պոռթկացող մի անհասկանալի, մի խեղդող մունչիւն։ Կղզու սե զանգուածի տեղ կայծակի վայրը երբեմն-երբեմն ցոյց էր տալիս միայն վրփուրի մի ահագին դէպ. այնտեղ ալիքների կոխէն աւելի կատաղի էր, կարծես նրանք դժգոհ էին, որ իրանց անօրինակ տագնապին ու ցաւին վկայ է այդ փոքրիկ ցամաքը, և աշխատում էին քանդել, թաղել նրան իրանց անդունդներում։ Բնութիւնը հեծում էր երկունքով բռնուած, և երկինքը ժամառժամ իջնում, կախում էր երկրի վրայ իր բոլոր ծանրութեամբ։

Այս բոլորը սակայն այն մենաւոր մարդը կարծես չէր զգում, չէր տեսնում, մի անօրինակ, սե զանգուած թիկունքին, մեծ դժուարութեամբ, սայթաքելով, անքաշով, մոմաւով նա քայլում էր լճի ափինն ու արահատօք երբ ալիքներն իրար հրհրելով սղմում էին դէպի ափը, իրանց ցնցուղներով ծածկում մենակ ուղեորին՝ ասես ներս քաշելու համար, նա կանգ էր առնում մի վայրկեան, ապա ջրերից աղատուած՝ քայլում էր կրկին միևնոյն ճանապարհով, միևնոյն բռնը մէջքին։ Քամին նեղում էր, անձրեւը ծեծում, բայց նա խաթնափելով, օրօրուելով քայլում էր հնա քայլում։

— Ահ, զու՛ղւմ գիշեր է, զու՛ղւմ, մոմում էր նա՝ թիկունքի բռնը վար ձգելով։

Հեռու հարթավայրի վրայ թանձր խաւարի միջից մի նուազ, գունատ լոյս էր փայլելում. մարդը միայն այն կողմն էր նայում, դէպի այն ոլլալան ճրագն էր գնում։ Այնտեղ է Գոպէի ջրաղացը, այդ նրա ջրաղացի լոյսն էր, կենդանութեան միակ նշանը համատարած սարսափի ու մթնութեան մէջ։

Գոպէն կոյս-Գուլէին ճանապարհ դնելուց յետոյ արեւմուտքի չարագուշակ ամպին մէկ էլ նայեց, դանդաղութեամբ անցաւ ջրաղացի յետեւը, բարձրացաւ ամբարդակի վրայ, ուշադրութեամբ դիտեց նաւը, առաջը

հաւաքուած ճիւղերն ու տերւները յետ քաշեց, ապա զնաց մինչև սաւաղը, մի փոքր լայնացրեց ու յետ եկաւ, ներս մտաւ ջրաղաց, գուռը կողպեց: Արդէն մութ էր, ճրագը վառեց, նստեց իր անկիւնում ու սկսեց ընթերիւքը: Ծեր տառաճերով մերթ ծամում էր, մերթ բերանաբաց, անշարժ ականջ էր դնում գրսի ձայներին: Բուն լուել էր այն երեկոյ, բայց նրա փոխարէն քամին վզվզում էր ջրաղացի պատերի բացուածքներից, ուռիները հեծեծում էին, իսկ ջրատունի տակ փառի աղմուկն աւելի խլացուցիչ էր դառնում:

Գարձեալ մի չար, մի վատ գիշեր էր. ծերունին հաւաքեց իր հացը, հին թաշկինակի մէջ կապեց և դրեց դարակում, ուտել չէր լինում. իր սովորականի համեմատ աչքը քարին ու չախչախին յառած՝ լուռ մտածում էր: Գուլէի տխուր, հոյակապ պատկերը, երեկոյեան լոյսերի մէջ լողացող այն հրաշալի դէմքը, նրա ձեռքի հանդիսաւոր շարժումը դեռ Գուլէի աչքի առաջն էր:

«Նա կը գայ. նա կը գայ... այն Մրրկի սուրբը»... դեռ հնչում էին Գուլէի ականջում: «Հա, հա, մտածում էր ծերունին, նա կը գայ, ես էլ եմ հաւատում, ըզոր մրրիկների ժամանակ ամպերը նրա ստների տակից չքանում են, և քամիները լուռ. բայց թող նա գայ այն միւս մրրկի համար, այն, որից հայփրիստոսնեան դողում է օր ցերեկով, պարզ ու պայծառ երկընքի տակ, անմեղ, անարգար տեղը»:

«Նա կը գայ... նա կը գայ»...

Եւ կատաղի փոթորիկը մոնչում էր դրսում, և ուռիները հեծեծում էին ու լալիս, և խաւարը թանձրանում էր, չընկալքը խեղդւում, մեռնում էր, մէկ Գուլէն էր կենդանի, մէկ նրա ճրագն էր դեռ պղպղում համատարած, հողահան մթութեան մէջ:

«Նա կը գայ... նա կը գայ»...

Թըրը՛խի, թըրը՛խի:

Գուլէն նստած տեղում ցնցուեց. ջրաղացի գուռն էր:

Թըրը՛խի, թըրը՛խի.— ծերունին գունատուեց ու ոտքի

Թուաւ, բայց մնաց իր տեղում կանգնած՝ ինչ անելը չիմանալով, բայց գուցէ քամին էր, գուցէ...

Թրըխկ, թրըխկ, այս անգամ աւելի թափով, աւելի երկար։ Կասկած չը կար, քամին լինել չէր կարող։ Գուցէ մի ուշացած ճամբորդ, փոթորկի տակ մնացած մի թշուառ, չէ որ այդ շատ է պատահել, ինչ կայ անօրինակ, ինչ կայ վախճանալու։ Գսպէն կամացուկ մօտեցաւ դրանք և կանգ առաւ՝ շունչը բռնած։

— Ո՞վ է։

— Զուլումն է, զուլումը, Գսպէ ամի, բնց դուռը։

— Ապրօ։

— Բնց, բնց, սաղ աշխարհը քանդուել, վաղում է դէպի գերեզմանատուն, փոս են փնտրում ծածկուելու համար։

Գուռը բացուեց. Ապրօն ներս ընկաւ հեւալով, տընքալով, քրտինքի մէջ կորած և ձգեց յատակի վրայ մի դիակ, մի կիսամեռ մարդ։ Գսպէն յետ փախաւ սարսափած։

— Տունդ քանդուի՞, Ապրօ, էս ինչ է, ո՞վ է։

— Մի փախիր, Գսպէ ամի, ստի վրայ չըջող մեռելներինց մէկն է սա, որ այժմ ընկած է հոգեւարք, մինչև այստեղ ջուր էր, շարունակեց Ապրօն՝ ցոյց տալով իր կոկորդը, դարձել էր տիկ, թափ եմ տուել, էլ ջուր չը կայ մէջը, բայց հալը հալ չի. արադ ունիս, փէտացել է, տես, շուտ արա, ծերոց գաւաղան կ'ունենաս դու, Գըսպէ ամի։

— Կայ, կայ։

Գսպէն քանդեց անկիւնները, մի փոքրիկ չիչ դուրս քաշեց սպիտակ հեղուկով, ճրագն առաւ, մօտ եկաւ, նայեց։

— Տօ, էս Նաւօն է, տնաքանդ, ինչի՞ չես ասում։

— Սոս, սոս, ժամանակը չի խօսելու, շորերը քանդի։

Երկսով արագ-արագ քանդեցին Նաւօի թաց շորերը, դուրս քաշեցին վրայից և սկսեցին մարմինը չփել օղիով։

—Ապրօ, ախպէր, ախր դու էլ ես թրջուած, դու զուժ ես:

—Սուս, սո՛ւս, ժամանակը չի, չփիր, զուլումը որ եկաւ, մենակ չի գայ, ընկերով կը գայ. չար գիշեր է, դե՞ էր, թէ՞ աղջիկ, ես ի՞նչ գիտեմ, վազում էր, աներևոյթ եղաւ, գուցէ իր գերեզմանը գտաւ, իսկ ես նրա յետեւից գնացի, սրան գտայ, լիճը կուշտ էր երևի, նաւակը կուլ տուեց, բայց սրան փսխեց, նաւօն մարտուող պտուղ չի, այդ նա լաւ գիտէր: Ո՞վ գիտէ, դեռ ի՞նչ է լինելու:

Գսպէն շփում էր և շատ բան չը հասկացաւ Ապրօի տարօրինակ պատմութիւնից, բացի այն, որ նաւօի նաւակը խորտակուել է, բայց նա ազատուել է:

—Գսպէ ամի, զուլում գիշեր է, մեռելների ու գեւերի գիշեր, սուրբն էլ է փախել:

—Ի՞նչ ես ասում, Ապրօ, Աստծու դէմ ես խօսում:

—Տնայէն, չար գիշերին Աստուած իր սիրածին դուրս չի թողնի, սուրբը խօս նրա սիրելին է: Երկնքից աղամորդու գլխին կրակ է մաղում, բաց աչք չը կայ դրսում: Ապրօն, դէ, Ապրօի բանն ուրիշ է, նա անիծուած է ծննդի օրից, երկինքն է անիծել նրան դեռ մօր արգանդի մէջ. որտեղ զուլում է, Ապրօն այնտեղ է, որտեղ խաւար է, նա մէջն է, որտեղ բեռ կայ, նրա մէջքին է, որտեղ ցաւ կայ, նա իր բաժինն ունի: Քամիներն ինչքան են ծեծել ողորմելի գլխիս, ես ու մրրիկը եղբայր ենք և գերեզմանների լեզուն գիտենք: Տես, այս գիշեր իմ անիծուած գլուխը փոթորկի, քամու, անձրևի տակն էր: Կենդանի մեռելները կծկուած են իրանց բներում, այս մէկն էր չլկել, դուրսը մնացել, այն էլ բերեցի: Ամպերը սարսափելի են, իջան, իջան, խեղդում են երկիրը, սուրբը փախել է, Մրրկի, սուրբը զօրաւոր սուրբը, կենդանի մեռելների բարեկամը... փախել է:

—Նա կը գայ... նա կը գայ...

—Շփիր, շփիր, տես, սա էլ էր ասում «նա կը գայ»... բայց նա չեկաւ, ես եկայ, այս ողորմելու սուրբը հիմայ

ես ու գու ենք. թէ փրկութիւն ունի, մեր ձեռքին է, մեր զօրութեան մէջն է, շփեմք, շփեմք, Գապէ ամի, այսօր ես ու գու զօրաւոր սուրբ եմք, շատ զօրաւոր, թող զարթնի, սա էլ կ'ասի:

— Մեղոյ Բեզ, Աստուած, մեղոյ Բեզ:

Նրանք խօսում էին և տրորում Նաւօի սառած մարմինը. ձկնորսը կամաց-կամաց ուշքի էր գալիս. նրա շնչառութիւնը հետզհետէ զօրանում էր, անդամները ցնցւում, իրար գալիս, գունատ գէմքը կարմրում, և փակուած աչքերը բացւում, խփւում էին:

— Նաւօ, այ Նաւօ, կանչում էր Ապրօն:

Նա աչքերը բացեց, նայեց մի վայրկեան առանց բան հասկանալու, ապա կրկին ծածկեց. թմրութեան նման մի քուն էր, որի մէջ ընկաւ նրա թուլացած, ուժասպառ մարմինը: Գապէն ծածկեց նրան իր լայն մաշկէ աբայով, յետոյ տարաւ, չորացրեց շորերը թոնրի վրայ: Քիչ յետոյ ձկնորսը շորերը հագած՝ նստած էր, ապուշ-ապուշ նայում էր չորս կողմը և կարծես ոչինչ չէր հասկանում: Գապէն ու Ապրօն նրա առաջը կանգնած՝ նայում էին:

— Ես ձրտեղ եմ:

— Գապէի ջրաղացում, ախպէր Նաւօ, պատասխանեց Ապրօն:

— Երանգ է:

— Ձէ, զուլում էր, անցաւ, բան ուտել կ'ուզէս:

— Ո՞վ բերեց ինձ այստեղ:

— Մըրկի սուրբը, իջաւ, վերցրեց ու բերեց:

— Նաւօ ձւր է. նա կամաց-կամաց յիշում էր իր հետ պատահածը:

— Սուրբը տարաւ:

— Ապրօ:

— Հա՛, ես եմ, հանգիստ կաց, պառկիր, ախպէր Նաւօ:

— Ո՞վ է նա, միւսը:

— Ձե՛ս ճանաչում, Գապէն է, նրա ջրաղացն է այս:

— Գսպէն, Գսպէն:

— Հա՛, ես եմ, ախպէր Նաւօ:

— Էլի պատահեցինք, էլի, էլի: Իրերը պարզուեցին Նաւօի համար, նա այժմ լաւ հասկանում էր բոլորն, ինչ կատարուել է, հասկանում էր, որ Ապրօն է բերել իրան այստեղ ուշաթափ: Եւ նա դժգոհ էր, որ գըտնում է իր սխերիմ թշնամու, հին օրերի թշնամու բընակարանում: Խստասիրտ, քինախնդիր ձկնորսը կամաց-կամաց զարթնում էր: Նա դեռ երբէք այս ջրաղացը ոտք կոխած չէր, ուխտել էր երբէք ոտք չը կոխել, մանաւանդ որ վերջին ժամանակները նա խմացել էր, թէ Ասօն միշտ Գսպէի ջրաղացումն է, նրանք միշտ միասին են, գիշեր թէ ցերեկ: Նա հաւատացած էր, որ իր աղջըկայ դժբաղդութեան մէջ էլ Գսպէն մաս ունի, որ Ասօն նրան է լսում: Թէ ինչ պիտի ասած լինէր Գսպէն, և Ասօն ինչո՞ւ պէտք է նրա խորհրդին հետեւէր, այդ չէր քննում Նաւօն: Նա գիտէր միայն, որ այդ ատելի շէնքի մէջ, այս անիծուած ջրաղացում նրանք միշտ միասին են. այսքանը բոլորովին բաւական էր, որ երկըստով էլ իր համար թշնամի դառնան, և այս ջրաղացը՝ դժբաղդութեան բուն:

— Ապրօ, լաւ չարիք, լաւ չարիք, կրկնեց Նաւօն, գլուխը քաշ ձգեց կրծքին և մնաց մտախոհ:

Լուսաբաց էր, և փոթորիկը դադարում էր: Լուսոյ ցնցուղները փայլեցին արեւելքում. ամպերը պատառ-պատառ ցրիւ եկան երկնքում, ջրաղացի յետևում ուռիների վրայ թռչունների առաջին ձայները լսուեցին: Նաւօն դեռ շարունակում էր գլուխը քաշ մնալ, լուռ, անշարժ: Նա ոչինչ չէր ասում, բայց երևում էր, ծանր մտքերով էր պաշարուած: Իր սարսափելի արկածի մանր-րամասնութիւններից մէկը, ամենից անհասկանալին, ամենից խորհրդաւորը նրան սաստիկ զբաղեցնում էր, և նա ամեն բան մոռացած, անգամ Գսպէի և Ապրօի ներկայութիւնը, աշխատում էր ճշտութեամբ մտաբերել ալիքների մէջ իր մըած անօրինակ պայքարը այն զարմա-

նալի էակի հետ: Ո՞վ էր, ի՞նչ էր այն: Փոթորիկ էր, նա մենակ ջրերի վրայ, առադաստը պատառ-պատառ ընկաւ, ղեկը կորաւ, նա տարւում էր դէպի հաստատ մահ, դէպի ջրվեժը, որի բերանը գաղանի երախի պէս բացուած՝ քաշում էր նրան ալիքների հետ: Նա դիմադրել՝ իհարկէ՝ չէր կարող, երկնքի ու ջրերի մէջ նա մենակ էր կախուած, եթէ չը նետուէր ալիքների մէջ, նաւի հետ կը կորչէր ջրվեժի տակ: Նա յիշում էր, թէ ինչպէս սկզբում մօտեցաւ ավին, ինչպէս յետոյ արեւմտեան հողմը նրան յետ մղեց և քեց դէպի լճի խորքը, ապա դէպի հակառակ ծայրը, ինչպէս նա փորձեց թիավարելով ազատուել առադաստի ընկնելուց յետոյ, ինչպէս ապա ջրի մէջ նետուեց: Այս բոլորը նա լաւ յիշում էր, այս բոլորը հասկանալի, բնական էին փոթորիկի ժամանակ: Բայց այն, ինչ նա գտաւ ալիքների մէջ, որ փաթաթւում էր, բռնում էր նրան, ով էր, ի՞նչ էր, մարդ, թէ՛ մի հրէշ, ջրային կենդանի, թէ՛ մի ոգի: Ահա այս էր, որ նա նոյնպէս մտաբերում էր, բայց հասկանալ չէր կարողանում: Այդ պայքարից զգացած սարսափըն այնքան մեծ էր, որ այժմ, երբ կամաց-կամաց ուշքի էր գալիս, նա նորից վախենում էր, նորից սարսուռում ու կծկում: Եւ քանի մտածում էր այդ մասին, դէպքի միւս մանրամասնութիւնները մաշւում, չքանում էին նրա գլխից, մնում էր միայն ինքը՝ նաւօն այն հըրէշի հետ՝ իրար խեղդոտելիս փրփրած ալիքների մէջ և կրկին մոռանում էր իր ուր լինելը, ինչ լինելը:

Գտպէն ջրաղացի դուռը բացեց. անձրեւից թարմացած գաշտային սառն օդը լայն հոսանքներով ներս թափանցեց, ջրաղացի փոշոտ մթնոլորտը փոխուեց. նաւօն ցնցուեց և գլուխը բարձրացրեց:

— Ապրօ, գիշերը դու ինչո՞ւ եիր այնտեղ:

— Ես ի՞նչ գիտեմ... ես երբէք չեմ իմանում, թէ ինչու որեւէ տեղ եմ լինում: այնպէս պատահում է. շատ անգամ չեմ ուզում, բայց գնում եմ. դէ, այդպէս է, անպէր, մարդու կեանքը անհասկանալի դէպքերի շարք

է. ինքդ էլ՝ իհարկէ՝ չէիր ուզի այժմ այստեղ լինել, այլ քո տանը, բայց տես, նստած ես Գապէի ջրաղացում:

Նաւօն յոյս ունէր մի բան հասկանալ Ապրօի պատասխանից, լուսոյ մի շող ձգել իր հոգին տանջող այն մութ առեղծուածի վրայ, բայց այդ տարօրինակ մարդը երբէք որոշ պատասխան չէր տալիս, նրա հետ խօսելիս՝ ամենքը գլուխները կորցնում էին: Յուսահատուած լուեց, գլուխը կրկին քաշ ձգեց, այժմ նրա մըտքերն անկերպարանք ընդունեցին. նա յիշեց կնոջը, յիշեց Շողերին, ամբողջ գիշերն անշուշտ նրան սպասել են, սարսափելի գիշեր և՛ նրանց համար: Կինն այնքան էլ նրա փոյթը չէր, նա երբէք քնքոյշ չէր եղել գէպի իր ամուսինը, բայց աղջկը, այն գոթազգ, յուսահատ աղջկը, «խեղճ Շողեր», միմիջաց նա, «խեղճ Շողեր»:

—Գիւղից բազմութիւն է գալիս, ասաց Գապէն՝ ներս գալով, շատ են:

—Քո հաւարին են գալիս, ախպէր Նաւօ, գնում են դիակդ փնտրելու, բայց լուացողի պէտք չի լինի, հըը... Թէ թաղելու լինինք, լաւ լուացուած ես:

Արդարեւ գիւղը քանդուած՝ գալիս էր, համոզուած էին, որ ձկնորսը խեղդուել է. գնում էին գէպի լիճը՝ ավերի վրայ դիակը փնտրելու. բայց այդ չէր բոլորը, Շողերն էլ չը կար նախընթաց երեկոյից:

Բազմութեան առջևից համարեա վազում էր Գիւլնազը, գլխակապը քանդուած, շորերը թաց, տանջուած գէմքը գունատ, ծնկներին խփելով, գլխին տալով, որպէս մի դիւահար, որ փախչում է դաշտերում առանց նպատակի: Ողջ գիշերը նա այդպէս թափառել էր գիւղի փողոցներում, անձրևի, քամու առաջ, ողջ գիշերը յուսահատ կանչել էր ամուսնուն և միակ զաւակին: Այժմ նրան հետևում էին հարեանները:

—Վերկաց, Նաւօ, էլ նազ մի արա, խեղճ է կնիկդ, տես, ի՞նչ հալի է, ցեխերի միջից գլխին տալով գալիս է, վերկաց, դուրս արի, թող սիրտը հանգստանայ: Եւ նա բռնեց Նաւօի երկու թևերի տակից, վեր բարձր-

րացրեց, նրանք կամացուկ դուրս եկան ջրաղացի դուռը:

—Նաւօն, Նաւօն, ճշաց բաղմութիւնը միաձայն՝ տեսներով ձկնորսին: Եւ ամենքը հաւատացին, որ նա փոթորկից խոյս տուել, ստիպուած ջրաղացումն է անցկացրել գիշերը: Ամուսնուն տեսներով՝ Գիւլնազը կարծես մի քիչ ոյժ առաւ, նա այժմ գոնէ մենակ չէր, անտէր չէր, աւելի թափով առաջացաւ, հեկեկալով կախուեց Նաւօի ուսերից:

—Մարդ, տո՛ւնդ աւերուի, գիշերն էստեղ ես եղել, հէջ չես ասում Շողերն ո՛ր է...

—Շողերը... Շողերը... Նաւօն ցնցուեց, դողաց կանդնած տեղում ու աչքերը չուեց սարսափած:

—Երեկ իրիկուանից չը կայ, սև գիշերուան մէջ կորաւ բալաս, ախ...

—Ապրօ, Շողերը, դու տեսա՛ր, չե՞ս տեսել, դարձաւ Նաւօն դէպի Ապրօն, որ նոյնպէս քարացած մնաց: Այս երկու մարդն իրարից անկախ մտածում էին իրանց տեսածների մասին, մտածում էին և սարսափում:

Ապրօն լուռ էր. բաղմութիւնն սպասում էր: Նա յիշում էր, որ հետևեց այն աղջկան, ուզում էր բռնել, յետ բերել, կամ իմանալ, թէ ուր է գնում մենակ այն չար ժամին, բայց աղջիկը կորաւ նրա վրայ լճի ափին, Ապրօն դուր աշխատեց իմանալ, թէ ինչ եղաւ: Ապրօն այն ժամանակ հեռուից կիսախաւարի մէջ նշմարեց ձկնորսի նաւակը, հասկացաւ նրան սպառնացող անխուսափելի վտանգը և լճի ափերին սպասեց, վազեց Նաւակի հետ, և գտաւ կիսամեռ Նաւօին ու փրկեց: Մի՛թէ այն աղջիկը Շողերն էր, ո՛ր գնաց, ինչո՞ւ, Ապրօն ասել չէր կարող և լռում էր:

—Գսպէ, Շողերը, դարձաւ Նաւօն դէպի ծերունին. տարիներից յետոյ՝ առաջին անգամն էր, որ նա երես առ երես խօսք էր ուղղում իր հակառակորդին, վիշտը ընկճում էր խոտասիրտ ձկնորսին: Շշկլած Գսպէն աչքերը թարթեց երեխայի պէս, նայեց չորս կողմը՝ ասես Շողերին փնտրելով, չրթունքները դողդողացին մի վայր-

կեան, ապա նայեց բազմութեանը, նայեց այս յուսակը-
տուր ծնողներին: Եւ այդ հայեացքը, նրա ամբողջ դէմ-
քը այդ վայրկենին այնքան խղճալի, այնպէս ողորմելի
էին, որ կարծես ծերունին ներողութիւն էր խնդրում
բազմութիւնից, որ ինքը չի տեսել Շողերին, ոչինչ չը
գիտէ, չի կարող այս ցաւին ճար անել:

Կրկին տիրեց մի քար լռութիւն, որ խանգարում
էր միայն Գիւլնաղի հեծկտանքներով: Շուարած գլուխ-
ներէից վեր կարծես աներևոյթ կերպով սառառնում էր
մահը, ամենքն զգում էին նրա շունչը, որի սառնութիւնը
թափանցում էր բոլոր հոգիների խորքը, սառսոեցնում
էր մարմինները, անորոշ անհանգստութեան, ցաւի ար-
տայայտութիւն տալիս աչքերին, բայց և այնպէս ոչ ոք
չէր խոստովանում իր միտքը, ոչ մէկը միւսին չէր բաց
անում իր գաղտնի զգացմունքը: Առանց դադարի՝ յու-
ղարկաւորներ էին սակայն և լուռ էին: Եւ այդ լռու-
թիւնը խեղդում էր ամենքին: Մի խօսք, մի ձայն, մի
նոր կարծիք, մի դէպք գտնէ, որ այս կացութիւնը փո-
խէր, այս էին մտածում ամենքը և սպասում էին՝ իրար
նայելով: Եւ այդ դէպքը յայտնուեց. ջրաղացը յանկարծ
լռեց, քարը կանգ առաւ, չախչալը պապանձուեց:

— Ի՞նչ պատահեց:

Գսպէն առաջինը նկատեց այդ և կամացուկ գնաց
ջրաղացի յետեւը, բայց մի վայրկեան յետոյ գունատուած
յետ եկաւ, Ապրօի թեւը քաշեց, երկսով դնացին, մինչ-
դեռ բազմութեան մի մասը գիմում էր դէպի լիճը,
միւս մասը դէպի դաշտերը, իսկ ոմանք էլ շուարած, ինչ
անելները չ'իմանալով՝ կանգնած մնացել էին իրանց
տեղում անշարժ ու մտամոլոր:

— Նայիր, ասաց Գսպէն Ապրօի թեւից քաշելով:

— Օ՛, զուլում, զուլում բան է, ճշաց Ապրօն այնպիսի
ձայնով, որ ամենքը վազեցին դէպի ջրաղացի յետեւը և
սասանուած մնացին. Շողերը փռուած էր ջրերի վրայ
և իր մարմնի լայնութեամբ փակել էր նաւի անցքը,
որից և ջրաղացը կանգ առաւ: Երկայն, սև մազերի մի

րած և հեկեկանքի փոխարէն իրար յաջորդող անընդհատ աղետարշ տնքոցներ։ Այդ լռակեաց, մռայլ, խստադէմ ծերունին, որի արցունքը դեռ ոչ ոք չէր տեսել, իր սըգի, իր ահագին վշտի մէջ սոսկալի էր։ Տարիներ շաշունակ զսպուած ու հպարտ, երբեք թուլասիրտ, վախկոտ ու փոքրոգի, ծեր ձկնորսը մի հինաւորց կաշնու պէս, որ ընկնում է անօրինակ փոթորկի տակ ահագին շաւաշով, այժմ ընկճուած, փշուած էր. տեսարանը վեհօրէն սոսկալի էր։ Բազմութիւնն այժմ ամեն ինչ մոռացած՝ նայուած էր միայն այս անօրինակ սուգին, և ամենքի հայեացքի մէջ մերձաւորի փակ հոգին բաց տեսնելու սոսկումի հաճոյքն էր փայլում։ Իսկ Նաւօն փռում էր ամենքի առաջ իր տանջուած հոգին, ասես ուխտել էր ցոյց տալ աշխարհին, որ իր մռայլ արտաքինի տակ նոյնպէս ծածկուած կայ մի մարդկային զգայուն սիրտ, որ այժմ իր լացի հետ կարծես մասմաս դուրս էր թափւում։

Նա դալարւում էր աղջկայ դիակի վրայ, երեսը տրորում էր նրա մարմինը ծածկող խոտերի ու մամուռների մէջ, գոյ պէս ջղայնօրէն հոտոտում, համբուրում, կրծոտում էր սև ու երկայն հիւսերը և կամ ցաւից ու զայրոյթից եղունգներով չանգւում էր գետինը՝ կարծես իր մեռած զաւակի հետ միասին թաղուելու համար։ Բազմութիւնից ոչ ոք չէր համարձակւում մօտենալ, բարձրացնել Նաւօն, վերցնել դիակը, չըջան էին կազմել, և սուգը շարունակւում էր։ Յանկարծ յետին շարքերն իրար անցան, փսիսացին, կենդանի պատը պատառուեց, բացուեց մի ճանապարհ, և այնտեղ յայտնուեց Գուէն։ Հանդիսաւոր ու խաղաղ նա առաջացաւ աջ ու ձախ նայելով, մօտեցաւ դիակին, կանգ առաւ Նաւօնի առաջ, նայեց նրան իր վշտոտ, գլոտ հայեացքով, ապա ծունկ չոքեց, կռացաւ մեռած աղջկայ վրայ, մնաց մի փոքր այնպէս, երբ գլուխը բարձրացրեց, երկու կաթիլ արցունք կախուած էին նրա թերթերունքներից, միայն երկն կաթիլ, աշխարհի համար լացողը մի

գժբազդի վրայ թափելու այնքան արցունք հաղիւ էր պահել:

—Վերցրէք, դարձաւ նա գիւղացիներին: Նաւօն լուռ նայում էր, գիտիլը վերցրին առաջ ընկան, մի երկու հոգի Նաւօն բարձրացրին թեւերի տակից, և բազմութիւնը շարժուեց: Կամուրջի վրայ վշտից կիսախեղաւ դար ձկնորսը յետ դարձաւ, բռունցքը բարձրացրեց օդի մէջ դէպի ջրաղացը:

—Անէծքի բուն, վերան դառնաս, վերան, ինչպէս իմ կուրծքն է: Ձկնորսի շփոթուած գլխում ջրաղացը, Գոպէն, Ասօն, Շոյերի մահն իրար էին խառնուել, իրար հետ կապուել այնպէս, որ էլ նա զատել չէր կարողանում մէկը միւսից, նա սպառնում էր քինոտ ու զարհուրելի: Նա էլ չէր հեկեկում, չէր լալիս, լուռ էր և յանկարծ բարձրաձայն քրքջաց մահասարսուռ ծիծաղով, յուզարկաւորների մարմնով սարսուռ անցաւ: Ամենքը կանգ առան, յետ նայեցին, իսկ Նաւօն շարունակում էր իր քրքիջը և քայլում «վերան, վերան» դռնելով:

Գոպէն կանգնած նայում էր հեռացող յուզարկաւորներին, որ եկան, իր ջրաղացից մահը շալակեցին, դժնացին, նայում էր ցաւից խեղքը կորցրած ծեր ձկնորսին, որի սպանիչ ծիծաղը դեռ հնչում էր դաշտերի մէջ չոր ու անողորմ: և երբ բաւական հեռացան, նստեց իր թմբի վրայ, ծեր գլուխը ձեռքերի մէջ առաւ ու բարձրաձայն հեկեկաց: Արցունքը թափւում էր խորշոմած այտերի վրայով, թրջում էր ալեգարդ միրուքը, կուրծքը, և նրա հեծկլտանքները յուսահատ ու խեղճ՝ կորչում էին շրջակայքի ամայութեան մէջ, որպէս անապատում մոլորուած մի գժբազդի օդնութեան աղաղակները: Ինքը Գոպէն նոյնպէս մի մոլորուած չէր կեանքի մեծ անապատում, ուր միայն ցաւեր ու սևեր տեսաւ: Ինչո՞ւ համար այս զարհուրելի զուգադիպութիւնը, ինչո՞ւ համար նրա երիտասարդութիւնն ու ծերութիւնը այսպէս նմանում, կապւում են իրար երկու մահերով: Եւ ձրկ-

նորսը նրան էր սպառնում, զուցէ և բազմութիւնը նրան էր անխիժում: Ինչո՞ւ, իր ո՞ր յանցանքի համար:

—Ներքի, Տէր, միմնջում էին նրա շրթունքները, խնայիր այս իմ ալիքներին, իմ ծեր օրերին, թո՛ղ որ զոնէ այսուհետեւ թեթեւ խղճով աչքերս փակեմ, որ զոնէ գերեզմանի մէջ հանգիստ գտնեմ: Թէ յանցաւոր, մեղաւոր եմ, այսքանն էլ բաւական չէր Քո ողորմութեանն արժանանալու, չէ՞ Դու գթած, երկայնամիտ, ողորմած հո: Մենակ եմ, Տէր, Դու այդպէս կամեցար, Քեզնից բացի ոչ ոք չ'ունիմ, իմ անտէրութիւնը, իմ ծերութիւնը խնայիր: Եւ մեղաւոր ու վշտացած ծերունին աղօթում էր երկար-երկար, և արցունքը թափւում էր անընդհատ, սիրտը թեթեւանում էր: Ապա նա յիշեց Աստի, նրա առաջին խոստովանութիւնը, իր տուած խորհուրդը... «և Նաւօն ինձ էր անխիժում», մտածեց նա, և շրթունքները ցաւոտ ժպիտ ձեւացրին: «Ասօ, Ասօ, այս ինչ արիր», միմնջաց ծերունին, կասեա՛ս նա իր առաջը կանգնած լինէր: Ո՞ւր էր Ասօն, ծերունին այդչը գիտէր:

—Տէր, Դու խնայիր նրան, ամենքին, ազատիր զուլումից, ցաւից, Տէր:

XIX

Լիճը եզերող լեռների կատարները կամաց-կամաց ծածկւում էին ձիւնով, և վրանաքնակ թափառականները իրանց հօտերով ցած էին դալիս դէպի հարթավայրերը: Նրանց հետ միասին ցատումը մօտենում էր, չէն գիւղերը կծկւում ու դողում էին: Ինչպէս Սինակայ սարերի կրճքերից դէպի լիճը գլորւող վտակներն ու աղբիւրներն իրանց մօր ճակատը կնճռում էին, այնպէս էլ շրջակայքից հասնող լուրերը սեւ ագռաւների երամանների պէս ծանրանում էին գիւղերի վրայ և խորշոմներով պոտում անհոգ դէմքերը: Ոչ ոք չէր կարող ասել, թէ ինչ, բայց ամենքը, համողւած էին, որ մի բան է

մօտենում հանդարտ, բայց հաստատ, անողորմ քայլերով:

Մէկ Նաւօն էր անհոգ, մէկ նրա փոյթը չէր: Աղջկայ այնքան եղերական մահից յետոյ նա խալառ լռեց, անգամ կինը այլևս նրա ձայնը չէր լսում: Հին նաւակի տեղ նորը ձեռք բերեց, հին առագաստի տեղ նորը պատրաստեց և առաջուայ պէս ամեն օր դնում էր լիճը վաղ առաւօտից, երբ դեռ գիւլի փողոցներում մութ էր, և նրան ոչ ոք տեսնել չէր կարող, նստում էր նաւակի մէջ և բաց անում առագաստը: Ոչ ոք չը գիտէր, թէ նա երբ է յայտնւում լճի վրայ և երբ վերադառնում: Սկզբում կարծում էին, թէ Նաւօն վերսկսել է իր պարապմունքը, որ նա կամաց-կամաց մոռանում է աղջկայ մահը, բայց յետոյ պարզուեց ուրիշ բան: Նաւօն այն մարդկանցից մէկն էր, որոնք ապրում են միայն ներսից, ծածուկ և խորապէս, այն հոգիներից մէկը, որոնք նման են հրաբխոտ լեռան, որ սակայն երբեք չի ժայթքում, եռում է խորքերում, պատառոտում, աւերում սեփական կուրծքը, առանց որ արտաքուստ այդ ներքին երկունքի, աւերածի նշաններն երևային: Բայց հասնում է ճգնաժամը, այլևս անկարելի է դառնում զսպել ներքին տագնապը, այն ժամանակ ժայթքումը զարհուրելի է, աւերածը անուղղելի: Մի այդպիսի, հրաբխային ճգնաժամ ապրեց Նաւօն, նրա հոգու, սրտի աւերածը այլևս անդարմանելի էր: Սէր, քէն ու վիշտ Նաւօն ըզգում էր հաւասարապէս խոր, հաւասարապէս ուժգին: Այժմ առաջինն այլևս չը կար, աղջկայ մահը ջնջեց այն և նրա փոխարէն էլ աւելի զօրացրեց ցաւն ու քէնը: Նրա վշրուած սիրտը լուռ մխում էր այդ ցաւից, ինչպէս մեծ հրդեհից յետոյ ծխացող աւերակները, և հոգին ամբողջապէս բռնուած էր վրէժի, ոխի զգացմունքով, գլխում մնացել էր մի հատիկ միտք, — ուրիշների արցունք ու կսկիծ պատճառելու միտքը: Նա չէր խօսում ոչ ոքի հետ, որովհետև ատում էր ամենքին, չէր երևում ոչ մի տեղ, որովհետև իր վայրենի միայնու-

թեան մէջ ոչինչ չէր խանգարում իր էութեան ոչնչացումը, որ նրան հաճոյք էր պատճառում: Մեծ ցաւի ծանրութիւնը նրան դէպի ինքնասպանութիւն չը մղեց, նա շարունակում էր ապրել և իր անպէտքացած գոյութիւնը մասմոս ջնջել և կարծես ինքը ճաշակում էր այս դանդաղ ինքնասպանութեան, սեփական աւերածի սոսկալի քաղցրութիւնը: Նա տառապում էր տեսնել իր ինքն իրան:

Դեռ երբէք Նաօի նաւակն այնքան դեղեցիկ և նրա առագաստն այնքան սպիտակ, այնպէս զըրաւիչ չէր, ինչպէս այն աշունը: Մենակ իր նաւակի վրայ, մենակ լճի վրայ, երկնքի և երկրի մէջ կախում, այդ անօրինակ ձկնորսը տարւում էր կապոյտ ջրերի վրայով կառաղի արագութեամբ, դէպի ուր նրան տանում էին աշնանային հովերը: Լիճը խաղաղ էր, թէ ալեկոծ, ալիքներն ուռած էին, թէ դեղածիծաղ, այդ Նաւօի համար միևնոյն էր, նրա առագաստը միշտ բաց էր, նրա նաւակը միշտ պրնում էր դէպի որևէ կողմ: Իր խելագար ընթացքի մէջ նա երբեմն-երբեմն բարձրացնում էր իր թին և ահազին թափով զարկում էր ալիքներին, երբ որևէ մեծ ձուկ կամ ջրային այլ կենդանի էր յայտնւում ջրերի մակերևոյթին: Եւ երբ զոհի դիակը փռւում էր ալիքների վրայ, նա նայում էր վայրենի հաճոյքով և քրքջում էր իր շոր, սարսափելի ծիծաղով: Երբ ուժեղ հոգմերի առաջ լիճը փոթորկւում էր, երբ ալիքները լեռնանում, փրփրում էին, գիւղացիք հեռուից սարսափով էին նայում ծեր ձկնորսին՝ ամեն վայրկեան սպասելով, թէ նա կուլ կ'երթայ անդունդներին, բայց ահաւոր վտանգը, մեծ վիշտը կարծես կրկնապատկել էին ձկնորսի բազումների ոյժը. նա անհոգ կերպով խաղում էր կառաղի ալիքների հետ, և նաւակը տարւում էր այս ու այն կողմ տաշեղի պէս, մերթ յայտնւում, մերթ ծածկւում փրփուրէ բլրակների մէջ: Կարելի էր կարծել, թէ Նաւօն մահ է փնտրում,

բայց մահը վախենում է նրանից, վախում է հեռու, հեռու:

Ամեն անգամ երբ գիպուածով կամ գուցէ տիրոջ ցանկութեամբ այդ մենաւոր նաւակը հասնում էր այնտեղ, ուր հայրը այն սարսափելի զիշերը իր բաղուկներով յետ մշեց գուցէ փրկութիւն փնտրող իր աղջկան, երբ նրա խախտուած երեակայութիւնը էլի մի յետին թափով պատկերացնում էր այն անողորմ պայքարը մի հօր ու խեղդուող աղջկայ մէջ, նաւօն կանգ էր առնում, կախում էր նաւակից դուրս, նայում էր ջրերին երկար-երկար և աղա յանկարծ քրքջում էր խելագարի անմիտ ծիծաղով: Յետոյ նաւակը շարժում էր, առաջացած ուռչում էր, և նա գնում էր գէպի հակառակ կողմը նոյնպէս արագ, կրկին կատաղի թափով: Լայնարձակ լճի վրայ, բիւրաւոր ալիքների խորշերի մէջ կարծես թէ նա տեղ էր փնտրում իր ցաւը մառմաս թաղելու և գտնել չէր կարողանում:

Գիւղացիք վերջ ի վերջոյ հասկացան, որ նաւօն այլևս ձուկ չի որսում, որ նա միայն խելագարի պէս թափառում է լճի վրայ: Եւ երբ հեռուից նշմարում էին այն սպիտակ առագաստը, այն սիրուն նաւը, էլ սիրով չէին նայում, այլ մի ներքին ցաւով ու սոսկումով, դարմանալի ձկնորսը իր վարձուներով ճնշում էր ամենքին, թուում էր, թէ ինքը մահն է խաղում լճի վրայ սև ծըրագրներով: Այդ ճնշող զգացմունքն այնպէս էր զօրանում օր-աւուր, որ եթէ մի փոթորիստ օր նաւօն իր նաւակով, առագաստով կուլ գնար ալիքներին, էլ ոչ ոք չէր ցաւի, որովհետև այսպիսով գլուղը կ'ազատուէր այդ չարագուշակ երեւոյթից, և ձկնորսի ցաւն էլ վերջ կ'առնէր: Բայց փրկիչ փոթորիկը չը կար, խորհրդաւոր դարձած նաւակը լողում էր լճի վրայ, և ձկնորսի քրքիջը հնչում էր ալիքների շառաչի հետ:

Գիւղի ցաւը սակայն միայն նաւօն չէր: Շրջակայքից «բոսագ-բոսագ»-ը սաստկանում էր, և դրա հետ միաժամանակ չորս կողմից հրդեհները բաղմացան: Նախ

գիւղի երեք ծայրում մի մութ գիշեր միաժամանակ երեք գէղ բռնկուեցին բոցերով, մարել անկարելի եղաւ, և երեք ընտանիք յաջորդ օրը հասեցին մոխիրների վրայ: Յետոյ սկսեցին վառել մարագները գիւղից դուրս: Համարեա իւրաքանչիւր գիշեր չարագուշակ բոցերի արիւն հաղոյն վայլը լուսաւորում էր գիւղի խրճիթները, և անդօր, ոլորմելի բնակիչները կանանց ու երեխաների լացի ուղեկցութեամբ վազվզում էին այս ու այն կողմ, գլուխները կորցրած, չ'իմանալով ինչ անել: Միեւնոյն ժամանակ գիւղից վեր բլրի կրճքին հնչում էր միշտ ձրկնորսի գիւղային ծիծաղը, որ խառնում էր բոցերի մոնրոյի հետ: Կասկած չը կար, հրդեհը ձգում էին գիւղի թշնամիները, լեռնաբնակ թափառականները, որոնք ուխտել էին երեւի այսպիսով վրէժ լուծել տխարաւորների կատարած այն մի հատ սպանութեան համար: Յերեկները լծի վրայ սլացող այն մենաւոր նաւակը, գիշերնեւրն իրար յաջորդօղ հրդեհները, բլրի վրայից հնչող անողորմ քրքիջը, հեռուից հասնող «բըսաղի» ձայները, յուսահատութեան էին հասցնում գիւղացիներին: Այս բոլորի հանդէպ ճարը ցասման ժամն էր, ասում էր վարդապետը Իւշ-Քիլիսէից, ցասման ժամ, կրկնում էր կոյս-Գուլէն և նրա հետ տիրացու գրքացը: Ս. Խաչի պատն էր և մեռելոցի օրուայ համար պատրաստութիւնները տեսնում էին շտապ-շտապ: Բոլոր թոնիրները հաց էին թխում, կոյս-Գուլէն պատրաստում էր նշխարները Գապէի բերած շարմաղ ալիւրով:

Եւ սակայն ո՞վ էր այս ցասումի պատճառը, ինչո՞ւ համար օր-աւուր աճող այս ցաւերը, որոնք սպառնում էին խեղդել գիւղը, ո՞վ բերեց այս զուլումը: Մարգիկ մտածում էին, մարգիկ փնտրում էին յանցաւորին և գլուխն փերջապէս չնորհիւ իմաստուն գրքաց-տիրացուի:

Ապրօն, այդ պատանով չրջող զուլում ճշացող մարդը:

Ոտքը բէխեր է. նրա եկած օրից ամեն բան փոխուեց: Գիւղի հանդերում արիւն թափուեց, նստեցին

իրան լիճը նետեց, նրա հայրը խերացար թափառում է, հրդեհները բռնել են գիւղը, մի աներեւոյթ ձեռք բոց ու արիւն է ավառում չորս կողմում, «բըսաղի» ձայնից սրաներն են գողում:

Ապրօն, հա՛, Ապրօն, նա է բոլորի պատճառը, զուլում է ճշում մութ գիշերներին, այդ գեռ քիչ է, գեռ ծաղրում է ցառման ժամը, չի հաւատում սրբերին, հեղնում է Մըրկի խաչքարը: Ապրօն թնջ գնաց, հեռանայ գիւղից, թնջ ուրիշ տեղ կանչի գուլում, նրա ոտքը չար է, գժբաղդութիւնն իր հեռ ման է ածում: Այսպէս մտածեցին գիւղացիք, և մի օր Ապրօն կանչուեց հրապարակ: Տիրացուն բազմել էր կենարանում, աջ ու ձախ գիւղի միւս իշխանները:

—Ապրօ, հեռացիր մեր գիւղից, ասաց տիրացուն՝ առանց գլուխը բարձրացնելու:

—Հեռանամ:

—Հա, հա, հեռացիր, ոտքդ չար է, բէխեր, քո գալուց յետոյ մենք էլ դադար, հանդիսա չունենք:

—Հեռացիր, հեռացիր, կանչեցին մի աները:

Ապրօն լուռ էր:

—Ես խօսում եմ աւետարանից, սուրբ գրքից, մարգարէների, առաքեալների բերանից, քանի Յովնան մարգարէն նաւի վրայ է, փոթորիկը չի անցնի, հեռացիր:

—Յաւման ժամին դու չես հաւատում, մենք ցառման ժամ ունինք, դու այստեղ չը պէտք է լինիս, շտապում ես տիրացուն:

—Յաւման ժամը մեզ կը փրկի, հեռացիր:

Ապրօն գլուխը բարձրացրեց, նայեց իրան շրջապատողներին, կտաւն զգուշութեամբ ցած բերեց ոտից, փուեց առաջը:

—Նայեցէք, ասաց նա, դուք գողում էք սրանից, խի ես ման եմ ածում ինձ հեռ, որովհետեւ մահից չեմ վախենում: Ես կ'երթամ, որ ձեր ցառման ժամը գորտ-

ւոր լինի... Եւ նա կտաւը կրկին ձգեց ուսին ու շարժուեց:

— Գնա՛, գնա՛:

— Զուլճւմ, զուլճւմ, վերջին անգամ կանչեց Ապրօն հեռանալիս, և այդ ձայնը որպէս մահուան, աւերածի մի ճիշ, տարածուեց դիւզի վրայ ու մեռաւ խրճիթների կտուրներին:

Եւ Ապրօն գնում էր մենակ, գլխակօր ու շարժուած: Գնում էր ու մտածում: Այս երկրորդ անգամն էր, որ նա այսպէս ճնշուած սրտով հեռանում էր հայրենի դիւզից, մէկ երկասարգութեան ժամանակ, մէկ էլ այժմ, այս ծեր օրերին: Առաջին անգամ նա թողեց իր յարկն ու իր օջաղը, յուսալով այսպիսով ազատել իր կնոջը՝ Գիւլիզարին, երազած երջանկութիւնը չը դանելով ամուսնութեան մէջ՝ փախաւ, որ գոնէ մի ուրիշը— իր կինը կարողանայ երջանիկ լինել, նա ուզեց ջնջուել ուրիշին տեղ անելու համար: Այժմ ինքը կամաւ չի դընում, նրան քչում են, բայց դարձեալ ուրիշի երջանկութեան համար, դիւզը կարծում է, թէ առանց Ապրօի նա երջանիկ կը լինի: «Թո՛ղ լինի, թո՛ղ լինի», մըմնջում էր նա և քայլում շարունակ: Քանի տարի էր նա այսպէս քայլում դիւզից-դիւզ, քաղաքից-քաղաք, լեռներից-լեռ, ձորից-ձոր: Նրա գլխին ծանրացած անէծքը ասես էլ վերջ առնելու չէր: Նա այնքան բան էր տեսել իր սև, թափառական կեանքի ընթացքում, այնքան ուխտաւորներ տարել-բերել սուրբ Կարապետ, այնքան դժբաղդների, թշուառների գանգատները լսել: Ապրօն բաց աչքերով էր տեսել մեծ ցաւը, զուլումը, ճաշակել էր նրա բոլոր դառնութիւնը և իբրև կեանքի վերջին հարկ, վերջին պարտականութիւն, նա եկել էր հայրենի դիւզին իր գիտեցածն ասելու, եկել էր քնած, անհոգ հոգիներին զարթեցնելու պատրաստուող մեծ ցատու մի հանգէպ, որից ժամ ու պատարագով ազատուել անկարելի էր, եկել էր նաև իր ծեր օրերին տառապած դուլիսը հայրենի դիւզում թաղելու: Բայց իր ծննդա-

վայրը նրան մերժեց, մի ժարդ, մի տանջուած, անհանգիստ հոգի միայն հասկացաւ նրա առած զուլումը և գնաց... նա Ասօն էր: Ամբողջ գիւղում միայն Ապրօն գիտէր, թէ ուր է Ասօն, միայն նա էր, որ չէր անխժում անհետ կորած երիտասարդին Շողերի մահուան համար: Ասօնից յետոյ Ապրօի սրտում տեղ էր բռնել նաեւ մի ուրիշը, այն ծեր, պատկառելի ջրադադանը՝ Գսպէն: Ասօն կապում էր այդ երկու ծերերին իր անձնաւորութեամբ, նա օղակ էր նրանց հոգիների մէջ: Ապրօն սիրում էր այն ջրադադը գիւղից դուրս, սիրում էր ուռիների երկու շարքը, սիրում էր մանաւանդ այն փնաւոր բարձրահասակ ծերունուն, որ ժայռի պէս կանգնած էր կեանքի ճախորդութիւնների հանդէպ: Նրա համար Գսպէն մի խնայող էր, որ գիտէր, հասկանում էր ամեն բան, որ ամենքի համար մի բարի խորհուրդ ունէր և որ սակայն իր գիտցած, տեսած զուլումի գէմ անդօր էր:

Ապրօն յիշեց նաեւ Գուլէին, և սիրտը ցաւով լցուեց: Նա չը կարողացաւ տեսնել նրան, խօսել հետը և նրանից թողութիւն խնդրել: Մի քանի անգամ եկեղեցում տեսաւ, սպասեց մինչև ժամասացութեան վերջը, բայց երբ մնաց բոլորովին մենակ, քաջութիւն չ'ունեցաւ մօտենալ այդ սեւադգեստ կնոջը, որ էլ ոչնչով նման չէր իր թողած Գիւլիզարին: Եւ սակայն այդ սեւը, կեանքի անվերջ սուգը իր՝ Ապրօի դործն էր, իր պատճառով էր եղած: Մի քանի անգամ մտածեց զնալ, նրա փոքրիկ խուցի դռնակը թակել գիշեր ժամանակ և միայն երկու բառ ասել՝ «ներիր, Գիւլիզար», բայց երբ մօտենում էր այդ նուիրական տնակին, երբ տեսնում էր հեռուից նրա պլպլացող ճրագի լոյսը, յետ էր փախչում վախեցած, սպասելով՝ որ մի առիթ ներկայանայ: Եւ առիթը ներկայացաւ այժմ:

Գուլէն գալիս էր հէնց Ապրօի հանդէպ: Երբ հեռուից նա նկատեց սգաւոր կնոջը, սիրտն սկսեց բաբախել, կանգ առաւ մի վայրկեան, բայց ոյժ զործ դրեց

ու քայլեց: Նրանք կանգնած էին դէմ յանդիման: Լուռ էին: Առաջինը խօսեց Գուլէն:

—Լաւ չ'արիր, Ապրօ, լաւ չ'արիր, մենք կապուած էինք Աստծու առաջ:

—Հա, ես էլ գիտեմ, որ լաւ չ'արի, բայց ուշ իմացայ, ներիր:

—Օ՛հ, ներողութիւն խնդրելու դու կարիք էլ չ'ուներս, երեւի այս էլ ճակատագիր էր. մեր ճանապարհները տարբեր էին, ինչպէս և այս ժամին, երբ ես գալիս եմ Իւչ-Քիլիսէի վանքից, իսկ դու գնում ես՝ ով գիտէ՞ ուր:

—Ճանապարհներս տարբեր, նպատակներս մէկ եղաւ, Գուլէ, չէ՞ ես էլ ուխտաւորների վալադ էի, ինչպէս դու սգաւորների:

—Հա, հա՛, իրաւունք ունիս, մենք իրար պարտ չենք, դու էլ իմ պատճառով չ'ուրիշ ընկար, խեղճ, տանջուած մարդ: Վշտոտ կնոջ աչքերը թացացան, այտերի վրայ քաշ ընկան արցունքի կաթիլներ: Ապրօն էլ հեկեկաց, մօտեցաւ, և տարիներից յետոյ առաջին անգամ նրանք համբուրուեցին քոյր ու եղբօր պէս տապի դաշտում, երբ աշնանային հովը խաղում էր չոր տերևներին հետ, շփում, հաւաքում էր իրար վրայ, ապա ցաք ու ցրիւ փռում դաշտերում, ձորերում, որպէս մեռած յոյլեր, անցած հրազներ:

—Մնաս բարի, Գուլէ:

—Էլի ուր:

—Նայիր այն տերևներին, որ քամին տանում է մերթ մեծ ճանապարհների վրայով, մերթ երկնքի երեսից. նրանք երբեք ասել կարող են, թէ ուր են գնում: Ես էլ մի չորացած տերև եմ, իսկ իմ ճակատագիրը մի աշնանային հովմ, որ մերթ փչում է կատաղաբար, մերթ թօղում է, որ մի քարի, մի թմբի, մի ծառի յենուեմ, հանդիստ առնեմ: Դիւզն ինձ հալածեց, Գուլէ, ասում են, որ իմ ոտքը բէխեր է... իրաւունք ունին, ես էլ այդ գիտեմ և փախչում եմ հեռու, հեռու, որ զուլումից ա-

զատ մնան անմեղները, մնաս բարի, մեր հանապարհ-
ները տարբեր են:

— Գնաս բարի:

Եւ նրանք դնացին զանազան կողմեր, մէկը դէպի
զիւլ՝ ցատման ժամի վերջին նշխարները թխելու, իսկ
միւսը դէպի մութ անյայտը:

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

(Գր շարունակութի)

ԴՈՒ ՎԱՂ ՅՈԳՆԵՑԻՐ...

Դու վաղ յոգնեցիր, ո՞վ սիրոյ ընկեր,
ինձ հետ տանջուելու, ինձ հետ անցնելու
իմ փրշտա ուղին—և քաջ, անվեհեր,
Մի յամառ կըռօվ խաչքս կըրելու:

Դու վաղ յոգնեցիր... Եւ ահա այսօր
Պարտուած ամբօխի չարաժայն լեզուից,
Աւանդ, դու, որպէս վախըսկ մի զինուոր,
Փախչում ես արդէն կէս-ճանապարհից...

Փախչում ես, թողնում ինձ դարձեալ մենակ.
Է՛հ, Տէ՛րը քեզ հետ... Իմ տըխուր ճամբէն
Ես մենակ կ'անցնեմ, ծանրը խաչի տակ —
Տանջանքի խաչին սովոր եմ արդէն....

Ա.Լ. ԾԱՏՈՒՐԵԱՆ

Վ Ա Ն-Տ Ո Ս Պ

I

Հին Վասպուրականի կենտրոնական զաւառը՝ Վան-Տոսպը տարածւում է Վանայ բարձրալեռնային ամենագլեցիկ մասում, համանուն լճի արեւելիցումը, սրտաբեր, արդասաւէտ մի զաւտի վրայ 40 մղոն (անգլ.) չրջապստ ունեցող, որի հիւսիսային սահմանը կազմում է Թիմար (Հին Գնունիս) զաւառը, հարաւինը՝ Հայոց-Չոր (Հին Երուանդունիք) զաւառը։ Արեւելեան սահմանի վրայ բարձրանում է Վարադայ լեռը (10,000 ոտք) *) ծաղկաւէտ և ջրաշատ շտեմարան Վան-Տոսպի անթիւ, անսպառ և քաղցրահամ աղբիւրներին։

Վարադայ լեռը մէջտեղից կտրուած է մի խորունկ ձորով (Վարադայ Գլխին), որ բաժանում է նրան երկուսի հիւսիսից հարաւ երկարութեամբ։ Արեւմտեան բաժանմունքի լանջի վրայ ընկնում է Շուշանց գլուղը, որ և տալիս է լեռնային մասին իր անունը։ Վան-Տոսպ զաւառը երկը կողմից չրջապատուած է մեծ բլուրներով, որոնք բաժանում են նրան սահմանակից սանջակներից (զաւառակ)։

Վան-Տոսպի արեւմտակողմը զաւառի ամբողջ երկարութեամբ տարածւում է Վանայ լիճը, որ ծով էլ է կոչւում տեղացիներից և ճանաչուել է անցեալի մէջ զանազան անուններով—

*) Վասպուրականցիները ամենասիրելի լեռը (որպէս Մասին արարատացոյ), որի մասին վանեցի ժողովուրդը ունի բազմաթիւ աւանդութիւններ, պատմութիւններ և երգեր՝ արտայայտութիւն ռամիկի սիրուն և երկիւղին։ Ի բաց առեալ ձմեռուայ մի քանի տմիսները, երբ նա պատած է լինում թանձր ձիւնով, մնացած եղանակներում ծածկում է ընդհակառակն ճոխ բուսականութեան երկներանց գորգով։

մերթ ծով Տոսպի *), մերթ Բզնունեայ **), Արճէշի, Աղթամարի և Ծովախնուր կոչուելով: Բարձր է ովկիանոսի մակերևոյթից 1625 մետր ***), իսկ Ատրպատականի կամ Ուրմիոյ լճից՝ 336 մետր. ունի 80 մղոն (անգլիակ. 1 մղ.—1½ վերստի) երկարութիւն (արեւելք-արեւմ.) և 30 մղ. լայնութիւն (հիւս.—հարաւ) 3690 քառ. քիլոմետր մակերևոյթով, պակաս լինելով մի քիչ Ատրպատականի ծովակի տարածութիւնից, բայց նրանից անհամեմատ աւելի խոր. Վանի կողմից 3 քիլոմետր հեռու խորաչափը հասնում է 26 մետրի. իսկ աւազանի հորաւային մասերում, կարճկան և Գաւաշ գաւառակների մօտ եզոզ փերում էլ աւելի մեծ է ջրի խորութիւնը, մօտաւորապէս 100 մետր ****), այսպէս հաշուելով՝ Վանայ ծովակի բովանդակութիւնը աւելի մեծ է, քան Ուրմիոյ, թէպէտ նրանից քիչ լեզի:

Ծովի հիւս.—արեւելեան ծոցը ****), որ 40 մղոն (60 քիլոմետր) երկարութեամբ ձգւում է դէպի ցամաքը, չ'ունի այնպիսի խորութիւն, սրպէս ծովի միւս մասերը, սրա հիւս. ծայրումն է գետաբերանը Բենդիմահու կամ Բերկրի կոչուած գետակի, որ թափւում է Վանայ ծովը Բերկրի կոչուած արգասաւէտ գաւառակը ոռոգելուց յետոյ:

Սկսած XVII-րդ դարի սկզբից այս ծովակի ջուրը պարբերաբար բարձրանում է իր՝ անմիջական փերը ողողելով, վերջնիցս անդամ՝ 1840 թ. ծովը բարձրանում է 3—4 մետր, և ապա հետզհետէ ցածրանալով՝ վերջին անգամ սկսւում է բարձրանալ անցիալ դարու վերջին տասնամեակից սկսած. այդ բարձրացումների իբրև չօշափելի հետեանք՝ ծովի հիւս. փին մօտ դանում Արճէշ հին քաղաքը իր բերդով լողում է այսօր ջրերի երեսին, և արեւելեան փի վրայ դանում առանց նաւահանգստի ս. Յովհաննէս՝ երբեմնի հոյակապ տաճարը՝ այգիների մի մեծ մասի հետ ծովի բամին է դարձել:

Ծովի երբեմնակի աճելու և նուաղելու (աճելը աւելի մեծ չափով է լինում, քան թէ նուաղելը, որով ծովը հետզհետէ տարիների ընթացքում զգալի կերպով բարձրանում է) երևոյթը

*) Պալում. աշխարհագրութ. V—13:

**) Մ. Խոր. I ժր.

***) Հստ Դիքսէի 1666 մետր, ըստ Կիպերտի՝ 1650 և ըստ Քլէյտոնի (երբեմնի անգլ. հիպատոս Վանայ) 1670 մ. «Բազմալէպ», Վենետիկ. 1896 № ?

****) Carl Ritter, Afinu. vol. IX.

*****) Այս պարանոցը իր ամբողջութեամբ, ասում են, իբրև թէ երբեմն եղել է մի բերրի գաշտ, որ հետզհետէ ծածկուել է ջրի տակ՝ տալով ծովակին տաղանի ձև: Վանայ ծովակի այս երկար մասի վերին ստիճանի ծանծաղուտ հանդամանքը հաւանական է դարձնում այդ աւանդութեան ստուգութիւնը:

պէտք է համարել պարբերական երեոյթ՝ կապուած հաստատուն կլիմայաբանական պատճառների հետ, ինչպէս իրաւամբ նկատուած է Միւրաւնը*): Այնուամենայնիւ հետաքրքիր է և տեղացիների պատմածը այն ստորերկրեայ ջրանցքների մասին, որոնք իբրեւ թէ յարաբերութեան մէջ են գնում ծովը Տիգրիս գետի հետ հարաւային կողմից, որոնք ապա խցուել են (բաժրակի բռնեւրով) թշնամարար յոյների կողմից, երբ սորա պարսիկների հետ ունեցած անհաւասար մրցման միջոցին պարտաւորուել են հեռանալ Հայաստանի այս մասերից, թողնելով նրան վերջնականապէս պարսիկների տիրապետութեան ներքոյ:

Վանայ ծովի ջուրը չափազանց աղի է, բայց ոչ այնչափ, որպէս Ուրմիայ—և դառն է այն աստիճան, որ կարելի է խմելու համար դորձածել, իբրեւ հանքային ջուր՝ հիանալի դարման է հանդիսանում մորթային հիւանդութիւնների առակւապէս բէրւմատիզմի բժշկութեան համար: Պարտունակում է զլիսաւորապէս զրեթէ հաւասար համեմատութեամբ ածխատ (carbonate) և կալքաքարի ծծմբաւ (sulphate de soda)*), այնպէս որ նրա ափերի մօտ ապրող բնակիչները, զլիսաւորաբար Վան-Տոսլի Աւանց գիւղացիք, այդ բաղադրութիւնից պատրաստում են օճառի մի տեսակը, որ պարակ է կոչւում, և որ պատրաստում են ամառուայ երեք ամենատաք ամիսներում, ծովի ափին յատկապէս շինուած ընդարձակ ածուների մէջ, տեղացիք այդ արհեստի փերը (նախահայրը, սկզբնապատճառը) համարում են ունիս. Ներսէսին, որը կարելի է համարել այդ արհեստի պաշտպան սուրբը, ինչպէս որ միջին դարերում, որպէս և այժմ էլ եւրոպական ժողովրդի համար ս. Սեղրեւարտը պաշտպան սուրբն է գինեգործների, ս. Վիկտոր՝ ջրաղացպանների, ս. Եղսիայ՝ մետաղագործների հայրն:

Վանայ ծովակը բովանդակում է ահաղին քանակութեամբ ձկների մի փոքր սպիտակ տեսակը—տառեխը, որին համարում են able-ի մի տեսակը՝ անուանելով նրան cyprinus, անգլիակ. bleak-ը մօտաւորապէս 20 սանտիմ. երկարութեամբ: Սոքա զարնան սկզբներում բազմաթիւ խմբերով բարձրանում են ծովի ջրի վերին շերտերը՝ զիմելով դէպի քաղցր ջրերը, և հասնելով գետաբերաններին՝ ահագին քանակութիւնով ընկնում

*) Էլիլէ Ռէկլիւ—Հաղիստան, Հայաստան, Գիւրգիստան. թարգմ. Միտրան. Էջմիածին, 1843. երես 68, ծանօթ. 4.

*) Ստրասբուրգի համալսարանի քիմիայի պրոֆ. Սիրտտ տարրալուծելով 12—14 հրկրորդական և այլ տարրեր էլ նշմարեց, չը նայելով որ զրանք աննշան տեղ են բռնում Վանայ ծովի ջրի բաղադրութեան մէջ: «Բաղմալէպ», 1896. № VI.

են մարդկանց պատրաստած թակարդների մէջ՝ ծառայելով նորանց անդի տմենական և սովորական պիտոյքներին:

Ծովի արևելեան և հարաւային կողմերը՝ ափերից սահաւհեաւորութեամբ զանաւոր են չորս կղզիներ—Լիմ կղզին մի վանքով ա. Գէորդ անունով և միաբանական ուխտով, Կառուց կղզին ա. Կարապետի տաճարով և միաբանութիւնով պատկանում են Թիմար զաւապին (հին Գնունիս) ըստ սահմանի. իսկ Աղթամար կղզին՝ կաթողիկոսական ակոտանիսար ա. Նշան փառաւոր վանքով զործ Արծրունիներէ, և Առաւել կղզիակը պատկանում են Գաւաչ զաւապի սահմաններին, զորս լինելով բոլորովին Վան-Տոսպի սահմանից: Այս կղզիները «Անապատ» են կոչուում անգղացիներէ:

Ծովակը կանոնաւոր նաւարկութիւն չ'ունի, եղածն էլ նախնական—նահապետական վիճակի մէջ է. երթեկուծ են 100-ի չափ առաքատաւոր նաւեր, աւելի ճիշտ՝ նաւակներ, մակոյկներ, —բոլորը միասին առած 1050 տոնո տարողութեամբ, որոնք Աւանց նաւահանգստից նոյն գիւղացի նաւավարների ղեկավարութեամբ երթեկուծ են Վանից դէպի Բիթլիս (Բաղէշ), Գատուան (Բիթլիսի նահանգում ծովի հարաւարեմտական ափին մօտ), Արճէշ և Այճուաղ (հիւսարեմտ. ափ):

Վանայ ծովի վրայ չ'ողնաւ բանացնելու փորձեր չառնողաներ են եղել թէ օտարերկրացիներէ և թէ անգղացի կարողների ձեռքով, բայց ոչ մի ժամանակ չի կարողացել զլուխ դալ. դեռ անցեալ տարի լուր եղաւ, թէ ինքը՝ թիւրք կառավարութիւնը անգլիակ. ինչ-որ նաւագործարանի պատուիրել է երկու չ'ողնաւ իր հաշուով Վանայ ծովի համար, որոնք ընդ փոյթ Վան պիտի ուղարկուէին, բայց վանեցոց սե բախտից սուլթանը փոշմանելով՝ հրամայել էր յետ առնել պատուէրը, որպէսզի առանց այն էլ դատարկ պետական խաղինէն (զանձարան) դժուարութիւնների մէջ չ'ընկնի: Մօտիկ օրերս լսուում է, որ թիւրք-պարսկական սահմանադրի վրայ սպրդող մի հարուստ, զրամատէր չէյս կրկին անգամ թիւրք կառավարութիւնից իր հաշուով Վանայ ծովի վրայ չ'ողնաւ բանացնելու մենաշնորհն է ինդրել: O, sancta simplicitas!

Ծովը՝ բայի արեւելեան ափից, որի վրայ ընդարձակ տափարակով տարածուում է Վանայ դաշտը ճոխ բուսականութիւնով՝ երեք կողմից չրջապատում են լեռնաշղթաների անընդհատ մի շարք, որ սկսելով Մասիսներից՝ անցնում է սրա հիւս. ափերով և վերջանում հարաւարեւելեան ծայրում՝ այդ երկար չրջութայի մէջ առնելով Սիփան (հիւս. կողմ), Ներքովթ, Գրգուռ, (արեմտ.), Արաոս, Եգերով, Առնոս (հարաւ): Այդ լեռները ծած-

կուած են թաւ պուրակներով սօսի, կաղնու, մայրի, կնձնու ծառերով լի, որոնք մատակարարում են առատ վառելու փայտ և անասն և վան քաղաքի, և՛ չրջակաների համար. ափսոս, որ ակրող կառավարութեան անփութութեան, անտէրութեան երեսից այս կողմերում հազազիւս բնական այս ամենամանրածիշտ հարստութիւնը կարող է սպառուել մի քանի տարուց յետոյ:

Վան-Տոսպ գաւառի մէջ կան մի քանի լճեր էլ, կէս բնական, կէս արուեստական. արժէ յիշել արեւելեան սահմանին մօտ Վարազայ լեռան կրճի վրայ Քեշիշ-գէօլ (քահանայի լիճ), յայտնի չէ՝ ինչու համար այսպէս կոչուող, ըստ որում այս հոյակապ լճի սկզբնական շինութիւնը վերաբերում է Տուսպայի Ռուդաս I. հօր արքային VIII-րդ դարում Ն. Ք. (780—714), Շարրիդուրիսի որդուն, որի (Ռուդասի) ջանքերով կառուցուած է լիճը՝ թոփրապ-Գալէի ստորոտը տեղափոխած իր նոր քաղաքին ջուր մատակարարելու համար. լճի մօտն է նրա կոթողը իր՝ Ռուդասի փորագրել տուած բնեռագիր արձանագրութիւններով ծածկուած:

Քեշիշ-գէօլից փոքր է մի քիչ թէ իր խորութեամբ և թէ մակերեսով Աղղայ գիւղի անունով կոչուող, բայց նրանից քիչ հեռու դէպի հիւս. բաւական ընդարձակ մի լիճ: Այդ լճերից սկզբն է առնում Յանկոյսների գետակը, որ սողնակով իր բնութացրում զանուող զաշտորայք և այգիները՝ Աւանց գիւղաքաղաքին մերձ թափում է ծովը. այս գետակը իր անունը ստանում է Յանկոյսներ եկեղեցու ձորակի միջից անցնելիս: Վարազայ լեռան ստորոտներից հոսող ջրերից կաղմւում է Ղուււս-պալի կոչուած գետակը, որ իր անունն ստացել է համանուն գիւղի մօտով անցնելու պատճառով. սա էլ իր դերը կատարելուց յետոյ թափւում է ծովը:

Մի փոքրիկ գետ կարելի է համարել նոյնպէս Շամիրամայ-Ջուր կոչուած մեծ առուն, որ բղխում է և գոյանում Հայոց Ջոր գաւառի սարերի վրայից և արուեստական հսկայ ջրանցքներով բերուելով՝ սողում է Վան քաղաքի հարաւ-արեւմ. կողմը սարածուող Շամիրամայ-Թաղ կոչուած պտղատու և այգեչատ արուարձանը, թափուելով ապա ծովի մէջ. Շամիրամայ-Ջրի այս հսկայական ջրանցքը (pili արձ. լեզուով) փորել է տուել Տուսպայի թագաւոր Մինուաս I. VIII. դարու սկզբներում (800—780), որպէս ցոյց են տալիս ջրմուղի ընթաց ում մի քանի տեղ երեւացող բնեռագիր արձանագրութիւնները *). Շամիրամայ ջրանց-

*) Menuase ini pili aguni—Մենուաս այս պիլին (ջրմուղը) շինեց:

քի չուրջը, այժմուայ Շամիրամայ կոչուած թիւրքական թաղի տեղը եղել է ի հետեւն Վան քաղաքի (Տուշպա) իսկական տեղը, որպէս ապացոյցանում են իրանց վերջին խուզարկութեան ժամանակ Վանում Բեշկ և Լիման գերման գիտնականները:

Իսկ աղբիւրների և աղբերակների թիւը անվերջ է՝ ի բաց առեակ Վարապայ լեռը, որ Վանի աղբիւրների մեծ մասի ջրամբարն է հանդիսանում, և որի վրայ ամեն քայլափոխի կարելի է վճիռ և յորդ աղբերակների հանդիպել, թողնելով և գիւղերը, որոնցից իւրաքանչիւրը ունի մի քանի քաղցրահամ աղբիւրներ թէ գիւղում և թէ չրջակայքում: Քաղաքը միայն ունի 50.—60 մեծ և փոքր աղբիւրներ, որոնք քահրէզ են անուանուած սեղադիւրներից, այդ աղբիւրների մեծ մասը սկիզբ են առնում Վարապայ լեռից, որ հեռու է քաղաքից 4—5 մղոնով (մօտ 7 վերստ), և որից բերուել են հին ժամանակներում քանքանների ականներով (լաղրմ). այդ աղբիւրներից արժէ յիշել Սոֆի և Խիննոն կոչուածները, երկու Քէնդրէիները և Թաղաքահրէզի (նոր աղբիւր) հրաշալի ջուրը, որ ի մեծ դժբաղդութիւն վանեցիկների՝ այս քանի տարիներից ի վեր սկսել է նուազել պարբերական երաշտութեան պատճառով:

Վան-Տոսպի մարմինը ներվերի նման այսպէս ցանցակերպ պատող աղբերակները, Յանկայանների, Յուռուպաչի և Շամիրամայ ջրերի հետ միացած, ոռոգում են նրա գեղեցիկ և ծառայատալ ջրերի հետ միացած, ոռոգում են նրա գեղեցիկ և ծառայատալ ջրերը, որոնց մեծ մասը տարածւում է լայնածառայ զիրքով քաղաքի Այգեստան մասի մէջ և չրջակայքում: Այգեստանի իւրաքանչիւր տունը իր մեծ ու փոքր այգին ունի: Քաղաքի մերձակայ արուարձանն և զոդ Շահպաղի կոչուած գիւղը աչքի է ընկնում իր ընդարձակ որթատունկի այգիներով և առատ ու քաղցր գինու համբաւով, ըստ հայրենասէր ուղևոր Մ. Միրախորեանի՝ Պարտօի գինին նոյն հոշակն ունի Ֆրանսիայում, ինչ որ Շահպաղու գինին Վանում և չրջականերում*):

Շահպաղու, որպէս և միւս գիւղերի խաղողի ընդարձակ այգիները մատակարարում են մեծ քանակով գինի, որ սպառւում միայն իր տեղում՝ առանց փոքրիկ չափով դնել արտահանուելու վաճառքի համար, ինչ որ կարող էր եկամուտի մի աչքի ընկնող աղբիւր լինել տնտեսապէս ճնշուած այդ աղքատիկ ժողովրդի համար: Միւս գիւղերից՝ նրանից քիչ պակաս մեծութեամբ այգեստաններ ունեն՝ Աւանց նաւահանգիստը, որի այգիներում անց են կայնում նրանք ամառները ընտանիքներով

*) Մ. Միրախորեան—Ուղևորութիւն ՚ի հայաբնակ գաւառ. Պոլիս, 1884.
II—47:

հանդերձ. հարաւային կողմի զիւղերից Յուսուպաչ գիւղը, որի այգիները հեռզհեռէ անտէրութեան և անխնամութեան երեսից փչանում են, և Լեզլի գիւղը իր սակաւաթիւ այգիներով, Վան-Տոսպի այս բազմաթիւ ընդարձակ այգիները թէ քաղաքին և թէ գիւղերին տալիս են անտառի կերպարանք, կազմելով նրա բնական գեղեցիկ զարդարանքներից մէկը:

Այդ այգեստանները բովանդակում են բազմաթիւ պտղատու և անպտուղ—չինութիւնների վրայ միայն գործածուող ծառեր: Վանի պտուղներից նշանակութեան արժանի է Արաւամիտ գիւղի խնձորը, գէլսալի կոչուած, այլ և տանձը իր բազմաթիւ տեսակներով, սերկեւիլը, գեղձը, խաղողի բնախի տեսակներն ու այլ պտուղներ իրանց բազմաթիւ տեսերով իւրաքանչիւր եղանակին յարմար. անպտուղ ծառերից կան մեծ քանակութեամբ բարդենի, կաղամխի, ուռի և թեզի կոչուածները, որոնք ամենայնամար և զիմացկուն փայտերն են չինութեան ծառայող: Ծաղկատու թփերից կան միւրովէրն, լէյլազ և վարզ: Չը կայ միայն տաք կլիմային պատկանող պտուղներից նուռ, թուզ, արմու, կիարոն և այլն, որոնցից մի քանիսը կարելի է ճարել միայն Վանի վիլայէթի հարաւային գաւառներում—Մոկսում և Շատախում: Վան-Տոսպ գաւառը այնքան էլ բնական հարստութիւններ չ'ունի, նրա սակաւաթիւ բլրակներում հանքերի հետքեր չեն երևում, հակառակ չրջակայ գաւառներին, ուր ամեն մի քայլափոխում մարդ հանդիպում է նաւթի, քարածուխի ու հանքային շերտերի. Հայոց Չոր գաւառում, որպէս և Բերկրի գաւառի Գործոթ գիւղի մօտ գետնի երեսից անդամ տեղացիները վառելիքի համար նաւթ են ժողովում, թէև ոչ գուտ՝ իհարկէ:

Վան-Տոսպ գաւառի կլիման կարելի է բարեխառն համարել, բայց որում չ'ունի նա ոչ ամառուայ ջերմոցիչ տապը, և ոչ էլ ձմրան մրկեցուցիչ սառնամանիքը, երբեմնի համայն սար ու գաջաը մեծ թանձրութեամբ ծածկող ձիւնի ձմրան սառանները չեն երևում այլ նո, այս քանի տարի էր, որ եկած ձիւնը հալւում էր խոյն և եթ՝ երկիւղի մէջ ձգելով հողատէր երկրագործին ու գիւղացուն: Բայց բարեբախտաբար բնութիւնն այդ պակասը լրացնում էր այն առատ-առատ անձրևների հոսանքով, որոնք դարնան ընթացքում ոռոգում են ձմեռուայ չորութիւնից ցամաք հողը:

Վան-Տոսպի բազմաթիւ կողմերից և զանազան եղանակներում փչող տաք և սառն հողմերից կարելի է որոշել երկու կանոնաւոր հովեր, որոնցից մէկը փչում է Վանայ դաշտում արեւելքից արեւմուտք ուղղութեամբ կէս գիշերից սկսած

մինչև ցերեկը, և միւսը՝ ընդհակառակն, արևմուտքից-արեւելք ուղղութեամբ փչում է ցերեկից սկսած մինչև կէս գիշերը, մանաւանդ ամառուայ եղանակում, օրուայ 24 ժամը իրանց վրայ հաւասար բաժանելով: Գարնան վերջերում հարաւային կողմից փչում է երբեմն ինչ որ տաք քամի Աղմու կոչուող, որպէս և Սամ քամին, որ խորշակահար է անում և փչացնում ծառերի մատաղ պտուղների մեծ մասը, ընդհակառակն օգտակար հանդիսանալով մի քանի գիւղերի համար հիւսիսային կողմերում: Վան-Տոսպ դաւառի կլիմայի այս առողջարար տեմպերատուրին նպաստում է առաւելապէս Վանայ ծովը իր զովաբար ազդեցութեամբ:

ԿԱՐՍԵՑԻ

(Գը շարունակուի)

*
* *

Էլի եկան դարնան անճւշ օրերը,
Ցուպս առնեմ, ընկնեմ սար ու ձորերը.--
Սիրտըս կ'ուզէ հեռոճները սաւառներ,
Նոր ճամբէքներ, նոր աշխարհներ թափառել:

Սէգ ժէռերի վայրի, խոլոր բարձունքէն
Վարդեր քաղեմ ու ճակատս պսակեմ:
Սարերն ի վեր ամպերի պէս բարձրանամ,
Արծըւի հետ էրուած կուրծքս հովին տամ:

Արեն ելաւ՝ ոսկի հուպերն ուտերին,
Ձառ հաւքերը իրար անճւշ ձէն տուին.
Սիրտըս, սիրտըս արտուտի պէս թռվռուն՝
Դէպի արեն, դէպի ճամբայ է թռնում:

Մարալները ցողաշաղախ սարն ելան,
Նրանց յետքից ոստոստելով սարն երթամ:
Խարոյկի շուրջ, հովիւների, հօտի քով,
Սէրս երգեմ՝ քաղցր շուին ծոր տալով:

Որտեղ մթնի, էնտեղ քնիմ միայնակ
Վառ՝ աստղերի, կապոյտ երկնի ծածկի տակ.
Ուռինները հովերի հետ միասին
Ինձի մարմանդ օրօր կ'ասեն, որ քնեմ:

Ծէգը ինձի համբուրելով ձէն կը տայ,
 Կուրծքս լիքը թարմ բուրմունքով կը թնդայ,
 Ու կարկաջուն աղբուրների ցօղերով
 Կը լուացուիմ, և կը ճախրեմ նոր ճամբով:

Կ'երթամ հեռու անապատներ ու ծովէր,
 Կը թափառեմ, անյայտ վայրեր, աշխարհներ,—
 Ուրիշ աղբեր, ուրիշ սրտեր տեսնելու
 Ու ամենը հասկանալու, երգելու:

Եւ բնութեան հրաշքները կը տեսնեմ,
 Նրա լեզուն, հազար տեսակ, կը լսեմ,
 Ուրիշ երկինք, ուրիշ աստղեր դրկելու,
 Ու ամենը խորն զգալու, երգելու...

—Է՛յ, դու, անգին, թափառական, վսեմ կեանք,
 Հեռունների, անհունների իմ տենչանք.
 Քո շնորհիւ հըրեղէն եմ, թեւաւոր.
 Աշխարհն իմս է, դիմիս տէրն եմ ու հղճր...

Ա.Ի. ԻՍԱՀԱԿԵԱՆ

ԱՆՏՈՒԼ ՖՐԱՆՍԻ ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐԻՑ

I

Դեղեցկութեան զգացումը

Գեղեցիկը դեռ օտարոտի էր Շուշիկին, բայց երբ դառաւ երեք ամիս քսան օրեկան, սկսեց արտասովոր եռանդով ձգտել դէպի նա:

Նստած էինք սեղանատանը: Այդ սենեակը, որ դասու-
րուած էր յախճապակեայ սկուտեղներով, քարից քանդակած
չիշերով, թիթեղեայ մեծ անօթներով և վիհեցիական ապակուց
չինուած սրուակներով, մի անսակ հնութիւնների թանգարանի
բնաւորութիւն էր կրում: Այս բոլորը սարքել է Շուշիկի մայ-
րը, որ իբրեւ բուն փարիզուհի, սիրահար է ամեն անսակ մանր
մունք դատարկ բաների: Այդ հնութիւնների մէջ Շուշիկը երե-
ւում է այնպէս թարմ իր սպիտակ, զարդարուն շորերով... նրան
նայելիս՝ ակամայ ասում ես. «Ուղիղ որ սա արդէն հին չէ, այլ
բոլորովին նոր իր է»: Ինչ վերաբերում է իրան, նա անտար-
բեր է դէպի հին իրերը՝ ժամանակից սևացած պատկերները և
պատից կախած պղնձեայ սկուտեղները: Սակայն յուսով եմ, որ
այս հնութիւնների բովանդակութիւնը ժամանակին կ'ազդէ նրա
երևակայութեան զարգացման վրայ, կը ծնեցնէ նրա հոգում տարօ-
րինակ, աղօտ, միևնոյն ժամանակ կախարդուող անուջներ: Նա
կուեննայ իր ցնորքները: Դրանք կը զարգայնեն նրա մէջ ըն-
դունակութիւն—եթէ խելքը հակումն ունենայ դէպի այդ—ըմ-
բռնել չրջապատի բնաւորութիւնը, մանրամասնութիւնները,—
ընդունակութիւն, որ այնպէս դեղեցկանում է կեանքը:

Ես կը սկսեմ պատմել նրան երևակայական պատմութեան
ներ, որոնք թէև աւելի առասպելական չեն լինի իմ միւս պատ-

մուածքներից, սակայն անհամեմատ գեղեցիկ կը լինեն: Նա կը սիրէ նրանց խելագարի պէս: Ամենքին, ում սիրում եմ, ցանկանում եմ գոնէ մի կաթիլ այդ խելագարութիւնից, դա սիրտ է ուրախացում: Դեռ ես Շուշիկը՝ տակառին հեծած Բաքոսին տեսնելիս, նոյն իսկ չի էլ ժպտում: Երեք ամիս քսան օրինակ մարդիկ լուրջ են լինում:

Եւ այդպէս, դա առաւօտեան էր, մեղմ, ամպշող առաւօտեան: Նոր էինք նախաճաշել ես ու կինս և խօսում էինք այն մարդկանց պէս, որոնք բան չ'ունեն միմիանց ասելու: Լինում են բոպէներ, երբ ժամանակը գետի պէս հանդարտ է հոսում. թւում է, թէ տեսնում ես հոսանքը, և քո արտասանած ամեն մի խօսքը, որպէս մի փոքրիկ քար, ընկնում է նրա մէջ, եթէ չեմ սխալում, խօսում էինք, թէ ինչ գոյնի են Շուշիկի աչքերը: Դա մեր խօսակցութեան անսպառ սիւժէն է:

—Նրանք չերտաքարի գոյն ունեն:

—Ոսկեչոյ:

—Ոչ, աւելի շուտ կանաչաւուն:

—Այո, այո, սքանչելի աչքեր:

Հէնց այդ բոպէին երևաց Շուշիկը: Այս անգամ նրա աչքերը մառախլապատ եղանակի նման էին՝ հիանալի գորշաւուն: Նրան բերում էր դայեակը: Այդ ջահիլ գեղջիկուհի դայեակը, որին անմիջապէս գիւղից ենք բերել—ուր նա խնամել է իր եօթ-ութ եղբայրներին—առաւօտից մինչև երեկոյ իր հայրենի Լորէնի երգերից է երգում: Երբ Փարիզ եկաւ, մի անգամ նրան ամբողջ օրը թողինք, որ չոջէ ու տեսնէ քաղաքը: Նա ուղղակի հրճուած վերադարձաւ. ինչ գեղեցիկ բոլակ էր տեսել... Այդ մասին նա գրեց հայրենիք՝ իրայիններին: Հէնց այդ միամրտութիւնից է, որ շատ լաւ է հասկանում Շուշիկին, որն էլ՝ ամբողջ աշխարհում միայն լամպեր ու ջրի շիշեր է տեսնում:

Շուշիկի գալուն պէս սեղանատանն աւելի ուրախութիւն տիրեց: Նա մեզ տեսաւ, ժպտաց: Մենք պատասխանեցինք ծիծաղով: Մայրը մեկնեց ձեռները, առաւօտուայ թեթիւ զգեստի թեքերը սահելով՝ մերկացրին նրա բաղուկները, և ես զգացի ամարային առաւօտուայ ջերմ շունչը: Շուշիկն էլ կարկառեց դէպի մայրը իր թեքերը՝ սպիտակ շորի թեքերով շրջապատուած մանրիկ թաթիկները, որոնք, տիկնիկինի նման՝ ոչ մի կերպ չէն ուզում ծալուել: Եւ այդ թեքերի միջից հինգ հատ վարդադոյն ճառագայթների նման երևում էին նրա չուած մատները: Այս տեսարանից հրապուրուած, մայրը կրքոտ շարժումով խից բալիկին և նստեցրեց ծնկներին: Երեքս էլ լիովին բախտաւոր

էինք. դա մասամբ նրանից էր, որ ոչնչի մասին չէինք մտածում:

Շուշիկը ձգուեց դէպի սեղանը և այնքան բացեց աչքերը, որ բոլորովին կորացան, ու սկսեց թաթիկներով այնպէս թակել սեղանը, որ թւում էր, թէ հէնց խկապէս փայտից էին չինուած այդ թաթիկները: Յանկարծ միաքը լուսաւորուեց գիտակցութիւնով, և աղջիկը ճշաց վիրաւոր թռչնիկի նման:

—Հօ գնդասեղը չը ծակեց զրան,—բացականչեց մայրը, որ բարեբախտաբար միշտ ուշադիր է կեանքի առօրեայ երևոյթներին:—Այդ անգլիական քորոցները աննկատելի են բացւում, իսկ Շուշիկի վրայ դրանցից ութ հատ կայ:

—Բայց ոչ, քորոց չէր նրան խցողը, այլ՝ գեղեցկութեան զգացումը:

—Ի՞նչպէս, գեղեցկութեան զգացումը, երեք ամիս քսան օրեկան հասակում:

Հէնց այդպէս էլ էր. պէտք էր միայն նայել նրան: Կիսով չափ մօր գրկից ազատուելով՝ բռունցքներով նա ծեծկում էր սեղանը, միևնոյն ժամանակ գործ դնելով ծնկների և ուսերի բոլոր ոյժը, փռնչում էր, լորձունք թափում և վերջապէս հասաւ ավսէներից մէկին, որի վրայ ինչ որ ստրասբուրգցի հին անշնորք վարպետ նշխել էր մի կարծիր աքաղաղ:

Աղջիկը ուզում էր առնել աքաղաղը ոչ թէ ուտելու համար, այլ որովհետև դա նրան գեղեցիկ էր թւացել: Եզրակացութիւնս յայտնեցի մօրը:

—Ի՞նչ յիմարն ես,—պատասխանեց նա.—եթէ Շուշիկը կարողանար ձեռքն առնել այդ աքաղաղն՝ անպատճառ բերնին կը մօտեցներ: Ծիչտ որ խելօք մարդիկ մի կաթիլ անգամ առողջ դատողութիւն չ'ունեն:

—Իհարկէ՝ բերանը կը տանէր: Բայց դա ի՞նչ է ապացուցում,—առարկեցի,—միայն այն, որ այժմ ունենալով չատ այլևայլ ընդունակութիւններ, զլիսաւորապէս իր տրամադրութեան տակ ունի մի զգայարանք՝ բերանը: Նա դրան գործածել է առաջ, քան տեսողութեան զգայարանքը և չատ էլ լաւ է արել: Կիսա բերանը իր տրամադրութեան տակ է: Երկար գործածութիւնից նա դառել է չրջապատող աշխարհը հետազօտելու մի նուրբ և զգայուն գործիք: Եւ իրաւացի է նրան դիմում: Հաւատացնում եմ, որ աղջիկդ հէնց ինքը ճշմարտութիւնն է: Այո, նա աքաղաղը բերանը կը տանէր, բայց ոչ իբրև անդարար մի բան, այլ գեղեցիկ իր: Փոքր մանուկների այդ սովորութիւնը պահւում է մեծերի լեզուի մէջ իբրև ձևաւոր դարձուածք:

Մենք ասում ենք՝ ճաշակ ունենալ երաժշտութեան, զրամայի, պոէզիայի մէջ...

Ես չարունակում էի արծարծել իմ միտքը, որ եթէ արտայատուած լինէր ոչ այնքան պարզ և դիւրիմայ կերպով, զիտնականներից կ'ընդունուէր որպէս փիլիսոփայական ճշմարտութիւն: Այդ միջոցին Շուշիկը եղունգներով չանդոտում, բըռունցքներով թակում էր ափսէն, գիմելով նրան իր քաղցր, խորհրդաւոր թոթովանքով և յետոյ թրխոցով շուռ էր տալիս այն:

Այդ միջոցին նա այնքան էլ ճարպիկութիւն չէր ցոյց տալիս, ոչ. նրա շարժումները զուրկ էին կանոնաւորութիւնից: Ամեն մի շարժում, որքան էլ նա պարզ լինի, շատ դժուար է, եթէ հմտութիւն չը կայ: Իսկ ինչ հմտութիւն կարելի է ունենալ կրեք ամիս քսան օրեկան հասակում: Մի մտածեցէ՛ք՝ ճկոյթը շարժել կարողանալու համար ինչքան ջղեր, մկանունքներ ու ուկորներ կառավարել պէտք է գիտենալ: Խաղատիկիներէ թատրոն կառավարելը դրա հետ համեմատած՝ ոչինչ է: Որպէս խորագանին հետադոտող՝ Դարվինը հիանում էր փոքր երեխաների ծիծաղելու և լալու ընդունակութեան վրայ: Նա իր մի ահագին գրուածքով բացատրում է, թէ այդ ինչպէս են անում նրանք:

Պ. Վոլայի ասելով՝ «մենք, բոլոր գիտնականներս անխիղճ ենք լինում»:

Բարեբախտաբար ես այնքան էլ մեծ գիտնական չեմ, ինչպէս պարոն Վոլան է: Ես սահմանափակ մարդ եմ. փորձեր չեմ անում Շուշիկի վրայ, այլ բաւականանում եմ լոկ գիտելով, եթէ կարողանում եմ այդ անել առանց նրան զայրացնելու:

Նա չանդոտում էր իր աքաղաղին և զարմանում, թէ ինչպէս տեսանելի առարկան ձեռքով չի բռնւում: Դա նրա հասկացողութիւնից բարձր էր: Ասենք ամեն ինչ վեր է նրա հասկացողութիւնից: Եւ հէնց այդ է, որ նրան դիւթիչ է դարձնում: Փոքրիկ երեխաները ապրում են անվերջ հրաշալիքների մէջ. ամեն բան նրանց հրաշք է թւում: Ահա թէ ինչու նրանց հայեացքում այնքան պոէզիա կայ: Գտնուելով մեզ մօտ, նրանք ապրում են ուրիշ աշխարհում: Նրանց չըջապատում է մի անյայտութիւն, աստուածային անյայտութիւն:

— Խենթնակ է, — ասաց մայրը:

— Սիրելիս, աղջիկդ խենթ չէ, այլ մտածող է: Երբ մի գեղեցիկ իր ես տեսնում, ուզում ես տիրանալ նրան: Այդ ձրգատումը մեր բնոյթի յատկանիշն է, օրէնքներով նախատեսուած: Բերանժէի գնչուներն ասում են, որ տեսնել—նշանակում է

ունենալ. այդպիսի մարդիկ հազաազիւտ են: Եթէ ամենքը նըրանց հայեացքն ունենային, ոչ քաղաքակրթութիւն կը լինէր, ոչ էլ արուեստներ, ինչպէս հրային երկրի բնակիչները՝ մենք էլ մերկ կը պտտէինք: Այդ քո ճաշակով չէ: Դու սիրում ես հընութիւնները և նրանցով զարդարում տունդ: Ես քեզ չեմ կընտամբում դրա համար՝ ընդհակառակը: Բայց հասկացիր և Շուշիկին իր աքաղաղի հետ:

—Ես նրան հասկանում եմ. նա նման է այն տղին, որ պահանջում էր դոյլի ջրի միջից հանել լուսինը և իրան տալ, բայց չը ստացաւ: Սիրելիս, չ'երևակայես, թէ նկարած քաղաղին նա ընդունում է իսկականի տեղ, որ երբեք տեսած չէ:

—Իհարկէ՝ ոչ: Բայց նա իլլիւզիան ընդունում է իրականութիւն, և դրա պատճառը նկարիչներն են: Դարերից ի վեր նրանք ճշում են զծերի և գոյների միջոցով առարկաների տեսքը ընդօրինակել: Հապա միթէ զարմանալի է, որ այդքան ճիշդերից յետոյ նրանցից մէկին աջողուեց վերջապէս գայթակղեցնել մի երեք ամիս քսան օրեկան երեսայի: Իլլիւզիա... Նա իմ չէ գայթակղեցրել: Նոյն իսկ գիտութիւնը, որով ներկայիս այնպէս անխղճօրէն գլուխ են տանում, միթէ նա էլ տեսականից դէնն է անցնում, դէնը նրանից՝ ինչ թւում է: Ի՞նչ է որոշում պ. պրոֆեսսոր Րոբէնը իր մանրագիտակի ապակու տակ. միայն տեսականութիւն, ուրիշ ոչինչ: Դեռ էւրիպիդէսնասել է. «զուր են մոլորութիւնները անդադար մեզ չ'իոթում»:

Այսպէս դատելով, քիչ էր մնում սկսէի մեկնել էւրիպիդէսի սոսածները և իհարկէ՝ կը հասնէի այնպիսի խոր եզրակացութիւնների, որ խեղճ կանաչավաճառ կնոջ որդին երազած էլ չէր լինի: Բայց յանկարծ ինձ չըջապատող միջավայրը փրկիսփայական տեսական մտորումների համար ուղղակի աննպաստ դառաւ: Չը կարողանալով աքաղաղին բաժանել ափսէից, Շուշիկը բարկութիւնից բռնկուեց: Նրա երեսը ալ կակաչ դարձաւ, քիթը նեղրի քթի պէս լայնացաւ, թշերը ուռան, աչերն անյայտացան, յոնքերը ճակատից վեր ելան, ճակատը վարկենաբար կնճոռտուեց, փոքրիկ հրաբուլիսի նման փոսիկներով, ուռոյցքներով ծածկուեց, իսկ մինչև ականջները բացուած բերանից սարսափելի, ոչ մարդկային ձիչ լսուեց:

—Հիանալի,—գոչեցի.—դա կրքերի բռնկումն է: Կիրքը պանչելի բան է: Աշխարհում ամեն մեծ գործ կատարուել է մի որոշ կրքի ազդեցութեան տակ: Ահա նրա չնչին կայծը չքնաղ մանկան չինական փոքրիկ աստծու նման մի այլանդակ դարձրեց: Աղլիկս, լիովին գոհ եմ քեզնից: Ունեցիր հզօր կրքեր. թող նրանք ուժեղանան ու մեծանան քեզ հետ: Ապագայում,

եթէ կարողանաս կառավարել, նրանց ոյժը քոնը կը լինի, իսկ վեհութիւնը՝ քո գեղեցկութիւնը: Կրքերը մարդու բարոյական գանձերն են:

—Ի՞նչ Սողոմ է,—բղաւեց Շուշիկի մայրը:—Այս սենեակում բարձրաձայն զառանցող փիլիսոփայի և նկարած սքաղաղը իսկականի տեղ ընդունող երեխայի հետ նստած՝ կարելի է խլանալ: Խեղճ կանայք, որքան առողջ դատողութիւն է պէտք, որ կարողանաք յարմարուել ամուսիններիդ և երեխաներիդ:

—Այդպէս ուրեմն,—ընդհատեցի նրան.—մեր աղջիկը առաջին անգամ կենսքումը արտայայտեց ձգտում դէպի գեղեցիկը: Գեղեցկութիւնը անդունդի նման մի քանիսների համար ձգողական ոյժ ունի,—դա վեհ հոգիների բնական ձգտումն է: Բայց նրան չը պէտք է ենթարկուել վաղաժամ և չափազանց թոյլ ոյժերով: Սիրելիս, դու կարող ես թեթևացնել Շուշիկի տանջանքները, դրա համար ունես ամենահզօր կախարդանք, օրօր ասա նրան...

II

Աստղիկ

Այսօր Շուշիկի տարին լրացաւ: Արդէն մի տարի է, որ ապրում է այս մոլորակի վրայ և ինչքան փորձառութիւն է ձեռք բերել նա: Ով տասներկու տարուայ ընթացքում կ'կարողանայ նրա չափ օգտակար տեղեկութիւններ ստանալ, կը լինի երեկի մարդկանցից մէկը: Փոքր երեխաները չ'ճանաչուած հանճարներ են: Նրանք գերբնական ոյժով աշխատում են աշխարհին տիրանալ: Ոչինչ չէ կարող համեմատուել մանկան առաջին աճումի կամ նրա հոգու առաջին արտայայտման հետ: Մի մտածեցէք, այդ փոքրիկ արարածները տեսնում են, շօշափում, խօսում, դիտում, համեմատում, նկատում, յիշում, նրանք քայլում են, զբօսնում, խաղում: Վերջինը մանաւանդ զարմանքի արժանի է: Տիկնիկներ, երգեր—անա համարեա ամբողջ Շեքսպիրը:

Շուշիկը մի մեծ զամբիւղ խաղալիքներ ունի. ինչպէս օրինակ՝ ջարդուած արկղիկներ, հին քսակ, փալատներ, արշին, մկրատի պատեան, երկաթուղային ուղեցոյց և փոքրիկ քնար: Այդ ամենը ողորմելի տեսք ունենալով նրանց և չքապատող ուրիշ իրերից ոչ մէկին առաւելութիւն չէ տալիս: Նրա համար ամբողջ աշխարհը նշխած, տալած մի մեծ խաղալիք է: Եթէ մէկը կարողանար թափանցել Շուշիկի աշխարհայեցողութեան մէջ ու

դրան վերագրէր նրա ամեն մի վարմունքն ու միտքը, կը զարմանար փոքրիկ գլխի տրամաբանօրէն գործելու վրայ: Բայց մենք դատում ենք նրան ոչ թէ իր, այլ մեր հայեցակէտով, և որովհետեւ մեր դատողութիւնից չ'ունի նա, դրականապէս կարծում ենք, թէ բոլորովին զուրկ է դրանից: Ո՛րպիսի անարդարութիւն: Իսկ ինչ վերաբերում է ինձ, կանգ առնելով ճիշտ հայեցակէտի վրայ, խիստ հետևողականութիւն եմ տեսնում այնտեղ, ուր խորը չ'ուսումնասիրողը տեսնում է լոկ մի շարք անկապ ու չը մտածուած վարմունքներ: Միևնոյն ժամանակ մի փոքր անգամ ես չեմ սխալւում: Ես երեխաներով հրճուող հայրերից չեմ. գիտեմ, որ ուրիշներից իմը ոչնչով լաւ չէ: Ես առանց չափազանցութիւնների եմ խօսում աղջկաս մասին: Միայն ասում եմ կնոջս, որ այս երեխայի մէջ շատ պոէզիա կայ:

—Շուշիկի մէջ պոէզիա, էլի ինչե՛ր հնարեց: Նրա միակ բաւականութիւնը խոհանոց վազելն է: Մօտ օրերս նրան աղբակոյտով հրճուելիս տեսայ, և այդ պոէզիա անուանել:

—Անտարակոյս, սիրելիս, անտարակոյս: Ամբողջ բնութիւնը արտացոլում է նրա մէջ այնպէս, ինչպէս կայ և այնքան մաքուր, որ նրա համար գոյութիւն չ'ունի կեղտը, չը կան դուրս նետած բաներ ու աղբ: Ահա թէ ինչու մօտ օրերս դու նրան հրապուրուած դտար խեցիների, կաղամբի տերևների և այլ բաների առաջ: Այո, նա հրճուած էր այդ ամենով: Ասում եմ քեզ, որ բնութիւնը նրա աչքում կերպարանափոխւում է, ինչպէս մի հրեշտակի առաջ, և ինչի վրայ նայում է, ինչին ձեռք է տալիս, ամենը ստանում է նրա մաքրութեան կնիքը:

Այդ խօսակցութեան ժամանակ Շուշիկը գնաց պատուհանի առաջ: Մայրը մօտեցաւ ու գրկեց նրան:

Խաղաղ ու տաք երեկոյ էր: Թափանցիկ ստուերները ընկնում էին ակակիայի թփերի վրայ: Սպիտակ ծաղիկները լուռ թափւում էին նրանց ճղներից և սփռում մեր պարտէզը: Նայում էինք այդ սպիտակ շաւիղներին: Կիսով չափ բնից դուրս ընկած շունը մրափում էր՝ դունչը թաթերին դրած: Խորին լռութիւն էր տիրում: Երկիրը կարծես լողում էր կապտաւուն երկնի շողերի մէջ: Երեքս էլ լուռ էինք:

Այն ժամանակ, գիշերուայ հանդիսաւոր լռութեան մէջ, Շուշիկը որքան կարող էր՝ վեր բարձրացրեց թաթիկը և մատի ծայրով, որ երբէք լիովին չէր կարողանում բանալ, ցոյց տուեց մի աստղիկ: Այդ փոքրիկ մատը սկսեց ծալուել, կանչել, կոչել... և Շուշիկը խօսեց աստղի հետ. նրա ասածը բառերից չէր կազմուած, դա անհասկանալի մի լեզու էր, ինչպէս թռչնի-

կի երգը հրաշալի, խորհրդաւոր... այն, ինչ ասում է երե-
խայի հոգին, երբ նրա մէջ առաջին անգամ ընկնում է երկնային
լուսատուի կայծը...

—Միծաղելի աղջիկ,—ասաց մայրը զղացուած ձայնով ու
սեղմեց նրան կրծքին:

Թարգմ. Շ. Դ.

ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԵԱՆՑ

(Նրա գրական գործուն. 40-ամեակի առիթով)

III

Աղայեանցի վերադարձը.—նրա գործունէութիւնը դպրոցական ասպարիզում.—
Մանկական գրականութիւն.—Հէքիաթները.—Ոտանաւորները.—Մանկական բա-
նաստեղծութիւնները.—Աղայեանցը իբրեւ թարգմանիչ:

Պետերբուրգում Աղայեանցը մնաց մինչև 1867 թիւը, երբ
Դէորդ կաթողիկոսի կողմից հրաւիրուեց Էջմիածնի տպարանը
կարգի դնելու: Նա վերադարձաւ Թիֆլիս, ուր և ամուսնացաւ:
Էջմիածնում նրան յանձնեցին տպարանի վերահսկողութեան հետ
նաև Արարատ-ի խմբագրի պաշտօնը: Արարատում նա սկսեց
առանձին ուշադրութիւն դարձնել դաստիարակչական խն-
դիրների վրայ, բայց մինչև վերջը չը կարողացաւ իր յօդուած-
ներն ազատ տպագրել, որովհետև քիչ ժամանակից նրան ստի-
պեցին ենթարկուել մի տեսակ ցենզուրայի: Ապա ընդհարուե-
լով Մանկունի եպիսկոպոսի հետ՝ նա հեռացաւ Էջմիածնից:

Դրանից յետոյ սկսւում է նրա գործունէութիւնը իբրև
ուսուցիչ և տեսուչ՝ Ախալցխայում, Ալեքսանդրապոլում, Երևա-
նում, Շուշում, Թիֆլիսի թեմում ևայլն: Մէկ ու կէս տարի
Փորձ-ի խմբագրի օգնական է եղել, բայց ոչինչ էլ կարողացել
գրել երևի անհամապատասխան միջնորդութիւն պատճառով:

Շուշում եղած ժամանակ նա գրեց իր «Անահիտը»:

Ապա նա հրաւիրուեց տ. Ս. Բաբայեանցի մանկապարտէ-
զը, ճորտեղ, ասում է նա, գրում էի մանկական երգեր... Այդ
օրուանից յետոյ ահա ես գլխովին նուիրուեցի մանկական գրա-

կանութեան, որոնք տպագրուեցին Աղբիւրում մի քանի տարի շարունակ»։ Նոյն այդ թւականներին էլ նա ղեկավարում էր «Աղբիւրը», որը դարձաւ բաւական կենդանի մանկական ամսագիր։

Այն օրուանից, երբ նա զլիսովին նուիրուեց մանկական գրականութեան, նա սկսեց գրել հէքիաթներ։ Սրանք մեծ մասամբ ժողովրդի մէջ եղած հէքիաթներն են, որ Աղայեանցը պատմում է իր գրաւիչ, սահուն ոճով, կոկելով, շտկելով։ Նրա հէքիաթներն են, որ նրան դարձրել են մեր մէջ մի եզակի գրող։ Նրա հէքիաթներն են—Անահիտ, Տորք-Անդեղ, Արեգնազան, Օձամանուկ և Արեահատ, Արեամանուկ, Օշափ, Ասլան-Բալա, Ջանգի-Ջրանգի, Եղեգնուհի, Այծատուր, Մանուկ-Խան. ապա մանր պատմութիւններ, փոքրիկ հէքիաթներ, աւանդութիւններ, որոնք մեծ մասամբ ղրուած են նրա դասագրքերի մէջ։

Առաջին հէքիաթը, որ նա գրել է, «Անահիտ»-ն է։ Ես մտադրութիւն չ'ունեմ Աղայեանցի հէքիաթներով մանրամասն զբաղուելու, քանի որ դա մի յատուկ ուսումնասիրութեան խնդիր է, նրանց համեմատելով Անգլերսենի և ուրիշների ստեղծագործութեանց հետ և դուրս բերելով Աղայեանցի տաղանդի առանձնայատկութիւնները։ Բայց մի համառօտ ակնարկ կ'անեմ դրանց վրայ. նկատողութեան արժանի է մի կողմը—Աղայեանցը հէքիաթներում նոյնիսկ մեծ հաճոյքով ընտրում է և շեշտում այնպիսի հերոսներ և առանձնայատկութիւններ, որոնք նրա կեանքի գծերում առանձին ուշադրութիւն են զրաւում. զրանով ևս ապացուցւում է, որ Աղայեանցը իր ոգևորութեան աղբիւրը գտնում է զլիսաւորաբար իր կեանքի մէջ։

«Անահիտը» աչքի է ընկնում նրանով, որ նա մի կամուրջ է վէպից դէպի հէքիաթ։ Իբրև ֆոն հէքիաթի բովանդակութեան համար ընտրուած է այն պատմական ժամանակը, երբ Մեսրոպ Մաշտոցը քարոզում էր քրիստոնէութիւն և տարածում էր հայոց գիրը։ Պատմական իրականութիւն պատկերացնող այդպիսի կտորների հետ Անահիտում մենք հանդիպում ենք առասպելական ստորերկրեայ մութ շէնքերի, ուր աշխատեցնում են մարդկանց և մարդի միս են ուտեցնում, թագաւորի որդին սիրահարւում է նախընտ աղջկան, նախընտ աղջիկ Անահիտը դառնում է մի շատ խելօք թագուհի, քաջ, պատերազմող և այլն... կտորներ, որոնք զուտ հէքիաթային են։ Հէքիաթի հիմնական միտքն այն է, որ ամեն ոք պիտի արհեստ գիտենայ, մինչև անգամ թագաւորի որդին, որովհետև՝

Ամեն հոգի, ամեն անհատ, եթէ գիտէ արհեստ, ուսում,
 Նա չի լինիլ տնանկ, աղքատ վտանգալից մեր աշխարհում:
 Արհեստն է, որ նաղբուրի պէս միշտ բոխում է, միշտ ծլծլում,
 Թէպէտ եւ մերթ նւազում է, բայց բնաւին չի ցամաքում:

Աղայիանցի հէքիաթներից, այսպէս ասած, ամենահէքիաթականը, անդուսպ ֆանտազիայով հարուստը «Արեգնազան»-ն է, ուր պատկերացրուած է սեռական անմեղութիւնը այն աստիճանի, որ հերոսը չը գիտէ, ինքը տղայ է, թէ՛ աղջիկ. բայց աղաւնի աղջկան ջրումը լողանալիս տեսնելով, զգաց իր մէջ մի անսովոր, շատ հաճոյական բան, ապա ջրին նայելով տեսաւ երեսին նորածիլ բեխեր ու մօրուք և նոր խմացաւ, որ տղայ է եղել ինքը: Ահա այդ անմեղ արարածի ձեռքով է, որ վերջ է արւում չարի տիրապետութեանը: Նա խզում է չար պառաւի կախարչական գաւազանները, կեանք է տալիս նրա քարացրած քաղաքին, ձեռք է բերում անմահական ջուր, նրանով բժշկում է թագաւորի աղջկան, նրա հետ ամուսնանում է, թագաւոր է դառնում և կախարչական գաւազանները ծովը գցելով՝ «չար ողինների ու նրանց արքանեակների իշխանութիւնը» վերացնում է աշխարհից:

Տորք-Անգեղը, որ կէս պոէմա է, կէս հէքիաթ, աչքի է ընկնում բոլորովին ուրիշ տեսակէտից: Այնտեղ մենք գտնում ենք բնաւորութեան աւելի հետաքրքիր, մանրամասն, բազմակողմանի պատկերացում, աւելի հասուն գաղափար, աւելի գեղեցիկ բանաստեղծական նկարագրութիւններ: Այսպէս է նկարագրուած Տորքի արտաքինը.

Տորքը չէր նման հասարակ մարդու,
 Այլ մի աժդահա եւ շատ ահարկու.
 Աչքերը կասես մի-մի կապոյտ ծով՝
 Ճաճանջաւորուած արեւի լուսով.
 Սեւ-սեւ ունքերը՝ մուժ ամպի նման՝
 Բարդ-բարդ կուտակուած աչքերի վրան.
 Քիթը կորընթարթ, իբրեւ մի բլուր,
 Ատամներն ուրազ, եղունգները թուր.
 Կուրծքը կասես թէ մի լանջ է լեռան,
 Մէջքը սարաժայռ, կռները գերան...

Այս կազմուածքով Տորքը շատ ուժեղ է, նրան հնազանդում են առիւծներն ու վագրերը, որոնք նրա հօտի պահապաններն են. նա իր ուժը գործադրում է նաև ժողովրդին պաշտ-

պանելու Սև ծովի կողմից եկող աւազակները դէմ, նա շատակեր չէ և համբերող է. լաւ ճաշակ ունի, ժայռից քանդակում է արձաններ: Նա երազում տեսել է և սիրում է Հայկանուշ դեղեցիկին, որը ապրում է մի ամրոցի մէջ: Նա գնում է այդ ամրոցը և իր ուժով ու ճարտիւթեամբ երկիւղ է ազդում իրան հակառակորդ հսկաներին, որոնք յետ ևն քաշւում և թողնում են Հայկանուշին ուղեւոր միտքը: Իսկ ինքը պիտի մրցէր Հայկանուշի հետ և յաղթէր, սպա կարող էր միայն նրա ամուսինը դառնալ. բայց մի ծերունի հսկայ ասում է.

Ես կը հրամայեմ, որ մեր օրէնքով
Մրցէք իրար հետ, բայց... սիրոյ գէնքով.
Թող սէրը լինի ծեր գէնքը մի հատ,
Սիրեցէք միմեանց մինդ միւսից շատ.
Դու նրան պաշտպան, նա քեզ պահապան,—
Ահա օրէնքը սուրբ ամուսնութեան:

Աղայեանցի միւս հէքիաթներէն՝ մեզ հետաքրքրող հարցի տեսակէտից ատանձնապէս աչքի է ընկնում «Օշափը»: Սա առանձին ոգևորութեամբ և վերաալայ տրամադրութեամբ գրուած մի հէքիաթ է՝ հիւստուած հին Յունաստանի առասպելների վրայ: Ասիայում, Լիկիայի թագաւորութեան մէջ դուրս է ընկել մի հրէշ, որին անուանում են Քիմեր կամ Խիմերա, բայց Աղայեանցը անուանում է «Օշափ»: Սա երեք գլուխ ունի, առիւծի, այծի և օձի, որոնց բերաններից կրակ է ժայթքում և լափում ասե՛ն ինչ. նա արագավազ է և ճարպիկ, քարուքանդ է արել երկիրը: Լիկիայի թագաւորին տեսութեան է դալիս Բելլերոֆոն անուանով մի երիտասարդ, որի քաջ կերպարանքը տեսնելով՝ թագաւորը առաջարկում է նրան գտնել Օշափին և սպանել: Բայց երիտասարդը նկատում է, որ Օշափի նման զօրաւոր և արագաշարժ հրէշի հետ յետիոտն չէ կարելի կուել, հարկաւոր է ունենալ մի շատ լաւ ձի. և դա կարող է լինել միայն Պեղասը, այն թիաւոր ձին, որ «օղի մէջ աւելի արագ է թռչում, քան վազում է երկրի երեսին»: Երիտասարդին ամեն կողմից սկսում են համոզել, որ թիաւոր ձի չը կայ, դա առասպել է. բայց նա չէ լսում, ճանապարհւում է Ելլագա, ուր Պեղասը երբեմն դալիս է Պիրենայի աղբիւրից ջուր խմելու: Երկար համբերեց, տուկաց երիտասարդը, մինչև յաջողեցրեց ձեռք բերել Պեղասին, նրանով եկաւ Լիկիա, կուեց Օշափի հետ, թէև քիչ վիրաւորուեց, բայց յաղթեց նրան և երկիրն աղատեց նրա ճիրաններից:

Ասացի, որ այս հէքիաթը մի առանձին ոգևորութեամբ և վերասլաց տրամադրութեամբ է գրուած, ինչու. որովհետև Աղայեանցը ինքը իր հայրենիքում տեսաւ մի նոյնանման Օշափ, բայց նրա հետ յաջողութեամբ կուելու համար նա զնաց հետու երկիր, սպասեց, տուաց, ձեռք բերեց թեաւոր ձին և վերադարձաւ հրէշի դէմ կուելու: Այս հէքիաթում Աղայեանցը այնքան է ոգևորուում, որ չի համբերում, այլ փակադծի մէջ՝ կարգացող երեխաներին մի այսպիսի խորհուրդ է տալիս. «Ես ձեզ, սիրելի մանուկներ, խորհուրդ չեմ տալ կուելու այս երկրային զգուշի արարածների հետ, մինչև ձեռք բերած չը լինէք օղեղէն թեաւոր ձին»: Ահա այս հանգամանքն է պատճառ Օշափի առանձնապէս գրաւչութեան:

Այս տեսակէտից ուշադրութիւն են գրաւում նաև Ասլան-Բալա և Մանուկ-Խան հէքիաթները:

Ասլան-Բալա-ում նկարագրուած թագաւորի որդին՝ Վուրգը՝ պառաւի կուժը կոտրած լինելու պատճառով՝ նրանից անէծքի է արժանանում, որ Անտես-Աննամանի սիրովն այրուի, տանջուի: Եւ ազդուած պառաւի անէծքից, սիրելով Անտես-Աննամանին, Վուրգը ընկնում է մի այնպիսի հոգեկան տրամադրութեան մէջ, որ Աղայեանցի մանկութեան դէպքերն են յիշեցնում: Այստեղ նա պատկերացրել է անզուսպ տենչի զօրութիւնը. ապա շարունակութեան մէջ բուն պատմութիւնը թողնելով՝ բացատրում է այսպէս. «Այս այն սէրը չէ, որ մեր ժամանակ մեր աշխարհում կայ: Սա սէր էլ չէ իսկապէս, այլ մի զօրեղ փափագ, մի ուժղին իղձ, մի սաստիկ ցանկութիւն, մի մուրազ և ուրիշ այնպիսի զգացում, որ մարդ ունենում է իր սրտի ուղած երջանկութիւնը ձեռք բերելու համար: Այսպիսի իղձ մարդ կարող է ունենալ և՛ ուսում, դիտութիւն ձեռք բերելու համար, իր ուղած նշանաւոր միտքը իրագործելու համար, և՛ ուրիշ շատ բաների» (Աղբիւր, 1890.)

Իսկ Մանուկ-Խանը Աստու ընտրած մի երեխայի պատմութիւն է, ինչպիսին իրան համարում է Աղայեանցը: Հէքիաթի սկզբում նա ասում է. «Ինչպէս մեծերի մէջ կան տխմար և խմաստուն մարդիկ, մանուկների մէջ էլ կան տխմարներ և խմաստուններ: Իմաստութիւնը հասակից կախումն չ'ունի. այդ մի շնորք է, որ Աստուած նրան է տալիս, ում ընտրում է ինքը: Այսպիսի ընտրուածներ շատ քիչ են լինում թեով...» (Աղբիւր, 1890.)

Գեղեցիկ է նաև «Եղեգնուհին», ուր պատկերացրուած է այն գաղափարը, որ շարութիւնը միշտ կը պատժուի, իսկ անմեղու-

թիւեր և արդարութիւնը՝ ուր լինի, ինչ տեղ էլ նրան ուզենա-
նան թաղցնել, երևան կը գայ:

Այսպիսով մենք տեսնում ենք, որ իւրաքանչիւր հէքիա-
թով Աղայեանցը մի առաքինութիւն է պատկերացնում:

Աղայեանցի գրական գործունէութիւնը չի սահմանափակ-
ւում միայն վիպականով, նա ունի նաև ստանաւորներ, մի կողմ
թողնելով նրա ոչ մականան ստանաւորները, որոնց մէջ զգաց-
մունքի ու ժեղութեամբ աչքի է ընկնում նրա «Մանկական թո-
թովանքը», ևս կ'անցնեմ նրա մանկական ստանաւորներին:

Աղայեանցն իր ստանաւորների մէջ կարողանում է նիւթը
վերածել երեխայի հասկացողութեան աստիճանի համեմատ: Դրանց
այս յատկութիւնն է պատճառ, որ երեխաները համարենա տաջին
ուշագիւր ռենկեգրութիւնից յետոյ արդէն անպիւր գիտեն գրանց,
քանի որ իրանց հասկացողութեան բողբոջին մատչելի բովան-
դակութիւնը գտնում են արտայայտուած պարզ մանկական
լեզուով:

Օրինակ նրա «Չմեռ» ստանաւորը Այստեղ ձմեռը գուրս է
բերում իբրեւ կեղծաւոր ծերունի, որ մարդկանց մէջ խրո-
րութիւն է գնում, հարուստին լաւ հագուստ ու կերակուր է
տալիս, իսկ աղքատին մրսեցնում ու քաղցած է թողնում: Ձմե-
րան կատարածը այսպէս է պատկերացրում

Դրա երկիւղից ջուրը քար կտրեց,
Քչրջան առուն լոկց, պապանծեց,
Գալար բոյսերը սառան, փխտոցան,
Հախշուն հաւքերը թռան, հեռացան...
Աիրուն վարդենու թուփը չորացրեց,
Սոխակի լեզուն արմատից կտրեց:

Ձը յուսահատուող, հաստատակամ բնաւորութիւն է գուրս
բերում «Ծիծեռնակի յիշողութիւնները» ստանաւորում: Ծի-
ծեռնակը անցեալ տարուայ բունն է յիշում, իր ձագերին է յի-
շում, որոնց արխնարբու թշնամին ճանապարհին յափշտակեց,
այժմ վերագործել է, բունը աւերակ է գտել, բայց չի յուսա-
հատում,

Բայց նա կրկին բոյն է շինում,
Ե՛ւ շինում է, եւ կրգում,
Ամեն մի շիւղ կայնելիս՝
Առաջուայ բոյնն է յիշում:

Ահա և նրա «Պատառի հորթը»։ Քսան կարճ-կարճ տողերում ամփոփուած մի ամբողջ զրամա է զա իր հանդուգով, լուծումով։ Այստեղ կը գտնէք ե՛ր հոգեկան կախ, ե՛ր յուսահատութիւն, ե՛ր յուսադրութիւն, ե՛ր յաջող վախճան։ Նախ տեսնենք, թէ ինչ պոյմաններում առաջացաւ զրաման.

Զիւն էր դալիս փաթիլ-փաթիլ,
Հետն էր անձրեւ կաթիլ-կաթիլ:

Այս մի քանի խօսքերով արդէն պատրաստ է ամբողջ միջափայրը, որտեղ կատարուել է զրաման։ Ապա իսկոյն ներկայանում են զործող անձինք.

Այդ միջոցին մի պառաւ կին
Հորթ էր փնտրում դաշտի միջին:

Կովի վերադառնալու ժամանակն է, և պառաւը նախապէս սկսել է փնտրել հորթը, որ կովը եկածին պէս՝ ինքը չիւար չը մնայ։ Բայց զա չի յաջողում.

Կովը եկաւ տաւարիցը՝
Կուրծք ու ծծեր կաթով լիքը.
«Հորթուկա ուր է», նա քառաչեց,
Խեղճ պառաւին լացացրեց:

Խեղճ պառաւը իր զգացմունքի քնքշութիւնից և յուսահատութիւնից չը դիմացաւ, արտասուեց։ Եւ եթէ մի քիչ էլ երկարի այս դրութիւնը, կարգացող երեխան էլ կ'արտասուի, եթէ մանաւանդ նա իրանց տանը նոյնանման զէպքերի ակոնտատէ է եղել։ Բայց երեխան այդ վիճակից ազատոււմ է.

Մինչդեռ այսպէս պառաւ ու կով
Ողբում էին լաց ու կոծով,
Յանկարծ լսեց մի քարակ ծայն,
Կովն իմացաւ, որ հորթն է այն:

Էլ երկարաբանութիւն հարկաւոր չէ. քարակ ձայնը բաւական է, որ կովը իր մայրական լնազդով իսկոյն ճանաչի իր

հորթուկին: Յուսայ ճառագայթը ծագեց, էլ այնքան յուսահատա-
կան չէ մթնոլորտը:

Կովը վազեց քառաչելով,
Պառաւն նարից տնքանքալով.
Կորած հորթը մօրը գտաւ,
Լիք ծծերը բերանն առաւ:

Կովի բառաչելով վազելը և պառաւի հետեւելը նրան
տնքանքալով՝ արդէն լրացնում են պատկերը՝ իրական ճշտու-
թեամբ վերաբաշխելով մանուկի մարմնում կովի պատկերը և ի-
րանց տատիկի երբեմն տնքանքալով մի բանի շտապելը. դրա
հետ միասին սպասողական լարուած վիճակը հասնում է իր պա-
գաթնակէտին, երբ խմացւում է, որ կովը գտաւ հորթին և
սկսեց իսկոյն ծծել: Ապա խմանում ենք, որ հորթուկը

Խփեց բոլոր կամն ու տկզեց,
Տանտիկնոջը բան չը թողեց.
Բայց պառաւ այս անգամին
Սիրով ներեց չար հորթուկին:

Եւ դարձանալի էլ չէ. մի այգւլիսի ուրախութեան առի-
թով արժէր զոհել ամբողջ կաթը, և երեխերքն էլ, որ պիտի
խմէին այդ կաթը, անչուչտ աւելի ուրախ են, որ մի անգամ
մուսայ կաթից կը զրկուեն, քան ամբողջ հորթուկից:

Գեղեցիկ անտէնակալներ է պատրաստում երեխային «ջա-
ղացականի ննջարանը». նախ պատկերանում է ջրաղացը.

Երեք-չորս հատ ջրաղացարար
Կարգով շարւած՝ սլոտում են,
Իրանց տնեղ գրգռոցով
Ամբողջ շէնքը գոգողում են.
Չախչախների չրխչրխոցից
Մարդի տկանջ խլանում է:

Եւ եթէ երեխան մի անգամ իրականութեան մէջ տեսել է
այս, լինչպէս նրա երեւակայութեան մէջ կը վերակենդանանայ
ջրաղացը իր ամբողջ գրգռոցով ու ժխտով: Բայց ինչպէս նա կը
զարմանայ, երբ կարգայ շարունակութիւնը.

Իսկ ջրաղացպանն ավրամամախ
Խոր քունն ընկած՝ խռմիում է:

Ի՞նչպէս կարելի է քնել այդ ազմուկի մէջ և այլ հարցեր
պիտի առաջանան բնական հետաքրքրութիւնից չը զրկուած
երեխայի մէջ. իսկ երբ նա շարունակի մինչև վերջը,

Բայց ջաղացը եթէ յանկարծ
կտրել ձայնը, լուէ, սառչի,
Ենչպիսի մի թունդ թնոցանոցից՝
Ջաղացիսնը վեր կը թռչի...

այս տարօրինակութիւնը բոլորովին պիտի սուշեցնէ երե-
խային, որը պիտի կարիք զգայ այս երեւոյթի բացատրութիւնը
լսելու:

Ոչ պակաս տնակնկալներ է տալիս և «Հովի սնկողի-
նը»: Հովի մահճակալը սարի լանջն է, բարձր՝ չկէտ քարը,
վերմակը մի հին կարպետ, սրա վրայ տեղացրէք և այն, որ

Երբ անձրեւ է կամկամում,
Եւ կարպետը թխթխկում,
Հովին անուշ քնի մէջ
Քաղցր երազ է տեսնում
Եւ խնում, ծիծաղում...

Եւ մնում է միայն բացականչել՝

Ուխա՛յ, ուխա՛յ, սիրուն հովիւ,
Քունդ անուշ...

Ապա «Արև» ոտանաւորը: Երեխան տեսել է, որ արևը
մեզանից հեռացաւ զէպի հարաւ, ձմեռը եկաւ ու ամեն բան
տարաւ: Այժմ որ արևը նորից եկել է, երեխան արտայայտում
է իր գոհունակութիւնը, տեսնելով՝ թէ ինչպէս փթթել է ծառ
ու ծաղիկ, կանաչ լոտոս, թէ ինչպէս արեւին են զոյգում

...Թռչնիկները

Իրանց քաղցր դալլալով,
Հովին իր մեղմ սրինգով,
Հոտաղն անուշ հովտով:

Եւ բանտատեղծը մանկանալով՝ իջնում է մինչև երեխայի
հասկացողութեան սառիճանը, և ստանաւորը մենք տեսնում
ենք վերջացած հետեւեալ տողերով.

Ձէ, արեւ ջան, էլ չը գնաս,
էլ չը թողնես մեզ կարօտ,
Գնո՛ւ քնիր զիշերները,
Առաւօտը եկ մեզ մօտ:

Աղայեանցը ունի նաև թարգմանութիւններ, զլիսաւորաբար ստանաւ որով: Նա թարգմանել է առհասարակ իր կազմած զասագրքերին նիւթ մատակարարելու համար: Դրանից զուտ, նրա բանաստեղծութիւնների ժողովածուի մէջ մենք գտնում ենք երկու կտոր, մինը Շիլլերից՝ «Երկրի բաժանումը», միւսը Հայնէից՝ «Պրոբլեմներ»: Այս կտորները Աղայեանցի ուշադրութեանն են արժանացել՝ անչուչա՛տ այն պատճառով, որ երկուսն էլ պատկերացնում են բանաստեղծի անշահասիրութեան օրինակներ:

Իբրև թարգմանիչ Աղայեանցը մի շատ ինքնուրոյն երեւոյթ է: Նա նախ իւրացնում է նիւթը, ապա իր մօքում գասաւորելով՝ իբրև բողոքովին ինքնուրոյն բան արտայայտում է հայերէն լեզուով, այդ պատճառով նրա թարգմանութիւնները իր կողմից չարունակ անուանւում են «փոխադրութիւն»: Իր սեփական ոճի պահանջը նրանում այնքան զօրեղ է, որ նրա գասագրքերի մէջ երբեմն հանդիպում էք «փոխադրութիւն» բառը գրուած մի... հայերէն կտորի վրայ. օրինակ՝ նա ունի մի կտոր իր ժողովածուի մէջ «Բանակալիւ» վերնագրով, որ Աբովեանից է, նրա «Բուեր» հատուածն է, որի լեզուն Աղայեանցը աւելի կոկոսելու գրական է զարձրել: Ինչպէս ասացի, նրա թարգմանութիւնները բողոքովին ինքնուրոյն գրուածքի բնաւորութիւն ունենալու այդ իսկ պատճառով՝ օտար լեզուի որեւէ ոճի համապատասխան հայերէնը չը գտնելիս՝ նա շատ անգամ թարգմանութիւնը բնագործակում է պարզաբանութիւններով: Այդ է պատճառը, որ Պուչկինի «Ոսկի ձկնիկը», որ բնագրում 205 տող է, Աղայեանցը թարգմանել է 313 տողով, այն ինչ նոյն բանը Գամառ-Փաթիւպան կարողացել է անել 198 տողով: Վերջենք օրինակ այս կտորը. — բնագրում այսպէս է.

Говорить старику старуха:
„Воротись, поклонися рыбѣ;
Не хочу быть вольною парицей,
Хочу быть владычицей морскою,
Чтобы жить мнѣ въ океанѣ-морѣ,
Чтобъ служила мнѣ рыбка золотая
И была бѣ у меня на посылкахъ“.

Այս կտորը Գ.-Քաթիկոսան այսպէս է թարգմանել.

Երբ եկաւ ծերը, կինն ասաց նորան.
«Ահա լսե՛, դու իմ խիտ հրաման—
Գնա ու գտիր զուսկի ձկան,
Էլ սիրտը չուզէ, ասա, իմ կնկան
Երկրի վրայ լինել մէկ սոսկ թագուհի,
Ուղկանոս ծովի մէջ կուզէ, կենալ,
Ոսկի ձուկին էլ ծառայ ունենալ»:

Իսկ Աղայեանցիներ այսպէս է.

Եկաւ ծերունին, արտաւն սկսեց.
«Դու պէտք է գնաս ձկան մօտ, ասեց.
Կերթաւ խոր գլուխ կտաս դու նրան
Ու իմ փափաղը կը յայտնես իրան.
Կասես, չեմ ուզում մնալ թագուհի,
Ուզում եմ լինել ծովի տիրուհի.
Ուզում եմ Ուղկան ծովումը կենալ,
Ոսկի Ձկնիկին ծառայ ունենալ,
Որ իմ հրամանին միշտ պատրաստ լինի,
Ու ինչ ուզենամ, իսկոյն կատարի...»:

Գամառ-Քաթիկոսի մօտ աւելորդ է երկրորդ տողը, որ
ընագրում չը կայ, դրա փոխարէն պակաս է վերջին տողի
թարգմանութիւնը: Իսկ Աղայեանցը բերուած կտորի երկրորդ
տողի զիմաց գնում է ամբողջ երեք տող. փոխանակ ասելու, թէ
«յետ քարծիր կրկին, գլուխ տուր ձկան», կամ ինչպէս ինքը ա-
ւելի լաւ կարող էր, ասում է. «Դու պէտք է գնաս ձկան մօտ,
կերթա, խոր գլուխ կը տաս դու նրան ու իմ փափաղը կը
յայտնես իրան», որի մէջ կան և կրկնութիւններ և աւելորդ
խօսքեր: Իսկ վերջին տողը, որտեղ զլիսաւորաբար կայ «быть
на посылках»՝ սօք, որ Գ.-Քաթիկոսան չէ թարգմանել, բնագր-
ի ներութիւնը արտայայտելու համար՝ կամ թարգմանութիւնը
անպատճառ յանդաւոր դուրս բերելու համար՝ գրել է.

Որ իմ հրամանին միշտ պատրաստ լինի,
Ու ինչ ուզենամ, իսկոյն կատարի,

որը բաւական մօտիկ արտայայտում է «быть на посылках»

ոճի միտքը, որ նշանակում է՝ ձեռքի տակ ծառայ լինել՝ այս ու այն կողմ ուղարկելու համար:

Այսպիսով ընազրի սեղմ, ժողովրդական ոճը նա մի փոքր ջրախառնելով՝ աւելի հասկանալի է դարձրել մանուկի համար: Եւ մենք գուցէ ուրիշ պահանջ իրաւունք չ'ունենք անելու նրանից, իբրեւ թարգմանչից, քանի որ նա իր թարգմանութիւններն վրայ դնում է «փոխադրութիւն» կամ «ազատ թարգմանութիւն» բառերը:

Վերջացնելով Աղայեանցի կեանքի և դրական դործունէութեան մասին այս տեսութիւնը, մնում է ամփոփել ասածս:

Մեր վիպագրութեան պատմութեան մէջ Աղայեանցն ունի իր համեատ տեղը—նա իր Ար. եւ Ման-ով՝ հայ վէպը աւելի մօտեցրեց վէպի մասին ժամանակակից հասկացողութեան: Բայց Աղայեանցը մեզանում չը պիտի վիպասան համարուի, որովհետեւ դրականութեան այդ ճիւղի պահանջներին նա բաւարարութիւն չի տալիս: Դրա փոխարէն նա չ'ունի իրան հաւասարը մեղնում վիպագրութեան մի ուրիշ ճիւղի՝ հեքիաթների մէջ, որոնք նրա գրչի տակ մարդի ամբողջապէս ման ևն ածում և ապրեցնում կախարդական աշխարհներում: Մանկական ոտանաւորների մէջ եւս Աղայեանցը չ'ունի իր հաւասարը: Իբրեւ գրող՝ նա իր ամբողջ ոգևորութիւնը քաղում է իր կեանքից՝ իր կեանքի երեւոյթները համարելով շատ խրատական և ուրիշի համար էլ օգտակար, այդ պատճառով նրա գրութեանը մէջ այնչափ շատ նկատելի է այդ կողմը, և ահա թէ ինչու նրան կարելի է անուանել իր կեանքի երգիչ:

ՄԱՐ. ՅԱՐ.

ԱՐՏԱՍԱՅՄԱՆԵԱՆ ԳՐԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„LES AFFAIRES SONT LES AFFAIRES“, pièce en trois actes, de M. Octave Mirbeau.—«Գործերը» (աֆֆերա) գործ են», պիեսա երեք գործողությու-
նով, Օկտավ Միրբու:

Օկտավ Միրբուն ֆրանսիական ժամանակակից գրականու-
թեան խոշոր գեղեցիկ մէկն է. նա գերազանցում է մանաւանդ
սենդեմիսիզմ կամ ինչպէս թիւրքահայերը կ'ասեն՝ ձգտումի ժան-
րի մէջ: Նրա ոճը և ոգին միաժամանակ աւերիչ, համարեա
տարերային են: Իր շուրջն իշխող կարգերից նա էլ շատերի
պէս զժգոհ է, նա էլ իր երկերում հասարակական և բնական
չարիքի արմատն է որոնում և կեանքի բոլոր ասպարէզներում
իրար բաղխուող մարդկային կրքերի, ձգտումների, պահանջների,
ճաչակների դարհուրելի պայքարը նրա փիլիսոփայական-հա-
սարակական խոհերին տալիս է մի անօրինակ ուժգնութիւն:
Նրա ամենից աւելի սիրած նիւթը ժամանակակից բարքերի արա-
զեղիան է: Օկտավ Միրբուն կարողանում է զարհուրելի արա-
զեղիա բաց անել այնտեղ, ուր չնորհիւ արտաքին վայելչու-
թեան, կեղծ փայլի, հասարակական-բարոյական նախապաշար-
մունքների, անցեալից ժառանգութիւն մնացած կեղծիքի, սխալ
հասկացում աստիճանութեան՝ սովորական աչքը տեսնում է
առօրեայ սովորական կեանք իր ճակատագրական չար ու բարի-
ով, արցունքով ու ծիծաղով: Նրա հասարակական փիլիսոփա-
յութիւնը հիմնուած է ժառանգականութեան թէորիոյի վրայ:
Մարդը Միրբու համար ի ծնէ վատ է, որովհետեւ նա իր հետ
աշխարհ է բերում բաղմաթիւ ախտեր, համարեա ոճրի ծարաւ,
որ զարգացած, զօրացած է դարերի ընթացքում սխալ դաս-
տարակութեամբ, այսպիսով կեանքը դառնում է «Տանջանք»

ների պարտեզ» (Le jardin des supplices), *խակառաջնորդողները՝ «լատ հովիւներ»* (Les mauvais bergers) *):

Մի կողմ թողենք այն հարցը, թէ Օկտաւ Միրբօն որչափով իրաւունք ունի այս աստիճան յոռետես լինել, ինչու ամեն ինչ մարդու բնաւորութեան և կեանքի մէջ նրա աչքում ընդունում է հրէշաւոր չափեր, ինչու նրա ընտրած տիպերը հասարակական որ ասպարէզում էլ լինի՝ մարդու սոսկում են պատճառում իրանց ցինիզմով, դարչութեան մէջ լողալու այդ քստմնելի հաճոյքով: Դրանք յաւոտ հարցեր են, որ կարող էին մեզ շատ հետք տանել, բայց ինչ որ արժանի է ատանձին ուշադրութեան, այդ Միրբօի անկեղծ, ցաւակցական շեշտն է, նրա խորին արդահատանքն է տանջուող մարդու զլխին ծանրացած այդ սև ճակատադրի համար: Միրբօն խեղճերի, հալածուածների, զրկուածների կարող պաշտպան է: Կեանքի աղբւրից, դարչութիւններից բարձր նա մեծ ցաւի պոչովիան է ըմբռնել: Եւ նրա ասածի, քարոզածի ոյժը այն աստիճան վարակիչ է որպէս տրամադրութիւն, որ նրա երկերից իւրաքանչիւրը ընթերցողին պատճառում է մի կիզիչ կակիժ և տարաբաղաւոր դրա հետ միասին մի վհատեցուցիչ ահաւատհանութիւն դէպի մարդ արարածը: Իւրաքանչիւր անձանօթ գէմբ դառնում է մի գիմակ, որ ծածկում է՝ ով գիտէ՝ ինչ մոթ մաքեր, ինչ քստմնելի ծրագրներ իր նմանների համար: Ձեռ ուղում շատ ծանրբանալ Միրբօի երկերի ընդհանուր բնորոշ գծերի վրայ, որովհետև այդ գէմբը մասամբ ծանօթ է Մուրճի ընթերցողներին չնորհիւ պ. Տիգրանի խելացի գրական յօդուածներին: Այժմ ես կանդ կ'առնեմ մասնաւորապէս Միրբօի նոր պիեսայի՝ Les affaires sont les affaires-ի վրայ, որ նորերս Comédie-Francaise-ում խաղացուեց առաջին անգամ և որ այնքան ազմուկ բարձրացրեց ֆրանսիական մամուլի մէջ: Յօդուածիս սկզբում ես այդ պիեսան հայերէն անուանեցի «Գործերը՝ զործ են», սա իսկապէս մի բառայի թարգմանութիւն է, որ ամբողջապէս չի արտայայտում Միրբօի նոր երկի խորհուրդը, ներկայ գէպընում «զործը» (affaire) պարզապէս աֆֆերայի նշանակութիւն ունի, հեղինակը մեզ ներկայացնում է ժամանակակից տիպերից այն մարդու հոգեբանութիւնը, որի ծայրայեղ յաջութիւնը կեանքում հաստատուած է միջոցների նոյնքան ծայրայեղ անխարականութեան, բարոյական սկզբունքների կատարեալ բացառութեան վրայ: Այս փորրիկ, բայց անհրաժեշտ նշկատողութիւնից յետոյ դառնանք բուն նիւթին:

*) Օկ. Միրբօի երկու յայտնի երկերն են:

Օկտաւ Միրբօի այս նոր պիեսան ամբողջապէս պատուում է մի հատիկ անձնաւորութեան՝ Լեւոյի շուրջը, որ զլիաւոր հերոսն է, Տաղանդաւոր հեղինակը մինչև անկարելիութիւն շոտա-յըրել է իր հերոսի բնաւորութեան մէջ այն բոլոր ցինիկ զար-շութիւնները, որոնք կապուած են զրամի բացառիկ կույ-տի և խայտառակ ափֆերաների հետ։ Նա կամեցել է զգուանք յարուցանել՝ փռելով հասարակութեան առաջ կապիտալիզմի և կապիտալի մշակած բնաւորութեան հրէշաւոր կողմերը։ Լեւոյն մի ընդունակ զարկընիւ (parvenu) է, մութ ափֆերաներով յիսուն միլլիոնի աէր դարձած մի կապիտալիստ, որ աշխարհում ուրիշ ոչ ոք չի ճանաչում, բացի զրամականը, ուրիշ աղնւութիւն, բացի հարստութիւնը, ուրիշ իրաւունք, բացի զրամի ոյժի իբաւուն-քը։ Լեւոյն կարծէք մարդ չէ, այլ զարհուրելի խառնուրդ մի բանական երկոտանի արարածի և զաղանի։ Եղիտութեան և վերած անպատկառութեան, սառնասիրտ ոճրապործի և պար-զամիտ յիմարութեան։ Եւ այդ մարդը բացի իր յիսուն միլլիոնը՝ Պարիզից ոչ հեռու ձեռք է բերել մի պատմական զգեստ՝ ծա-ռերի մէջ կորած, և որի շուրջը տարածուած է նրա եօթ հազար հեկտար սեփականութիւնը, որ նա սիրում է իր մօտ եկող այ-ցելուներին յոյց տալ ձեռքի լայն շարժումով։ Ամեն անգամ տուն դալիս՝ նրա ծառաները պատուէր ունին չրջապատել նը-րան և կանչել՝ «Կեցցէ Լեւոյն, Կեցցէ Լեւոյն»։ Իր անպատկառ ու ծիծաղելի հպարտութիւնը զոհացումն է սառնում վճարուած ծառաների բացականչութեամբ։ Իր յիսուն միլլիոնից, իր զղեա-կից և կաշուածներից զուրս նրա հպարտութեան առարկան է իր սրդի Քսալէն, հօր իսկական ժառանգը։ Այս որդու իրա-կան «ստաքինութիւններն» այսպէս է նկարագրում այս աւար-րինակ հայրը.

«Նա մրցութիւնների համար մի ձի ունի, մի նաւ և մի օտոմոբիլ, որ արժէ յիսուն հազար ֆրանկ։ Բարեկամներ ունի ամենաբարձր հասարակութեան մէջ, և նրանք են նաև Պարիզի ամենասիրուն զերասանուհիները. «նա՛» այն լակտալ քսան և մէկ տարեկան է և սակայն արդէն ընկել է մի քանի շիկ սկանդալ-ների մէջ»։ Եւ այս որդին նրա յոյան է, նրա ապագան, նա կու-րող է անել, ինչ ուզում է, ծախսել՝ որքան կամենում է, միայն թէ կարողանայ կապիւր հաստատել՝ հօր մութ զորքերին ընթացք տալու համար։ Այդ կարգի ծախքերի համար Լեւոյն առատա-ձեռն է, բայց նա ուզում է զատի ենթարկել մի աղքատ պա-ռուի, որ նրա կաշուածից չոր ցախեր է հաւաքել, կտրում է իր պարտիզպանի վարձը, մի կովի հիւանդութեան համար կա-

տաղում է և անձամբ դոմն է զնում տեսնելու, թէ ինչ է անում բժիշկը:

Նա չի քաշում փռել հասարակության առաջ իր հրէշաւոր հոգու բոլոր այլանդակութիւնները այն սոսկալի զիտակցութեամբ, թէ ինքը իրաւունք ունի և թէ իսկական մարդն իր պէս պետի լինի:

«Օ՛ր, խոշոր ափերաներ, բացականչում է նա երկու ինժեներներին ներկայութեամբ, ուր մարդ կարողանայ բազմութիւնը խաղայնել... և դո՛ւք միլիոններ լիքը ձեռքով, ուխտներ միլիոնները, հը՞...»

Մի աղնականի հետ մէծի բռնուած՝ նա բացականչում է. «Պատիւ, պատիւ, իհարկէ. բայց իւրարանջիւրը իր ձեռով է հասկանում պատիւը...» Նա կէշայի հասկացողութիւնը պատիւ, առաքինութեան, ազնուութեան, շխտական մասին զուտ զայլային է, եթէ անորոշակի մեծ է և թաթղ հզօր, զանգ, խրվիր ու անցիր, մնացածը հեշտ է, երբ դրամ կայ, մեծ դրամ, հակադրական կապիտալ, որով ինչ ասեա՝ հնարաւոր է այս աշխարհում: «Ամեն կեղտ կարելի է մաքրել, ամեն կեղտ», ասում է նա մի այլ տեղ: Նա համոզուած է, որ ինքն ամեն ինչ գիտէ, որովհետեւ երբ մարդ ձեռք է բերում յիսուն միլիոն, չի կարող ամեն ինչ չիմանալ, և այն կապիտալիստը, որ խաբել է այնքան ուրիշների և կուտել ոսկու դէղ, այնքան ապուշ է միեւնոյն ժամանակ, որ վճռում է քիմիական բաղադրութեամբ ֆրանսիայում չաքարեղէյն, սուրճ, թէյ բուսցնել, իրան կարծում է մեծ բեֆորմատոր, որովհետեւ երբ ֆրանսիայում չաքարեղէյն և տաք երկրի այլ բոյսեր լինին, էլ ի՞նչ հարկաւոր է զաղթականութիւններ հիմնել: Այս ապշութեան հետ միաժամանակ այնքան խելք ունի, որ հասկանում է մամուլի ոյժն աֆերաների հաժար և հիմնել է իր սեփական թերթը: «Իմ լրագրում, ասում է նա, զրականութիւն, զրապէտ, զանազան փրադներ հարկաւոր չեն, այլ փաստեր պարզ ու որոշ և զործիր...»

Այս թշուառականի համար աշխարհի խեղճերը, կարօտները, կեանքի բեռի տակ ճիւղաւորները ոչինչ են, նրանք ոչ մի իրաւունք չ'ունեն, ինչպէս այն ոգորմնի ճիճունները, որոնք յանցանք են զործում սողալ ճանապարհներին և ոտքի տակ տորւում են: Սա նրա բարոյական փիլիսոփայութիւնն է, որ նա զործադրում է կեանքի մէջ առանց քաշուելու, որովհետեւ զրամ ունի. մի անգամ նա անողորմ սրբկայութեամբ իր կտորի տակ ճխւում է մի աղքատ երեխայ, որովհետեւ կարող է վճարել աբեան զինք:

Ահա մօտաւորապէս այն մարդը, որ Միրբօն ընտրել է որպէս հերոս՝ կապիտալիզմը և կապիտալը պատկերացնելու համար: Անշուշտ չափազանցութիւնները չաա են այս պատկերի մէջ, դժուար թէ կաբէլի լինի կեանքում դանկ մի այնպիսի դարշելի դժբաղը, որ միացնէր իր անձի մէջ հարստութեան և հարստի բոլոր ախտերը, բայց պատկերները խտացնելը բանաստեղծի իրաւունքն է՝ իր դադափարները բելիեֆի դարձնելու համար: Թէ այս բոլոր ազտեղութիւնները մի մարդու հոգին չի կարող պարտակել, այդ ճշմարիտ է, բայց կեանքում բազմաթիւ են ախտեր, որոնք մաս-մաս կրում են իրանց մէջ այն, ինչ Միրբօն տուել է միայն Լեչային, այստեղ է բանաստեղծի իրաւունքի հիմունքը:

Դասական աշխարհը իր մանուկ երեակայութեամբ մեծ ոճիրների կողքին զնում էր մեծ քաւութեան ճակատադիրը, որ սաւառնում էր յանցաւորի գլխին որոշ մոմենտին նրա աչքերի առաջ յշուելու համար: Խորը բողոքում էր, որպէս մարմնացումըն հասարակական իմաստութեան, արդարադատութեան և խղճի, իսկ բաղդը հարուածում: Շատ անգամ յանցաւորն ինքն էր ծնում իր պատիժը, նոր աշխարհը ճակատադրի դերը յանձնել է զիպուածին և պատիժը խղճին ու բանականութեանը:

Միրբօն այս պիեսայի մէջ թէ խիղճը և թէ զիպուածը խաղում են իրանց ճակատադրական դերը նոր աշխարհի հասկացողութեամբ: Լեչան որդուց բացի և մի աղջիկ ունի—Փերմենը, որի վրայ հայրը նայում է զուտ նիւթական տեսակէտից. նա նրան կ'ամուսնացնի մի ազնւականի հետ, որ իր պարտապանն է, և այսպիսով վալլուն ախտըսը կը միացնի հարստութեան հետ: Բայց ամենակարող կապիտալը, որ ուրիշի երկխոսների զիպիները փչրում է անցնում, անդօր է իր սեփական դաւալի վերաբերմամբ. Փերմենը հօր ցանկութիւնը մերժում է, նա հետեւում է իր սրտին, նա անձնատուր է եղել արգէն իր սիրած տղամարդին, հօր մօտ աշխատող մի քիմիկոսի: Այս գիտ քիչ է, Լեչայից ծնուած այդ մի փխրուն արարածը իր հոգում կրում է նաև իր հօր սաների տակ ընկած զոհերի սուգը, նա զգում է դժբաղդների զգացած ցաւը, նա ապրում է խեղճների և տառապողների կսկիծը՝ նախ խուլ ձեռով, ապա բարձրաձայն: Աղջիկը իր հօր խիղճն է կարծես, որ հեղինակը զրկել է յանցաւոր անհատից զուրա, որովհետև Լեչայի այնքան ընկած հոգու մէջ էլ խղճի տեղ չի մնացել: Լեչայի հրէշաւոր պատկերը կը խեղդէր մարդի, եթէ նրա կողքին չը լսուէր այդ չիտակ, ազնիւ ձայնը, եթէ Փերմենը հօր արարքների առաջ զայրոյթի, ամօթի, ցաւի նուիրական ազազակը չ'արձակէր: Եւ աղջկալ

չրթունքներով արտասանուած հօր մեղադրական ակտը ամբողջ պատկերին տալիս է մի վեհ արագիւմ, և մի մեղմ ամալանք է իջնում վրդովուած հոգու վրայ:

«Մեր տունը... ասում է ժերմենն իր սիրած ողամարդին, չարունակ հապճեպ, տենդ, դժբաղդութիւն... Մամածուդ, այլանդակ քրքիջ, ոճրի աստուածայումն, ահա մեր... Երեկոնէրը սեղանի առաջ օտարներին և մեր ներկայութեամբ նա (հայրը) պատմում է իր յաջող հարուածները, մահատարուած խնդութեամբ, մարդասպանի իսկական ծիծաղով նա մեզ պատմում էր, թէ ինքը խաբել է սրան, կողոպտել է միւսին, պատիւն արտասուրել մի երրորդին... Ես էլ չեմ կարողանում փոփոխում տեսնել մի սպաւոր կին կամ երեխաներ՝ առանց ինքս ինձ տեսլու, թէ «դու ցէ սրանց սուղը մենք ենք պատճառել»: Ես չեմ կարողանում տեսնել մէկին արտասուելիս առանց ժտածելու, թէ «դու ցէ նա մեր պատճառով է լալիս»:

Իրանց հինաւորաց հսկայական զղեակը, իրանց ահագին կայուածները ժերմենի համար յանցանքների և գողութեան արգիւնք են. նրա հոգին չի կարողանում հաշտուել այն զիտակցութեան հետ, թը ինքը մի ոճրագործի, մի աւագակի աղջիկ է, թէ ինքը ապրում է նրա հաշտով, ուրիշների արցունքի, արեան գնով: Նա խնդրում, աղերսում է իր սիրահարին փախչել իր հետ, տանել նրան հեռու, հեռու այս ապականութեան, յանցանքի, կեղծիքի, խաբէութեան վայրերից: Նա ուզում է ապաստուել այսպիսով իրան ճնշող կոյմարից, հօրը յանցակից լինելու զարհուրելի զիտակցութիւնից: Նա գիշերներն անքուն թափառել է ժողով զղեակի շուրջը, և իր երեկայութիւնը սոսկումով է բռնուել այն արցունքի մեծութիւնից, որի վրայ իրանք ապրում են. այս առթիւ նա տաւ է.

«Ես տեսայ ամենածանր, ամենախրական, համարեա փաղկական պատկերը այն բոլորի, ինչ ծածկում է այս զղեակը, ինչ նա փչրել է, ինչ սպանել իր շուրջը... Այս անտառները... այս դաշտերը... այս պարտէզը... քարերի այս զանգուածը, որ անսիրտ կերպով ցցուած է արեւի առաջ, այս բոլորը... ոճիրներ են. խոտի նչ մի ծիւ, նչ մի խիճ, նչ մի փոքրիկ շաւիղ, որ զողացուած չը լինի: Եւ ես լսում էի միայն լացի ձայներ, և տեսնում էի միայն արիւն. ինձ թւում էր, թէ իմ շուրջն ամեն ինչ ճչում է՝ «գնդ, գնդ»:

Եւ այս աղջիկը ձգում է հայրենական տունը, ձգում է ծով հարստութիւնը, ուր նաև ծով արիւն-արցունք կայ, և զրնում է իր մաքուր սիրոյ, իր սրտի յետիւց, գնում է ընտրած երիտասարդի հետ հեռու, հեռու. յանցալից վայրերից՝ աղնիւ

աշխատանքով ապրուստ հայթհայթելու: Լեւոն կատաղում, վեր-
փրում է ոչ այն պատճառով, որ աղջիկը նրան դատապարտում
է, այլ որովհետեւ նրա փայփայած ծրագիրն է մնում անիրագոր-
ծելի, և իր կապիտալի, իր ամենակարող միլլիոնների անդորու-
թիւնն է տեսնում անակնկալ կերպով, անսպասելի անդից: Սա-
կայն նա չի ընկճւում, փրփրում է և հանգստանում, աղջիկը
թող պնայ, Քսաւիէն կայ, իր որդին, նա բուռական է իր անյու-
զուրդ իղձերի, իր ամօթալի և ողորմելի փառասիրութեան հա-
մար, նա մի խոծուած գազան է, որ ցնցւում է և կրկին
հանգստանում՝ վառնցն աննշան համարելով. նա զեռ կարող է
իր սովորականի պէս կրկնել՝ «Les Affaires sont les Affaires» —
գործերը գործ են, ինչ էլ պատահելու լինի:

Զարթած ու բողբոջ խիզճր իր աղջկայ մէջ մարմնացած՝
անդոր է դառնում խախտել յառն մեռադից ճուշումը ուղ պիւ-
նը, ահա վրայ է հասնում երկրորդ մեծ փորձութիւնը, այն, որ
հնարը համարում էին բաղդ և նոր ժամանակներում կոչւում
է դիպում: Աղջկայ մեկնելուց անմիջապէս յետոյ Լեւոն ստա-
նում է իր որդու, Քսաւիէի մահուան բոթը: Նա զոհ է պնա-
ցել մի սարսափելի դիպումի, օտոմորիլը դարկուել է մի ծառի և
նրան ջարդ ու փշուր արել: Սա արդէն մի թոյլ աղջկայ յուսա-
հատ բողբոջ, շիտակ խղճի մի ազազակ չէ, սա մի ամբողջ ա-
ղայաջի բոլոր յոյսերի տւերածն է. Լեւոն ընկճւում է, թւում
է նոյնիսկ, թէ նա անդամնալի կերպով խորտակուած է: Ու-
ները դողում են, էլ սց չ'ունի ընդատաջ գնալու որդու դիա-
կին, և այստեղ միլլիոնները ոչինչ, ոչինչ չեն կարող անել.
մարդկային կարողութիւնից վեր մի անհասանելի բան կայ, որ
իր բոլոր ծանրութեամբ իջել է նրա զլխին: Էլ ում համար
ապրել, ինչու աշխատել, ինչ անել միլլիոնները:

Թւում է, թէ որսողեցիան սրանով էլ կը վերջանայ. ա-
մենակարող Լեւոն խորտակուած է, սիրտը, զգայմունքը յաղ-
թանակում է, բայց ոչ, Միբբօն որոշել է ներկայացնել մի
հրէշ, ոսկով, աֆֆերաներով սլաքսեռուած մի արարած: Ահա
ընտանեկան մեծ սղի ամենածանր փայրկենում յայտնում են
երկու ոչ պակաս թշուառական ինժեներներ, նրանք բերել են
ստորագրել սալու մի պայմանաթուղթ, որ կաղմուած է 'ի
Ջեաս Լեւայի: Բայց նա գործի, աֆֆերայի ժարդ է, իր զերա-
զոյն սղի մէջ անգամ վատտակի անյապուրդ իղճը դարձնում է
նրա մէջ իր բոլոր ուժգնութեամբ, նա զգում է փառնոր, առ-
նում է թուղթը, կարդում է ուշադրութեամբ, երկու ինժեներ-
ներին հատացնում է սեղանի առաջ, թելադրում է իր ցանկա-
ցած պայմանը, ստորագրել տալիս, թուղթը վերցնում, նրանց

ճանապարհ ձգում, իսկ ինքը օրօրուելով գնում դէպի սրդու-
ղիակը. Les Affaires sont les Affaires! Զաւակները չը կան էլ,
բայց «գործերը», աֆֆերաները մնում են, Լեւոն գեռ կ'սպրի,
գիակաների վրայից քայլող կապիտալն է նա:

JOYSELLE, en quatre actes, M. Moeterlinck.—Փուպիկ, չորս գործող.
Մ. Մետերլինկի:

Մորիս Մետերլինկը մինչև իր «Մոննա-Վաննան» տուել է
արդէն մի շարք գրամատիկական գրուածներ, սրանց բոլորի
շիւթն էլ վերցրած են կիսաստատակական, կիսաիրական զը-
րոյցներից, հեղինակի յերկրած' կամ պարզապէս վերցրած սը-
նէ երկրի ժողովրդական բանաստեղծութիւնից: Այդ երկերի ամ-
բողջութիւնը ներկայացնում է մի ֆանտաստիկ աշխարհ, ուր
ընթերցողի երեակայութիւնը չփոխւում, խառնւում է, և ուր
հոգին տանջւում է անորոշ խարխալումներով, ինչպէս մութ
գիշերին մտորւած մէկը, որ դժուարութեամբ է քայլում քար-
քարոտ առապարներով: Դէմքեր և պատկերներ են, որոնք շտա-
պով դալիս, անցնում են մարդու աչքի առաջից առանց որ
կարելի լինի որոշել նրանց ինչ լինելը, հեռուոր խաւարի մէջ
լուում է նրանց քրքիջը կամ հեծեծանքները, և ապա ամեն
բան լուում: Ամենքն իրանց հետ փախցնում են մի գերազան
միասեր, անյապարդ թողնելով յարուցած այրող հետաքրքրու-
թիւնը: Բռնելու, պահելու, մօտիկից նայելու ցանկութիւն կայ,
բայց այդ անկարելի է, և հոգին հեծն հնայում է այդ խուսա-
փող պատկերների յետեից վշտացած ու դժգոհ:

Մոննա-Վաննայով Մետերլինկ կարծես հրաժարւում էր
մասամբ իր ֆանտաստիկ աշխարհից և իջնում էր իրական հո-
ղի վրայ: Մի վերին առախճանի սիտիիչ բան կար նրա այս
վերջին թատրոնական երկի մէջ, ուր հերոսուհին՝ թէև գրուած
բացառիկ պայմանների մէջ, արագիկական միջնորդութեամբ, ոգե-
ւորւած հագուպիւս ներշնչումներով, այնու ամենայնիւ շար-
ժւում, դորժում, խօսում է մարդկայնօրէն: Հեղինակի գրական
նութիւնն մէջ սա արդէն մի թռիչք էր, համարեա մի նորու-
թիւն, որ սղջունեցին քննադատները, և ծափահարեց ընթերցող
հասարակութիւնը:

Ամենքն իրաւացի կերպով սղատում էին, որ տաղանդա-
ւոր հեղինակի հոգու մէջ կատարուող այս էփուլեցիան նրան
վերջնականապէս կը տանի դէպի իրականը, և որ Մետերլինկ
ընդ միշտ կը հրաժարուի իր նախկին միզապատ, շատ անդամ

անհատականաւի ստեղծագործութիւններէց: Բայց ինչպէս երևում է, «Իշխանուհի Մայէյնի» և «Պելլէաս և Մելիզանդի» հեղինակը հեշտութեամբ չի կտրուում մի անցեալից, ուր նա այնքան երազներ, այնքան վերացական խորհրդանշաններ, այնքան միասերներ ունի: Գոնէ այս է վկայում նրա նոր գործը՝ Joyzelle—Ժուազել, որ վերջերս խաղացուել է Պարիզի Théâtre Gymnase-ում: Ինքը հեղինակը գտնում է, որ իր այս երկը միջին տեղն է բըռնում նախկին գրողների և Մոննա-Վաննայի մէջ, այս նկատողութիւնը կարող էր ճիշտ լինել, եթէ զերբնականը այնքան խոշոր տեղ չը բռնէր Ժուազելի մէջ: Հեղինակները յաճախ իրանց երկերի լատպոյն լինողասաները չեն:

Բայց և այնպէս շնորհակալ լինինք Մեաերլինկից, նա ինքը գերբնական արարած, երկնքի, Վենուսի, Մարսի բնակիչ չէ, նիւթով կապուած է այս մեր ողորմելի ցեղէ գոնդին, որի անունն է երկիրս Ինչքան և իր ստեղծագործութիւնները ֆանտաստիկ, երազական լինեն, նա այնուամենայնիւ մարդկային խղճաւի ճակատագրի կեանքի անհատականաւի ցաւերի տակ տառապող մի հոգի է: Եթէ իր ներշնչումները պարուրում է շատ անգամ բազմութեանը անըմբռնելի, վերացական սրտակերների մէջ, յանցանքն իրանը չէ, իրէալի համար մեր արտասուելի գոյութիւնը բաւականաչափ զեղեցիկ չէ, մինչև անգամ չափազանց վրլզեր է: Եւ տառապող, ճշմարտութեան, զեղեցիկի ծարու հոգիները Մեաերլինկի էլ ատաջ ստիպուած են եղել նեատել անհունը, անճանաչելին, անյայտը՝ բնութեան, կեանքի, ճակատագրի միասերը գտնելու համար:

Ահա «Ժուազելը», Մեաերլինկի վերջին պիեսան, որ սիրոյ աստուածացումն է. հեղինակը իրան յատուկ պերճ ոճով ճշմարիտ սէրը դնում է կեանքի ամենօրեայ գոհակութիւնից բարձր մի տաճարի մէջ, որտեղից ծագում են վսեմ ներշնչումներ, մի անօրինակ փայլ կեանքը զեղեցիկացնելու համար: Այս երկի հիմնական գաղափարը աշխարհին ասելու համար լինէր առաջին խեղճ Մեաերլինկն, ուր փնտրէր փաստեր, սրտակերներ՝ գոնատ իրականութեան, զգացմունքների, սիրոյ վաճառքի, կեղծիքի այս գործնական ժամանակներում: Եւ ահա նա երևակայում է մի գիւթական անձնաւորութիւն, Մերլին անունով, որ օժտուած է գերբնական ընդունակութիւններով, որ կանխատեսել է ապագան, հարկերը, բարիքը, դիտէ կարգող ճակատագիրը, բնագրկել այն բոլորը, ինչ չէ տուած ճանաչել սովորական մտհեղանցուներին: Եւ նրա այդ գիւթական կարողութեան ազբուն է մի ուրիշ անձնաւորութիւն, Արիէլը, երկու քոյր, կամ

աւելի ճիշտ՝ երկուորեակ հոգիներ, որոնք իրար լրացնում են և յաւիտեանականութեան լիզուն դիտեն:

Մերլենը մի որդի ունի, Լանսէօր անունով, որին կ'ուզէր մի երջանիկ ազագայ պատրաստել: Արիէլը՝ սակայն այդ երջանկութեան կարելիութիւնը կապում է մի պայմանի հետ, որից ստեղծ է Մերլէնը: Եթէ Լանսէօրը, տառաւ է նա, չ'արժանանայ մի կնոջ իսկական սիրուն, նա կը մեռնի: Այդ սիրոյ նկարագիրը սքանչելի է. այն պիտի լինի անօրինակ, հերոսական և ներող, ամենատեսակ զոհաբերութեան պատրաստ և համեստ, համբերող և վսեմ, խոր և թեթեւ, մի խօսքով մի գերբընտեան, երկնային սէր, որին մահկանացուները շատ էլ սովոր չեն: Մերլենը յուսահատուած է, որքու մահուան ժամանակը հեռու չէ, բայց այն փրկիչ հրեշտակը, այն սիրող կինը չը կայ: Իւրաքանչիւր օր, որ անցնում է, տանում է իր հետ Մերլենի յօյսի մի մասը, օրհասական վայրկեանը, որքու մահուան ժամը աւելի և աւելի մօտենում է: Բայց ահա յայտնուած է նա, սպասուած կինը, ժուաղելը, մի քնքոյշ, հրեշտականման արարած: Լանսէօրը և ժուաղելը սիրում են իրար բոլոր, անզուսպ սիրով:

Սկսում է ժուաղելի համար անօրինակ փորձութիւնների շրջանը: Լանսէօրը փոխառփոխ դառնում է ֆիզիկապէս և բարոյապէս դարչելի. նա հիւանդ է, այանդակ, նա ծեր է ու զոռամեալ, նա անառակ է, անհաւատարիմ, խաբեբայ, և բոլոր այդ փոփոխութիւնների ժամանակ, բոլոր այդ դժբաղդութիւնների ընթացքում ժուաղելը շարունակում է սիրել Լանսէօրին, ներում, սիրտում, մխիթարում է նրան: Նրա զգացմունքը այնքան խորն է դէպի Լանսէօրը, որ ոչ մի փորձութիւն, ոչ մի դառնութիւն չի կարողանում նրան ընկճել: Վրայ է հասնում վերջին փորձութիւնը, ամենասարսափելին, սիրող կինը, ժուաղելը իր սիրած տղամարդին փրկելու համար պիտի յանձն առնի զարհուրելի զոհաբերութիւն, նա պէտք է մի գիշեր պատկանի մի դարչելի արարածի: Ժուաղելը դաշոյնը ձեռքին մօտենում է աղտեղութեան այդ անկողինին, նա պատրաստ է և սպանութիւն դործել, բայց այստեղ վերջանում է նրա փորձութիւնը, և ճշմարիտ սէրը դուրս է գալիս յաղթանակով: Բոլոր փորձութիւնները պատրաստուած էին ժուաղելի սիրոյ մեծութիւնն իմանալու համար:

Մաքուր, անկեղծ սիրոյ յաղթանակը, որ այս պիեսայի հիմնական գաղափարն է, մասամբ յիշեցնում է Մոննա-Վաննան: Մետերլինկն իր այս նոր գործով մի քայլ հեռանում է նախընթաց պիեսայի ժանրից, բայց մնում է նոյն իդէալիստը, նոյն երազողը: Եթէ կայ մի ժամանակ, երբ ամենից աւելի պէտք է իդէալը պատ-

կերպանելու համար գրաւիչ ձևեր, սիմվոլներ փնտրել, երբ
պէտք է կեանքին, գունատ իրականութեանը հակադրել մեծ
գեղեցկութիւններ, թէկուզ ւերակայական, դա մեր ժամանակը,
մեր օրերն են: Մետերլինկն իրաւունք ունի երազել, երբ իր
շուրջը չոր նիւթապաշտութիւնը, անպատկառ շահասիրու-
թիւնը օր-աւուր աւելի և աւելի խեղդում է իղէալը, գեղեց-
կութիւնը կեանքի:

Ա. Ա.

ԱՏՐՊԱՏԱԿԱՆ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ^{*)}

Ինչպէս էական, հիմնական խնդիրները ըստ կարեորութեան տարբեր են երկրորդական, անմիջական—գործնական խնդիրներէ, այնպէս էլ տարբեր պիտի լինի այդ տարբեր կարգի խնդիրներին վերաբերող կանոնները սահմանման եղանակը: Աւելի կարեորութիւն և լրջութիւն ունեցող կանոններ համար աւելի ծանր եղանակ է սահմանուած, մինչդեռ երկրորդական և մանրամասնութիւններին վերաբերող կանոններ սահմանելու ճանապարհը աւելի կարճ և դիւրին է լինում: Այսպէս, հիմն. կանոնադրութեան 28-րդ յօդուածի համաձայն՝ նոյն «հիմնական կանոնադրութիւնը փոփոխելու և լրացնելու հարցերը վճռուած են ընդ որ պատգամաւորների ձայների $\frac{2}{3}$ բազմութեամբ»: Իսկ պարզ «կանոնադրութիւնների և կարգադրութիւնների» համար բաւական է ձայների և հասարակ մեծամասնութիւն (հիմն. կան. յօդ. 14-րդ): Իսկ աւելի ևս երկրորդական և ստորակարգ նշանակութիւն ունեցող կարգադրութիւններ, որ հրահանգ (խնտրուկցիո) են կոչւում, սահմանուած է արդէն նշ [թէ] թեմական ժողովը, այլ թեմական խորհուրդը (հիմնական յօդ. 48, կէտ եր.): Իհարկէ, հրահանգները պէտք է չը հակասեն կանոնադրութիւններին, իսկ կանոնադրութիւնները հիմնական կանոնադրութեանը: Այս պատճառով 48-րդ յօդուածի և, կէտը պահանջում է, որ թեմական խորհուրդը «թեմի ստորակարգ եկեղեցական-համայնական հաստատութիւններին և պաշտօնեաներին հրահանգներ տալիս» «դեկավարուի հիմնական կանոնադրութիւնով, ինչպէս և ապագայում թեմական ժողովի կողմից մշակուած և ամենայն հայոց կաթողիկոսից հաստատուած կանոնադրութիւններով և կարգադրութիւններով: (Նը-

^{*)} Տես «Մուրճ», № 5.

մանօրինակ՝ 30-րդ յօդուածի ա. կէտն էլ պահանջուած է, որ թեմական ժողովը «ամբողջ թեմի բոլոր գործերի և եկեղեցական-համայնական հիմնարկութիւնների և հաստատութիւնների համար պարտադիր կանոնադրութիւններ և կարգադրութիւններ» սահմանելիս՝ «ղեկավարուի հայոց կանոնական իրաւունքով և հիմնական կանոնադրութեան սկզբունքներով»:

Իմ կազմած նախագծում՝ կանոնադրութիւնները ևս երեք աստիճանի էի բաժանել (ինչպէս որ այդ տեսնում ենք նաև հաստատուած հիմնական կանոնադրութեան մէջ), և զրան համապատասխան հաստատելու էլ երեք եղանակ էի սահմանել կանոնադրութիւնների իւրաքանչիւր տեսակի համար առանձին: 1) Հիմնական կանոնադրութեան համար անհրաժեշտ էր թեմական ժողովի որոշումը (բոլոր պատգամաւորների ձայների $\frac{2}{3}$ բազմութիւն) և ամենայն հայոց կաթողիկոսի հաստատումը, 2) Պարզ կանոնադրութիւնների համար—միայն թեմական ժողովի որոշումը (ձայների հասարակ մեծամասնութիւն) առանց կաթողիկոսի հաստատման: 3) Հրահանգների համար—միայն թեմական խորհրդի որոշումը:

Միայն թէ թեմական ժողովը պէտք է ղեկավարուէր հիմնական կանոնադրութիւնով և առհասարակ մեր կանոնական իրաւունքի սկզբունքներով, առանց իրաւունք ունենալու որևէ հակասող յօդուած սահմանելու: Իսկ թեմական խորհուրդը նոյն կերպ պէտք է ղեկավարուէր թէ՛ հիմնական կանոնադրութիւնով ու հայոց եկեղեցու կանոնական իրաւունքով և թէ՛ թեմական ժողովից սահմանուած կանոնադրութիւններով: Սակայն, նախագծածիս առաջին և երրորդ կէտերը անխորիս ընդունելով, երկրորդ կէտը էջմիածնի յանձնաժողովը փոփոխեց տեւայնելով՝ որ պարզ կանոնադրութիւններն ու կարգադրութիւններն էլ թեմական ժողովը սահմանում է և հրատարակում է՝ «Նախապէս ներկայացնելով իւրաքանչիւր կանոնադրութիւն ամենայն հայոց կաթողիկոսին ի հաստատութիւն»: Ուրեմն, հաստատուած հիմնական կանոնադրութեան համաձայն՝ հիմնական և պարզ կանոնադրութեան տարբերութիւնն այն է միայն, որ առաջին տեսակինը սահմանուելու է թեմական ժողովի բոլոր պատգամաւորների ձայների $\frac{2}{3}$ բազմութեամբ, իսկ երկրորդ տեսակինը թեմական ժողովի հասարակ մեծամասնութեամբ, ամենայն հայոց կաթողիկոսի հաստատութիւնը հաւասարապէս անհրաժեշտ է երկու գէպընմն էլ: Իսկ իմ նախագիծը, պահելով առաջին տարբերութիւնը, մի այլ տարբերութիւն էլ էր դնում՝ ամենայն հայոց կաթողիկոսի հաստատութիւնը անհրաժեշտ համարելով միմիայն հիմնական կանոնների հա-

մար: Իմ նախագծած խմբագրութիւնը՝ իհարկէ՝ չէր ժխտում ամենայն հայոց կաթողիկոսի ազդեցութիւնը այդ կանոնադրութիւններէ վրայ: Որպէս ծայրագոյն մեկնաբան հայոց կանոնական իրաւունքի՝ կաթողիկոսը, միշտ կարող է անվաւեր յայտարարել այն կանոնը, որ կը հակասէ հիմնական կանոնադրութեանը կամ հայոց եկեղեցու կանոնական իրաւունքի հիմնական սկզբունքներին: Ամենայն հայոց կաթողիկոսի այս իրաւունքը ճանաչելով հանդերձ՝ եւ ընդհանուր առմամբ աւելորդ ձեւականութիւն և աւելորդ գրագրութիւններէ առիթ էի համարում իւրաքանչիւր պարզ կանոնադրութիւն նախապէս ներկայացնել ի հաստատութիւն Նորին Վեհափառութեան, քանի որ կանոնը պահանջում է, որ պարզ կանոնադրութիւնը կազմուի համաձայն հիմնական կանոնադրութեան և հայոց կանոնական իրաւունքի սկզբունքներին: Պարզ է, որ այդ պահանջը չը կատարուած դատուած դէպքում (իսկ դատողը նոյն վեհափառ կաթողիկոսն է լինելու)՝ կանոնադրութիւնը կորցնում է իր վաւերականութիւնը և ոյժը: Իսկապէս, իմ նախագծած և միւս կողմից էջմիածնի յանձնաժողովից ընդունուած ու հաստատուած հիմն. կանոնադրութեան մէջ վերջնականապէս մտած խմբագրութիւնները միմիանցից ըստ էականի և սկզբունքով չեն տարբերուած, տարբերութիւնն աւելի ձեւականին է վերաբերում: Երկու խմբագրութիւնն էլ ընդունում են, որ պարզ կանոնադրութիւնը վաւերական լինելու համար անհրաժեշտ է թէ թեմական ժողովի որոշումը և թէ ամենայն հայոց կաթողիկոսի հաւանութիւնը (որը քննում է կանոնադրութեան վաւերականութեան պայմանի իրադրոժուած լինելը, այն է՝ հիմնական կանոնադրութեան և հայոց կանոնական իրաւունքին չը հակասելը): Տարբեր է որոշումը միայն կաթողիկոսի հաւանութեան հանդէս զալու եղանակը: Իմ խմբագրութիւնը առաջուց պարտադիր և վաւերական էր յայտարարում թեմական ժողովից սահմանուած և հրատարակուած կանոնադրութիւնը, առանց կաթողիկոսի յատուկ հաւանութիւնը նախապէս ստանալու, և մինչև որ կաթողիկոսի կողմից որևէ առարկութիւն չը լինէր կանոնադրութեան այս կամ այն յօդուածի դէմ—կանոնադրութիւնը կը շարունակէր կատարելապէս վաւերական և պարտադիր մնալ իր ամբողջութեամբ: Ի նկատի ունենալով, որ պարզ կանոնադրութիւնները երկրորդակարգ դէպքերի և հարցերի պէտք է վերաբերէին, կազմուէին խնամքով, ենթարկուէին երկու թեմական-կենտրոնական ատեանների քննութեանը (թեմական խորհրդի, որ կազմում է կանոնադրութիւնների նախագիծը, և թեմական ժողովի, որ ըստահմանում է և հը-

բատարակում է») և պարտաւորապէս համաձայն լինէին հիմնական կանոնադրութեան և հայոց կանոնական իրաւունքի սկզբունքներին,—պէտք էր յուսալ, որ անվաւեր կանոնների հանդէս դալը հազւագիւտ բացառութիւն էր լինելու: Եւ այդպիսի բացառութիւնների հնարաւորութեան պատճառով զփուարացնել գործի սովորական ընթացքը.—ինձ մի աւելորդ խոչընդոտ էր երևում, որ արդեւք էր լինելու պարզ կանոնադրութիւնների հաստատման և հարկաւոր փոփոխման ցանկալի դիւրութեանը: Սակայն Էջմիածնի յանձնաժողովում ընդունուած և հիմնական կանոնադրութեան մէջ մտած խմբադրութիւնն էլ ունի այն առաւելութիւնը, որ կաթողիկոսի հաւանութիւնը ստացուելուց յետոյ գործադրութեան յանձնուելով՝ կանոնադրութիւնները հէնց սկզբից աւելի հաստատ և անպայման վաւերականութիւն կ'ունենան, ապահովուած լինելով, որ ալլես կաթողիկոսի վերահաս բացասումից խախտուելու չեն: Այս յարմարութիւնը և առաւելութիւնը աւելի մեծ կ'երևայ, եթէ ի նշկատի առնենք՝ մի կողմից մեր կանոնական իրաւունքի սկզբունքների նշ մշակուած, նշ էլ ուսումնասիրուած լինելը, և միւս կողմից մի քանի խիստ կարեւոր և լուրջ կանոնադրութիւնների մօտաւայ հրատարակման անհրաժեշտութիւնը (այս մասին մի փոքր յետոյ), մանաւանդ որ այս հանդամանքները ծանրակշիռ հանդամանքներ են:

Սակայն ուշադրութեան արժանի է նաև հետեւելը: Հաստատուած հիմնական կանոնադրութիւնը իւր 30-րդ յօդուածի III կէտում մի ընդհանուր որոշում է սալիս թէ՛ «եկեղեցական-համայնական հիմնարկութիւնների և հաստատութիւնների» համար և թէ՛ «ամբողջ թեմի բոլոր գործերի» համար հրատարակուելիք պարտադիր կանոնադրութիւնների և կարգադրութիւնների հաստատման համար: Մինչդեռ իմ նախագծում եւրաժանել էի այդ երկու կարգի կանոնադրութիւնները, լուրջանչիւրին առանձին կէտ էի նուիրել և եկեղեցական հիմնարկութիւնների վարչական կարգադրութիւնների համար բաւական համարելով միայն թեմական ժողովի սահմանումը՝ «ամբողջ թեմի բոլոր գործերը» կարգաւորող կանոնադրութիւնների համար ամենայն հայոց կաթողիկոսի սանկցիայի անհրաժեշտ պահանջ էի դրել: Այդ երկու տեսակի կանոնադրութիւնները միմիանցից բաժանելու և հաստատման երկու աարբեր եղանակ սահմանելու հիմքն այն էր, որ հիմնական կանոնադրութիւնը եկեղեցական-համայնական իշխանութեան օրգանների կազմակերպման և կառավարման զլխաւոր հիմունքները որոշող կանոններ իր մէջ պարունակելով՝ ամենայն վստահութեամբ կա-

րող էր հաստատ և բաւարար ղեկավար լինել թեմական ժողովին վարչական պարզ կանոնադրութիւններ յօրինելու միջոցին: Մինչդեռ «ամբողջ թեմի» այլ տեսակի (ոչ վարչական) «բոլոր դործերին» (օր. ամուսնական, ժառանգական և այլն) վերաբերող կանոնադրութիւններ կազմելու համար թեմական ժողովը ոչ մի պատրաստի դրաւոր առաջնորդող չ'ունի ղեկավարուելու համար, որովհետեւ հիմնական կանոնադրութիւնը զրեթէ բացառապէս վարչական կանոններէն է բաղկացած: Ուստի անհրաժեշտ էր, որ այս կարգի կանոնադրութիւնները նախապէս ստուգուէին հայոց կանոնական իրաւունքի սկզբունքների տեսակէտից և ապա զործադրութեան յանձնուէին. իսկ այդ ստուգողը մեր ազգային-եկեղեցական համայն կանոնական իրաւունքի ծայրադոյն մեկնաբանը ամենայն հայոց կաթողիկոսը լինելով, հետևապէս երկրորդ տեսակի կանոնադրութիւնները պարտադիր կերպով գործադրուելուց առաջ պէտք է ստանային նորին Վեհափառութեան հաւանութիւնը կամ հաստատութիւնը: Յիշատակելու է նաև, որ կանոնադրութիւնները վերևում յիշուած երեք աստիճանի (հիմնական, պարզ և հրահանգ) բաժանելիս՝ ևս ի նկատի ունէի մի-միայն վարչական կանոնադրութիւններ, որոնք կարգաւորում են կառավարիչ օրգանների գործունէութեան եղանակը և բովանդակութիւնը. և այս հանդամանքը ի նկատի ունենալով՝ որոշել էի իւրաքանչիւր աստիճանի կանոնադրութիւնը հաստատելու ուրոյն ձևը. ոչ-վարչական կանոնադրութիւնների համար էլ մի առանձին յօդուածով յատուկ եղանակ էի սահմանել: Իսկ էջմիածնի յանձնաժողովը պարզ կանոնադրութիւնների հաստատման եղանակը որոշող յօդուածում վարչական և ոչ-վարչական կանոնադրութիւնների համար ի միասին վերցրած մի ընդհանուր եղանակ սահմանելով՝ բնականաբար ստիպուած եղաւ շեղուել իմ նախադրածիցս նաև հաստատման եղանակը որոշելու նկատմամբ:

Ասացի, որ ապագայում հրատարակուելիք կանոնադրութիւնների և կարգադրութիւնների խնդիրը լիակատար կերպով որոշուած, պարզաբանուած և նախատեսնուած չէր Թիֆլիսի նախադրում: Սակայն այդ մի այնչափ լուրջ և կարևոր խնդիր է, որ հիմնական կանոնադրութիւնը պարտաւոր է ղեկավար լինել այդ կանոնադրութիւնները պատշաճապէս կազմելու գործին և առաջնորդող յօդուածներով պարզել և օրինաւոր ճօնապարհ ցոյց տալ: Արդ, լինչ տեսակի կանոնադրութիւններ են նախատեսնուած և սնօրինուած հաստատուած հիմնական կանոնադրութեան մէջ: Հիմնական կանոնադրութեան՝ այդ խնդը-

րին վերաբերեալ բոլոր կանոնները երկու խմբի կարելի է բաժանել՝ I) վարչական օրդանների կանոնադրութիւնների և II) թեմի գործերի կանոնադրութիւնների մասին անօրինադ կանոններ:

1. Առաջին խմբի կանոններում հետեւեալ վարչական կանոնադրութիւններն են նախատեսուած. 1) թեմի ընդհանուր կառավարիչ հիմնարկութիւնների կանոնադրութիւններ (30, ա. 48, բ. 30դ. հիմն. կան.), 2) թեմի կրթական և բարեգործական հաստատութիւնների կանոնադրութիւններ (48 դ.), 3) առաջնորդական փոխանորդի կարգադրութիւն (42) և 4) առաջին կէտում յիշուած հիմնարկութիւնների հրահանգներ (48, ե.): Թեմի եկեղեցական-համայնական իշխանութեան զանազան կարգի և աստիճանի օրդանների վարչական կանոնադրութիւնների մասին խօսում է 30-րդ յօդուածի ա. կէտը («Թեմի եկեղեցական-համայնական հիմնարկութիւնների և հաստատութիւնների կանոնադրութիւններ»): Այդ օրդանները («հիմնարկութիւնները և հաստատութիւնները») թեմի ընդհանուր կառավարիչ հիմնարկութիւնները և կրթական ու բարեգործական յատուկ հաստատութիւններն են: Ընդհանուր կարգով թէ՛ առաջին և թէ՛ երկրորդ տեսակի օրդանների կանոնադրութիւնների նախագիծը կազմում է թեմական խորհուրդը, իսկ հաստատում է թեմական ժողովը ամենայն հայոց կաթողիկոսի հաւանութեամբ (30, ա. 48, բ.): Բայց կրթական և բարեգործական հաստատութիւնների համար մի յատուկ կանոնով թոյլ է տրուում, որ ժամանակաւորապէս հաստատուեն թեմական խորհրդից (48, գ.): Բացի կանոնադրութիւններից՝ թեմի ընդհանուր արտակարգ կառավարիչ օրդանների համար հիմնական կանոնադրութեան համաձայն հրատարակուելու են նաև հրահանգներ, որ աւելի ևս մանր պարագաների պէտք է վերաբերեն:

Ինչ վերաբերում է կրթական հաստատութիւնների կանոնադրութիւններին, պէտք է նկատել, որ ուսումնարանական գործը Ատրպատականում համեմատաբար մի նոր գործ լինելով և ապագայում բաղձալիզմանի և ընդարձակ զարգացման յոյսեր ունենալով, դպրանոցների թէ՛ կանոնադիր և թէ՛ կառավարիչ օրդանների մասին անշուշտ ապագայում կարելի կը լինի նոր լրացուցիչ կանոններ հրատարակել, որովհետեւ ներկայ հիմնական կանոնադրութիւնը այդ գործի բաւարար կարգաւորում չէ տալիս: Ուսումնարանների քիչ թէ շատ լիակատար հիմնական կանոնադրութիւն յօրինել հնարաւոր և յարմար կը լինի միայն այն ժամանակ, երբ կը պարզուի Ատրպատականում կատարուելիք ուսումնարանական դուծունէութեան ընդհանուր ծրագիրը,

հիմնարկուելիք դպրանոցների տեսակները (տարրական, միջնակարգ, բարձրագույն, ընդհանուր-կրթական, արհեստագիտական մասնագիտական), կ'որոշուի զանազան դպրոցների փոխադարձ կապակցութեան և յարմարութեան ձևերը, երբ ընդհանրապէս պարզ կը լինի թէ՛ իւրաքանչիւր դպրոցի առանձին վերցրուած և թէ՛ բոլոր դպրոցների համայն սիստեմի կերպարանքը: Ահա այն ժամանակ ուսումնարանական հիմնական կանոնադրութիւնը կը գայ հաստատ հիմքի վրայ դնելու և օրինաւոր ընդհանուր սահմանով կարգաւորելու դպրոցների կեանքի զլխաւոր և էական կողմերը: Իսկ առայժմ պէտք է բաւականա՛նալ լոկ մասնակի դպրոցների կանոնադրութիւններով: Ատրպատականի ուսումնարանների վարչական կաղմակերպութեան ինքնուրոյն դժերից մէկն այն է, որ մինչդեռ մեղանում մեր եկեղեցական և հողեր դպրոցների կառավարութիւնը բոլորովին զատուած է եկեղեցական ընդհանուր կառավարութիւնից և վարչական մի ինքնին չըջան է հանդիսանում, Պարսկաստանի թեմում նոյնպիսի դատում գրեթէ չը կայ: Մեր եկեղեցական-ծխական դպրոցները կառավարում էին յատուկ «ծխական դպրոցի հոգաբարձութիւններ», իսկ Ատրպատականում ծրխական համայնքի ընդհանուր կառավարիչ օրգանը—ծխական խորհուրդն է հանդիսանում նաև հոգաբարձութիւն ծխական դպրոցի (68, ա. հիմն. կան.). իսկ միւս, ոչ-ծխական դպրոցների համար թէև կան յատուկ հոգաբարձութիւններ *), բայց թէ հոգաբարձուներին և թէ ուսուցիչներին (սրանց հոգաբարձութեան առաջարկութեամբ) հաստատում է պաշտօնում և հրաժարեցնում է թեմական խորհուրդը:

Յատկապէս ընդհանուր կառավարիչ մշտական հիմնարկութիւնների **) համար հրատարակուելիք ապագայ կանոնադրութիւնների նկատմամբ անհրաժեշտ է ուշադրութիւն դարձնել, որ ի նկատի ունենալով թեմի այդ հիմնարկութիւնների և պաշտօնեաների կոտարելիք բաղմատեսակ և կարևոր գործունէութիւնը՝ հարկ է զգացւում անյապաղ և հանգամանօրէն կարգաւորելու այդ գործունէութեան եղանակները: Այս տեսակէ-

*) Հիմնական կանոնադրութեան մէջ որոշուած չէ, թէ խօսքը ինչ դպրոցների մասին է՝ այստեղ, յայտնի չէ նաև այդ հոգաբարձութիւնների ընտրութեան եղանակը:

**) Ժողովական, այսինքն պատգամաւորներից գումարւող և պարբերաբար գործող հիմնարկութիւնների համար կանոնադրութիւններ և հրահանգներ յօրինելիս՝ պէտք է օգտուել տաճկահայերի կանոնադրութիւններից և բազմամեայ փորձից, որ դժբաղդաբար մեղանում շատ քիչ են յայտնի և առհասարակ ուսումնասիրուած չեն:

տից՝ իհարկէ՝ հիմնական կանոնադրութեան մի քանի կանոնները դեռևս բաւական չեն, բայց զրանից, այդ հիմնական կոնոնադրութեան գործն էլ չէ, այլ մի շարք յատուկ վարչական կանոնադրութիւնների—կառավարման իւրաքանչիւր ճիւղի համար առանձին-առանձին: Եւ աչքի առաջ ունենալով կառավարիչ օրգանների և զրանց գործունէութեան տեսակները, կը տեսնենք, որ անհրաժեշտօրէն հրատարակուելու են այնպիսի կանոնադրութիւններ, ինչպէս օր. զիւանավարական, դատաւարական, պաշտօնավարական, վարչական-կարգապահական, նոտարական... Այն ինչ Թիֆլիսի նախագիծը բոլորովին անտես էր արել այս անհրաժեշտ կանոնադրութիւնների խնդիրը, Թիֆլիսի նախագիծը յիշատակում էր միայն» կրթական և բարեգործական հիմնարկութիւնների և «թեմի բոլոր աղային մարմինների, հիմնարկութիւնների և պաշտօնականների հրահանգները» մասին, յատկացնելով թէ առաջինի և թէ երկրորդի հաստատելու իրաւունքը թեմական խորհրդին: Հրահանգների մասին, ինչպէս տեսանք, հիմնական կանոնադրութիւնն էլ յօդուած ունի: Սակայն վերեւում յիշուած բաղմատեսակ և լուրջ կանոնադրութիւնների պահանջին ոչ մի կերպ չէ կարելի հրահանգներով բաւարարութիւն տալ: Հրահանգները այնտեղ միայն կարող են նպատակայարմար և մինչև իսկ հնարաւոր լինել, ուր արդէն գոյութիւն ունին համապատասխան առաջնորդող կանոնադրութիւններ: Կառավարիչ հիմնարկութիւնների համար կանոնադրութիւնների ամբողջ մի շարք հրատարակելու անհրաժեշտութիւնը չեշտկիս՝ ի դէպ է այստեղ մատնանիշ անել մի հանգամանքի վրայ՝ Հիմնական կանոնադրութիւնը (ինչպէս և Թիֆլիսի նախագիծը) մի և նոյն կառավարիչ մշտական օրգանի իրաւասութեան շրջանում կենտրոնացրել է կառավարական ամենազանազան գործառնութիւններ: Օր. խորհուրդները (թեմական, գործակալական և ծխական) թէ՛ զուտ վարչական (գործադիր, ադմինիստրատիւ), թէ՛ դատաստանական (իրաւարարական, իւստիցիայի) և թէ՛ նոտարական ֆունկցիօններ են կատարում միաժամանակ: Սակայն մի հիմնարկութեան գործունէութեան մէջ նման զանազան տեսակի գործառնութիւններ կենտրոնացնելով՝ պէտք չէ և չէ կարելի՝ իհարկէ՝ վերացնել ոչ այդ ֆունկցիօնների միմիանցից էապէս տարբեր լինելը (մանաւանդ զուտ-վարչական և իրաւարարական ֆունկցիօնների), ոչ էլ այդ տարբեր ֆունկցիօնները տարբեր ձևով կատարելու անհրաժեշտութիւնը: Եւ եթէ այդ զանազան ֆունկցիօնները մենք միացուած ենք տեսնում մէկ հիմնարկութեան իրաւասութեան շրջանի մէջ, ապա ուրեմն անհրաժեշտ է գոնէ՝ այդ զանազան

դործերը քննելու և վճռելու համար տարբեր եղանակներ սահմանել: Թերևս ժամանակի ընթացքում հարկաւոր դատուի և պատշաճաւոր ճանապարհով որոշուի, եթէ ոչ բոլորովին առանձին հիմնարկութիւնների, դոնէ միենոյն հիմնարկութեան մէջ զանազան յատուկ բաժանմունքների յանձնել զանազան-ֆունկցիոնների իւրաքանչիւր տեսակը: Իսկ առայժմ, քանի դեռ բոլորովին բացակայում է օրգանների սրէն նման ձեւաւորում (որ կառավարական դործունէութեան նուազ զարգացման մի նշան է), աւելի ևս անհրաժեշտ է դոնէ որոշ կանոնադրութիւններով որոշել և զատել միմիանցից այդ տարբեր դործառնութիւնների կառարման և զանակները:

Հիմնական կանոնադրութեան 42-րդ յօդուածով մի յատուկ կարգադրութիւն է սահմանուում, որ պիտի որոշէ առաջնորդական փոխանորդների իրաւունքներն ու պարտականութիւնները՝ թեմական ժողովի և առաջնորդի փոխադարձ համաձայնութեամբ: Այսպիսի մի կանոնադրութեան մասին Թիֆլիսի նախագծում ոչ մի խօսք չը կար, այլ մի առանձին յօդուած սահմանում էր, թէ «առաջնորդական փոխանորդները իրանց վիճակում ունեն այն բոլոր իրաւունքները, ինչ որ թեմական առաջնորդը ամբողջ թեմում»: Սակայն այս յօդուածի սահմանածը ոչ միայն անորոշ է, այլ և ուղղակի սխալ և անընդունելի: Թեմական առաջնորդը կանոնադրութեան զօրութեամբ թեմում իրաւունք ունի օր. դործակալներ, վանահայրեր նշանակելու և հրաժարեցնելու, հաստութեան տարակուսելի դէպքերում թոյլտընութիւն տալու. միթէ՞ ուրեմն այս իրաւունքները փոխանորդական վիճակի սահմանում փոխանորդին ևն պատկանում: Եթէ փոխանորդները իրանց վիճակում անեն այն ամենը, ինչ որ ամբողջ թեմում առաջնորդն է անելու, պարզ է որ թեմական առաջնորդին իրօք այլ ևս ոչինչ չի մնայ անելու: Էլ չեմ ասում այն իրաւունքների մասին, որ թեմական առաջնորդն ունի «ամբողջ թեմում», որ սակայն չի կարող ունենալ փոխանորդը իր փոխանորդութեան սահմանում (օր. թեմական խորհրդին նախագահելը, առաջնորդական տեղապահ և փոխանորդներ նշանակելը և հեռացնելը...): Իր այդ յօդուածը խմբագրելիս՝ Թիֆլիսի մասնաժողովը մոռացութեան էր տուել, որ թեմական առաջնորդի և առաջնորդական փոխանորդի իրաւասութիւնների տարբերութիւնը միայն այն չէ, որ մէկը ամբողջ թեմում է դործում, իսկ միւսը թեմի միայն մի որոշ մասում: Տարբերութիւնը միայն այն չէ, որ մէկի իշխանութեան դործադրութեան տեղն աւելի ընդարձակ է, քան միւսինը, այլ նաև

այն, որ մէկի հէնց իշխանութիւնը աւելի բարձր աստիճանի լինելով՝ աւելի մեծ է հէնց իր բովանդակութեամբ և ծաւալով, քան միւսինը: Այս պատճառով որոշ գործառնութիւններ, որ աւելի լուրջ բնաւորութիւն ունեն, յատկացում են թեմական առաջնորդի իրաւասութեանը, որպէս աւելի բարձր կարգի իշխանութիւն ունեցող օրդանի, և չեն կարող պատկանել աւելի ստորակարգ մի պաշտօնեայի իրաւասութեանը: Պէտք է խոստովանել, որ առաջնորդական փոխանորդները գործունէութեան շրջանը չատ անորոշ լինելով՝ դժուար էր սկզբից և եթ մի հաստատուն սահմանով զծաղրել նրա իրաւասութիւնը, թերևս այս լինի թիֆլիսի նախագծի յիշեալ յօդուածի բոլոր պահասութիւնների պատճառը: Առաջնորդական փոխանորդի պաշտօնէութեան բովանդակութիւնը այնքան անորոշ է և մինչև անգամ անյայտ, որ թերևս հարց է՝ արդեօք այդպիսի մի առանձին պաշտօնեայի կարիք կայ, թէ չը կայ: Ըստ երևոյթին, առ. փոխանորդը մի «այցելու» է, «չատուկ և զանազան յանձնարարութիւններ կատարող պաշտօնեայ», որի կատարելիք գործունէութիւնները առաջուց որոշակի կերպով և քիչ թէ չատ լրիւ նախատեսելի դժուար է, մանաւանդ զրօի, օտար մարդկանց համար: Այս բոլորը այսպէս լինելով հանդերձ՝ պատշաճ համարուեց չը վերացնել այդ պաշտօնեայի դրութիւնը, քանի որ տեղական պայմաններին ծանօթ մարդիկ ընդունում էին առաջնորդական փոխանորդներ լինելու կարևորութիւնը: Ապա այսպիսի դէպքում պէտք էր ոչ մի որոշում չը տալ, այլ թողնել, որ ձեռնհաս և զիտակ հիմնարկութիւնների ձեռքով իր ժամանակին անօրինութիւն, ինչ որ հարկը կը լինի Հիմնական կանոնադրութիւնը այդպէս էլ անում է իր 42-րդ յօդուածով:

II. Կանոնների երկրորդ խմբում նախատեսնուած կանոնադրութիւնների մասին թիֆլիսի նախագծում ոչ մի ակնարկ չը կար: Եւ այս պակասութիւնը շատ աչքի էր ընկնում: Ատրպատականի կանոնադրութեան հետ ծանօթանալով, տեսնում ենք, որ օր. մեր եկեղեցական-համայնական հիմնարկութիւնները այնտեղ դատելու են վճռելու են ամուսնութեան, խնամակալութեան, ժառանգման, նոյնիսկ կալուածատիրութեան վերաբերեալ գործեր.—որ ժողովուրդը եկեղեցական-համայնական տուրքեր, դիւանական և նստարանական թղթատուրքեր է վրձարելու: Բայց ի՞նչ կանոնով, ի՞նչ իրաւունքով են վարուելու այս բոլոր բաղմատեսակ և կենսական նշանակութիւն ունեցող խրդիւրներում թէ ժողովուրդը և թէ պաշտօնեաները: Ո՞վ չը վիտէ, որ կանոն, օրէնք չ'եղած տեղը—անարգիւ տիրապետող պատահական անձերի քճահաճոյքն ու կամայականութիւնն է

լինում: Եթէ մինչև այժմ այդպէս է եղել, բայց չէ որ հիմնական կանոնադրութեան ամբողջ իմաստը հէնց այդպիսի անիրաւ և ասօրէն կայութեան վերջ գնելն է: Հիմնարկութիւնները, սրանց կազմը, գործունէութեան առարկաները և եղանակները որոշելով՝ գործը չէ վերջանում: Այլ կանոնադրութիւններն էլ են հարկաւոր, որոնցով պէտք է վարուի իւրաքանչիւր ոք իր կեանքի թէ մասնաւոր և թէ հանրային յարակցութիւններում, և որոնց կատարման վրայ հսկելու են կառավարիչ հիմնարկութիւնները: Եւ ահա հիմնական կանոնադրութիւնը նախատեսել է կանոնադրութիւններ, որոնք պիտի կարգաւորեն ամբողջ թեմի գործերը: Այդ կանոնադրութիւնները կազմակերպ (ինչպէս և այլ գէպքերում)՝ թեմական ժողովը իրաւունք ունի (որից անշուշտ կ'օգտուի) «ձեռնհաս մարդկանց հրաւիրելու» և յանձնաժողովներ ընտրելու՝ խնդիրը լուրջ կերպով ուսումնասիրելու համար (ահա հիմն. կան. յօդ. 30, կէտ ժա.): Խօսքը չը կայ, որ այս կարևոր գործը գլուխ բերելուն եռանդով աջակցելու և ձեռնհաս մասնակցութիւն ունենալու պարտաւոր են հայ մասնագէտ իրաւաբանները *): Սահմանում և հրատարակում է այդ կանոնադրութիւնները թեմական ժողովը՝ ղեկավարուելով հայոց կանոնական իրաւունքով և նախապէս ամենայն հայոց կաթողիկոսի հաստատութեանը ներկայացնելով (յօդ. 30, ա.): Այս կարգով հրատարակուելու են օր. ամուսնութեան, խնամակալութեան, ժառանգման, թերևս կալուածատիրութեան (կամ ընդհանրապէս դոքթր) կանոնադրութիւններ: Իսկ տուրքերի համար յատուկ եղանակ է սահմանում նոյն 30-րդ յօդուածի ժը-րդ կէտը: Թէ տուրքեր սահմանող կարգադրութիւնները և թէ դրանց վերաբերեալ երկրորդականայ խնդիրները որոշող մանրամասն հրահանգները հաստատում է թեմական ժողովը. իհարկէ՝ այս գէպքում էլ թեմական ժողովը խնդիրը նախապէս ուսումնասիրելու համար՝

*) Ցաւելով արձանագրելու եմ, որ ոչ թէ իրաւաբանական զբաղանդութիւն, այլ նոյնիսկ առանձին իրաւաբանական յօդուածներ պակասում, բացակայում են մեզանում: Իրաւաբանական ոչ մի խնդրի համար չեմ կարող ցոյց տալ որևէ զիջք կամ յօդուած, որ իրաւաբանօրէն պարզէր այդ խնդիրը և իրաւաբանական գիտութեան եղած բացառութիւնները շարադրէր հասարակութեանը մատչելի ձևով: Ուսումնասիրուած չէ մեր իրաւունքի պատմութիւնը (հայոց իրաւունքի անցեալը), չը նայելով որ այնքան տափառ նիւթ կայ: Ուսումնասիրուած չեն մեր ներկայ վիճակին վերաբերող թէ ներքին և թէ արտաքին օրէնսդրութիւնները: Մինչդեռ ոչ միայն իրաւաբանի, այլ և ամեն մտածող մարդու համար պարզ պիտի լինի կործնեմ նման հետադօտութիւնները կենսական կարևորութիւնը թէ ընդհանրապէս, և թէ մասնակի կերպով՝ կանոնադրութիւններ յօրինելու գործում:

ձեռնհաս և տեղեակ անձերից յանձնաժողով կը կազմէ և կ'օգտուի սրա տուած եզրակացութիւններից: Պէտք է նկատել, որ մինչդեռ՝ ինչպէս տեսանք՝ թեմական խորհուրդը վարչական հրահանգներ հրատարակելու իրաւունք ունի, նոյն իրաւունքից նա զուրկ է տուրքերի վերաբերմամբ: Ի նկատի ունենալով, որ տուրքերին վերաբերեալ նոյնիսկ երկրորդական խնդիրները ծանրակշիռ նշանակութիւն ևն ունենում ժողովրդի համար, հիմնական կանոնադրութեան այդ որոշումը նպատակաշարմար պէտք է համարենք:

(Վերջը յաջորդ համալում)

ՍԻՐԱԿԱՆ ՏԻԳՐԱՆԵԱՆ

Շ Ա Պ Կ Ի Ե Ր Գ Ը

(Thomas Hovd)

Մատները թմրած ու մաշուած էին,
Աչքի կոպերը ուռած ու կարմիր—
Հին շորեր հագած՝ հալումաշ մի կին
Նստած՝ կարում էր եռանդուն ու ժիր.

Կարիր ու կարիր...

Հէգ ու չքունոր, խեղճ ու վշտակիր...
Ողբագին ձայնով, տխուր ու տրտում՝
Մի շապկի մասին նա երգ էր ասում.

Վաղ-հաւախօսին զարթնում է քնից
Եւ շապիկ կարում մինչեւ կէս-գիշեր.
Կիսավուր իր տան յարկի ճեղքերից
Ներս են թափանցում աստղերի շողեր.
Տանջւում է որպէս քրիստոնեայ մի կին,
Որ անգութ թիւրքի ձեռքին է դերի—
Աւանդ, մի գերի, որ էլ բնաւին
Թշնամու ճանկից փրկութիւն չունի:

Աշխատիր անդուլ, գործիր անտրտուն՝
Մինչդեռ չէ յաղթել քեզ քունը յամառ,

Աշխատիր անխոնջ մինչև վերջին շունչ,
Քանի քո աչեր չեն մարած խաղառ.

Աշխատիր, աշխատիր, աշխատիր,
Շուրալիր, խրճրալիր ու կարիր,
Մինչև շապկիդ վրայ ընկնես քնահար
Եւ քնիդ մէջ էլ կարես անդադար:

Դուք, որ ապրում էք ուրախ շրջանում,
Ունիք մայր ու քոյր, կին ու աղջականք,
Այն՝ ինչ հագնում էք և անփոյթ մաշում,
Ոչ թէ կտաւ է, այլ չարքաշ մի կեանք.

Կարիր ու կարիր...
Հէգ ու չքաւոր, խեղճ ու վշտակիր...
Կարում եմ ահա շապիկ ու—պատան
Եւ ամեն րոպէ ըսպասում մահուան:

Բայց, աստ, մահից Էր վախենամ ես,
Թէկուզ այդ հիւրը դար ինձ մօտ այսօր.
Ձէ՛ որ ժանտ մահի ուրուականին պէս՝
Մի չոր կըմախք եմ—լսկ մօրթ ու ոսկոր,
Հիւժուած մի մարմին, չարատանջ մի կեանք,
Կըտոր հացից զուրկ և ծով օրն ի բուն.
Ա՛խ, ինչո՞ւ, ո՞վ Տէր, հացը այդպէս թանգ,
Իսկ այսպէս էժան իմ միսն ու արիւն:

Աշխատիր անվերջ, թափիր ճիգ ու ջանք,
Այս ծանրը ժամերն, աւանդ, վերջ չունին.
Իսկ ի՞նչ է իմ վարձք—չոր հացի փշրանք,
Հընամաշ շորեր, յարդէ անկողին,
Սեղան ու աթոռ՝ հասարակ փայտեայ,
Յատակ, առաստաղ՝ խարխուլ ու աւեր.
Լաւ է՝ որ դոնէ մերկ պտտի վրայ
Մերթ թրթռում է իմ միակ ըստուեր:

Տանջուիր անխընայ, ժամէժամ տքնիր
Եւ միշտ նստակեաց գործիր օրավարձ
Որպէս յանցաւոր մի տաժանակիր՝
Աքսոր ուղարկուած անյոյս ու անգարձ.

Աշխատիր, աշխատիր, աշխատիր,
Շուլալիր, խըծըպիր ու կարիր,
Թէկուզ քո դուլիս թեքուի ուժասպառ,
Եւ սիրտ ու ձեռքըդ թուլանան իսպառ:

Կարիր ու կարիր ձմրան օրերում,
Նոյնպէս գարնանը—ճրեր զովարար,
Երբ ծիծեռնակը իր բոյնն է հիւսում՝
Գարնան վերադարձ տօնելու համար,
Իսկ ձաղուկները կուշտ ու ապահով՝
Միշտ ճուղղում են իրանց մօրը հետ,
Կարծես ուղում են ուրախ երգերով
Ինձ ծաղրի բռնել ու հեղնել յաւէտ:

Ա՛խ, մէկ դուրս գայի դաշտեր բացօդեայ,
Խճապէս բուրում են վարդերն անուշակ...
Միայն երկինքը լինէր իմ վըրայ,
Միայն դալար խոտ իմ ոտների տակ.
Ո՛հ, թէ ինձ հիմայ վիճակուէր մի ժամ
Մանկական կեանքիս անհոգ ժամերից,
Երբ վախ չ'ունէի, թէ ես մի անդամ
Ազատ ման գալով՝ կը զրկուեմ ճաշից.

Ո՛ւր էր՝ դէթ մի ժամ սրտայայց իմ ցաւ
Ինձ խեղճիս ազատ ու հանգիստ թողնէր.
Ա՛խ, միշտ յուսահատ ու սիրոյ ծարաւ,
Դառն է իմ կեանքը, տխուր իմ օրեր.
Դէթ մի քիչ լացը կը մեղմէր իմ վիշտ,
Բայց, ա՛խ, ոչ մի ելք չը կայ ինձ համար.
Արցունք, կանգ առէք, թողէք ինձ հանգիստ,
Թէ չէ չի լինի կարճս միաշար:

Մատները թմրած ու մաշուած էին,
 Աչքի կռակները ուռած ու կարմիր—
 Հին շորեր հագած՝ հալումաշ մի կին
 Նստած՝ կարում էր եռանդուն ու ժիր.

Կարիր ու կարիր...

Ազքառ ու տնանկ, խեղճ ու վշտակիր....
 Հեծում էր, երգում հէգ ու լալագին.
 Ա՛խ, թէ գէթ հասնէր վէս հարուստներին
 Այս կնոջ երգը մի շապիկ մասին...

Թարգմ. բնագրից ԱՅՐԱՀԱՄ Մ.-ՋԱՆԵԱՆ

ԽԱՌՆԸ ԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

Շատ անգամներ առիթ ենք ունեցել մեր յօդուածներում շեշտելու այն հռչակաբանքը, որ պարսիկ մոլեռանդ կղերք, նրա հետ ամուր կերպով չղթայուած տգէտ ժողովուրդը՝ հալածում են Պարսկաստանում առաջ եկած ամեն մի առաջադիմական քայլ ու ձեռնարկութիւն: Հէնց վերջին ժամանակներս Պարսկաստանի զանազան մասերում կատարուած ամբողջին «բռնութիւն» մասամբ ուղղուած են նոր կարգերի դէմ: Առտարայում ապրիլի 25-ին պարսիկ խուժանք մոլլաների առաջնորդութեամբ յարձակում է մաքսատան վերահսկիչի բնակարանի վրայ քարուքանդ անելու նպատակով, բայց մաքսատան կառավարիչը, ինչպէս և ուրիշները՝ թոյլ չեն տալիս, թէև յամենայն դէպս կատարում է ամբողջ պահանջը, այն է—անյապաղ հեռացում է մաքսատանից վերահսկիչը: Նոյն խառն զրութիւնն է և Թեհրանում. լուրերին նայելով՝ այնտեղ ամեն օր էլ թեթև խառնակութիւններ են տեղի ունենում: Դժգոհութիւնը բնորոշուր է Թաւրիզում էլ մի սովորական դէպք առիթ դարձաւ դժգոհութիւնների արտայայտութեան: Մի մոլլայի հարբած զրութեան մէջ տեսնում են պարսիկները և իսկոյն ահագին խումբ են ազմում, մոլլաների և սէիդների առաջնորդութեամբ յարձակում են հայի խանութի վրայ, կոտորում չէրը և ապակիները, քարուքանդ անում, խանութպանին էլ թակում և տանում մուշտէիլի մօտ, ուր բաւական երկար պահում են:

Զը մոռանամ յիշել և այն, որ ինչպէս պատմում են, այդ խանութը թալանելիս շատ պարսիկներ, նոյն իսկ մոլլաներ՝ օղու լիքը չչեր են թոցրել: Այդ շատ բնորոշ փաստ է. արտաքուստ բողոքում են, բայց զազանի ամենից շատ իրանք են դործածում:

Այդ դէպքերից կղերը իրան անարդուած համարելով՝ ոտքի է կանգնում, հաւաքւում են այս ու այն կողմից և միանում են դրանց թալաքաները*) ու մոլեռանդ պարսիկ խուժանք և ահա-դին խումբ կազմած՝ դնում են վալիաթին գանգատուելու:

Ամբողջ երկու երեք օր, մայիս 21, 22-ին՝ քաղաքում կարգը խանգարուած էր, որ բռնուած էր ազմկող ամբխով, փակ էին նաև մաքսատունը, փոստատունը ևայլն:

Դժգոհ պարսիկների պահանջներից զլիաւորները հետևեալ հինգ կէտում են ամփոփւում.

1) Կողպել բոլոր գինեւաները. ընդհանրապէս չը ծախուի ողելից խմիչքներ:

2) Հեռացնել պարսկաստանից Պրիմին **):

3) Փակել նոր—եւրոպական տիպի դպրոցները Թաւրիզում, օրինակ՝ Լոդմանեան, Փեամալի ևայլն:

4) Փոխել նոր սահմանուած տարիքները:

5) Մաքսատներում և փոստատներում պաշտօնեաները լինեն պարսիկներ, հեռացնել եւրոպայիներին, ընդհանրապէս քրիստոնեաներին, փակել նոյնպէս հիւրանոցները:

Այս բոլոր կէտերն էլ, բացառութեամբ չորրորդի, ընդունւում են վալիաթի կողմից: Պարսիկ կղերի դրած ուշադրատումի համաձայն իսկոյն մի քանի ժամուայ ընթացքում հեռացաւ Պրիմը Թաւրիզից, փակուեցին գինեւաները և դպրոցները, պաշտօնից հեռացուեցին մի քանի քրիստոնեաներ:

Բաւական է միայն ուշադրութեամբ քննել կղերի դրած պահանջները, և դժուար չի լինի հասկանալ, որ ամբողջից դրողները զլիաւորապէս հոգեւորականներն են և հարուստ կալուածատէր բէգերն ու խաները: Այսինքն այդ տարրերը, որոնց համար նպաստաւոր է երկրի հին կարգ ու կանոնը: Պէտք է ի նկատի ունենալ, որ Պարսկաստանի գիւղատէրերը խաներից և բէգերից ոչ պակաս մոլլաները, սէիդները և մուշտէիդներն են, հետևաբար թէ աշխարհական և թէ կղերական կալուածատէրերի շահերը միևնոյնն են: Եւ ինչպէս չը զրգուէին դրանք, քանի որ վերջերս լուրեր էին պատուում, որ պէտք է նոր կարգեր մտ-

*) Թալաքա—այսպէս են կոչւում Պարսկաստանի բարձրագոյն դպրոցների աշակերտները. այդ դպրոցներում անցնում են միմիայն կրօնական առարկաներ, և պատրաստում են այնտեղ աշակերտները հոգեւոր կոչում ստանալու: Այդ դպրոցների մասին այլ անգամ:

**) Պրիմը եւրոպացի է և համարւում է ամբողջ Ատրպատականի մաքսատուների և փոստատների ընդհանուր կառավարիչ:

յուսկն հողատիրական սիստեմի մէջ, կենսական պիտոյքների վերաբերմամբ նոր և հաստատուն տոկոս է նշանակուելու, և այդ բոլորը յանձնուելու է, մանաւանդ վերջինը, բեղիկացիներին, այն էլ տաս տարի ժամանակով:

Ենթադրուում է, որ բացի վերոյիշեալ հանգամանքներից կայ և մի ենթադրութիւն. և կարծէք անդլօ-պարսկական նոր դաշնագրի պահանջը դալիս է աւելի հաստատուելու այդ ենթադրութիւնը: Այժմ կարող վերականգնուած է. այս օրերս գալու է Պրիմը Թաւրիզ, որ գտնուում է այժմ Մարանդում: Թէև վերջինս տրամադիր է եղել զնալ Եւրոպա, բայց Պարսկաստանի մաքսային ընդհանուր կառավարիչ Նոսր, նոյնպէս և վալիաթը կարգադրել են, որ նա չուտով դայ Թաւրիզ և ստանձնէ իր պաշտօնը: Բացի այդ՝ յաւում է, որ Շահը կանչել է Թաւրիզի մուշտէիդին, բայց ինչպէս պատմում են, մուշտէիդը չէ ուզում գնալ, մի կողմից էլ ժողովուրդը թոյլ չէ տալիս: Թագաժառանգը օգտուելով մաքրերի այժմեան խաղաղ դրութիւնից՝ ձերբակալել է խռովարարների պարագլուխներից չորս ազդեցիկ և հեղինակաւոր անձնաւորութիւնների, իւրաքանչիւր թաղի հարուստներին խիստ կերպով հրամայուած է կարգ պահպանել, զսպել անկարգութիւնները և սեղիք չը տալ խռովութիւնների, չը զրդուել ժողովրդին: Բացի այդ ամենից՝ Թագաժառանգը աշխատում է զօրեղ զինուորական ոյժ ունենալ իր ձեռքի տակ, զրա համար էլ դաւառներից բերել է տալիս զինուորներ, և ինչպէս պատմում են, մի գունդ էլ ուղարկել է Մարանդ, որպէսզի Պրիմին անվտանգ և ապահով Թաւրիզ հասցնեն:

Հայերն էլ որոշ պատրաստութիւններ են տեսնում իրանց պաշտպանելու ամբոխի յարձակումներից: Այսպիսի ամբոխային անկարգութիւնների ժամանակ միշտ էլ ամենից շատ տուժում են հայաբնակ թաղերը, որոնք լինում են թալան-թառաչի վայրերը: Հէնց պարսիկ խուժանն էլ այդպիսի առիթի է սպասում, որ մի բան գցի բերանը, թէկուզ նոյն իսկ ոչինչ չ'ունենայ հայերի դէմ: Հայերը վախենում էին մանաւանդ Պրիմի հեռանալու օրը, երբ լուր էր տարածուել, թէ պէտք է յարձակուեն «էրմանստանի» վրայ: Այդ լուրը՝ իհարկէ՝ ճիշտ է եղել, ինչպէս յետոյ իմացանք հաւաստի աղբիւրից. մի խումբ պարսիկներ մտածում են՝ «Բնչ անել».— պահանջ մի բան անելու, թէկուզ ինչ լինի: «Գնանք էրմանստան» մտածում են նրանք, իսկոյն զրոհ են տալիս գէպի հայաբնակ թաղերը, բայց ճանապարհին պատահում են մի երկու մոլլաներ, հարցնում և իմանում են նրանց ցանկութիւնը, այդ երկու մոլլաները յորդորում, համոզում են կատաղած խու-

ժանիւն և յետ դարձնում, պատճառաբանելով՝ որ իրանք ոչ մի պահանջ չ'ունեն հայերից, ոչ էլ դժգոհ են, իսկ եթէ այդպիսի ակառն-թալանով վճարուեն, իրանք կորցնում են օրինաւոր պահանջը և դա իրանց համար պատիւ չի բերի: Նոյն այս բանը ասում են հոգևոր պետերն էլ և յորդորում են ձեռք չը տալ հայերին: Բացի այդ, ինչպէս պատմում են, ուստաց կոնսուլ պ. Պախտունովը այդ խառնակութիւնների ժամանակ թագա-ժառանգին ներկայանալիս՝ նրա առաջին հարցը եղել է հայերի ապահովութան խնդիրը, և ստացել է դրական պատասխան:

Ե. ՖՐԱՆԳԵԱՆ

ՇՎԷՑՍԱՐԱԿԱՆ ԳԻՒՂԸ *)

IX

Ցաւում եմ, սիրելիս, որ ես ստիպուած եղայ առժամանակ ընդհատել իմ նամակները Շվեյցարիայի մասին: Դու վըշտացած ես, հասկանում եմ անհամբերութիւնդ, բայց իմ լուսութիւնը մի պատճառ ունի, որ քո ներողամտութիւնը դարձնում է անհրաժեշտ—ես հիւանդ էի. դու գիտես անշուշտ, որ մինչև իսկ չոր, անսիրտ պաշտօնականութիւնը իր ձեականութիւնները մէջ հիւանդութեանը յատկացրել է բաւական պատուաւոր տեղ: Հիւանդը միշտ իրաւունք ունի:

Այժմ վերսկսելով նամակներս, ուրախ եմ, որ կարող եմ քեզ նկարագրել մի վերին աստիճանի հետաքրքիր երևոյթ, որ թէև շվեյցարական գիւղական ամենօրեայ կեանքին օրգանապէս կապուած չէ, այլ աւելի շուտ դիպուածական է, բայց և այնպէս լայն լոյս է արժեքում այս երկրի ժողովրդի հոգու, մասամբ նրա ոչ շատ հեռւոր անցեալի, ճաշակի, ձգտումների, սովորութիւնների վրայ: Խօսքս մի գիւղական ներկայացման մասին է: Ինքնըստինքեան մի շատ սովորական, շատ պարզ երևոյթ, այնպէս չէ, որ երկրի գիւղերում չեն պատահում ներկայացումներ: Բայց մի շարք կողմնակի հանդամանքներ այս անգամ յիշեալ ներկայացումը դարձրել էին առաջնակարգ հետաքրքրութեան առարկայ ոչ միայն Վօ կանտոնի բնակիչների, այլ և շատ օտարականների համար. նամակս հասկանալի դարձնելու համար ստիպուած եմ մի փոքր հեռուից սկսել:

Ահա մի քանի չաբաթ է, շվեյցարական և գլխաւորապէս Վօ կանտոնի թերթերը խօսում են մի հետաքրքիր պիեսայի մասին, որ կոչւում „La Dime“—Տասանորդ, և որ խաղացւում

*) Տես «Մուրճ» № 3:

է Լոզանից մօտ քսան վերտ հեռու՝ Մեզիեր գիւղում: Այցելուները հաղարներով են հաչում. պիեսան վերին աստիճանի օրիզինալ է, իսկ խաղը հիացմունք է շարժում: Ընդհանուր այս հետաքրքրութիւնը սակայն կարող է անհասկանալի մնալ օտարներին, չէ՞ որ դա այնուամենայնիւ մի գիւղական ողորմելի բեմ պիտի լինի և մի սովորական խաղ: Բայց ահա թէ խնդիրն ինչու մն է:

Շվեյցարական դաշնակցութեան այս գրաւիչ եղբայրութիւնը կազմող կանտոններից իւրաքանչիւրը իր ուրոյն պատմութիւնը, իր պատմական կեանքն է ունեցել և ունի, որ արտայայտում է բազմաթիւ բնորոշ գծերով կառավարական, հարկային, կրթական, օրէնսդրական սիստեմի, ինչպէս և այս 22 փոքրիկ հանրապետութիւնների, փոքրիկ ժողովուրդների բնաւորութեան վրայ: Օտարները հեռուից ճանաչում են միայն մի հատ մեծ Շվեյցարիա, որ արծւի պէս թառել է Ալպերի վերայ, բայց մօտիկից դիտողը կը տեսնի, որ նրա թևերի տակ ծուարել են 22 փոքրիկ, իրարից անկախ կանտոններ: Ոչ շատ հեռաւոր անցեալում այս կանտոնների յարաբերութիւնների մէջ տեղի են ունեցել զօրեղ ցնցումներ, երբեմն նոյն իսկ արիւնոտ ընդհարումներ: Եղել են աւելի զօրեղները, որոնք բռնացել են փոքրերի վրայ, տեղի են ունեցել ապստամբութիւններ, կռիւներ, օտար պետութիւնների միջամտութիւններ:

Սրանից ուղիղ մի դար առաջ Վօ կանտոնը ենթարկւում էր Բերնի իշխանութեանը, և նրա հողերը պատկանում էին զանազան կալուածատէր իշխանների: XVII-դ դարի սկզբում Վօ կանտոնն ազատելու համար կատարուած մի փորձ վերջացաւ կատարեալ անյաջողութեամբ. պարագլուխը՝ մայիոր Դաւել բռնուեց ու դիսատուեց, իսկ ժողովուրդը շարունակեց տրանջալով կրել բերնյիների լուծը: Սակայն Դաւելի թափած արիւնը անօգուտ չ'անցաւ, ինչպէս ոչ մի արիւն աշխարհում անհետեանք չի մնում: Ազնականների ձեռքով հարստահարուած ու նեղուած ժողովրդի խուլ դժգոհութիւնն աճեց, մեծացաւ և XVIII-դ դարի վերջին երեք կը պայթէր մի արիւնալի ապստամբութեամբ Բերնի դէմ, եթէ քաղաքական նոր հանդամանքներ արտաքուստ չը դային հասունացած խնդրին խաղաղ լուծումն տալու: Նապոլէոն Բոնապարտ՝ առաջին կոնսուլը՝ 1803 թ. փետրուարի 19-ին տուեց ամբողջ Շվեյցարիային մի նոր կազմակերպութիւն. նրա «Act de médiation»-ը (միջնորդութեան ծրագիր) Հելվետեան հանրապետութիւնը, որ մէկ էր և անբաժան, հռչակեց փոքրիկ պետութիւնների դաշնակցութիւն՝ բաղկացած 19 կանտոնից: Միևնոյն ժամանակ Վօ կանտոնը

աղատուում էր Բերնի տիրապետութիւնից և դառնում էր ինքնավար ու անկախ փոքրիկ պետութիւն:

Այսպիսով այս տարի (1903-ին) լրանում է Վօ կանտոնի աղատութեան հարիւրամեակը: Փոքրիկ ժողովուրդը պատրաստուում է մեծամեծ հանդէսներով տօնել իր ազատ կեանքի հարիւր տարին, որի ընթացքում այս երջանիկ երկիրը այնքան խոշոր առաջադիմութիւն է արել քաղաքակրթութեան մէջ և որով նա այնքան հպարտ է իրաւամբ: Անցեալներն իմ ուսուցչապետներից մէկը՝ պ. Բոսսիէ մի մասնաւոր խօսակցութեան ժամանակ ինձ ասում էր. «Դուք օտարներդ հաղիւթ է կարողանաք խօսապէս իմանալ, թէ հարիւր տարուայ ազատ կեանքը ինչեր տուեց մեր փոքրիկ կանտոնին՝ չնորհիւ խղճի և մտքի լայն ազատութեան, ձեռներեցութեան որոշ զարգացման, ազակենտրոնացման սխտեմի բարեխիղճ գործադրութեան՝ մենք մի դարի մէջ հրաշքներ ենք գործել»:—Քաղաքակրթական այդ փայլուն էվոլյուցիայի, այդ անդադրում աշխատանքի արդիւնքը սակայն մենք օտարներս էլ ենք տեսնում և պրանչանում, պատասխանեցի ես. թոյլ տուէք նոյնիսկ նկատել, որ ձեր փոքրիկ հայրենիքում դուք տեղացիներդ համեմատութեան անկարելիութեան չնորհիւ՝ գուցէ երբեմն չ'իմանար, նոյնիսկ չը գիտակցէք, թէ որքան երջանիկ էք դուք»:—«Այո, իրաւունք ունիք, ասաց նա ժպտալով, մենք աւելի քան երջանիկ ենք, nous sommes tropheureux!»

Ահա՛ ինչպէս ասացի, այս երջանկութեան, վարարած դեպի սէս այս փոքրիկ երկիրը հեղեղող բարօքութեան տօնն է, որ պատրաստուում է կատարել Վօ կանտոնը առաջիկայ յուլիսի՝ 4—7-ին: Բոլոր նշաններից, կատարուող պատրաստութիւններից, ընդհանուր տրամադրութիւնից երևում է, որ մի քանի օր տեղ հանդէսները լինելու են որքան փառաւոր, նոյնքան պարզ, ժողովրդական, և նոյնքան հետաքրքիր իրանց բազմակողմանի, օրիգինալ պարունակութեամբ: Նամակիս սկզբում յիշուած գիւղական ներկայացումը ահա այս տօնի, Վօ կանտոնի ազատութեան հետ կապուած մի երևոյթ է:

Ներկայացումը յատկապէս Մեղիերում և ոչ մի ուրիշ գիւղում կազմակերպելն էլ իր առանձին խորհուրդն ունի: Պիեսային իբրև նիւթ ծառայող պատմական դէպքը տեղի է ունեցել հէնց այդ գիւղում մի դար առաջ: Մի գրաւիչ հնարամտութեամբ այս գեղեցիկ գործի ձեռներեցները գտել են, որ շատ հետաքրքիր կը լինի միևնոյն վայրերում վերապրել հարիւր տարի առաջ կատարուած անցքերը: Եւ ինչ որ աւելի ուշադրաւ է, այժմ էլ բեմի վրայ գործող անձինք մի դար առաջ իրանց նա-

խառնայրերի կրած-ապրած օրերն են վերարտադրում, բոլոր դերակատարները Մեղիերի բնակիչներ են: Այս բոլոր անդեկու-թիւնները եւ կանխաւ իմացայ լրագրերից եւ շտապելի Մեղիեր՝ տեսնելու այս հետաքրքիր ներկայացումը, որ մի դար առաջուայ չվէյցարական դիւղական պատկերն է տալիս:

Լողանից Մեղիեր տանող ելեկտրական երկաթուղու փոքրիկ կայարանը ասեղ ձգելու տեղ չը կայ: Վագոնները չեն բաւականացնում, ստիպուած են եղել ապրանքատար վագոնների մէջ աթոռներ չարել եւ յարմարացնել ճանապարհորդների համար. այնուամենայնիւ ահադին բազմութիւն ստիպուած է ստփր վրայ կանդնած ճանապարհորդել, ամենքին նստելու տեղ չը կայ: Ներկայացումը ճաշից յետոյ ժամի 2-ին է, եւ մինչև այդ ժամանակ այս փոքրիկ երկաթուղով մօտ 1500 մարդ պիտի հասնի Մեղիեր:

Վագոնների մէջ իրար վրայ սղմուած, բայց ոչ ոք դժուհ չէ: Ճանապարհի գեղեցկութիւնը տրոնջալու տեղ չի թողնում: Անտառապատ բլրակների անվերջ շարքեր աջ ու ձախ. կամ կանաչազարդ ալիքաւոր մարդազետիւններ, որոնց միջից սլանում է ելեկտրական դնայքը սուանց ծուխի, առանց ազմուկի: Տեղ-տեղ կանդ է առնում այս կամ այն դիւղում, ուր հազիւ մի քանի տուն են երևում ցրուած անտառների մէջ, պանդոկի պէս փոքրիկ կայարանից դուրս են դալիս մի քանի գիւղացիներ,—մարդ, կին, աղջիկ, տղայ, մի կերպով կախկաւում են դնայքի կողերից, ապա կրկին սլանում ենք: Ահա եւ Մեղիերը:

Գիւղը ներկայացնում է մի ուշադրաւ տեսարան: Որ կողմ դառնում ես, պատմական զգեստներով ծերեր, երիտասարդներ, մեծ ու փոքր տղաներ ու աղջիկներ: Սրանք բոլորը գերակատարներ են: Կարծէք թէ մարդ ժամանակակից չվէյցարական գիւղում չէ, այլ մի ինչ որ հին աշխարհում, ուր այլ բարքեր, այլ սովորութիւններ, կարգեր կան: Գիւղական պարզութիւնը բնական արուեստի գաղտնիքներին անծանօթ է. այստեղ ներկայացումից յետոյ կարծես ձանձրանում են զգեստները փոխել (եւ ինչ կարիք կայ, երբ քիչ յետոյ նորէն հագնելու են!) եւ մեծ ու փոքր թատրոնից դուրս են դալիս պատմական շորերով նայելու այցելուներին, կամ տուն են դնում նախաճաշելու, զուարճանում են դրսում իրանց յարուցած հետաքրքրութեամբ:

Պակաս օրիդինալ չէ թատրոնական չէնքն իր բեմով: Մի ահադին փայտեայ շինութիւն, որ երկաթուղային վագոնների պահեստ է, վերածուած է թատրոնի եւ կարողանում է պարտիկ մօտ 1500 մարդ: Սկսում է ներկայացումը, վարագոյրը բարձրանում է: Տեսարանը ներկայացնում է Մեղիերի

դաշտը, ուր մի խումբ գիւղացիներ—երեք մարդ և երեք կին կարտոֆել են հաւաքում, նրանք աշխատում են և խօսում: Մի ընտանիք է, մէկն այն հազարաւոր ընտանիքներից, որոնց հարուածում է չարիքը հեռուից, և որոնք իրանց տառապանքով լի գոյութիւնը տանելու համար էլ համբերութիւն չ'ունին: Նրանց խօսակցութիւնից երևում է, որ իրանց կալուածատէրերի անողորմութիւնն էլ սահման չ'ունի, որ իրանց աշխատանքի մեծ մասը նրանց ճոխ, անհող կեանքի կապրիզներին է ծառայում, որ իրանք աղքատ են, խեղճ ու տանջուած: Յոյսերը մնացել էր կարտոֆելը, որի մշակութիւնը նոր է սկսուած այդ կողմերում, և սակայն կալուածատէրը նրանց ապրուստի այդ յետին աղբիւրի վրայ էլ տառանորդ է դրել: Ընտանիքի հայրը տրտնջում է, բայց համբերութիւնից է խօսում, որդին զայրոյթով ու կատաղութեամբ նղովում է իրանց ճակատագիրը, կանայք լրացնում են կարիքի և խեղճութեան ընդհանուր պատկերը՝ քայքայուած անտեսութեան այն մանրամասն նկարագիրներով, որը միայն կինը կարող է անել—տաք կերակուր չը կայ, հացն էլ երբեմն չի ճարւում, խոհանոցից օրերով ծուխ չի դուրս գալիս հայլն հայլն: Մի ամբողջ ժողովուրդ է այս, որ իր յիմար կամ ոճրագործ տիրոջների չնորհիւ յետին ծայր խեղճութեան ու անարգանքի հասած՝ ելք, հնար է վնասում, մեծ հրդեհը պատրաստող փոքրիկ կրակ է, որ կամաց-կամաց միտում է այս մութ, բայց տանջուած սրտերում: Ահա և ինքը կալուածատէրն իր չքախմբով, փայլիլուն շորերով, որ նայում է այս ցնցոտիներով պատած, գունատ, յուշած գիւղացիներին և ցինիկաբար խօսում է իր ուղեկիցներին իր ժողովրդի բարեկեցութեան մասին: Դէ, արտաքին խեղճութիւնը շատ անգամ խաբուսիկ է, կան ագահներ, կան հարբեցողներ: Շահագործուած, տրորուած գիւղացին իր տէրերի համար միշտ կամ ազահ է, կամ հարբեցող, կալուածատէրն անցնում է, գիւղացիք խոնարհւում են և յետից հայհոյում՝ բռունցքներ ցոյց տալով: Յաջորդ տեսարանների մէջ յայտնւում են նորանոր դէմքեր, բրժիշկը, պատեօրը, ուրիշ գիւղացիներ, կանայք, որոնց բոլորի խօսակցութեան նիւթը նոր տասանորդն է—«la dime» և իրանց օր-աւուր ծանրացող վիճակը:

Ահա և եկեղեցին, գիւղական եկեղեցին ձմեռ ժամանակ. գիւղացիք խումբ-խումբ դուրս են թափւում, ցուրտ է, ձիւն է գալիս, բայց նրանք չեն հեռանում, խօսում են տաք-տաք: Պատեօրը եկեղեցում մի քանի խօսք է ասել կալուածատիրոջ անարդարութեան մասին, նոր տասանորդը համարել է անողորմ գործ: Պատեօրը գիւղի խեղճն ու խիղճն է ներկայացնում, երբ

նա բողոքում է, իր հօսքը լուռ մնալ էի կարող: Հարիւր քսան հոգույ բազկացած խօրը, որոնք բոլորն էլ զիւղի և շրջակայքի մեծ ու փոքր ազնիւներն ու աղաներն են, բեմի առաջ երկու մասի բաժանուած՝ երգում է:

«Ամեն օր միայն ցաւի ճիւղ է, որ բարձրանում է դէպի «Աստուած, դէպի անողորմ երկինքը. մեր խղճուկ խրճիթները «ծածկում են իրանց կտուրները սղաւոր անտառների մէջ: «Դժբաղդ է նա, ով մի տիրոջ առաջ ծառայի պէս պիտի խոհարհի ճակատը, ինչ արժէ նրա համար խաղաղ ու հանդիսա «կեանքը, եթէ նա պիտի լռի՝ կուլ տալով անարգանքը: Զար «թիր, ժողովուրդ, զիտակցիր քո պարտքերը և քո արժանիքը»:

Պատեհորի խօսքերը հասնում են բերն. նա կասկածելի է, որպէս խոսվարար, և մի զիչեր օրէնքի անուանով մի մութ կառք վերցնում է նրան տնից և տանում անյայտ տեղ: Նա բանտարկուած է: Խօրը երգում է.

«Սե օջաղի խորքում կատաղի հողմը բորբոքում է մխա «ցող կրակը, երբ վրայ է հասնում երեկոն: Այդպէս էլ անար «գարութիւնը իր խառութիւններով զարթեցնում է ատելու «թեան զայրոյթը սրտերի խորքերում: Ի՛նչ քաղցր է վրէժ «խնդրութիւնը բոլոր ճշուածների համար»:

Այս անակնկալ ու սարսափելի դժբաղդութիւնից պաստեորի կինը խելաւարւում է: Գիւղն իր շրջակայքով մոռնում է, ինչպէս եռուն հնոց: Մութ գիշերներ են, խրճիթներում, խոհանոցներում, կիրճերում, մութ անտառներում կասկածելի ստուերներ են համախմբւում, փափսում, անյայտանում: Հազար զլխանի տառապանքն է, որ ձգձգւում, ոլորւում է և պոթիկալու վրայ է. զարթնած զիտակցութիւնն է, որ խաւարի մէջ իր մեծ բողոքն է դարձնում մութ ոյժերի հետ. և անտառները խեղճերի հետ են, նրանք ծածկում են զաղտնիքը: Խումբը երգում է.

«Գունատ խիղճը հալածում է ոճրադործին, և նա մոլոր «ւում է խաւարի մէջ լուռ սարսափի հետ: Իզուր է նա աշխա «տում ծածկել իր սիրտը, վրէժխնդրութեան ձայնը հնչւում իր «յետեից: Նա լսում է քամու երգը անտառներում և սոսկում է»:

Սակայն երեք ամիս յետոյ պատեհորն աղատւում է. դա արդարութեան՝ և իրաւունքի յաղթանակն է, ժողովուրդը աօնում է այդ ցնծութեամբ: Սրանով է վերջանում պիեսան: Մի քանի տարի յետոյ աղատւում է նաև հայրենիքը:

Ահա, սիրելիս, մօտաւորապէս այն զրաման, որ այնքան աղմուկ է հանել Վօ կանտոնում և այնպէս հետաքրքրութիւն չարժել: Իւրաքանչիւր ներկայացումը մի տեսակ ժողովրդական

տօն է. զիւղը ցնծութեան մէջ է, լողանը, կանտոնի մայրաքաղաքը՝ ծաղիկահարում է. օտարները հիանում են: Ամբողջը մասամբ յիշեցնում է Բաւարիայի Օրերամերկառու գիւղում տաան տարին մի անգամ կատարուող կրօնական հանդէսները, երբ զիւղացիք ներկայացնում են Քրիստոսի չարչարանքները: Տարբերութիւնն այն է, որ Բաւարիայինը զուտ կրօնական է, իսկ Մէլիերինը հայրենասիրական: Չը նայելով այցելուների բազմութեան, գործի կատարեալ յաջողութեան՝ գիւղացիք ստիպուած են դադարեցնել ներկայացումները, որովհետեւ իրանց դատաւին աշխատանքները մնում են:

Ուշադրութեան արժանի մի հանգամանք, սիրելիս, որ վերադարձիս ամբողջ ճանապարհին ինձ զբաղեցնում էր և որը՝ հաւատացած եմ՝ քեզ էլ բաւական խորհրդածութեան նիւթ կը տայ: Շվէյցարացի դրամատուրգը (Բընէ Մորաքս), որ դրել է այս գործը, անշուշտ քրքրել է իր երկրի սև օրերի պատմութիւնը և այնտեղից դուրս քաշել ամենացնցող սիւժէն, և դա... մի պատեօրի երեքամսեայ բանտարկութիւնն է և ժողովրդի բողոքը տառանորդի դէմ: Մեզ արեւելցիներին համար այսպիսի անցքերը մնում են աննկատելի: Երջանիկ երկիր չէ՞ այս, որի դժբաղդ օրերում մի պատեօրի երեք ամսով բանտարկութիւնը համարուում է տարեգրութեան մէջ խոչորազոյն դէպքերից մէկը: Յետոյ ինձ չատ զբաղեցրեց պատեօրի կիներ, խեղճը չի կարողանում տանել իր ամուսնու այդ դժբաղդութիւնը և խելագարւում է: Ի՞նչ անեն հուպա արեւելքի սև երկրքի տակ այն մայրերը, որոնց զաւակները յօշոտւում են իրանց աչքերի առաջ, այն կանայք, որոնց ամուսինները խողխողում կամ կորչում են յաւիտեան և այն ոչ հարիւր տարի առաջ, խաւար, անսիրտ ժամանակներում, այլ այսօր: Այս քաղաքակրթութեան դարում: Եւ այդ կարտոֆիլի տառանորդը... հարիւր տարի առաջ գիւղացիք այս երկրում բողոքել և չեն կամեցել տառանորդ վճարել կալուածատէրերին, իսկ այժմեան սերունդը տեսնում է բեմի վրայ այդ անցեալը և զարմանում, որ իր պապերն այնքան դժբաղդ ու ստրկացած են եղել, որ մինչև անգամ տառանորդ են վճարել կարտոֆիլից: Երջանիկ երկիր, ուր ծիծաղն այնքան առատ է, որ լացն անհասկանալի է դարձել:

Յ'գրութիւն!

Ընկերդ՝

ԿՈՒՐԲԱԹ-ՀԱՐՈՒՆ

ԹԻԻՐԻԱՅԻ ՀԱՅՈՅ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԻ ԹԻՒԸ
ԱՌ. 1-Ն ՅՈՒՆՈՒԱՐԻ 1903 Թ.

Պոլսի հայոց Պատրիարքարանը իւրաքանչիւր տարի յոյս է ընծայում մի «Վիճակացոյց», որի մէջ մանրամասն տեղեկութիւններ են ղետեղուած լինում Թիւրքիայի հայոց վարժարանների մասին: Աւելորդ չենք համարում մեր ընթերցողներին ծանօթացնել այդ «Վիճակացոյցի» ընդհանուր թւերի հետ:

Պոլսում վարժարանների թիւը առ 1 յունուարի 1903 թ. հասնում է 40: Այդ վարժարաններում սովորում են 3060 մանչ, 2350 աղջիկ: Երկսեռ աշակերտներից 1777 ձրիավարժ են: Ուսուցիչների թիւն է 194, վարժուհիներինը՝ 111: Այդ բոլոր դպրոցների ամսական ծախքն է 82,865 զուրուշ:

Այս վիճակացոյցից դուրս են մնում Պոլսի պետական և դանադան հայ ու օտար վարժարաններ յաճախողները, որոնց թիւն է 1823, հետեւեալ ստորաբաժանմամբ.

- | | | |
|--------------------------------|----------|----------------|
| 1) Պետական վարժարաններ յաճախող | 215 մանչ | |
| 2) Մասնաւոր հայ | » | 420 » 160 աղջ. |
| 3) Հայ հռոմ. և հայ բող. | » | 280 » 195 » |
| 4) Օտար | » | 188 » 280 » |

Հետաքրքրական թւեր են տրւում և դաւառների դպրոցների մասին՝ բաժանուած բոտ առաջնորդական վիճակներին:

Մենք այդ առաջնորդութիւնները կը բաժանենք աւելի մեծ աշխարհագրական սահմաններով. Փոքր-Ասիա, Թիւրքաց Հայաստան և Գաղութներ:

Փոքր-Ասիայում (Բանտրմայի, Սերաստիայի, Եւդոկիայի, Գասթեմոնիայի, Գոնիայի առաջնորդութիւններ) հայոց վարժարանների թիւն է 89, երկսեռ աշակերտներին՝ 10,719, ուսու-

ցիւների և վարժուհիների՝ 230, ամսական ծախք՝ 36,478 ղուրուշ:

Թիւրքաց Հայաստանում (Բաղէշի, Երզնկայի, Կամախի, Բայազէտի, Մշոյ, Վանայ, Աղթամարայ, Կարնոյ, Տիւրքանակերտի և Բալուխ առաջնորդութիւններ) կան 172 վարժարաններ, 9,975 երկսեռ աշակ., 284 ուսուցիչներ (երկս.), ծախք 31,430 ղուրուշ ամսական:

Մշում է գիշատակել և Կիլիկիայի կաթողիկոսական թեմը, որի մասին տեղեկութիւն տուել ենք անցեալ համարի Արա. Տես. մէջ:

Տեղեկութիւններ են բերուած նաև հետեւեալ Գաղութների մասին.

Եգիպտոսում կայ 2 վարժարան, 440 երկս. աշակ., 23 ուսուցանող (երկս.), ծախք ամսական 14,921 ղ.:

Կիպրոս 3 վարժարան, 100 աշակերտ (երկս.) ծախք 5,304 ղ.:

Բուլղարիա 10 վարժ., 947 աշ., 33 ուսուց., ամսական ծախք 12,723:

Թուրք պերճախօս կերպով ցոյց են տալիս, որ թէև Թիւրքիայում ամեն տեղ ցիր ու ցան կան հայոց ազգային վարժարաններ, սակայն զբանց թիւը և զբանց պահպանութեան համար ունեցած միջոցները չատ խղճուկ են:

ՀՈՂԻ ՊԱՐԱՐՏԱՑՈՒՄՆ

Ինչպէս իւրաքանչիւր մի կենդանի, նոյնպէս և ամեն մի բոյս իր գոյութիւնը պահպանելու և իր աճեցողութիւնը առաջ տանելու համար կարիք ունի իրան տեսակին համապատասխան որոշ քանակով կերակրային նիւթերի: Երկրիս վրայ գոյութիւն ունեցող և մինչև այժմ գիտութեան յայտնի բոլոր տարրերից բոյսի կանոնաւոր բնական աճեցողութեան համար անհրաժեշտ են հետեւեալները—ածխածին, ջրածին, թթուածին, բորակածին, ծծումբ, ֆոսֆոր, կալիում, կալցիում, մագնեզիում եւ երկաթ. այսինքն տասն տարրեր, որոնցից մէկն ու մէկի բացակայութեան ժամանակ բոյսի ոչ միայն աճեցողութիւնն է կանգ առնում, այլ և նա սկսում է աստիճանաբար քայքայուել, դրա համար էլ վերոյիշեալ տարրերը կոչւում են անհրաժեշտ կերակրային նիւթեր կամ տարրեր: Սակայն բոյսերի մէջ ամենուրեք երևան են գալիս և ուրիշ տարրեր, ինչպէս օրինակ՝ քլոր, բրում, եոդ, նատրիում եւ այլն. բայց սրանք միայն օժանդակիչ երկրորդական նիւթեր են, առանց որոնց բոյսերը կարող են շատ անգամ նոյն իսկ փարթամ աճել:

Բոյսերը իրանց կերակուրը վերցնում են թէ՛ հողից և թէ՛ օդից: Օդից բոյսը իր տերևներով վերցնում է ածխածին, ջրածին, թթուածին, որոնք ահագին քանակութեամբ գտնւում են օդում, և բացի դրանից՝ վերջին երկու տարրերը՝ ջրածին և թթուածին բոյսը վերցնում է և հողից: Օդի մէջ գտնուած չորրորդ տարրից, չը նայած նրա ահագին քանակութեամբ ներկայ լինելուն, այսինքն բորակածնից, բոյսերի շատ տեսակներ անկարող են օդից իւրացնել, և դրա համար էլ հողի միջոցով պէտք է պակասը լրացնել կամ հողը պարարտացնելով կամ թէ՛ չէ՛ հողի մէջ աճեցնելով այնօրինակ բոյսեր, որոնք ընդունակ

են հողը հարստացնել այդ բորակածին տարրով, որի համար և կոչւում են բորակածին հաւաքողներ, ինչպէս օրինակ՝ առւոյտի տեսակներ (եռնջա), լորի, ոլոռ եայլն: Մնացած վեց տարրերը, որոնք ընդհանուր անունով մոխիր են կոչւում, բոյսը վերցնում է իր արմատների և նրանց վրայ գտնուած փոքրիկ մաղմղուկների շնորհիւ հողից: Սրանց մէջ գիւղատնտեսի համար ամենամեծ նշանակութիւն ունեն փոսփոր, կալիում և մասամբ կալցիում, որովհետեւ բոյսերը այս նիւթերից համեմատաբար աւելի շատ են գործածում և մշտապէս հետաքննում են հողից հէնց այս տարրերը: Ուրեմն ընդհանրապէս հողի պարարտացման ժամանակ հետեւեալ չորս նիւթերն են ի նշկատի առնւում.—բորակածին, փոսփոր, կալիում և կալցիում. բայց չը նայած այս հանգամանքին՝ մենք հողն պարարտացումն ասելով պէտք է հասկանանք իւրաքանչիւր այնպիսի նիւթի ներմուծումն հողի մէջ, որը բարձրացնում է նրա արդիւնաբերութիւնը:

Պարարտացման նիւթերը ընդհանրապէս գիւղատնտեսը պարտաւորում է իր սեփական տնտեսութեան մէջ, և շատ հազազիւտ դէպքերում է պատահում, որ նա ստիպուած լինի վաճառանոցին դիմելու այդ նիւթերը գնելու համար:

Ընտանի կենդանիների (տաւար, խոզ, ձի, թռչուն) աղբը, որի գործածութիւնը շատ հին է՝ սակայն առանց մի գիտական հասկացողութեան, ներկայանում է գիւղատնտեսութեան մէջ պարարտացման իբրեւ ամենազլխաւոր և թանկագին նիւթը, որովհետեւ նա ոչ միայն բոյսերին ծառայում է իբրեւ անուշի, այլև լաւացնում է հողի ֆիզիկական յատկութիւնը, փափկացնում, տաքացնում է եայլն:

Գոմի աղբը բաղկացած է երկու մասերից—ամուր և հեղուկ. ամուր մասերի մէջ գտնւում են ղժուար լուծուող, ղժուարամարս նիւթերը, իսկ հեղուկ մասի մէջ ընդհակառակը՝ հեշտ լուծուող, ղիւրամարս նիւթերը. այդ պատճառով էլ մեզ համար ամենաթանկագին պարարտացման նիւթը պէտք է լինի այդ երկուսի խառնուրդը: Աղբի մէջ բացի կերակրային նիւթերից՝ կան և փոքրիկ մանրադիտական կենդանիներ, որոնք բորակածինը լուծելու, հեռաբար և գիւրամարս դարձնելու ընդունակութիւն ունեն. այդ սաստիկ մանր կենդանիներից ամենամեծ բանակութեամբ գտնւում են ձիու, ապա ոչխարի և տաւարի աղբի մէջ:

Գոմի աղբի մէջ բացի ղուտ աղբից լինում է և խշտիք, որը կենդանիներից թէ իբրեւ չոր, մաքուր անկողին է ծառայում և թէ հնարաւորութիւն է տալիս առանց շատ կորուստի կենդան

նինների աղբը հաւաքելու, յարգն այդ տեսակէտից նայած՝ ամենայարմար նիւթն է, որովհետեւ բացի նրանից, որ նա իր օրգանական կազմութեամբ շատ մօտ է բոյսերին, նա ընդունակ է և դիւրութեամբ ծծելու, իր խողովակների մէջ ամուր պահելու աղբի հեղուկ մասերը, մէղը: Յարգը որքան երկար է լինում կոտորած, այնքան նրան ծծողական յատկութիւնը աւելի ուժեղ է լինում, և այդ դէպքում աւելի քիչ քանակութեամբ կարելի է փակ կենդանիների տակ, բայց կարճ կոտորած յարգն ունի և այն առաւելութիւնը, որ հողի մէջ մտցնելու ժամանակ կարելի է համահաւասարաչափ դաշտի վրայ փակ և ապա հողի տակը տալ:

Եթէ պակասում է յարգը կամ շատ թանգ է, ինչպէս սովորական է մեր մէջ, այն ժամանակ կարելի է իբրեւ խշտիք յարգի տեղ դործածել փչացած, բայց ոչ հիւանդութեամբ վարակուած խոտ, լոբու և ոլոխի փոշուկներ, եգիպտացորենի ցողուններ, կարտոֆիլի ցողուններ, նոյնպէս և ծառերից թափուած տերեւներ: Կարելի է դործ ածել նոյնպէս օրգանական, բոյսերի մեռած մնացորդներով հարուստ հողը: Իբրեւ խշտիք սրա անյարմարութիւնը միայն կայանում է նրա մէջ, որ խիստ ծանր է լինում և տեղափոխելու համար անյարմար: Վատ չէ և չորացած աղբը իբրեւ խշտիք դործածելը, որը և սովորական է մեր մէջ:

Մարդկային աղբի դործածութիւնը գիւղատնտեսութեան մէջ, չը նայած նրա հարուստ բաղադրութեան, շատ դանդաղ է առաջ գնում և յատուկ է միայն քաղաքակրթութեան բարձրագոյն աստիճանի վրայ գտնուած ազգութիւններին. դրա պատճառը, թէ և անապաշտական, այն է, որ մարդիկ մի տեսակ զգւանք են տածում դէպի այդպիսի նիւթով պարարտացրած հողերի մէջ աճած բուսականութիւնը: Մարդկային աղբը դործածական է միայն հետեւեալ պետութիւնների մէջ. Ֆրանսիայում, Բելգիայում և Գերմանիայում, այն էլ ոչ ամեն տեղ, իսկ Եւրոպական պետութիւններից դուրս՝ Չինաստանում և Ճապոնիայում: Թէ որքան օգուտ կարելի է վերցնել մարդկային աղբից, բաւական է միայն հետեւեալ պերճախօս փաստը յիշել. Գերմանիայի մայրաքաղաք Բերլինում, ուր միայն մարդկային աղբի կէսն է ապահովուած, այն էլ ոչ ամբողջովին, տարեկան զուտ արգեօք են ստանում դրա վաճառումից 4,000,000 մարկ (մարկը=47 կոպէկի): Այսօրինակ աղբի տեսակները աւելի յարմար են բանջարանոցների և պարտէզների համար. պողպատե ծառերի պարարտացման համար այս աղբը շատ յարմար է, միայն չը պէտք է թարմ տեսակից դործածել, նամանաւանդ ա-

մատ ժամանակ. թողցիկ գազերը հաւաքելու ու միկնոյն ժամանակ աղբի ծաւալը փոքրացնելու համար յարմար է երբեմն-երբեմն նաև արտաքնոցի աղբի վրայ շաղ տալ գաճ, ծծմբաթը-թու, չոր հումուս և այլն, որոնք նոյնպէս ապագայում իրրի պարարտացման նիւթ կը ծառայեն: Մի հասակաւոր մարդ տարեկան տալիս է միջին հաշուով 1000 գրվանքայ աղբ, որի զինը կուլտուրական երկրներում հաշուում են 10—12 մարկ:

Սակայն դեռ բաւական չէ իմանալ, թէ որ աղբը ինչ տեսակ յատկութիւններ ունի, ինչ բաղադրութիւն ունի և որ տեսակ հողերի համար է աւելի յարմար, այլ որ ամենազլխաւորն է՝ պէտք է իմանալ, թէ ինչպէս պէտք է պահել աղբը կորուսաներից ազատելու համար, ինչպէս պէտք է վարուել պարարտացնելու ժամանակ եայլն. նրա ամուր մասերը կարող են չորանալ, և հեղուկ մասերը անօդուտ կերպով դուրս հոսել, և թողցիկ մասերը գոլորշիանալ, և գիւղաանտեսը կամ գիւղացին միայն հոգատար և զգոյշ միջոցներ գործադրելով կարող է այդ բոլորի առաջն առնել:

Գիւղացին ստիպուած է մի առժամանակ աղբը իր գոմում պահել, մինչև որ յարմար պայմանները վրայ կը հասնեն. այս դէպքում ոչ միայն պէտք է աշխատել աղբը կորստից ազատել, այլ պէտք է զանազան յաւելումներով նրա քանակը շատացնել և առանձին ուշադրութիւն դարձնել բոյսի համար անհրաժեշտ նիւթերը մատչելի կամ լուծելի դարձնելու վրայ: Եթէ մենք աղբը երկար ժամանակ առանց որևէ ուշադրութիւն դարձնելու թողնենք գոմում կամ մի այլ տեղ, այն ժամանակ կը տեսնենք, որ նա աստիճանաբար թէ իր քաջն է կորցնում և թէ ծաւալը փոքրացնում: Որովհետև նա օդի հետ յարաբերութիւն մէջ մտնելով, նրա մէջ զարգանում են փոքրիկ մանրագիտական կենդանիները, լուծում են աղբի մէջ գտնուած կերակրւոյին մասերը, առաւելապէս մէզի մէջ գտնուած հեշտ լուծուող նիւթերը: Այս վնասակար քայքայման առաջն առնելու համար պէտք է տալ նրան որոշ աստիճանի տաքութիւն և խոնաւութիւն, բացի դրանից՝ որքան կարելի է՝ աղբը խիտ կուտակել՝ օդի հետ քիչ ծաւալով յարաբերութեան մէջ մտնելու համար. հակառակ դէպքում, այսինքն տաքութեան բարձր աստիճանի վրայ, չորութեան և անհոգութեամբ սփռուած ժամանակը՝ նրա մէջ քայքայումն հսկայական չափերով է առաջ դնում: Թանգագին նիւթերը, նամանաւանդ բորակածինը ապահով պահելու համար՝ սովորաբար չաքաթական մի երկու անգամ խշախբի քանակութեամբ՝ խառնում են կաւահող կամ հումուսով հարուստ կրահող, որոնք բորակածինը, այդ թու-

ցիկ դազը ծծում և ամուր պահում են իրանց մէջ. վերոյիշեալ հողերի սրահասելու գէպքում կարելի է զործածել գաճ նոյն քանակով: Աղբը գոմում կենդանիների ոտների տակ սփռուած պահելը սովորական է միայն ոչխարների համար, սակայն և խիստ յանձնարարելի միւս կենդանիների նկատմամբ, որովհետեւ այսպիսով կենդանիները նախ՝ համահաւասար սփռում են գոմի յատակի վրայ և ապա հնարաւորութիւն են տալիս յարգին հեղուկ մասերը ծծելու, աղբը ամբայնելու, բնականաբար և նրա քայքայումն զանդաղեցնելու: Աղբը գոմի մէջ պահելը ունի և այն առաւելութիւնները, որ զանազան պատահարներից ազատ է, ինչպէս օրինակ՝ անձրեից, արևից, քամուց, և բացի դրանից՝ օդը փակուած է գոմի մէջ: Բայց աղբը գոմի մէջ անկարելի է չափ երկար ժամանակ պահել, նամանաւանդ այն ժամանակ, երբ գիւղացին անկարող է պարարտացման տեղը դուրս տանել. դրա համար էլ աներաժեշտ է, որ իւրաքանչիւր մի գիւղացի, իր գոմին կից ունենայ մի աղբատեղի, ուր կարողանայ աւելորդ աղբը հաւաքել և մինչև պարարտացման ժամանակը ապահով պահել. գարնան ժամանակ, երբ կենդանիները կանաչներով են կերակրւում, աղբը հեշտութեամբ հաւաքելու և քիչ կորուստ ունենալու համար խիստ նպատակայարմար է բացի յարգից՝ կենդանիների տակ ցրել և՛ հող, բացի դրանից՝ այդ աղբը որքան կարելի է՝ շուտ-շուտ հեռացնել գոմից, որովհետեւ աղբի այդ տեսակը միանգամայն փռասկար գազեր է արձակում կենդանիների համար, այս գէպքում ևս աղբատեղին մեծ ծառայութիւն է մատուցանում: Արևից և տաքութիւնից ապահով լինելու համար խորհուրդ ունի աղբատեղին գոմի հիւսիսային մասում շինել և եթէ կարելի է՝ ստորերկրեայ. ապա չը պէտք է մոռանալ յատակը կարգին ձեփով սուտղել, ինչպէս և գոմինը: Աղբը հեշտութեամբ դուրս հանելու համար աղբատեղին պէտք է շինել եռանկիւնաձև, կամ ներքի մասը քառակուսի, իսկ վերինը եռանկիւնաձև: Աղբանոցի մօտ պէտք է շինել մի միզանոց, որին այնպիսի դրութիւն լինի տուած, որ աղբի տակ հաւաքուած մէզը կարողանայ հոսել միզանոցը, և ապա այդ միջոցը կամ աւելի լաւ է ջրախառ՝ պէտք է ժամանակ առ ժամանակ սրսիկ աղբի վրայ՝ չորութիւնից խուսափելու համար. աղբատեղի մեծութիւնը կախուած է պահուելիք կենդանիների քանակից: Աղբանոցի յատակը գործադրութիւնից առաջ պէտք է մի շերտ հողով ծածկել, որը կը ծծի իր մէջ աղբի տակ հաւաքուած մէզը. ապա աղբը պէտք է դրա վրայ համահաւասարաչափ փռել, կոխոտել և իւրաքանչիւր մի քառորդ արշին բարձրանալուց պէտք է մի բարակ շերտ հողով

ծածկել, որը կը ծծէ իր մէջ թռուցիկ հիւթերը. այդ հոգերը պէտք է լինեն ծծողական յատկութեամբ օժտուած, որոնք ապալայում ամենաթանկագին պարարտացման նիւթ կը լինեն: Աղբանոցի աղբի վերարեւումը մեր ամենամեծ հոգը պէտք է լինի ամենազգոյշ միջոցները ձեռք առնել նրա չորանալու դէմ կռուելու համար, և հէնց այդ պատճառով պէտք է ձմեռը առնուազը շարաթական երկու անգամ, իսկ ամառը օրեկան մի անգամ անալայում մէջ սրսկել. եթէ սպիւսում է մէջը, կարելի է ջրի հետ խառնել, իսկ չնշած դէպքում աւելի լաւ է ջուր սրսկել, քան ոչինչ, որովհետեւ այդպիսով միայն կարող ենք քայքայման առաջը դնել փոքրիկատէ առնել. մէջի քանակը կախուած է՝ իհարկէ՝ աղբի քանակից, տաքութեան աստիճանից ևայլն: Եւ այսպէս խնամքով պէտք է վարուել, մինչև որ կը հասնի պարարտացման ժամանակը:

Պէտք է զգուշանալ աղբը քթոցներով առնելուց, աւելի յարմար է այդ դէպքում շինել երկու քթոցանման փայտէ անօթներ, որով և առանց կորուստի աղբը կարելի է պարարտացման տեղը տանել: Եթէ դեռ պարարտացման տեղի վրայ բոյսեր են ցանուած, և հնարաւորութիւն չը կայ իսկոյն հողի տակ տալ աղբը կամ փռել, այն ժամանակ պէտք է կուտակել մի տեղ և ապա հողի բաւական հաստ շերտով ծածկել: Եթէ ազատ է դաշտը բոյսերից, և դարձեալ ժամանակ չ'ունենք հողի տակ տալ, այն ժամանակ պէտք է համահաւասարաչափ սփռել դաշտի վրայ:

Պարարտացման համար դործադրելու աղբի քանակը իւրաքանչիւր մի դեպքատիւնի համար հաշուում են մօտաւորապէս՝

Թոյլ պարարտացման համար	90—120	պուգ աղբ:
միջակ »	» 120—160	» »
ուժեղ »	» 160—220	» »
չատ ուժեղ »	» 220—340	» »

Բայց՝ իհարկէ՝ սա բոլոր տեսակ հողերի համար չի կարելի գործադրել. աւազահողը, որի մէջ քայքայումն շատ արագ է կատարուում, և պարարտացման նիւթերի ներգործութիւնը հազիւ 2—3 տարի է շարունակուում, պէտք է թեթիւ կամ թոյլ կերպով և յաճախ պարարտացնել, իսկ ընդհակառակը՝ ծանր հողերը, որոնց մէջ քայքայումն շատ դանդաղ է կատարուում և տևում է մինչև 5 կամ էլ աւելի տարիներ, կարելի ունի ուժեղ, շատ ուժեղ պարարտացման, բայց ուշ-ուշ: Բացի սրանից, ինչ-

պէս առաջ էլ յիշեցինք, աղբի տեսակը նոյնպէս պարարտաց-
ման համար գործադրելու նիւթերի քանակի վրայ մեծ նշանա-
կութիւն ունիւ Այսքանս բնական պարարտացման նիւթերի
մասին:

Շ.

ՏԱԻՐԻԿԵԱՆ ՆԱՅԱՆԳԻ ՀԱՅՈՑ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԸ

Հայերը ներկայումս Տաւրիկեան նահանգում ունեն ուսումնարան, որոնցից ութը լուսաւորչական, երկուսը կաթոլիկ և մէկը գրադիտութեան դպրոց:

Սրանց մասին մանրամասն տեղեկութիւններ գտնելը շատ դժուար է, որովհետեւ պաշտօնական հրատարակութիւններում շատ քիչ բան է յիշուած. բացի այս՝ ոչ ամեն դպրոց պահած ունի հին տարիների «գործերը» և մատենաները, որ կարելի լինէր նրանց միջոցով ծանօթանալ ուսումնարանի անցեալին հետ *):

Չը յուսաւով անգամ, որ իմ ներկայացրածը 11 դպրոցների լրիւ պատկերը կարող է լինել, կարծում եմ, թէ այսքանն էլ իսկի չեղածից լաւ է: Ամենքս էլ գիտենք, թէ ինչ էր մի ժամանակ Դրիմը մեզ համար, որքան էինք մենք և ինչ տեղ էինք բռնում այնտեղ. միևնոյն ժամանակ հայերի ներկայ վիճակը այս թերակղզու վրայ համարեա բոլորովին անծանօթ է մեր հասարակութեանը, որովհետեւ տարեկան 4—5 թղթակցութիւն մեր թերթերում չի կարող բաւականութիւն տալ եղած պահանջին: Իսկ թէ պահանջ կայ, այդ կարծեմ՝ ասպցոյցի կարօտ չէ:

*) Մեր մամուլն էլ համարեա իսկի չի խօսել նրանց մասին. միայն 1872 թ. «Արարտոյի» մէջ լոյս տեսաւ մի «Համառօտ տեսութիւն Խըլմու և Պեսսարապիյ քանի մի հոգեւոր ծխական դպրոցաց ներկայ դրութեանը» Գ. Տ. Ս. Մ. Ա. ստորագրութիւնով (էջք 291, 333, 371, 411), որին նոյն այդ թւին դուրս եկաւ և «Պատասխան» (էջ 490): Հոգեւոր վարչութեան 1889 թ. հրատարակած «Վիճակագրութեան» մէջ տեղ չէին գտել այս նահանգի դպրոցները. Յօդուածս կազմելիս օգտուել եմ երկու պաշտօնական հրատարակութիւններից—«Общій очеркъ состоянія нар. учил. Тавр. губерніи» և «Календарь и Памятная книжка Тавр. губ.» զանազան տարիների:

Հայերը դպրոցներ ունեն՝ Արմենակում, Եւպատորիայում, Թէոդոսիայում, Կերչում, Հին-Ղրիմում, Ղարասու-Բազարում՝ երկու (մինը կաթոլիկներին), Մելիտոպոլում, Սիմֆերոպոլում երկու (մէկը կաթ.) և մէկ զբաղիտութեան դպրոց Ճումա-էլիում (Թէոդոսիայի դաւառ), որ բացուեց 1902 թ. աշնանը:

Ուսումնարանները կառավարում են հոգաբարձուների ձեռքով:

Տասը դպրոցներում 1901—2 ուսումնարանական թւականին եղել է 308 աշակերտ (173 մանչ + 135 աղջ.): Միջին թւով իւրաքանչիւր ուսումնարանին ընկնում է 31 աշակերտ, աղջիկները կազմում են ընդհանուր թւի 44⁰/₀-ը:

Դրանից 11 տարի առաջ (1891—2 ուս. թ.), ըստ դիրեկտորի տեղեկութիւնների՝ եղել է 377 աշակերտ (214 + 163), աղջիկները կազմել են 47⁰/₀, մի տասնամեակի ընթացքում ուսանողների ընդհանուր թիւը պակասել է 69-ով, աղջիկների ⁰/₀-ը իջել է 3-ով. բերածս թւերը աւելի խտացած նշանակութիւն են ստանում, եթէ աչքի առաջ ունենանք, որ չր գիտենք ինչու դիրեկտորի տեղեկութիւնների մէջ 1891—2 թւականին առաջ է բերւում միայն 8 դպրոց: Այս թերութիւնը երևի առաջացել է այն պատճառով, որ հայոց դպրոցներն այն ժամանակ դեռ չէին անցել ժողովրդական լուսաւորութեան նախարարութեան ձեռքը, ապա և ուսումնարանների հաշւաւորութիւնը կատարւում էր անկարգ:

Ինչից է առաջ դալիս աշակերտների թւի պակասելը հայոց դպրոցներում: Պատճառները բազմազան են. նրանցից միայն մէկ-երկուսը ցոյց կը տանք. այստեղ:

Ամենից առաջ պէտք է յիշել հայ ազգաբնակչութեան աստիճանաբար պակասելը նահանգում: Օրինակ առնենք մերձաւոր անցեալ տարիները. 1896 թւին Տաւրիկեան նահանգում հայ-լուսաւորչականների թիւն էր 8667 (4666 + 4001), իսկ արդէն 1902 թւին—8249 (4634 + 3615): Բնական է, որ այդ պակասորդ 410 հայերի թւումն են նաև պակասորդ աշակերտները:

Մեր դպրոցներն աշակերտներից զրկող պատճառներից մէկն էլ (և գլխաւորը) աւելի բարձր զարգացման պահանջի աճելն է: Մի ժամանակ հայ դպրոցը լրիւ բաւականութիւն էր տալիս հայ ծնողի պահանջներին. հաշւեմատեանները գրում էին հայերէն. առետրական գործերի մէջ անհրաժեշտ էր թւաբանութիւնը, այդ էլ կար ծխական դպրոցներում և նոյնպէս հայերէն լեզուով: Ծնողը դիտէր, որ ուսումը շատ էժան է այնտեղ և դիւրամատչելի, որովհետև ամեն ինչ հայերէն է աւանդւում:

Այնինչ ներկայումս հաշիւները դրում են ոռւակներէն, թւաբանութիւնը հայոց դպրոցում ոռւակներէն է աւանդւում, ուրեմն էլ ոռւակայ ուսումնարաններում այնքան թանգ չէ: Բայց այդ հայ ծնողը սկսեց հասկանալ ուսման, դարգացման գինը. ծխական դպրոցը և շատ անգամ էլ քաղաքային ուսումնարանը նրան չեն բաւականացնում, նա աւելի բարձրն է նայում:

Դրիմջի հայը իր աղջկանը համեմատաբար աւելի բարձր կրթութիւն է տալիս, քան որդուն. դիրեկտորի տարեկան հաշիւներէն տեսանք, որ մեր նահանգի հայ դպրոցներում ուսանող աշակերտուհիներ շուրջ 10%-ը աշակերտների 10%-ից ցած է: Գիմնազիական դիպլոմը մեզ մօտ օժիտ է, որ գաշնամուրի վրայ ածել իմանալու հետ մէկտեղ բարձրացնում է օրիորդի արժանիքը փեսացուի աչքում: «Ան աղջիկը դիմնագի խաւսիլ է, փոթթուփեան չալիլ գիտէ...»

Դառնանք այժմ ուսումնարանների նիւթականին:

Եկամուտի աղբիւրներն են՝ 100% դրամագումներէն, դպրոցապատկան շէնքերից եկամուտ, դրամական օժանդակութիւն Հոգևոր Վարչութիւնից, թօշակադրամ և մասնաւոր աղբիւրներ՝ թատրոն, պարահանդէս...

1901—2 թւականին 10 դպրոցների եկամուտն է եղել 11039 ռ., իւրաքանչիւրինը միջին թւով 1104 ռ.: Ընդունենք, որ տարուայ ընթացքում բոլոր եկամուտն է ծախսուած, և պէտք է ասել, չափազանցութիւն արած չենք լինի. կան դպրոցներ, որոնք մինչև անգամ դեփիցիտ էլ են ունենում, ինչպէս օրինակ Սիմֆերոպոլի դպրոցը երկու տարուայ ընթացքում ունեցաւ 480 ռ. դեփիցիտ: Ամեն մէկ աշակերտի վրայ ծախս է լինում 36 ռուբլի. սա չը պէտք է շատ համարել, այլ միջակ ծախս: Բայց արի ու տես, որ նա չափազանց մեծ է դառնում, եթէ աչքի առաջ ունենանք, որ հայոց դպրոցները շատ քիչ աւարտող են տալիս: Ծնողը շատ դէպքերում չի թողնում, որ իր զսւակը աւարտէ ուսումը. նա բաւականանում է առաջին կամ երկրորդ ուսումնարանական տարովը, ապա աղքատ ծնողն իր տղին տալիս է ծառայելու, ունեւորը՝ գիմնազիոն կամ րէալական դպրոց:

1897 թ. նահանգիս բոլոր հայ ուսումնարաններում աւարտել են 14 աշակերտ (7+7), 1899-ին 8 աշակերտ... Եթէ միջին թիւ ընդունենք 10 աշակերտ (որ շատ է իսկապէս) և դնենք, որ տարեկան ծախս է եղել 11,000 ռ., դուրս է դալիս ամեն մէկ աւարտող արժէք է հասարակութեանը 1,100 ռ.: Բիւ չէ!

Թողնենք այս, դառնանք ուսուցիչներին, տեսնենք՝ բաւականաչափ վարձատրւում են նրանք, թէ ոչ:

Նոյն 1901—2 թիւն զպրօցներում եղել են՝ 8 կրօնուսոյց, 12 ուսուցիչ և 10 ուսուցչուհի, ընդամենը 30 պաշտօնեայ։ Տեղեկադրի մէջ չէ յիշուած, թէ ամեն մի ուսումնարան ուրջան է ծախսել ուսուցիչների վարձատրութեան համար, այլ տրուած է ուսումնարանների տարեկան եկամուտը միայն։

Վերևում մենք ասացինք, որ իւրաքանչիւր դպրոցի վրայ ծախսուած է 1104 ռ., ընդունեցէք, որ վարչութիւնները եկամուտը լիովին էլ ծախսել են։ Եթէ հասարակ, անտեսական ծախս է եղել իւրաքանչիւր ուսումնարանի վրայ 120 ռ., դա անում է 10-ի համար 1200 ռ., ուրեմն ուսուցիչների վարձատրութեան համար ծախսուած է 9839 ռ., իւրաքանչիւր պաշտօնեային՝ 326 ռ., որը՝ իհարկէ՝ շատ չնչին գումար է։ Այս են ցոյց աւելիս միջին թւերը։

Եթէ այժմ դառնանք ամեն մի ուսումնարանին առանձին-առանձին, կը տեսնենք, որ այսպէս էլ թւանշանները միութարական շատ քիչ բան են ասում։ Արմեանսկում ռուսաց լեզուի ուսուցիչը ստանում է 300 ռ., հայոց լեզուինը՝ 250 ռ. (եկամուտը 800 ռ.)։ Սիմֆերոպոլի ուսումնարանում ռոճիկները բաւականացուցիչ են, որովհետև ուսումնարանն էլ հարուստ է (տարեկան եկամուտ 4293 ռ.)։ Այստեղ աւագ ուսուցիչը ստանում է 1000 ռ., ուսուցիչներից մէկը 700 ռ., միւսը 600 ռ., ուսուցչուհին էլ 600 ռ.։ Կերչի ուսուցչի ամսականն է 30 ռ., Եւպատորիայում տարեկանը 400 ռ., Ղարասու-Բաղարում՝ 500 ռ.։

Այստեղ աւելորդ չենք համարում յիշել Հին-Ղրիմի հայ հասարակութեան ամարդի վերաբերմունքը դէպի իր ուսուցիչը. սա տեղումս ծառայել է ամբողջ 22 տարի. սկզբում ստանալիս է եղել ամսական 50 ռ., որը մի քանի տարի առաջ դարձնում են 40 ռ. այս տարի էլ նոր հոգարարձուն իր սրբազան պարտքն է համարում մի պատառ էլ ինքը խլել վաստակած ուսուցչի բերանից, մի ուսուցչի, որ ծանրաբեռնուած է ընտանիքով. ամսականը դառնում է 30 ռ... Այսպէս շարունակելով՝ գուցէ դայ մի ժամանակ, երբ ուսուցիչը դեռ իր գրպանիցը փող կը դնէ աղաների առաջ՝ Հին-Ղրիմում ուսուցիչ լինելու պատիւիցը չը զբրկուելու համար... Ի՞նչ չը տուող Աստուած է... Նոյն Հին-Ղրիմում ռուսաց լեզուի ուսուցչուհին ստանում է միայն 20 բուլբի ամսական...

Ռոճիկի այսքան փոքր լինելը՝ իհարկէ՝ ունի իր հետեանքները. բնական է, որ չնչին վարձատրութիւնով լաւ ուսուցիչ գտնելը միայն պատահական դէպք պէտք է համարել։ Բացի այդ՝ ուսուցիչները չուտ-չուտ փոխւում են, և այս չի կարող բացասապէս չ'ազդել ուսման կանոնաւոր ընթացքի վրայ։

Լաւ ապրանքը թանգ արժէ, լաւ ուսուցիչը իրան համեմատ վարձատրութիւն կ'ուզէ: Խնդիրը աւելի բարդուում է ներանու, որ Դրիմի համարեալ բոլոր քաղաքներից ուսուցիչ հրաւիրելիս պայմանների մէջ մէկ քանի «յանկալի է» են աւելացընում: Այսպէս՝ Ղարաուս-Բաղարում հայոց լեզուի ուսուցիչը միննոյն ժամանակ և մատենադարանապետ է, պէտք է նոյնպէս եկեղեցում խմբապետութիւն անէ: Արմեանսկում հայերէնի ուսուցիչը խմբապետ է, ռուսաց լեզուինը՝ տիրացու... Թէոդոսիայում հայերէնի ուսուցիչը խմբապետ է, Կերչումը... զպիր:

Ինչ ասել կ'ուզէ, որ պաշտօնների այսպիսի խառնուրդը նորմալ համարուելու չէ՝ մէկը միւսին խանգարելու պատճառով: Պատահում է այսպիսի դէպք.

Արմեանսկում՝ ինչպէս ասացինք, ռուսաց լեզուի ուսուցիչը տիրացու էլ է. Զատկին և Ծննդին քահանան (դպրոցի կրօնուսոյցը) տիրացուի հետ շրջում է Պերեկոպի ամբողջ գաւառը, որովհետեւ գաւառում միայն մէկ եկեղեցի կայ: Այս ճանապարհորդութեան վրայ դնում է 2—3 չաբաթ ամեն անգամ, և այս՝ իհարկէ՝ չի կարող չ'ազդել ուսման վրայ: Տարին մէկ քանի անգամ էլ պատահում է, որ նրանց հրաւիրում են մօտիկ ու հեռուոր գիւղերը, մինչև անգամ Մելիտոպոլ:

Իվերջոյ դնում ենք 10 դպրոցների մասին վիճակագրական տեղեկութիւններ՝ քաղած պաշտօնական աղբիւրներից («Свѣдѣнія объ учебн. зав. и именной списокъ начальн. учил. Тавр. Дирекціи нар. учил.» 1903 г. Симферополь): Տեղեկութիւնները տրուած են 91 յունուարի 1902 թ.:

Դ Պ Ր Ո Յ	ՊԱՂՏՈՆԵԱՅ			ՈՒՍԱՆՈՂ		ԵԿԱՄՈՒՑ
	Քաճ.	Ուսուցիչ.	Վարձավոր.	Մանչ.	Աղջիկ.	
Սիմֆերոպոլի հայ-լուսաւորչ.	2	1	2	42	39	4293 ռ.
» հայ-կաթողիկէների	1	1	2	22	8	591 »
Ղարաաու-Բազարի հայ-լուս.	»	1	1	20	20	1320 »
» հայ-կաթ.	1	1	1	10	7	760 »
Եւպատորիայի հայ-լուսաւորչ.	»	»	1	10	5	610 »
Թէոգոսիայի հայ-լուսաւորչ.	1	»	1	9	18	700 »
Հին-Ղրիմի հայ-լուս.	1	1	1	23	17	765 »
Կերչի հայ-լուս.	1	1	»	23	8	500 »
Արմեանսկի հայ-լուս.	1	2	»	5	7	800 »
Մելիտոպոլի հայ-լուս.	»	1	1	9	6	700 »

Վ. ԲԱՐԻՅԱՆ

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Ջառախեցի. «ԿՐԱՅԻՆ» (Արտատպած «Մշակից»). 16 եր., գ. 3 կող. Թիֆլիս,
1903 թ.

Մեր՝ մեծ մասամբ կերպարանազուրկ՝ զրոյնների մէջ պ.
Ջառախեցին աչքի է ընկնում իր խիստ որոշ անհատականու-
թեամբ:

Նա փոքր բաժակով է ջուր խմում, բայց իր բաժակովն է
խմում և խմում է ժողովրդական կեանքի աղբիւրից:

Նրա սիրած բնաբանը՝ գիւղացու ցաւերն են: Իր փոքրիկ
արծակ բանաստեղծութիւնների մէջ, որոնց կիսաժողովրդական
ոճը պատկերաւոր է և համով-հոտով, նա այդ ցաւերն է միշտ
կրգում: Նա մուսան աւելի վրէժի մուսա է, քան տխրու-
թեան:

«Կրակը» — վրէժի մուսայի ներշնչումն է:

Գալօն՝ աղքատ, անճար գիւղացի է: Նրա «ուրն անդամ
զերդաստանը մի զոյգ ևզան պոչին է նայում»: Այդ ևզներով
նա ոչ միայն պէտք է հողար իր ամբողջ ընտանիքի ապրուստը,
այլ և պէտք է վճարէր հօրից անացած երկու հարիւր մանէթ
պարտքը իր վիթխարի տոկոսներով:

Տասնիվեց տարուան սև պատմադրութիւն ունէր այդ
պարտքը: Գալօն պատկերու ժամանակ նրա հայրը յիսուն րուբ-
լի էր վերցրել պարսք Մարտիրոս աղայից, ու թէև տարէցտարի
ինքն էլ, հայրն էլ տալիս էին տոկոսը, բայց դարձեալ գիւղի
գրադրի «հաշուով» դարձել էր ևրկուհարիւր մանէթ:

Նա ահա Գալօն ոչ սերմացու ունի, ոչ սերմացու գնելու
փող, ոչ էլ նոյն իսկ «մի եփելու ալիւր»:

Մարտիրոս աղան «օգնութեան» ձեռք է մեկնում նրան:

Ուտելիք տալիս է, պարտքի զրամագլխիցն էլ մի բան պակսեցընում է այն պայմանով, որ Գալօն իր արտերը նրան տայ և ինքն էլ փողի շահի տեղը նրան «մարաբա» (ամբողջ ընտանիքով ծառայ) դառնայ:

Գալօն ազատ մարդ է, բայց որովհետև աղքատ է ու անճար, ստիպւում է Մարտիրոս աղայի ճորտը դառնալ:

Ամենակարող փողն ստրկացնում է ազատ մարդուն: Բայց տնտեսապէս ստրուկ դառնալով՝ Գալօն բարոյապէս չի ստրկանում: Նա չի կարողանում հաշտուել այդ անարդարութեան հետ: Նրա ամբողջ էութիւնը բողբոսում է հասարակական անարդար կարգերի դէմ: Նւ այդ բողբոսը հասնում է ծայրայեղ սաստկութեան, երբ նոյն իսկ երկինքը կարծես կողմնապահութիւն է անում: Կարկուտը փչացնում է զիւղի արտերի մեծ մասը, բայց Գալօն արտերին միայն չի տալիս:

«Անտէր կարկուտ, ցուրտ ու եղեամ, ցաւ ու փորձանք կարծես աղքատ, խեղճ անճարի, թոյլ անզօրի համար են միշտ... և Աստուած էլ միշտ հարուստի, ուժովի կողմն է պահում: Բանի Գալօն դէսից-դէնից «փոխ» վերցրած, պարտքով դնած սերմով ցանում էր արտերն իր համար, կամ կարկուտն էր գալիս խփում, կամ երաշտն այրում, խանձում, կամ հեղեղը սրբում տանում, եղեամբ սառեցնում, մուկը կտրում, ճիճուն ուտում... իսկ այդ տարին, որ «դառնալը ոսկին հասած», ճարը կտրած՝ Մարտիրոս աղին «մարաբա» էր եղել ու այդ տարին նրա համար հերկել, ցանել, նրա արտերին ոչ մուկ-մեղ, եղեամ, կարկուտ, երաշտ կամ ցուրտ, ոչ էլ ճիճու մօտեցաւ: Կարծես զրանք էլ մարդկանց նման վախում, զողում էին հարուստ մարդից՝ Մարտիրոս աղից... Նւ խեղճ Գալօն սրտի ցաւով, մրմուռով քսան սալ գարի, բրնձի պէս հատ-հատ ջոկած մաքուր գարի քաղեց, ժողվեց իր «քիւլֆաթի», տղերանց հետ, իր եղներով կրեց, բերեց ու հին պարտքի տոկոսի տեղ զիգեց ազա Մարտիրոսի մեծ կալը, որ յետոյ էլ կասէ, լցնէ նոյն աղայի ամբարը: Նւ այս բոլոր արիւնքրտինք վաստակի վարձ Գալօն պիտի ստանար լոկ մի կտոր հաց, չոր ու ցամաք գարու հաց: Այսպէս է մեր գիւղերում «մարաբայի» ու ու աղայի «օրէնքը», երբ «մարաբան» մուրհակով պարտք ունի հարուստ աղային...»

Մարտիրոս աղան ուտելիքը չատ խնայողութեամբ է տալիս Գալօն ընտանիքին: «Հացը թանգ է, քիչըմ հատարով (խընայելով) ապրեցէք», ասում է Գալօն կնոջը:

Գիշեր է: Գալօն երեխաները չեն կարողանում քնել դատարկ փորով: Կինը Գալօնն ուղարկում է հարևանների մօտ

հայ փոխ առնելու: Գալօն բերում է մի քանի հատ դարու սև հայ: Բայց շատ ուշ է վերագառնում: Շուտով «հաւար» է ընկնում զիւղը: Մարտիրոս աղայի կալում «քսան սայնոց բրնձի պէս գարու գէղը, որ այդ օրը միայն կրել, գիղել էին խեղճ Գալօի արտերից, գծովքի պէս վառում էր»...

Գալօն էր հրդեհել, և այժմ էլ հանդցնելու պատրուակով աւելի թէժացնում ու բորբոքում էր կրակը:

«Կրակը սրբեց, լափեց, տարաւ, մոխրակոյտի վերածեց Մարտիրոս աղայի ամբողջ կալն ու խոտերի էլ կէսն այրել, պըրծել էր, երբ հաղիւհազ կարողացան ամբողջ զիւղով մի կերպ մարել, հանդցնել: Կէս զիւերը անց էր արդէն, երբ ամբօսը տուն ցրուեց: Գալօն էլ ուշ տուն գնաց ու կեսնքի մէջ գէթ մի զիւեր, թէպէտ քաղցած, բայց հովացած հանգիստ սրտով քուն մտաւ: Կրակը մարեց... և իր հետը քանի-քանի Գալօի պէս վառում, զաղում ըոց սրտերի կրակ մարեց...»

Վրէժխնդրութեան ձևը, ինչպէս տեսնում էք, ասպետական չէ: Բայց տարօրինակ չէ՞ սարկայնել, անասնացնել մարդուն և յետոյ նրանից պահանջել, որ իր վրէժն արտայայտի ասպետական ձևով: Անիշխանական հոգեբանութիւնը ծայրայեղ ստրկութեան ծնունդն է և նրա հոգեվարքի ջղաձղութիւնը:

Տ. Յ.

Յարուսիւն Եսայեան. «ԼՅԽՄԱՆԻ ՀԷՔԻՄԸ», պատկեր. հրատարակեց Տիգրան Նուրալեան. 32 եր. դ. 8 կ. Թիֆլիս, 1903 թ.

Դուք շատ անգամ կարգացած կը լինէք լրագիրներում թղթակցութիւններ խաբերայ «հէքիմների» մասին, որոնք չահպործում են ժողովրդի դիւրահաւատութիւնը և նախապաշարմունքները: Դուք կարգացած կը լինէք անշուշտ այնպիսի «հէքիմների» մասին, որոնք բժշկում են զեղջիկահիւներին չբերութիւնից, և ահագին փողեր են կտրում այդ միամիտ արարածներից ու իրանց կրքերին յազուրդ սալիս նրանցից գեղեցիկներին հետ:

Այդպիսի մի հէքիմ է պ. Նսայեանի Վօխմանի հէքիմը»:

Եթէ պ. Նսայեանը զեղարուեստագէտ լինէր, նա կը տար մեղ այդպիսի հէքիմի մի ուէլիէֆ տիպ, կը ծանօթացնէր մեղ նրա հոգեբանութեան հետ: Բայց նա զեղարուեստագէտ չէ, ուստի և բաւականանում է արձանադրելով այն, ինչ որ կարող էր նկատել և պատմել ամեն մի հասարակ զեղջիկահիւ:

Մի բան միայն չէր կարող պատմել այդ զեղջիկահին, գոնէ

այնպէս բացարձակ կերպով, ինչպէս պատմել է պ. Եսայեան, այն է՝ Նոյեմդարի առեանգումը, բայց այդ սուսուկութիւնն է, այլ պակասութիւնն:

Պ. Եսայեանի պատկերները ցոյց են տալիս, որ նա ոգևորուած է ժողովրդական նախապաշարմունքների հետ կըռ-ւելու ցանկութեամբ և ղեկավարում է համալիրելի գիտում-ներով, ուստի շատ տարօրինակ է, որ նա իրան թոյլ է տալիս առեանգման այնպիսի ցինիկ նկարագրութիւն, որ վայել է մի-այն պոռնկագիրներին:

Եթէ այդ նկարագրութիւնը չը լինէր, մենք պ. Եսայեանի պատկերը կը գասէինք այն զբոյցներին շարքը, որոնք ղեղա-րուեստական արժանաւորութիւններ չ'ունենալով հանդերձ՝ կա-րող են համարուել օգտակար ընթերցանութեան նիւթ՝ ղեղա-րուեստականութեան նկատմամբ ոչ իստապահանջ ընթերցողնե-րի համար:

Տ. Յ.

Ա. Յ. Ասման. «Արիւն». Քրդական բարբերից. Արտատպած «Ցարադ» շաբա-թաթերթից. 24 եր. դ. 10 կ. Ս.-Պետերբուրգ, 1902 թ.

Բափրը և Մեհրին երեխայութիւնից սկսած սիրում են միմիանց: Նրանք պիտի վերջիվերջոյ ամուսնանան: Բայց Մեհ-րին սաստիկ դուր է գալիս հարեան ցեղին պատկանող մի քրդի, Ռահիմ բէգի որդի Սուլօին:

Մեհրի հայրը մերժում է բոլոր փեսացուներին և ի մի-ջի այլոց նաև Սուլօին: Նա ու Բափրի հայրը վաղուց վճռել են ամուսնացնել իրանց փոխադարձ սիրով կապուած զաւակնե-րին: Սուլօն վճռում է փախցնել Մեհրին և մի օր, երբ Մեհ-րին իր ընկերուհիների հետ զբօսնում է գաջում, Սուլօն եր-կու ընկերներով յարձակւում է նրա վրայ ու փախցնում: *) Բափրը իմանում է այդ, ընկնում է նրանց յետևից, սպանում է Սուլօին և ազատում Մեհրին: Մեհրին սթափւում է ուշաթա-փութիւնից, նայում է Բափրին, բացականչում է. «Ա՛խ, Փրը-կի՛չա...» և «սպա մի վայրկեան լուռութիւնից յետոյ յետ ընկաւ, չռած աչքերով նայեց հօրը և կրկին շշնջաց՝ յենուելով Բափրի կրծքին:

*) Այդ տեսարանը շատ յիշեցնում է պ. Լէօի «Մելիքի Ազնիւ»-ի և պ. Ահարոնեանի «Սև օրեր»-ի նոյնանման տեսարանները, բայց ղեկարուեստօրէն ան-համեմատ ցած է նրանցից:

— Հայրիկ, ազատիր ինձ վերջապէս:

— Դու աւրդէն ազատ ես, — խօսեց հայրը՝ առանց ճշտութեամբ ըմբռնած լինելու այդ երկդիմի խօսքերի նշանակութիւնը, և մտածմունքի մէջ ընկաւ. — չը լինի թէ ցնորում է, — չնշաց ինքն իրան:

— Հայրիկ, թոյլ տուէ՛ք ինձ նրա ձեռքը խնդրել ձեր հայրական օրհնութեամբ հանդերձ, և նրա ազատութիւնն ու բախտաւորութիւնը ապահովուած կը լինի ընդ միշտ, — մէջ մտաւ Բափրը՝ ամօթխածութիւնից չիկնած ու այլայլուած:

«Հայրիկը»՝ իհարկէ՝ համաձայնում է և օրհնում է Բափրին: Քիւրդ ամբոյսը այդ բանը տեսնելով ու լսելով ոպտորւում է ու սկսում է դռաւ. «Ամէն, ամէն... կեցցէ՛ երջանիկ և ազնիւ զոյգը. կեցցէ՛ Բափրը և Ահմէդ աղան», և երկնքից անշուշտ չորս խնձոր է իջնում, մէկը՝ Բափրի, միւսը՝ Մեհրիի, երրորդը նրանց ֆրանսերէնի ուսուցչի համար, որովհետեւ Բափրն ու Մեհրին ամբողջ պատմութեան ընթացքում խօսում են ֆրանսիական ուսանողների ոճով, իսկ այդ անկարելի կը լինէր, եթէ նրանք չ'ուսնենային ֆրանսերէնի ուսուցիչ. չորրորդն էլ այն բըրխտոնեայ քարոզչի համար, որ քրդերին սովորեցրել է քրիստոնէական «ամէն, ամէն» բացականչութիւնը:

Տ. Յ.

Վ. Ի. Նեմիտովիչ Դանկելիօ. «ԴԻՍԻԴԵՐՈՒՅԻ». 20 եր., դ. 2 կոպ., Ս.-Պետերբուրգ, 1903 թ.

Նաստասիա Իվանովնա Պետրովան տնային վարժուհի է եղել: Այժմ նա գրաչարուհի է: Ծանր է գրաչարի պարտականութիւնը, բայց Նաստասիա Իվանովնան ուրախութեամբ կրում է այդ խաչը: Նա ապրում է իր աշխատանքով, թէկուզ գծովային աշխատանքով, և նա դո՛ւ է:

Սակայն նրա «հոգին յօժար է, բայց մարմինը տկար»: Նա թոքախտ ունի: Նա անկարող է տանից դուրս գալ: Ստիպուած է պառկած մնալ:

Տպարանը բարեգործական հիմնարկութիւն չէ: Տպարանատէրը նրան դուրս է անում: Նա մնում է անգործ: Նա կարող է ապահով կեանք վարել, եթէ համաձայնի որեւէ հարուստի սիրուհին դառնալ: Նրան առաջարկութիւններ են անում այդ մարով: Գտնւում են նաև միջնորդուհիներ: Բայց նա վճռել է ազնիւ ապրել և ազնիւ մեռնել: Ու նա իրան գցում է Մոսկվա գետը:

Յունիս, 1903.

Պատմութեանը գրուած է այն կողմ, վարժ և փոքր ինչ դժգոյն ոճով, որ յատուկ է Վ. Նեմիրովիչ-Դանչենկոյին:

Թարգմանութիւնը անյաջող է: Պատահում են այսպիսի դարձուածքներ. «վերմակի ծայրերը գլորել», «մաքուր ճշմարտութիւն եմ ասում», «մի տղամարդ զինուորական խմորից» և այլն:

Տ. Յ.

Լ. Ն. Տոլսոյ. «ԱՄՏՈՒԾՈՒՆ, ԹԷ ՄԱՄՈՆԱՅԻՆ». Թարգմ. Մամբէ վարդապետ.
22 եր. դ. 2 կոպ. Վաղարշապատ, 1903.

Լև Տոլստոյի այս գրքոյի մասին մենք արդէն խօսել ենք «Մուրճի» այս տարուայ № 3 գրքում պ. Յով. Սանփանեանի թարգմանութեան առթիւ: Մամբէ վարդապետի թարգմանութիւնն անսպասան աւելի յաջող է:

Տ. Յ.

Theodor Herzl: „ALTNEÜLAND“, Roman, Leipzig, 1902.—Թէոդոր Հերցլ. «ՀԻՆ-ՆՈՐ ԵՐԿԻՐ», վէպ. Լայպցիգ, 1902.

Վերոյիշեալ վիպական աշխատութիւնը, որ գերմանական մամուլի կողմից լուրջ ուշադրութեան արժանացաւ, պատկանում է յայտնի դուկա. Թ. Հերցլին, որի անուան հետ կապում է մի ամբողջ շարժումն իր ծրագրով հանդերձ: Այդ շարժումն է սիոնիզմը, որի մասին յաճախ գրուել է «Մուրճ»-ում:

Թ. Հերցլի առաջին նշանաւոր աշխատութիւնը, որ լոյս տեսաւ 1896 թ., կրում էր „Der Judenstat“ (Հրէական տէրութիւնը) վերնագիրը: Այդ աշխատութեամբ հեղինակը քարոզում էր այն պաշտօնարը, որ հրէաներն իբրեւ մի պատմական ազգ՝ արժանի են իրանց սեպհական հայրենիքն ու անկախ տէրութիւնն ունենալու: Այդ աշխատութեամբ հեղինակն ահապինը շանակութիւն ստացաւ սիոնիստական շարժման վերաբերմամբ, որովհետեւ նա դրանով արտայայտեց այդ շարժման նպատակն ընդհանրապէս և մասնաւորապէս սիոնիստների գլխաւոր ցանկութիւնն ու յոյսերը: «Եթէ նորին վեհափառութիւն սուրբանը մեզ տայ Պաղեստինը, այն ժամանակ մենք զրա փոխարէն խոստումով կը պարտաւորուենք Տաճկաստանի քայքայուած ֆինանսները կանոնաւորելը». ահա թէ ինչ անհնարին բան էր երազում այն ժամանակ սիոնիզմի պարագլուխ Հերցլը, կարծես

լով որ սուլթանը այնքան միամիտ կը լինի, որ կը համաձայնուի իր ֆինանսների կարգաւորութեան համար Պաղեստինի պէս մի ընդարձակ ու հարուստ երկիր ընծայելու հրէաներին: Թէկուզ այդ ցանկութիւնը իրականութեան տեսակէտից մի ուսուցիչ էր, բայց դուրս. Հերցլի կարծիքով անհնարին չէր, որովհետեւ «երազը իրականութիւնից այնքան էլ հեռու չէ, ինչպէս ոմանք կարծում են», չեչտում է նա իր «Հին-Նոր Երկիր» վերնագրով ուսուցիչական վէպի մէջ, ստեղծելով Պաղեստինի հրէաների համար մի իրէալական և օրինակելի տէրութիւն, որի մանրամասն նկարագրութիւնը կազմում է նրա վերոյիշեալ վէպի բովանդակութիւնը: Ծանօթանանք համառօտ կերպով այդ վէպի բովանդակութեան հետ:

«Հին-Նոր Երկիր» վերնագրով վէպի մէջ սխռիստ հեղինակը նկարագրել է հրէաների ապագայ ցանկալի հայրենիքը և տէրութիւնը վերին աստիճանի վարդապետ յոյսերով ու յատկութիւններով: Աշխարհիս երեսին ցրուած բոլոր հրէաներն արգէն զաղթել են իրանց պապերի հին, իսկ այժմ նոր երկիր Պաղեստինը, որտեղ նորից կաթ ու մեղր է հոսում, և իսկոյն հաշտուել են ազգային դադափարի հետ: Հերցլի նոր վէպը մեզ տանում է քսան տարի առաջ, այն է մինչև 1923 թ., և այդ կարճ ժամանակամիջոցում Պաղեստինում կամ Հին-Նոր Երկրում մի ամենազարմանալի հրաշք է պատահել, որի շնորհիւ վերոյիշեալ երկիրն ամբողջապէս կերպարանափոխուել է: Պաղեստինում վերահաստատուել է հրէաների տիրապետութիւնը սուլթանի գերիշխանութեան տակ: Հին-Նոր Երկիրը, որ այժմ ներկայացնում է համաշխարհային հաղորդակցութեան գլխաւոր կենտրոնը, Եւրոպական երկրների հետ դիպումատիական-բարեկամական յարաբերութեան մէջ է գտնուում: Պաղեստինը, որ երեք մայր ցամաքների մէջ ցամաքային և ծովային հաղորդակցութեան գլխաւոր հանգույցն է ներկայացնում, լցուել է գլխաւորապէս հրէաներով, որոնք հաւաքուել են երկրագնդիս գրեթէ բոլոր մասերից: Հրէաների վերաբերմամբ ոչ մի ճնշումն չէ գործադրուել «Հին-Նոր Երկիրը» զաղթելու, դրանք բոլորն էլ կամաւոր կերպով են զաղթել Պաղեստին, Եւրոպայում մնացել է միայն մի չնչին փոքրամասնութիւն, որ այժմ այնտեղ անտեսանալի աւելի ազատ է գործում, որովհետեւ այդ մի չնչին կաթիլ է ներկայացնում Եւրոպական բնիկների ովկիանոսում: Պաղեստինը մեզ յայտնի կարճ ժամանակամիջոցում հսկայական կերպով զարգացել և առաջադիմել է, և սխռիստներն այդ ևրեցիմը միայն իրանց ընդունակութեանն են վերապրում, ինչպէս որ վէպի հերոս Դաւիթ Լիսովաքն է հաստատում՝ ասելով, որ

«միայն մենք հրէաներս կարող էինք այսպիսի բան գլուխ բերել, միայն մենք և ուրիշ ոչ ոք: Այո, միայն մենք հնաւորութիւն ունէինք այս նոր հասարակութիւնն և հաղորդակցութեան կենտրոնն ստեղծելու»: Վերոյիշեալ նոր հասարակութիւնը կամ ժողովուրդը Պաղեստինի սեպհականատէրն է, որի ժողովրդից ընտրուած նախագահը չէ կարելի ներկայ հասարակապետութիւնների նախագահների, կամ ուրիշ երկրների թաղաւորների ու կայսրների հետ համեմատել: Պաղեստինի հրէա հասարակութիւնը իրանից տէրութիւն չէ ներկայացնում, այլ քաղաքացիների մի ազատ գաշակցութիւն, որի համար այլևս գոյութիւն չ'ունին ժամանակակից—modern քաղաքագէտներ: «Բաղաքականութիւն» գաղափարը սիոնիստների համար այժմ մի սուսակ հայհոյական խօսք է նշանակում: «Հին-Նոր Երկրի» ուսուպիական առաջադիմութեան մի ապացոյցն էլ այն է, որ այնտեղ գոյութիւն չ'ունի միլիտարիզմը, որովհետև «մենք բաւականանում ենք մեր երիտասարդներին Ֆիզիկապէս էլ կրթելու: Այդ նպատակի համար մեզ բաւականութիւն են տալիս մեր մարմնամարզական բազմաթիւ ընկերութիւնները, ինչպէս որ դրանք երբեմն Շվէյցարիային էին բաւականութիւն տալիս, ասում է ուսուպիստ Հերցլի պատուէրով վէպի վերոյիշեալ հերոս Դ. Լիտվաքը: Բայց թէ ուլ պէտք է պաշտպանի «Հին-Նոր Երկիրը» թշնամի տէրութիւնների յարձակումներից (եթէ ապագայում այսպիսի բան լինի), դրա մասին վէպի գլխաւոր հերոս Լիտվաքը խոհեմութիւն է համարում լռել, որովհետև նա զբաղուած է նոր հաստատութեան միայն ուսուպիական երջանիկ դրութեան նկարագրութեամբ: Հեղինակ Հերցլը ուսուպիական յափշտակութիւնից դրդուած՝ կերպարանաւորել է նոյն իսկ «Հին-Նոր Երկրի» երկրաբանական կազմութիւնն ու՝ աշխարհադրական դիրքը: Յորդանանի երկիրը մի փառաւոր և հրաշալի վայր է դարձել: Նա ամբողջապէս զարգարուած է պալատներով, բազմատեսակ վիլլաներով ու ծառաստաններով, և վերանորոգուել է Սողոմոնի պատմական հռչակաւոր տաճարը: Երկրի ճահիճները չորացել են, ներքին հաղորդակցութիւնը զարգացել է, Յորդանանը իր փտակներով նաւադնաց է դարձել, դաշտերը տալիս են առատութեամբ ամեն տեսակ հացահատիկներ, ծխախոտ, իսկ մի քանի զիւզեր արտահանում են ահապին քանակութեամբ զինի և ուրիշ տեսակ խմիչքներ: Մեռեալ ծովի աղից սիոնիստները ստանում են ահագին քանակութեամբ քիմիական զանազան տեսակ մարմիններ և տարրեր, օր. պրոմ, ֆոսֆոր կայն: Բայց դրանից՝ Պաղեստինում երկացել են նաւթային ահապին հորեր, զանազան մետաղներ, որոնք երկրի ազ-

զարնակութեան տնտեսական զարգացման համար խոշոր ծառայութիւն են մատուցանում, որովհետեւ Պաղեստինի բնական հարստութիւնները հեշտութեամբ արտահանում են զանազան երկրներ: Չէ որ «Հին-Նոր Երկիրը» անդր-ցամաքային մեծ երկաթուղիների գլխաւոր հանգույցն է կազմում, իսկ Եաֆֆան առաջնակարգ մի նաւահանգիստ է դարձել, որտեղ կանգ են առնում ու խարխիս ձգում երեք մայր ցամաքների հսկայական շողենաւերը:

«Հին-Նոր Երկիր» սիրնիստ հասարակութեան տնտեսական կեանքն էլ բոլորովին նոր կազմակերպութիւն և կերպարանք է ստացել գոկտ. Թ. Հերցլի շնորհիւ: Տնտեսական մի այնպիսի նախանձելի կազմակերպութիւն, որը շատ նշանաւոր տնտեսագէտների ու հասարակագէտների ցանկացած իրէջան ու երկարամեայ գիտնական ուսումնասիրութիւնների գլխաւոր նիւթն է եղել, այսինքն ճիշտ այն կազմակերպութիւնը, ինչ որ մի ուրիշ յայտնի ուսուցիչստ Հերցլան իր «Ազատ երկիր» վերնագրով ուսուցիական նշանաւոր աշխատութեան մէջ է նկարագրել: Դա ոչ թէ ֆրանսիացի յայտնի սոցիոլոգ և տնտեսագէտ Պրուդոնի սեպհականութեան գաղափարը սկզբունքով բացասող սխտեմն է, որ գլխաւորապէս առաջարկում էր տէրութեան հսկողութեան ենթարկուող մի այնպիսի հիմնարկութիւն, որ պէտք է լինի իւրաքանչիւր երկրի տնտեսական բոլոր արդիւնաբերութիւնների մի պահեստ—բազար՝ ամենամեծ ծաւալով, որտեղ արդիւնաբերողները իրանց ապրանքները ամենաէժան դներով կը ծախեն սպառողների վրայ, այլ տնտեսագիտութեան մէջ այսպէս կոչուած ընկերակցական սխտեմն է, որ ներկայումս հետզհետէ, թէն դանդաղ կերպով մուտք է գործում գրեթէ բոլոր երկրներում, օր. Անգլիա, Գերմանիա, Բելգիա և այլն: Տնտեսական կազմակերպութեան վերոյիշեալ ընկերակցական կամ սպառողական սխտեմը զրկուած է կապիտալիստական հիմքից և հիմնուած է բացառապէս սպառողների ընկերութեան վրայ: Այդ կազմակերպութեան շնորհիւ իւրաքանչիւր սպառող միևնոյն ժամանակ և՛ արդիւնաբերող է դառնում, և՛ հնարաւորութիւն է ստանում իր գոյութեան համար ամենաանհրաժեշտ ապրանքները ամենաէժան դներով առաջին ձեռքից ստանալու: Ուրիշ խօսքով՝ իւրաքանչիւր անհատ երեան է դալիս թէ իբրեւ արդիւնաբերող և թէ սպառող իր ապրանքների, որի շնորհիւ հնարաւորութիւն է ստանում այնքան արդիւնաբերելու, որքան սպառման կարիք կայ, առանց տնտեսական կրիւզիսների, որոնց գլխաւոր հետևանքը լինում է արդիւնաբերող-

ների կործանումն և բանուորների աշխատանքազուրկ, հացազուրկ լինելը:

Ահա այդօրինակ նախանձելի հիմքի վրայ է դնում զոկտ. Հերցլը «Հին-Նոր Երկրի» տնտեսական կեանքի կաղմակերպութիւնը, որին կարող է նախանձել տնտեսական բացասական դրութեան ենթարկուած մարդկութեան ամենամեծ տոկոսը: Պաղեստինի՝ մշակելու համար նպատակայարմար բոլոր հողերը սիրնիղմի պարազլուխները մեծ դներով ձեռք են բերել մահմեդական հողատէրերից և յանձնել են նոր հասարակութեան երկրագործական ընկերութիւններին, որոնք հրաշալի յաջողութեամբ մշակում և ահագին օգուտներ են ստանում: Բայց թէ «Հին-Նոր Երկրի» հրէա բնակիչները ինչպէս կարողացան մօտ 20 տարուայ ընթացքում սիրով կապուել հողի հետ և հաշտուել նրա մշակման հետ, դրա մասին Հերցլը աւելի խոհեմութիւն է համարում լուել, որովհետեւ այդ հանգամանքը չափազանց նուրբ է: Հաւանորէն նա էլ չէ հաւատում այն բանին, որ իրանց պատմական ամբողջ գոյութեան ընթացքում ճարպիկ վաճառականի համբաւ ստացած հրէաները միանգամից հողասէրերկրագործներ դառնան: Բացի դրանից՝ Պաղեստինը դեռ ուրիշ տեսակէտներից էլ հեղինակի շնորհիւ դարձել է մի դրախտ: Նրա նոր և գեղեցիկ քաղաքները աչքի են ընկնում իրանց տեխնիկական կատարելագործութիւններով: Բայց որ ամենազլխաւորն է, Միջերկրական ծովը մի մեծ ջրանցքով միացրուած է Մեռեալ ծովի հետ և այդ երկու ծովերի ջրի տարբեր մակերևոյթը 50,000 ձիւռ ոյժ ունեցող ջրի ոյժ կամ էներգիա է արտայայտում, որ իր կողմից պատճառ է դառնում խոշոր արդիւնաբերութեան (Grossindustrie) ծաղկման և առաջադիմութեան, նամանաւանդ Մեռեալ ծովի ափերի մօտ գտնուող քաղաքներում: Հերցլը այդ խոշոր արդիւնաբերութիւնը հասկանում է եւրոպական, աւելի չուտ ամերիկական մտքով: Հողագործութիւն, արհեստներ և լուսաւորութիւն, որոնք իրանց գոյութիւնը պահպանելու համար էլեկտրական ոյժ են պահանջում, դրանք բոլորն էլ բաւականանում են վերոյիշեալ անսպառ աղբււրից: Էլեկտրականութիւնը, որ մինչև այժմ էլ եւրոպական շատ երկրների գիւղատնտեսութեան մէջ դեռ ևս մուտք չէ գործել, Հրէաստանում արդէն իրականութիւն է ներկայացնում: Մեծ և խոշոր արդիւնաբերութեան հետ միաժամանակ «Հին-Նոր Երկրում» իր գոյութիւնը անկախ կերպով պահպանում է տնային մանր տնտեսութիւնը.—այդ արդիւնաբերութիւնը (Hausindustrie) օր. զոկտ. Հերցլի իր վէպում ի միջի այլոց նկարագրում է մի գիւղում, որի բնակիչները բաղ-

կայած են բացառապէս մանր կօշկակարներից: Դրանք բացի իրանց արհեստից՝ պարագում են և հողագործութեամբ, վերջինս՝ իհարկէ՝ էլեկարական ոյժի օգնութեամբ:

Մտաւոր կուլտուրան և կրթական գործն էլ նախանձելի դրութեան մէջ են գտնուում «Հին-Նոր Երկրում»: Այնտեղ ցանկալի կերպով ծաղկել են գիտութիւնները, գեղարուեստն ու մամուլը: Վերջին մտաւոր ֆակտորին նոյն իսկ ամենակատարելագործուած ձևն է իրականացել Պաղեստինում: Այսպէս կոչուած խօսող լրագիրների բովանդակութիւնը հեռախօսների միջոցով բաժանորդներին է հաղորդում: Հին-Նոր մայրաքաղաք Երուսաղէմը մտաւոր և մարդասիրական մի կենտրոն է, որտեղ à la Paris հիմնուել է և գիտութիւնների մի ճեմարան իր 40 անմահներով: Ինչ վերաբերում է կրթական բարձրագոյն, միջնակարգ և ժողովրդական հիմնարկութիւններին, դրանք աւելի քան բաւականութիւն են տալիս Պաղեստանի նոր հասարակութեան: Որովհետև Պաղեստինում սիոնիստների շնորհիւ գոյութիւն է ունի եւրոպական մոքով միլիտարիզմը, դրա համար այն խոշոր գումարը, որ պէտք է ծախսէին նրա պահպանութեան համար, այժմ այդ գումարը գործադրում են կուլտուրական մի շարք խնդիրներ իրականացնելու համար, այն է՝ կառուցանում են զանազան տիպերի ուսումնարաններ՝ մանկավարժական ամենավերջին բեֆորմներով: Ամենուրէք թաղաւորում է քաղաքական և անհատական ազատութիւնը, այլ ևս առաջուայ նման գոյութիւն է ունեն զանազան դասակարգերի միմիանց վերաբերմամբ եղած անտեսական ծայրայեղութիւնները:

Թէ ինչպէս կարողացան սիոնիստները Պաղեստինը ձեռք բերել տաճկաց կառավարութիւնից և նրա սեպհականատէրը դառնալ, դրա մասին դուրս. Հերցլը մանրամասն տեղեկութիւն է տալիս իր վէպում: Չը նայելով որ սիոնիստները տաճկաց կառավարութիւնից վերջնականապէս գնել են Պաղեստինը, բայց այնուամենայնիւ նա շարունակում է դեռ ևս մնալ «հիւանդ մարդու» անուանական գերիշխանութեան տակ: Նրանք Պաղեստինը գնելուց անմիջապէս յետոյ սուլթանին կանխիկ վճարել են երկու միլիոն ֆունտ ստերլինգ, բացի դրանից միջազգային իրաւունքի երաշխաւորութեամբ պարտաւորուել են ամեն տարի իրանց մնացած պարտքից 50,000 ֆ. ստերլինգ տալու և վերջապէս իրանց զուտ արդիւնքի մի քառորդ մասը վերոյիշեալ կառավարութեան վճարելու: Այդ բոլոր փողերը սիոնիստները ստանում են Լոնդոնում 10 միլիոն ֆունտ ստերլինգ հիմնական դրամադիւնով հիմնուած մի բանկից, որի բաժնետէր բոլոր

բանկիրները հոգով ու սրտով նուիրուած են սխիստական շարժման և կազմակերպութեան: Բացի գրանից մի շարք ուրիշ կապիտալիստ հրէաներ կամաւոր կերպով ահագին գումարներ են նուիրում հրէական աղքատ ընտանիքների ճանապարհածախսի համար, որոնք աշխարհիս զանազան կողմերից գաղթում ու հաստատւում են «Հին-Նոր Երկրում»: Այդօրինակ աղքատ ընտանիքների թիւը՝ զոկտ. Հերցլի ասելով՝ է մօտ 100,000, իւրաքանչիւրը միջին թւով հինգ հոգուց բաղկացած լինելով, որոնց ճանապարհածախսի համար գործադրուել է ուսական փողով մօտ 600 միլիոն բուբլի:

Լ. ԲԱԲԱՅԵԱՆ

ՎՐԱՑ ԿԵԱՆՔԻՑ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

Ողորմելի տպաւորութիւն է թողնում մեր առջև զրաժ վրաց «Մոամբէ»՝ միակ հասարակական-դրական-քաղաքական ամսագրի վերջին համարը։ Այդ երբեմն այնքան բաղմամբովանդակ, հայրենի աշխարհի երեոյթների հետ սերտ կապ ունեցող հրատարակութիւնը զարձել է այժմ թարգմանական գրուածներէ մի վտիտ ժողովածու։ Հանեցէք նրանից երբեմնակի միայն տպուող քաղաքական տեսութիւնը—և նա այլ ևս ոչ մի նմանութիւն չի ունենայ մի հասարակական ամսագրի հետ։ Ինքնեւրդ զատեցէք, բաց ենք անում նրա վերջին թարմ համարը և գտնում այնտեղ գրուածների հետեւալ ցանկը. «Մէկը շատերի համար» վէպիկ Վերայի, թարգմանութիւն, «Ժողովրդի թշնամի կամ դոկտոր Շտոկման»—Հ. Իբսէնի, թարգմանութիւն, «Երեքը միասին»—Մ. Գորկիի, թարգմանութիւն, «Լիր արքայ»—Գերվինուսի, թարգմանութիւն, «Վրաց տարեգրութիւնները»—յօդուած Մոսէ Զանաշվիլու։ Ահա այդ հինգ գրուածքից է բաղկացած «Մոամբէի» մայիսի համարը, և բացի դրանցից չը կայ նրանում և ոչ մի տող ուրիշ որեիցէ հարցի մասին։ Ուրեմն ամբողջ համարում գտնւում է միայն մի ինքնուրոյն գրուածք և այն էլ հնագիտութեան վերաբերեալ։

Եւ այդ համարը բացառիկը չէ, այլ նոյն ձևով են կազմուած և «Մոամբէի» նախորդ չորս համարները, այնպէս որ այս տարի նա տուել է ընդամենը երկու ինքնուրոյն վէպիկ և երկու յօդուած էլ վրաց լեզուի ձևերի և ուղղագրութեան մասին։ Նրանց մէջ է գտնուում ի միջի այլոց և մեր Բաֆֆիի «Խենթ»-ի շարունակութիւնն ու վերջը և մի փրանսիական հեղինակի ընդարձակ (460 երես) «Հին Յունաստանի պատմութիւնը»։

«Մոամբէն»՝ ինչպէս սասայինք, մի ժամանակ հետաքրքիր և կարևոր օրդան էր, նրան աշխատակցում էին վրաց նշանաւոր հրապարակախօսներն ու տաղանդաւոր գրողները, նա ունէր վրաց ամսագրական կեանքի մէջ երբեք չը տեսնուած բաժանորդների մի պատկանելի թիւ—900, սակայն յետոյ կնթարկուելով հետզհետէ հասարակութեան սպանիչ անտարբերութեան՝ նա գունատուեց, հիւժուեց ու վերածուեց վերջերս, ինչպէս վերեր տեսանք, լոկ մի թարգմանական ժողովածուի...

Բաժանորդներ գրաւելու համար «Մոամբէն» վարիչները վերջին երկու տարին նշանակած ունեն նաև մի մեծ պրեմիա. ամսագրին 10 բուլլի բաժանորդագլին տուողը ձրի ստանում է նաև «Ցնորիս-Փուրցելի» ամենօրեայ լրագիրը, որ առանձին արժէ 6 բուլլի և հրատարակւում է նոյն վարիչների, այն է՝ Վրաց Հրատարակչական Ընկերութեան ձեռքով:

Ինչպէս տեսնում ենք, վրաց մէջ էլ ամսագիրը չէ զրտնում արգաւանդ հող, չէ պատուաստւում նրան: Զր մտնելով այստեղ մանրամասնութիւնների մէջ և միայն մասնաւոր շնորհիւ հայոց և վրաց գրական կեանքին համահաւասար ընդհանուր մի երևոյթի վրայ, կ'ասենք այժմ մի քանի խօսք էլ «Մոամբէն» վերջին համարի միակ ինքնուրոյն յօդուածի մասին:

Պէտք է ասած, որ վրացիք սովորութիւն չեն ունեցել զրբելու ընդարձակ պատմագրքեր: Նրանք բաւականացել են՝ կազմելով միայն համառօտ տարեգրութիւններ, թագաւորների և կաթողիկոսների առանձին կենսագրութիւններ, յիշատակարաններ եւյլն: Այնուհետև, դարերի ընթացքում, գուրս են եկել անձնաւորութիւններ, որոնք նեղութիւն են կրել այդ մասնաւոր նիւթերը ի մի հաւաքել, պատմական ժողովածուներ կազմել՝ «Քարթլիս ցխովրեբա» (Վրաստանի կեանք) ընդհանուր վերնագրով: Այդ բազմաթիւ «Քարթլիս ցխովրեբա»-ներից էլ կազմուել է իր կարգին երկու խոշոր տպագրական հատոր, որոնցից առաջինը պատմում է մեզ Վրաստանի անցեալ կեանքի սկզբից մինչև 1469 թւականը, իսկ երկրորդը շարունակում է նրան այդ ժամանակից մինչև 1800 թւականը: Դրանք երկուսն էլ տպագրուած են Պետերբուրգում՝ առաջինը 1849 թ. Քրանսիացի գիտնական Բրոսսէի և երկրորդը՝ 1854-ին վրացի պրոֆեսսոր Չուրինաշվիլու ձեռքով: Պ. Ջանաշվիլին իր մի շարք յօդուածներում ցոյց է տալիս նախ և առաջ, որ դարերի ընթացքում այդ պատմական ժողովածուների մէջ մտել են անթիւ սխալներ, յեղաշրջումներ և կատարեալ անախրոնիզմներ, որոնք պատճառ եղան օտար զիտնականների արհամարհական վերաբերմունքին և նրանց «երես դարձնելուն» այդ յիշատակարաններից: Այդ

խոշոր սխալները, յօդուածագրի ասելով, առաջ են եկել արտա-
զըրոյնների տգիտութիւնից կամ անմաքուր գիտումներից: Ապա
պ. Զանաշվիլին աշխատում է ըստ կարողութեան սրբագրել
յիշած սխալներից շատերը՝ հիմնուելով վերջին ժամանակներս
դանուած բաղմամբիւ նոր ձեռագրերի և օտար պատմիչների
վկայութիւնների վրայ:

Այստեղ մենք չենք կարող չը յիշատակել, որ «Քարթլիս
ցխովրեբա»-ի արժէքի մասին մի ժամանակ կասկած էր յայտ-
նել նաև հանգուցեալ պրոֆ. Բ. Պատկանեանը, որի պատճա-
ռով նա շարունակ ծաղրուել է ու անարգուել վրաց մամուլի
էջերում, սակայն պ. Զանաշվիլին զրանում է այժմ մի երկու
բարի խօսքով վերականգնելու հանգուցեալ հայ գիտնականի
անտեղի կերպով անարգուած պատիւը...

Պ. Զանաշվիլիի ցոյց տուած խանգարումների մէջ կան
նաև մեզ՝ հայերիս վերաբերեալ կէտեր: Այսպէս, Բրոսսէի տը-
պագրած օրինակի մէջ նախնի վրացիների մասին ասուած է,
թէ նրանք հայերէն էին խօսում սկզբում և յետոյ միայն վրա-
ցերէն լեզու ստեղծեցին առանձին գուառաբարբառներից, և
իր բէ Հասոը (Հայկը) աւելի զօրաւոր էր ու յարգելի իր եղ-
բայրների մէջ, քան Քարթլոսը (վրաց նախահայր): Յօդուածա-
գիրը հիմնուելով ուրիշ վարիանտների վրայ՝ աշխատում է ա-
պացուցանել, որ նախնի վրացիք միշտ ունեցել են իրանց մայ-
րենի լեզուն, և Քարթլոսն էլ եղել է ամենատուժեղը և աւագը
իր 7 եղբայրների մէջ, որոնցից մէկն էր մեր նախահայր Հայկը...

Տ. ՓԻՐՈՒՄԵԱՆ

ԳԱՒԱՌԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Դիֆտերիա զաւառում

Լրագրներում չատ յաճախ դրում են, թէ այս ինչ դիւզում դիֆտերիա կայ, այն ինչ դիւզում ծաղիկ... Ակամայ գալիս եւ այն եզրակացութեան, թէ կնչ արդեօք մի գաւառ, որտեղ երեխաների վրայ մի որեւէ վարակիչ հիւանդութիւն չը լինի: Եղել է մի տարի, որ այս կամ այն գաւառում դիֆտերիա, կամ ծաղիկ, կամ մի ուրիշ վարակիչ հիւանդութիւն չ'երևայ երեխաների վրայ...

Անցեալ 1902 թիւն Շարուր-Դարալագեազ գաւառում սաստիկ տարածուած էր դիֆտերիա. մի բան, որ աչքի էր ընկնում—գա այն էր, որ հիւանդութիւնը միայն Շարուրում յայտնի եղաւ *), յետոյ հիւանդութիւնը սկսուեց ազգաբնակչութեան ամարանոց քոչելուց առաջ և նորոգուեց աւելի ուժեղ կերպով ամարանոցից վերադառնալուց յետոյ:

Քաղաքներում, երբ մի որեւէ երեխայի վրայ վարակիչ հիւանդութիւն է երևում, հիւանդին այցելող բժիշկը յայտնում է վարչութեանը, որ այսինչ տան մէջ կնչ այսինչ վարակիչ հիւանդութիւնը. բժշկական վարչութիւնը անմիջապէս՝ տեղեկութիւն ստանալուց յետոյ՝ զանազան միջոցներ է ձեռք առնում հիւանդութեան առաջը առնելու համար. այդ միջոցները կախուած են քաղաքի բժշկական գործի զարգացումից... Փոքր քաղաքներում, որտեղ առհասարակ վարակիչ հիւանդութիւնների համար յատկապէս չ'ինած բնակարաններ (հեշտութեան հա-

*) Դուրէ Դարալագեազի զիւղերումն էլ կար, բայց գոնէ գաւառական վարչութեանը յայտնի չէր:

մար կ'առնեմ բարակներ) չը կան, ուր կարողանային զետեղել վարակիչ հիւանդներին, վարչութիւնը իր բոլոր ուշադրութիւնը դարձնում է հետեւեալի վրայ—վատել հիւանդին առողջներից, մաքուր պահել հիւանդի սենեակը, ակտահանել հիւանդի սենեակը և նրա գործածած իրերը, հագուստը, անկողինը եայլն... Մեծ քաղաքներում իւրաքանչիւր վարակիչ հիւանդութեան համար առանձին բարակներ են շինուած, և կոչւում էլ են հիւանդութեան անուանով, օրին. գիֆտերիտի բարակ, կարմրուկի բարակ...

Այդ բարակները շինուած են մի որեւէ հիւանդանոցի կից. մի երեխայի վրայ վարակիչ հիւանդութիւն երեւալուն պէս բժշկը յայտնում է վարչութեանը, իսկ վարչութիւնը իսկոյն և եթ զետեղում է հիւանդին որոշ բարակում, որտեղ բժշկում և խնամում են հիւանդին. այս վերջինի ծնողները ամեն օր որոշ ժամին 1—2 ժամով կարող են գալ բարակը և տեսնել իրանց հիւանդին. բարակ մտնողը հազնում է իր շորերի վրայից սպիտակ կոտորից կարած խալատ, որը՝ դուրս գալիս թողնում է բարակում: Կարճ ասած, բարակը միևնոյն հիւանդանոցն է, միայն վարակիչ հիւանդների համար: Իւրաքանչիւր քաղաք ամեն մի վարակիչ հիւանդութեան համար պիտի ունենայ բարակ՝ տանեակ մահճակալներով և բժշկական բոլոր պարագաներով, ևս ասում եմ պիտի ունենայ, որովհետև բարակները մեծ դեր են խաղում համաճարակների ժամանակ:

Այժմ տեսնենք, թէ ինչ է կատարւում գաւառում վարակիչ հիւանդութիւն երեւալիս... Այստեղ խօսքս միայն այն վարակիչ հիւանդութիւնների մասին է, որոնք յաճախ են պատահում մեղանում և որոնց դէմ արտակարգ միջոցներ չեն գործ դրւում... Բացի այդ՝ ես այստեղ միայն կանդ կ'առնեմ միայն երեխաներին հարուածող վարակիչ հիւանդութիւնների վրայ—օրին. ծաղկի, կարմրուկի, գիֆտերիտի: Երբ գաւառի մի որեւէ գիւղում երեխաների (կամ մեծերի) վրայ վարակիչ հիւանդութիւն է երևում, այն գիւղի տանուտէրի օգնականը՝ ոչսը յայտնում է տանուտէրին, սա պրիստաւին, այս վերջինը գաւառապետին, իսկ սա բժշկին. բացի այդ, գաւառի ոստիկանական վարչութեանը յայտնում են այն ժամանակ, երբ մի հիւանդութիւն շատ զոհեր է տանում գիւղում, կամ շատ արագ է տարածւում, կամ երբ այն գիւղը, որտեղ երեւացել է հիւանդութիւնը, շատ մօտ է գաւառի կենտրոնին, որտեղ և գտնւում են բոլոր վարչական հաստատութիւնները, այնպէս որ գաւառի ամենայն ընկած գիւղում վարակիչ հիւանդութիւնից մահուան 2—3 դէպք պատահելիս՝ շատ անգամ վարչութիւնը չի էլ իմա-

նում: Գիւղացիք լաւ են ճանաչում ծաղիկն ու կարմրուկը. բացի այդ՝ գիտեն, որ կարմրուկը վնասակար չէ այնպէս, ինչպէս ծաղիկը, ուստի կարմրուկի մասին քիչ են յայտնում, իսկ ծաղիկի մասին ընդհակառակը շատ շուտ. ինչ վերաբերում է գիֆտերիտին, գիւղի ոչսը իմաց է տալիս միայն այն ժամանակ, երբ այդ գիւղում մօտ 10 հոգի հիւանդացել են կամ մեռել են այդ վարակիչ հիւանդութիւնից. այդ բանում ոչսին մեղադրել չէ կարելի, որովհետեւ մի քանի տեսակ բկացաւ կայ, ոչսն ինչ իմանայ, որ բկացաւիցն է, և նա վարչութեանը յայտնում է այն ժամանակ, երբ մի քանի հոգի արդէն վախճանուել են հիւանդութիւնից. յայտնելիս էլ վերը յիշուած կարգով է յայտնում, այնպէս որ շատ ժամանակ մինչև լուրը հասնում է բժշկին, գիւղի երեխաների կէսն արդէն բռնուած է լինում գիֆտերիտով: Պատահում է և այնպէս, որ մինչև բժշկին լուր հասնելը, մինչև բժշկի այն գիւղը գնալը՝ հիւանդութիւնն արդէն վերջացած է լինում, այսպիսի հիւանդներն արդէն կամ մեռած են լինում, կամ առողջացած. բայց իսկապէս գիֆտերիտը ոչ թէ վերջացած, այլ դադարած է լինում, որովհետեւ ի նկատի ունենալով գիւղական կեանքի պայմանները, ժողովրդի վերաբերումը դէպի բժշկականութիւնը, դաւառի բժշկական գործի դրութիւնը, դժուար է ենթադրել, որ կայ մի գիւղ, որտեղ տարուայ մէջ տիֆտերիտի գոնէ մի գէպը չը լինի:

Պարզեմ խօսքս. գիֆտերիտի թոյնը շատ երկարակեաց է, ուստի բաւական է, որ մի գիւղում երկայ մի անգամ գիֆտերիտ. 4—5 հոգի հիւանդանալուց (կամ մեռնելուց) յետոյ հիւանդութիւնը վերջանում է, բայց մի քանի ամսից յետոյ տեսնում ես էլի նոյն գիւղում, կամ շատ անգամ էլի նոյն տան մէջ մի գէպը երկայ, ահա թէ ինչու ես ասում եմ՝ դադարում է հիւանդութիւնը և ոչ թէ վերջանում. յետոյ կը տեսնենք, թէ ինչ են դրա պատճառները: Բայց այժմ նայենք, թէ ինչ են անում գաւառում, երբ մի որեւէ վարակիչ հիւանդութիւն է երևում:

Ես այստեղ նորից պէտք է ասեմ, որ խօսքս արտակարգ միջոցներ պահանջող վարակիչ հիւանդութիւնների մասին չէ, այլ կարմրուկի, ծաղիկի և գիֆտերիտի մասին է:

Գաւառի մի որեւէ գիւղում կարմրուկ երևալիս, մինչև լուրը հասնում է բժշկին, մինչև բժիշկը գնում է այն գիւղը, հիւանդութիւնը մասամբ դադարած է լինում. առհասարակ կարմրուկը շատ թեթեւ է անցնում՝ համեմատած միւս հիւանդութիւնների հետ: Իրանք գիւղացիք շատ լաւ գիտեն, որ կարմրուկը այնքան էլ երկիւղալի չէ. շատ անգամ առողջ երե-

խային զիտմամբ հիւանդի մօտ են պահում, որպէս զի առաջինն էլ հիւանդանայ, որովհետեւ ծնողներին քաջ յայտնի է, որ մի անգամ կարմրուկով հիւանդացողն էլ չի հիւանդանայ երկըրորդ անգամ:

Ծաղիկ հիւանդութիւնը ուշ-ուշ է պատահում մեր պաւառում, պատահելիս՝ բժիշկը ֆելդշերի և ծաղկահատների հետ միասին չըջում է գիւղերը, և ծաղիկ են պատուաստում երեխաներին, որով հիւանդութեան առաջն առնում է...

Իսկ ինչ վերաբերում էի դիֆտերիաի դեմ կուեկուն, այդտեղ մենք բժիշկներս բոլորովին անդօր ենք շնորհիւ 1) գիւղական պայմանների և 2) բժշկական դործի պակասութիւնների դաւառում: Այդ երկու հանգամանքը միմիանց հետ մեծ կապ ունեն, և ես տւելորդ չեմ համարում մի փոքր կանգ առնել զըրանց վրայ:

Իւրաքանչիւր ընթերցողին յայտնի է, թէ՛ հրքան կեղտոտ են պահում գիւղական փողոցները և գիւղացու բակերը: Անյայտ չէ և ոչ ոքի, թէ ինչպէս են ապրում գիւղացիք... Շատ քիչ բացառութեամբ դուք կը տեսնէք գիւղացու բակի մէջ ծառեր, կանաչեղէն և այլ բոյսեր. հողի պակասութեան շնորհիւ գիւղացիք աշխատում են տան համար քիչ հող բանաջնել. գիւղերում շատ-շատերը օրինաւոր բակ չ'ունեն: Ամբողջ ընտանիքը՝ շատ անգամ մօտ 20 հողի ապրում է մի մեծ սենեակում, ուր բացի երգիկից և դռնից ուրիշ լուսամուտ չը կայ. այդ մեծ սենեակի միակ վառարանը թոնիրն է, որտեղ հաց են թխում. թոնրի վրայ դնում են մէկ քառակուսի ցածր սեղան, որը ծածկում են կապերտով, և թոնիրը հաց թխելուց յետոյ զատնում է գիւղացու վառարանը... Շատ անգամ ձմեռուայ ցուրտ ժամանակը այդ սենեակի տաքութիւնը սփարան ցածր է լինում, որ ջուրը սառչում է սենեակում: Կենսային շատ ու շատ գիւղերում գիւղացու սենեակում ղեռեղուած է և նրա անասունը, որի շնչառութեամբ և տաքանում է գիւղացու բնակարանը... Հարուստ և աղքատ շատ քիչ զանազանութեամբ են ապրում: Հարուստն էլ ամառ-ձմեռ անց է կացնում հացատան մէջ, չը նայած որ նա միևնոյն բակի մէջ ունի և քիչ թէ շատ մարդու սարքած սենեակներ երկաթէ վառարանով... Մի մոռացէք, որ գիւղացու բնակարանի մէջ մի անկիւնում ցորեն է դարսուած, միւս անկիւնում բամբակ և կորիզներ (բամբակի սերմ), երբորդում ցարի, պղինձ, պղինձկալ... Հորորդում հացը, տեղաշորը կայն... ազատ տեղ չը կայ սենեակի մէջ. թախտ (փայտից չինած մահճակալ) ասած բանը շատ քիչ կը պատահէք գիւղացու սենեակում. բոլորն էլ մեծ ու փոքր, հարուստ ու աղ-

քատ թէ նստում են և թէ պառկում գետնի վրայ գցած քեչաների կամ փալասների վրայ թոնրի շուրջը...

Գիւղացիների մեծ մասը կաթնեղէնով է կերակրւում. միս չատ ուշ-ուշ են մորթում գիւղերում. հարուստները զաւուրմա են պատրաստում ձմեռուայ համար, իսկ աղքատները այդ էլ չ'ունեն. գիւղացու տաք կերակուրը սպասն է և ձաւարով կամ բրնձով քաշովի: Գիւղացին խմելու ջուրը, եթէ գիւղում աղբիւր չը կայ, վերցնում է առուակից և գործ է ածում առանց քամելու ու եռացնելու: Նրկար կանգ առնելը աւելորդ եմ համարում, որովհետեւ առանց այն էլ երկարեց յօգուածս, մանաւանդ որ այդ բաները բոլորին էլ յայտնի են...

Շատ նախանձելի չէ գիւղացու գրութիւնը հագուստի կողմից էլ... Մի խօսքով գիւղացու կեանքի պայմանները շատ են նսլաստում զանազան վարակիչ հիւանդութիւններ երեալուն և նրանց սրագ պարածուկուն: Ահա թէ ինչու գիֆտերիտը մի անգամ որեւէ գիւղում երեալուց յետոյ՝ էլ շատ հեշտութեամբ նա գուրս չի գալիս այդ գիւղից. դրա պատճառը, կրկնում եմ, այն է, որ գիֆտերիտի թոյնը շատ երկարակեայ է, և գիւղական կեանքի պայմանները նպաստում են նրա զարգանալուն:

Այժմ մասնաւորեմ խօսքս, և տեսնենք, թէ ինչ են անում գաւառում բժիշկները, երբ մի որեւէ գիւղում գիֆտերիտ է երևում:

Հիւանդութեան առաջն առնելու ամենաառաջին պայմանը հիւանդի (գիֆտերիտով) զատելն է. գաւառում բարակներ չը կան, բացի այդ գիւղացին աւելորդ սենեակ անդամ չ'ունի, որտեղ կարելի լինէր գիֆտերիտով հիւանդին զետեղել. այնպէս որ հիւանդը մնում է միևնոյն սենեակում. մի գիւղում փորձի համար կամեցայ ժողովել այդ գիւղի բոլոր գիֆտերիտով հիւանդներին մի մեծ սենեակում, բայց գիւղացիներից ոչ ոք չը համաձայնուեց տալ իր սենեակը. ինչ ասել կ'ուզի, այդպիսի հանգամանքը նպաստում է գիֆտերիտի տարածուելուն: Թէ հիւանդութիւնը երեալիս և թէ դադարելիս բժիշկը միջոցներ չ'ունի կարդին ախտահանելու հիւանդի բնակարանը. գիֆտերիտի նման վարակիչ հիւանդութիւնները շատ խիստ ախտահանութիւն են պահանջում. ամենալաւ միջոցը՝ այրել, ինչ որ կայ հիւանդի սենեակում. բայց միթէ դա կարելի է. շատ անգամ հիւանդի տեղաշորը չեն ուզում այրել սոսի, այնքան աղքատ է տանտէրը, ուր մնաց, որ այրել տաս այն, ինչ որ կայ սենեակում:

Մենք վերը տեսանք, որ միևնոյն սենեակում պահւում են և ամբողջ ընտանիքի աշխատանքն ու ասլուստը, ինչպէս այ-

րեա բամբակը, ինչպէս ոչնչացնեն ցորենը, բոլոր տեղաշորերը, կարպետներն եայլն... Մեր ախտահանումը կայանում է նրանում, որ մէկ վեղբօ ջրի մէջ լուծում ենք կամ սուլեմա, կամ կարբուկան թթու և սրսկում ենք տան ամեն մի կողմն ու իրեղէնները. այս տեսակ ախտահանումն դործ են ածում և զեմստօներում, որտեղ նմանապէս լաւ հետեանքներ չեն ստանում: Ի դէպ, չեմ կարող այստեղ չը յիշել Սարատով պաւտրի զեմստօի բժշկական մասնագիտովի վճիռը. «այն ախտահանումը, որը դործ են դնում գիւղերում բժիշկները վարակիչ հիւանդութիւններ երեւալիս, ոչ մի լաւ հետեանք չ'ունի և իր նպատակին չէ հասնում, այդ ախտահանումը ուժեղացնում է ժողովրդի թերահաւատութիւնը դէպի բժշկական գիտութիւնը, որովհետեւ ախտահանելիս իւրաքանչիւր բժիշկ բացատրում է, որ սրանից յետոյ էլ հիւանդութեան դէպք չի լինի, բայց յանկարծ մի քանի օրից յետոյ նորից երևում է հէնց միևնոյն տան մէջ հիւանդութիւնը»:

Կազանումն զուամարտած բժիշկների Պիրոգովեան համաժողովը նոյնպէս որոշեց, որ վերոյիշեալ ձևով գործադրուած ախտահանութիւնն իր նպատակին չէ հասնում և թուլացնում է ժողովրդի դէպի զեմստօի բժշկականութիւնն ունեցած հաւատն ու տրամադրութիւնը (Врачеб. Газ. № 8):

Գաւառների (Յրեան, նահանգի մասին է խօսքս) ոչ մի գիւղական հիւանդանոցում մի կարգին ախտահանիչ մեքենայ չը կայ... Դիցուք լինի էլ, էլի մենք չենք կարող վերը յիշած պայմաններում օրինաւոր կերպով ախտահանել հիւանդի բնակարանը, որտեղ բացի զանազան մթերքներից՝ չառ անգամ և՛ կենդանիներ են մնում:

Լաւ է որ մեղանում քութէշ (скарлатина), բժաւոր տիֆ (сыпной тиф) և այլ վարակիչ հիւանդութիւնները չուտ-չուտ չեն երևում, ինչպէս ներքին նահանգներում:

Եթէ զեմստօում ախտահանումը իր նպատակին չէ հասնում, ապա մենք ի՞նչ ասենք:

Նախանձելի դրութեան մէջ չէ և գիֆտերիտի բժշկումը. զաւառական ոչ մի հիւանդանոց հակադիֆտերիտային չիջուկ չ'ունի. յայտնի է, որ այդ չիջուկը (антидиф. сыворотка) դործ է ածում և գիֆտերիտի առաջն առնելու նպատակով երբ մի որեւէ տան մէջ գիֆտերիտ է երևում երեխաներից մէկի վրայ, առողջ երեխաներին սրսկում են այդ չիջուկից, որպէսզի նրանք էլ չը վարակուեն... Գաւառում գիֆտերիտը բժշկելիս դործ ենք ածում կամ քսելու թէ՛ դրսից և թէ՛ բերանի միջից, կամ խմելու դեղեր, որոնք սակայն յատկազեղեր չեն: Բացի

այդ՝ մի հիւանդին բժիշկը մի անգամից աւել չի տեսնում: Շատ անգամ այն գիւղը, որտեղ բնակուել է գիֆտերիտը, գտնուում է բաւական հեռու այն կենտրոնատեղից, որտեղ ասլորում է բժիշկը: Պատահում է, որ միաժամանակ մի քանի գիւղերում է երևում գիֆտերիտը, բժիշկը այցելում է այն գիւղերը, որոնց մասին իրան յայտնել են: Բժիշկը գնում է գիֆտերիտով բոլոր-կուած գիւղը, նայում է հիւանդներին, զեղեր է նշանակում, զանազան խորհուրդներ է տալիս, պատուիրում է գտնել հիւանդին, բայց բժիշկի խօսքերը կատարելու մասին ոչ ոք հոգ չէ տանում. բժշկի զնալուց յետոյ ամեն ինչ մնում է նոյն ղը-րութեան մէջ, ինչպէս և կար նրա գալուց առաջ, թէև խօսք են տալիս հիւանդները կատարել բժշկի պատուէրները, ասելով՝ «աչքիս վրայ» կամ «բաշ ուստա» (չլիսիս վրայ), բայց միայն Աստուած գիտէ, թէ ինչպէս են կատարում: Բժիշկը կրկին ան-գամ նոյն գիւղը գալիս է, երբ հիւանդութեան նոր դէպքեր են երևացել. իսկ եթէ նորերը չը կան, նոյն գիւղը էլ բժիշկ չի գալիս, որովհետեւ նա միայն համաճարակով չի զբաղւում, նրան յանձնուած է դատաստանական բժշկի պաշտօնը, որը խլում է բժշկի ամբողջ աշխատանքը, այնպէս որ նա ազատ չէ, որպէսզի մնայ այն գիւղում, որտեղ կան գիֆտերիտով հիւանդներ, կամ որպէսզի նա կարողանայ շուտ-շուտ յաճախել այն գիւղը: Գաւառական բժիշկը ազատւում է դատաստանական գործերից մի-այն այն ժամանակ, երբ գաւառում ըծաւոր տիֆ, խոլերա կամ սը-րանց նման արտակարգ միջոցներ պահանջող հիւանդութիւն է ե-րևում: Վերը մոռացայ ասել և այն, որ բժշկից յաճախ թաղցնում են հիւանդներին, կարծելով՝ որ բժիշկը հիւանդութիւնը վերջացնե-լու համար թունաւորելու է բոլոր հիւանդներին: Մի կողմից գիւղական կեանքի պայմանները, միւս կողմից գիւղացու տղի-տութիւնը, երրորդ կողմից գաւառի բժշկական գործի պակա-սութիւնները—թէ ինչ գրութեան մէջ են դնում բժշկին, իմա-նալու համար հարկաւոր է գաւառում ապրել և տեսնել... Այս-պիսի հանգամանքներում՝ ինչ ասել կ'ուզի, որ գիֆտերիտով հիւանդը իր բաղդին է մատնւում. ուրիշ բան է, եթէ իւրաքան-չիւր գաւառ, չը նայած իր կեանքի վատ պայմաններին՝ օդի, բնակարանի ջրի և ժողովրդի-ապրուստի կողմից, ունենար իր սանիտարական բժիշկը, ունենար բարակներ, որտեղ կարելի լի-նէր դատել վարակիչ հիւանդներին: Վարակիչ հիւանդների դէմ կռւելիս՝ առաջին տեղը վարակիչ հիւանդին դատելը պիտի բըռ-նի. եթէ այդ պայմանը չէ կարելի գործադրել, այն ժամանակ ինչ միջոցներ էլ որ գործածեն հիւանդութեան առաջն առնելու համար, բոլորն էլ ապարդիւն կ'անցնեն... զատելը պիտի լայն

կերպով հասկանալ, այսինքն զետեղել միատեսակ (վարակիչ) հիւանդութիւն ունեցողներին մի սրնէ զբա համար յատուկ պատրաստած շինութեան մէջ. գտնելով հիւանդներին՝ մենք ազատում ենք առողջներին գիփաերիտով վարակուելուց և դրանով հիւանդութեան դէմ կռուելու գործի կէսը, եթէ ոչ աւելին, կատարած ենք լինում... Բայց երբ, քանի՞ տարի սրանից յետոյ այդ բանը կարելի կը լինի գործադրել գուառներում, այդ շատ զժուար է գուշակել...

ԲԺ. Ա. Մ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ռուսահայ մամուլի դրոշմները.—Կրիսյի ֆայերով ստաշադիմութիւն.—Մեր հասարակութիւնը եւ մամուլը 40 տարի առաջ եւ այժմ.—Պահանջ եւ առաջարկ.—Արդարացուցիչ հանգամանքներ.—Պահանջ անողը գործ չ'ունի այդ հանգամանքների հետ.—Պատահական գրականագէտներ եւ մամուլի յատուկ մըշակներ.—Ռուսացութիւնը կայուն զրական գործունեութեան հետ.—Գրական փոնդ եւ հոկորար.—Մեր թեմ. դպրոցների տեսնականը.—Նոր-Նախիջևանի թեմ. դպրոցի հոգար. մի որոշումը.—Ներսիս. դպր. քննիչ.—Կամայական ռեժիմի մի նոր արայայտութիւն մեր թեմ. դպրոցներում.—Ներսիս. դպր. տեսական հարցը:

Աշակերտին ծեծելու համար պատժուած հայ ուսուցիչ.—Ժողովրդական ճրիշիկ գրադարաններ.—Առեւտրական ուս. աւարտներին տարր. ուս. ուսուցչի վկայական յատկացնելը.—Բարոյի առանձին շրջան.—Թարմնական պատժի տնկածներ տեսակների վերացումը.—Կաղզումանի ոմիրը.—Թիֆլիսում ներքին հիւանդութիւնների խղիւղիւն հիւանդանոց իւնադու հարցը.—Քաղաքային ուսումնարանների ուսուցիչների համաժողով.—Մասնաւոր ուսումնարանների ծրագրի հարցը.—Հայ-վրացական արձանագրութիւնների հրատարակութեան մասնաժողովը.—Հրեական հոդաշրութիւնը սահմանափակող նոր օրէնք.—Ազնւական կադէսեան ուսումնարաններ:

Այն, ինչ որ մենք անցեալ անգամ ասացինք արտասահմանեան հայոց մամուլի անմիջեւ դրութեան մասին, մեծ մասամբ իրաւացի է և մեր երկրի հայ մամուլի նկատմամբ: Աւելի քան քառասուն տարի է, որ գոյութիւն ունի Ռուսաստանում հայոց մամուլը, սակայն նա այժմ էլ դեռ ևս չի կարողանում հաստատ իր իրաւ կանգնել:

Ծիշէ է, այդ մամուլը, վերջրած բացարձակ համեմատութեամբ, առանց ի նկատի ունենալու և ժամանակի հետ փոփոխուած հանգամանքները, որոշ ատաճադիմութիւն արել է: Այդպէս օրինակ, այժմ հայոց միակ ամսագիրը երկու անգամ աւելի բաժանորդ ունի, քան ունէր «Հիւսիսափայլը» իր հրատ.

2-րդ տարին (340 բաժանորդ), չը նայած այն ժամանակուայ կողմաստան իշխանութեան կողմից ցոյց տուած աջակցութեան անգամ. Գրիգոր Արծրունու հիմնած «Մշակը» այժմ հինգ անգամ աւելի բաժանորդներ ունի, քան սկզբում: Սակայն այդ առաջադիմութեամբ պարծենալու կամ ցնծալու բաւականաչափ հիմք չ'ունենք, որովհետև վերջին 30—40 տարիների ընթացքում մեր հասարակութեան զարգացումը, նրա մտաւոր-բարոյական պահանջները պէտք է շատ և շատ աւելի անդամ մեծացած լինէին. համեմատեցէք միայն մեր միջնակարգ և բարձրագոյն դպրոցներում աւարտածների թիւը այժմ և 40 տարի առաջ... Անշուշտ ընթերցողների թիւը պէտք է անհամեմատ աւելի լինի, քան ցոյց է տալիս ներկայ հայոց մամուլի տարածման վիճակագրութիւնը: Որ ընթերցողների թիւը առնուաբար մեծացել է՝ այդ երևում է նրանից, որ Անդրկովկասում այժմ պահպանւում են 5 ամենօրեայ ռուսաց թերթեր. հիմք ունենք կարծելու, որ դրանց բաժանորդների մեծագոյն մասը հայեր են: Կան՝ իհարկէ՝ զբօրանքից շատ-շատերը, որոնք չը գիտեն հայերէն, բայց կան շատ-շատերը և հայերէն գիտցողներից, որոնք գերադասում են օտար թերթերից և հանդէսներից մտաւոր անուղի ստանալ, յագեցնել իրանց մտաւոր ծարաւը: Եւ այդ շատ բնական է. այդ ազդիւրները մեծ մասամբ աւելի առատ, անդադար և հետաքրքրական պաշար են տալիս, քան ազգայինները:

Եթէ մի ժամանակ «Հիւսիսափայլը», «Կոունկը», նոյն իսկ «Մշակը» իրանց արծարծած տարրական գաղափարներով, իրանց միամիտ դրական ձևերով, իրանց համեմատաբար միակողմանի և թզբառ բովանդակութեամբ որոշ չափով գոհացնում էին այն ժամանակուայ մեր ընթերցողներին, որոնք սովոր չէին դեռ ևս համեմատութիւն անելու օտար նմանօրինակ օրգանների հետ, այժմ արդէն ընթերցողի ճաշակը նրբացել է, պահանջը զարգացել, համեմատութիւնը աչքի առաջ է...

Ժամանակի հետ անխուսափելի են և փոփոխութիւններ. այն պայմանները, որոնց մէջ կարողանում էր գործել մամուլը 30—40 տարի առաջ, ներկայումս ձեռքտու չեն գործի առաջադիմութեան տեսակէտից, որովհետև փոխուած են, խստացած են պահանջները: Առաջարկը պէտք է համապատասխանի այդ պահանջներին, այլապէս մրցման օրէնքով աւելի անհամապատասխանը, ազգայինը, պէտք է տեղի տայ այդ պահանջներին աւելի համապատասխան օտարին:

Իսկ նրանում է, որ պահանջ անողները մեծ մասամբ չեն էլ ուզում մտնել դանադան «արդարացուցիչ հանգամանքների» քննութեան մէջ. նրանց ինչ, թէ իրանց պահանջներին

համապատասխանող հայոց թերթ կամ ամսագիր ունենալու համար պէտք են տասնապատիկ աւելի միջոցներ, քան տրւում է այժմ։ Նրանց ինչ, թէ աշխատանքի բաժանման և գրական աշխատանքի վարձատրութեան սկզբունքները պահանջում են գործադրութեան համար ոչ հնչիւն խօսքեր, այլ հնչիւն գրամ։ Նրանց ինչ, թէ թղթի, տպարանի, պոստի, սրբապրոդի, ցրուիչների, աշխատակիցների, խմբագրութեան համար բաւական ծախքեր են հարկաւոր, իսկ այդ ծախքերը ծածկելու համար բաւական չեն բաժանորդագրութիւնից ստացուած գումարները։ Այդ բոլոր մանր-րամասնութիւնների մէջ չի էլ ուղում մտնել պահանջ անողը նոյն պատճառով, ինչ պատճառով նա չի հետաքրքրւում, երբ գնում է խանութը և մի ապրանք առնում, նրան շատ հարկաւոր է, թէ Ֆարքիկանտը ինչպէս է պատրաստել այդ ապրանքը, ինչքան է նստել նրա վրայ և այլն։ Այդ արդէն ապրանք պատրաստողի գործն է, ինչ ուղում է անի, միայն թէ տայ արժան և լաւ բան, ապա թէ ոչ—կը գնի ուրիշից։ Չը պէտք է երբէք բարոյախօսական մշուշով փակել աչքերը և մարդկանց վրայ նայել չնաշխարհիկ իդէալականութեամբ։ Գրականութեան նկատմամբ նոյն պրոգաիկ չափերն են գործ գնում մարդիկ, ինչ որ սովոր են բանեցնել առօրեայ կեանքում... Եւ միամբ-տութիւն է կարծել, որ քարոզելով, պախարակելով կարելի է փոխել այդ վերաբերմունքը։ Անշուշտ կը գտնուեն մի երկու-երեք տաննեակ անհատներ, որոնք «ազգասիրաբար» կ'աղդուեն այդ խրատներից, սակայն զբաղով շօշափելի փոփոխութիւն իրերի դրութեան մէջ չի կարող առաջանալ։ Չի կարելի միւս կողմից էլ մամուլի նման մի լուրջ ձեռնարկութիւն հիմնել այս կամ այն բուրժուայի կամ բանթիէի գրական աշխատակ-ցութեան վրայ։ Մամուլի համար հարկաւոր են յատուկ մշակներ։ Անցել է այն ժամանակը, երբ հայ գրողը մեծ մասամբ և հայոց դպրոցական գործիչ էր. դէթ ուսուցչութիւնը վարձատրում էր նրան, ուստի գրական հոնորարի խնդիրը այնքան մեծ դեր չէր կատարում նրա գոյութեան կեանքում։ Այժմ փոխուել են հան-գամանքները։ Գոյութիւն ունեցող 4 թեմական դպրոցներում և էջմ. ճեմարանում ուսուցիչները իրանց ժամանակը համարեա ամբողջապէս նուիրել են իրանց ծանր զբաղմունքներին. աշ-խատանքի բաժանման սկզբունքը գործադրուել է այդ ասպարի-ղում, աւելի ժամադիտացնելով ոյժերը։ Եւ վերջապէս չի կա-րելի պահանջել, որ ամեն մի ուսուցիչ լինի միաժամանակ և գրականագէտ, իսկ մանաւանդ ժուրնալիստ, հրապարակախօս, վիպասան։

Այդպէս ահա ինքը կեանքը նոր պայմաններ է առաջ բե-

րել մեր գրականութեան շոյութեան համար: Այդ պայմանները պահանջում են, որ իրանց ներքին արժանաւորութիւններով մըրցման մէջ ղիմացկուն օրգաններ ունենանք, իսկ այդ պահանջներին գոհացում տալու համար պէտք է ունենալ բաւականաչափ գրական մշակիներ, որոնք տոտջ կը զան միայն այն ժամանակ, երբ զրանց հալալ աշխատանքը կը վարձատրուի: Իսկ այդ էլ կ'իրագործուի, երբ մեր պարբերական հրատարակութիւնների նիւթական կողմը չափ աւելի ապահով կը լինի, քան ներկայումս:

Ճիշտ է, կան եղակի դէպքեր, երբ այս կամ այն գրողին օժանդակութիւն են տալիս, սակայն միթէ այդ ձևի մեկնաստութիւնը կամ բարեգործութիւնը գրողի ինքնասիրութիւնը չօգտւող մի պալլիստիւն է: Եղել են մեղանում և գրական ֆոնդ կազմելու գրոյցներ, անկերպարան տենչանքներ, սակայն կեանքը կանգ չի առնում և սպասում, որ այդ գրոյցները վերջանան և խօսքի տեղ գործ գուրս դայ: Ուստի գրական գործիչների գրութիւնը ապահովելու աւելի դիւրին իրագործելի միջոցը այնուամենայնիւ մնում է՝ գոյութիւն ունեցող օրգաններից հոնորար ստանալու հնարաւորութիւնը: Ասածներիցս դժուար է եղբակացնել, որ գրական գործիչների և մամուլի գրութիւնը բարեօքելու հարցը վերջ ի վերջոյ ընկնում է իրանց՝ գրականագէտների ջանքերին և նախաձեռնութեան: Ընթերցողը շարունակելու է պահանջներ անել, նրա դործը չէ, թէ ինչ է հարկաւոր բովանդակութեամբ ճսխ թերթ կամ հանդէս հրատարակելու համար: Մնում է, որ իրանք հրատարակիչները հոգան և միջոցներ գտնեն գործը լատանելու համար պահանջուող միսիմալ բիւդժէի պակասը ծածկելու, և քանի որ անհատական ջանքերով անկարելի է այդ իրագործել, պէտք է կազմակերպել գրական ընկերակցութիւններ...

Կար ժամանակ, երբ մեր գալրոցական կեանքում ևս «ազգասիրութեան» և «անձնազոհութեան» վրայ էր հիմնուած ուսուցչութիւնը, թէև մեծ մասամբ այդ ազգասիրութիւնըն էլ, անձնազոհութիւնն էլ առժամանակեայ էր, մինչև որ լաւագոյն պաշտօն չէր ճարում այդ առաքինութիւններ կրողը... Կար ժամանակ, երբ մեր գալրոցների ղեկավարները՝ փոխարէն անհրաժեշտ ծախքերի համար միջոցներ գտնելու, իրանց բոլոր յոյսը դրել էին կամ գալրոցական գործիչների աշխատանքը հարստահարելու վրայ կամ անպէտք և անպատրաստ ուժերի էփանագին ծառայութեան մէջ: Փորձը ցոյց տուաւ, որ այդ եղանակով բան չի դուրս գալիս: Եւ այժմ նոյն իսկ Շուշու և Երևանի թեմական գալրոցները չեն բաւականանում պաշ-

տօնաթող տիտուլարների սովետներին կամ իրանց ազատ ժամանակը դպրոցին նուիրող փաստաբանների ծառայութեամբ... քիւղժէն եռապատկուել է, հրաւիրւում են համալսարաններ կամ ճեմարանաւարտներ:

Այժմ մեր թեմական դպրոցների տնտեսական կողմը անհամեմատ աւելի փայլուն է, քան 10—15 տարի առաջ: Առաջադիմութիւնը այդ մասում հասել է այնտեղ, որ Նոր-Նախիջևանի թեմական դպրոցի հոգաբարձութիւնը իր վերջին ժողովներից մէկում սահմանել է հետեւեալ կանոնները*):

«Աւելացնել ուսուցիչներին ուժիկները այսպէս, ծառայութեան առաջին հինգ տարուց յետոյ՝ ուժիկները բարձրացնել 100%, երկրորդ հինգամեակը լրանալուց յետոյ՝ 200% (պարզ տոկոսով), վերջապէս, դարձեալ հինգ տարի անցնելուց յետոյ՝ 300%, որը և սահման կը լինի»:

Այն, ինչ անում է մի թեմական դպրոց, կարող են իրաւորժեւ և միւսները, մանաւանդ Ներսիսեան դպրոցը, որի աւրած ծախքը 1902 թ. ընթացքում եղել է 77,201 ռուբլի**): Այդ պատկառելի գումարից դպրոցի ծառայողներին ուժիկ է տրուել 40,092 ռ.: Նիւթական այդ նպաստաւոր պայմանները միջոց են տալիս ուսուցչական խմբի մեծ մասը կազմել բարձրագոյն կրթութիւն ստացած անձերից. 22 ուսուցիչներից 11-ը համալսարանական են, եթէ այդ անունը տանք և արտասահմանեան համալսարաններում եղած 3 հոգուն:

Առաջադիմութեան ոչ մի քայլ չի նկատուում մեր թեմական դպրոցների կեանքի մի այլ կողմում. ցաւելով պէսք է նրկատել, որ օրինականութիւնը անզօր է յաղթել այն կամայականութիւնը, որ ճիճուի նման մաշում է այդ դպրոցների ներքինը:

Չը նայած կէս դար գոյութիւն ունեցող որոշ կանոնադրութեան, որով ժողովրդական ներկայացուցիչներին յայտնի իրաւունքներ են տրուած մեր թեմական դպրոցներում՝ նման այն ինքնավարութեան, որ գործադրւում է պետութեան մէջ օրէցօր աճող կոմիւնրոց դպրոցներում,— էջմիածինը դեռ շարունակում է իր քմահաճոյքը կանոն յայտարարել: Միաժամանակ գոյութիւն ունի ուրեմն և՛ կանոնադրութիւն, և՛ կամայականութիւն. որը ձեռնտու է, այն էլ գործադրւում է...

Դեռ ես կարելի էր չը հաշտուելով հանդերձ մի կերպ բացատրել, երբ էջմիածնի վարիչներին անդուբեկան այս կամ այն անձին հեռացնում էին ասպարիզից միջնադարեան հաւա-

*) «Մշակ», № 127.

**) Տես ներս. հ. հոգ. դպ. 1901—1902 ուս. տ. Տեղեկագիրը:

տաքննութիւն սարքելով կամ յանկարծ որեւէ սկզբունք մէջտեղ բերելով, զիցուք թեմական դպրոցի տեսչից անպատճառ փա-
րաջա պահանջելով: Սակայն այն, ինչ կատարուեց այս տարի
Ներսիսեան դպրոցում—դա մի նոր երևոյթ էր. պ. Ս. Բա-
լաղեանը ութ տարի բարեխղճութեամբ ծառայել էր դպրո-
ցում՝ տեղիք չը տալով նոյն իսկ հակակրօնականութեան պէս
հեշտ մեղադրանք հնարելու իր դէմ. նա կարողացել էր համե-
րաշխութիւն պահպանել նոյն իսկ այնպիսի խայտաբղետ խմբի
մէջ, ինչպիսին է Ներսիսեան դպրոցինը. նրանից զոհ է հո-
գաբարձութիւնը. վերջապէս ոչ մի զգոհութիւն չի յայտնում
և հողհոր իշխանութիւնը, աշխարհականի կամ հոգեւորականի
հարց էլ չի յարուցանում, և այնուամենայնիւ պ. Ս. Բալաղեանը
ստիպւում է լինում հրաժարուել, որովհետեւ այլապէս միևնոյն
է, պէտք է կարգացուէր առաջնորդի ստացած կոնդակը... Ոչ մի
պատճառաբանութիւն— և այդպիսի ապերախտութիւն, վերաւո-
րանք, ինչի՞ նման է այդ: Այդպիսի կամայական բեմիմը եր-
բէք չի կարող առողջ միջնորդատ տեսողձել մեր դպրոց-
ներում. նա ընդունակ կը լինի միայն բազմացնել
անսկզբունք, համակերպուող, ձեռապաշտ կարիքրիստոների
և ոչ գործին հողով նուիրուած աղնիւ գործիչների թիւը
մեր դպրոցական կեանքում: Եւ զարմանալին այն է, որ
էջմիածնում հէնց այն ժամանակ է հաստատուում Ասրպատա-
կանի թեմի համար մի ժողովրդական կանոնադրութիւն, երբ
միւս կողմից կատարուում են Ներսիսեան դպրոցում տեղի ունե-
ցած իրողութեան նման դէպքեր... Ակամայ հարց է ծագում, որ-
քան հաստատուն են և՛ այն կանոնները, որ մշակուած են Ա-
տրպատականի համար...

Լ. Ս.

Յունիսի 20

«Бак. Извѣст.» լրագրին հաղորդում են Շուշուց, որ այդ
քաղաքի հաշտարար դատաւորը քննելով Շուշու թեմական
դպրոցի ուսուցիչ Արովեանի գործը, դատապարտել է նրան մի
ամսուայ բանտարկութեան՝ նոյն ուսումնարանի նախկին աշա-
կերտներից մէկին ծեծելու համար:

Ժողովրդական լուսաւորութեան միոնիստրութիւնը թոյլ է
տուել հիմնելու ժողովրդական ձրի չրջիկ գրադարաններ: Առա-
ջին անգամ այսպիսի գրադարան մտադիր է հիմնել Պետերբուր-
գի զուառի կալուածատէրերից մէկը: Շրջիկ գրադարանները

դեռեղուած կը լինեն այնպիսի պահարաններում, որոնց կարելի է հեշտութեամբ քանգել տեղափոխելու՝ համար և ասպանորից վերակազմել: Թուշիկ դրադարան պահողներն իրաւունք կ'ունենան վաճառելու պոստային, գրուագաւոր և խնայողական նամակագրողներ այն պէտքով, որոնցով վաճառում են նրանք պետական հիմնարկութիւնների մէջ, և գրութեան համար կարելու պարագաներ:

Ժողովրդական լուսաւորութեան գիտնական կոմիտեոր մօտ ժամանակներում կարծիք յայտնեց, թէ առետրական ուսումնարաններում աջողութեամբ դասընթացն աւարտած աշակերտները կարող են տարրական ուսումնարանի ուսուցչի վրկայական ստանալ առանց քննութեան, ինչպէս ստանում են այդ վրկայականը միւս միջնակարգ դպրոցներում աւարտողները, այն պայմանով սակայն, որ առետրական ուսումնարանում աւարտողները փորձնական դաս տան վրկայականը ստանալիս:

Համաձայն նորերում հրատարակուած Բարձրագոյն հրամանի՝ այս տարուայ յուլիսի 1-ից Բաթումի և Արդուինի գաւառներից կազմում է Բաթումի առանձին չրջան, որ ենթարկուած կը լինի Բաթումի գննութրական նահանգապետի իշխանութեան: Զննութրական նահանգապետի բնակութեան մշտական տեղը կը լինի Բաթում քաղաքը: Բացի Բաթումի և Արդուինի գաւառներից՝ Քութայիսի նահանգի կազմից նոյն յուլիսի 1-ից բաժանուած է նաեւ Սուխումի գաւառը, որ կ'ենթարկուի Կովկասեան կառավարչապետի սնմիջական իշխանութեան: Բաթումի չրջանում և Սուխումի գաւառում կը լինի գննութրական-ժողովրդական կառավարութիւն: Քութայիսի նահանգում, որի տարածութիւնը կրճատուած է կիսով չափ, կը մտցնուի քաղաքացիական վարչութիւն:

«Օրէնսդրութիւնների ժողովածուի» մէջ հրատարակուած է, որ մարմնական պատժի ամենածանր տեսակները, ինչպէս են՝ դալար ճիւղերով և մորակներով ձեծելը, ինչպէս նաեւ գըլխի մազերն ածիլելն ու շղթայով սրեկ բանի գամելը, որոնց ենթարկում էին տաժանակիր աշխատանքների դատաւարատուածներն և արքայորոգները, վերացում են այսուհետեւ:

Անցեալ տարուայ նոյեմբեր ամսին Կաղզուանում տեղի ու-

նեղաւ հետեւեալ ոճիրը:—Ջամփուղեանի աղահանքերի կառավարիչ ինժեներ-տնտեսող Խոյեցեանի կարգադրութեամբ բանուորներէի մէկը, որի վրայ կոսկած կար, թէ նա զոգացել է մի արկղ 450 բուբուլ, բանտարկուեց աղահանքում, որտեղ նրան քաղցած պահեցին երեք օր, որից յետոյ նա գտնուեց կախուած: Այս գործը քննուեց Կարսում, Նրեանի նահանգական դատարանի նիստում յունիսի 14-ին: Դատի էին ենթարկուած ինժեներ-տնտեսող Վաղարշակ Խոյեցեան, Ջամփուղեանի կառավարիչ Խաչատուր Մելիք-Սարգսեան, գործակատար Ներսէս Աստուածատրեան և աղահանքի պահապաններ Բայրամ Ալլահ-Գուլի օղլի և Դստտ Մահմէդ-Ալի օղլի: Մեղադրական ակտի մէջ ասուած էր, որ վերոյիշեալ անձինք կոսկածելով բանուոր Մելքոնեանի վրայ որպէս զօղի՝ բռնի կերպով զրկեցին նրան ազատութիւնից՝ փակելով խոնաւ և մութ աղահորում, հասցրին ներան բռնութեամբ զործիքով բազմաթիւ հարուածներ, որոնցից նրա մարմնի վրայ հետքեր մնացին, կապեցին ձեռքերը, և պարանոցը մի բարակ թուղ գցելով՝ կապեցին այդ թուղը մի այլ հաստ թուղի հետ և թողեցին այդ դրութեան մէջ քաղցած, առանց որեւէ հսկողութեան, որի հետեանքն եղաւ Մելքոնեանի մահը: Քրննելով այս գործը՝ նահանգական դատարանը մեղաւոր ճանաչեց Խոյեցեանին, Մելիք-Սարգսեանին, Ալլահ-Գուլի-օղլուն և Մահմէդ-Ալի-օղլուն, որոնցից առաջինին դատապարտեց 6 տարուայ, իսկ երկրորդին 4 տարուայ տաժանակիր աշխատանքների, իսկ վերջին երկուսին 5 տարուայ բանտարկութեան:

Թիֆլիսի քաղաքային սանիտարական-բժշկական տեսուչը երեքշաբթի, յունիսի 17-ին՝ ներկայացրեց ուպրավային մի ղեկուցում այն հիւանդանոցի մասին, որ պէտք է հիմնուի Արամեանցի նուիրած դումարով: Ընթերցողներին արդէն յայտնի է, որ այդ հարցով հետաքրքրուողներից ոմանք ցանկանում են բացուելիք հիւանդանոցը յատկացնել հոգեկան հիւանդների բժշկութեան, իսկ միւսները—ներքին հիւանդութիւններ ունեցողների բժշկութեան: Քաղաքային սանիտարական-բժշկական խորհուրդը վերոյիշեալ ղեկուցման մէջ գերադասութիւն է տալիս վերջինին: Թէ որքան մեծ է Թիֆլիսում ներքին հիւանդութիւնների մի նոր հիւանդանոց ունենալու կարիքը, երևում է այն թւերից, որ Միքայէլեան հիւանդանոցը առաջ է բերում իր տարեկան հաշւի մէջ:—1898 թւականին այդ հիւանդանոցում բժշկուել են 3,013 հոգի, և մերժում են ստացել նոյն տարուայ ընթացքում 2,875 հոգի: 1899 թւին բժշկուել են

3,203 հոգի, մերժում են ստացել 2,679 հոգի: 1900 թվականին բժշկուհի են 3,262 հոգի, մերժում են ստացել 3,745 հոգի: 1901 թվին բժշկուհի են 3,342, մերժում են ստացել 5,732 հոգի: 1902 թվականին բժշկուհի են 3,202, մերժում են ստացել 5,901 հոգի: Այս թվերը վերաբերում են բացառապես ներքին և խիբուր-գիական հիւանդութիւն ունեցողներին: Այս թվերի մէջ չեն մտած նրանք, որոնք զիմել են հիւանդանոցին բացառիկ դէպքերում, իսկ նրանց թիւը տարեկան հասնում է մօտ 800-ի: Սանիտարական-բժշկական խորհրդի կարծիքով Արամեանի նուիրած գումարով պէտք է հիմնուի անշուշտ ներքին և ոչ այլ հիւանդութիւնների բժշկական հիւանդանոց, որովհետեւ Թիֆլիսի բնակիչներին ամենից աւելի հարկաւորը այդ տեսակ հիւանդանոցն է:

Երկուշաբթի, յունիսի երկուսին՝ տեղի ունեցաւ 1872 թ. կանոնադրութեան համաձայն հիմնուած քաղաքային ուսումնարանների ուսուցիչների համաժողովի բացումը, որին ներկայ էին Վրաստանի էկզարխ Ալեքսիյ արքեպիսկոպոսը, կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձու Զավագակի, Ալեքսանդրեան ուսուցչական ինստիտուտի վերատեսուչը և ժողովրդական ուսումնարանների զիրեկտորներն ու տեսուչները: Բացման սկզբում տեղի ունեցած մաղթանքից յետոյ՝ Թիֆլիսի ուսուցչական ինստիտուտի կրօնուսոյցը արտասանեց մի ճառ, որի մէջ մատնացոյց արաւ համաժողովի կատարելիք աշխատանքի կարեւորութեան վրայ: Ապա օրհնուեց ուսումնարանական պիտոյքների ցուցահանգէսը, որ կազմուած է համաժողովի առիթով:

Ժողովրդական լուսաւորութեան միջնատրութեան մէջ կազմուած գիտնական կոմիտեւոր, որ քննում է միջնակարգ դպրոցները բեֆորմի ենթարկելու հարցը, ի միջի այլոց քննեց նաև մասնաւոր ուսումնարանների հարցը և կարծիք յայտնեց, որ պէտք է այս ուսումնարաններից նրանց, որոնք չ'ունեն պետական ուսումնարանների իրաւունքներ, ազատութիւն տալ կազմելու ուսուցման ծրագիրն այնպէս, որպէս հիմնագիրները յարմար կը գտնեն:

Երեքշաբթի, յունիսի 10-ին՝ կայացաւ հայ-վրացական արձանագրութիւնների հրատարակութեան մասնաժողովի առաջին նիստը պրոֆեսսոր Մարրի նախագահութեամբ:

Նիստին ներկայ էին թէ զանազան տեղերից եկած և թէ Թիֆլիսում գտնուող անձինք, որոնք հետաքրքրուում են արձանադրութիւնների գիտնական ուսումնասիրութեան խնդրով:

Այս նիստից առաջ մայիսի 23-ին՝ տեղի էր ունեցել նախապատրաստական ժողով: Այդ առաջին ժողովը ուրուադծել էր մասնաժողովի գործունէութեան ծրագիրը և նշանակել էր այն գործերը, որոնք պէտք է ղլխաւոր հոգածութեան առարկայ դառնան մասնաժողովի համար: Նախապատրաստական ժողովը որոշել էր, որ իր պծագրած ծրագիրն առաջարկուի նորից քննութեան աւելի մեծ ժողովում, յունիսի 10-ին, այսինքն՝ ներկայ ժողովում:

Նախ քան այդ ծրագիրը քննելը՝ նախագահ Մարրն անհրաժեշտ համարեց իր կողմից կարդալ մի ամիսի ղեկուցում մասնաժողով կազմակերպելու շարժառիթների և նրա նշանակութեան մասին: Ահա Մարրի այդ ղեկուցումը.

«Սրանից տասը տարի առաջ, երբ ես Կոյսերական Հնագիտական Մասնաժողովի յանձնարարութեամբ առաջին ճանապարհորդութիւններս էի կատարում Ռուսա-Հայաստանում, իմ մէջ միաք ծագեց հրատարակել Կովկասում սփռուած արձանագրութիւնները: Այժմ արդէն ուշ է գատողութիւններ անել արձանագրութիւնների ուսումնասիրութեան նուիրուած ղիտութեան օգտի և նշանակութեան մասին, երբ նա իր արագ զարգացումով կարող եղաւ իրօք նոր աշխարհներ բանալ նոյն իսկ բանասիրութեան աւելի մատաղ ճիւղի, այսինքն՝ արեւելագիտութեան մէջ, իսկ մատենագրական գրականութեան ղոյութեան շնորհիւ հնութիւնների ուսումնասիրութեան մէջ մրացրեց մի ամենաթմանգաղին և արդիւնաւոր կէտ (մոմենտ), այն է՝ հետաքրքրութիւն հնութեան իրականութեամբ և նրանց հասկացողութիւնը: Այս տեսակէտից արձանագրական նիւթերը կարեւոր են մանաւանդ հայ-վրացական բանասիրութեան չրջանում: Բուն Հայաստանի համար արձանագրութիւնները սովորաբար կազմում են միակ անկասկածելի (ղոյումնատային) աղբիւրը՝ հնագոյն գտրերի պատմութեան համար. Հայաստանում չը պահպանուեցին եկեղեցական և աւատական կեանքին վերաբերեալ այն ակտերը, որոնք այնպիսի առատութեամբ գտնուում են վրաց պատմութիւնն ուսումնասիրողի ձեռքի տակ: Եւ այսուամենայնիւ արձանագրական նիւթերը հաւասարապէս կարեւոր են թէ՛ Վրաստանի և թէ՛ Հայաստանի պատմութիւնը գրողների համար: Վրաստանի և Հայաստանի անցեալը այնքան ինքնատիւ է եղել, որ մեր այժմեան սովորական, ինչպէս կենսական, նոյնպէս և տեսական հասկացողութիւնները, որոնք

նախ և առաջ մշակուել են եւրոպական նիւթերի վրայ և սըրանց հետ սերտ շաղկապուած տեսակէտով, ընդհանրապէս միայն խանդարում են հասկանալ այս ինքնատիպ անցեալը իր իրականութեան մէջ: Իսկ ազգային աւանդական հասկացողութիւնները, թէ հայկականը և թէ վրացականը—այլ ևս նորութիւն չէ ոչ ոքի համար—ոչ միայն հիմնուոր չեն, այլ և շատ հեռու են իրական անցեալին համապատասխան լինելուց—նըրանք աւելի ստոր են անցեալից: Պատմագիրները ամենաքիչ տեղեկութիւններ հաղորդում են իրականութեան մասին: Եւ յաճախ միմիայն արձանագրութիւնների մէջ ենք գտնում ամենաթանգազին, երբեմն նոյնիսկ միակ ցուցումներ Հայաստանի և Վրաստանի հին կեանքի իրականութեան մասին: Երբեմն հին իրական կեանքին վերաբերեալ մի փոքրիկ գիծ, նոյն իսկ մի բառ, մի տերմին, որ փորագրուած է քարի վրայ փորագրիչի ձեռքով, սլացածառ լոյս են ախուռ կենսական յարաբերութիւնների մի ամբողջ աշխարհի վրայ, որ բոլորովին լռութեան է ժառնուած միւս ազգիւրների մէջ, և միջոց են տալիս մի ամբողջ դարաշրջան հասկանալու համար: Ես հարեանցի կը յիշեմ այն խոշոր նշանակութիւնը, որ արձանագրութիւններն ունեն պատմական աշխարհագրութեան, լեզուագիտութեան, յատկապէս բարբառագիտութեան, ժամանակագրութեան, տոհմագրութեան, անուանագիտութեան և ուրիշ ուսումների վերաբերմամբ, որպէսզի պարզ լինի, որ հայկական ու վրացական արձանագրութիւնների մշակումը հաւասարապէս պէտք է հետաքրքրէ հայ-վրացական բանասիրութեան ներկայացուցիչներին, ինչ մասնագիտութեան էլ որ նրանք պատկանեն, այսինքն թէ պատմաբանները, թէ լեզուաբանները և թէ նոյն իսկ գրականութեան պատմագիրները: Բացի սրանից՝ արձանագրական նիւթերի մշակումը անցեալաձգելի է, որովհետեւ նրանք աւելի ենթարկուած են կորուստի. նրանց թշնամի են ոչ միայն ժամանակը և վատ եղանակը, այլ և մարդը, որ բաւականութեամբ իր շինութիւնների վրայ գործ է դնում արձանագրութիւններ կրող տաշած քարերը:

Այսպէս թէ այնպէս՝ մեր այս արձանագրութիւնների նըշանակութիւնը վաղուց է ճանաչուած, նրանք մեծ քանակութեամբ և՛ հաւաքուած են, և՛ հրատարակուած, բայց խիստ անբաւարար կերպով: Ներկայ ժողովի առաջ, որ լաւ ծանօթ է թէ հայ և թէ վրացական արձանագրութիւնների արգէն գոյութիւն ունեցող հրատարակութիւնների յատկութիւններին, աւելորդ է խօսել նրանց պակասութիւնների մասին: Դրութիւնն այնպէս է, որ ոչ միայն հարկաւոր է լրացնել արգէն տպագը-

րուած նիւթերը, սյլի տեղն ու տեղը նրանց ստուգել: Այս կրկնակ տեսակի աշխատանքը հայկական արձանագրութիւնների վերաբերմամբ եւ կատարում էի վերոյիշեալ իմ ճանապարհորդութիւնների ժամանակ 1892—1893 թւականներին: Բայց ուրիշ աշխատանքներ վրայ հասան ու խանգարեցին: Միևնույն ժամանակ աստարէղ եկան նոր ոյժեր, որոնք բաւականաչափ պատրաստուած էին արձանագրական հետազոտութիւններ կատարելու: Աւելին ասեմ, եւ զիտէի, որ մի քանի անձեր արդէն ձեռնարկել են հաւաքել վրացական և հայկական արձանագրութիւնները և արդէն բաւականաչափ նիւթ են հաւաքել: Եւ ինձ թւաց, որ բնական եղքն այն կը լինի, որ կարող ոյժերի միահամուռ աշխատակցութեամբ զուգի բերուի այն, ինչ որ մի մարդու ոյժերից բարձր է: Ինձ ամենից նպատակայարմար երևաց կազմել հետաքրքրուած անձերի մի առանձին յանձնաժողով: Այս նպատակով եւ զիմեցի Կոյսերական Հնադիտական Մասնաժողովին, այն հաստատութեան, որ տեսչութիւն ունի պետութեան բոլոր հնութիւնների վրայ, յատուկ առաջարկութեամբ, որ պարունակում էր հայկական և վրացական արձանագրութիւնները հաւաքելու և հրատարակելու համառոտ ծրագիր, որպէսզի մասնաժողովը իր տեսչութեան տակ առնելով այս ձեռնարկութիւնը՝ ինձ պաշտօնական թոյլտուութիւն տայ հրաւիրել այս հարցին վերաբերեալ խորհրդակցութիւն, իսկ աշխատակից-անդամին՝ թոյլտուութեան թերթ (открытый листъ) աշխատանք կատարելու համար: Մասնաժողովը մեծ համակրութեամբ ընդունեց իմ առաջարկութիւնը:

(Այստեղ պրոֆ. Ն. Մարրը կարգաց Մասնաժողովի զրութիւնը նրա անունով՝ մայիսի 12-ից № 1221):

Անմիջապէս նամակներ ուղարկուեցին ապագայ աշխատակիցներին:

Թիֆլիսով անց կենալիս՝ եւ ցանկացայ իմանալ զեռ այստեղ գտնուող անդամների կարծիքը և եւ նկատեցի նրանց կողմից մեծ համակրանք դէպի այս գործը: Կարիք զգացուեց նախապատրաստական մի խորհրդակցութիւն ունենալ նոյն ժամանակ Թիֆլիսում գտնուող անդամների հետ միասին:

Խորհրդակցութիւնը կայացաւ մայիսի 23-ին Ե. Ս. Տակաչվիլի բնակարանում՝ նրա սիրալիր առաջարկութեամբ: Ներկայ էին Ալ. Հ. Քալանթար, Դաւ. Կարեջաշվիլի, Արիստ. Վաս. Կուտատելաձէ, Եր. Ալ. Լալայեան, Նիկ. Յ. Մարր, Եւֆ. Սեմ. Տակաչվիլի: Խորհրդակցութիւնը տեւեց երկու ժամ, յերեկուայ 12—2 ժամը: Այնտեղ քննութեան առնուեցին մասնաւոր և ընդհանուր հարցեր, նախ՝ հէնց արձանագրութիւններ

ըը հաւաքելու և հրատարակելու մասին և ապա՝ զործր աջողութեամբ առաջ տանելու նպատակով յանձնաժողով կազմակերպելու մասին: Խորհրդակցութիւնը հետեւեալ եզրակացութիւններին եկաւ.

1) Մասնաժողովի նպատակը պէտք է լինի տպագրել արձանագրութիւնների ժողովածուներից առանձին հայկականը Corpus inscriptionum armenicarum, առանձին վրացականը Corpus inscriptionum Georgicarum և առանձին երրորդ հատորով նրանց ռուսերէն թարգմանութիւնը: Կը հրատարակուեն նաև Հայաստանի և Վրաստանի մէջ գտնուող ուրիշ լեզուներով եղած արձանագրութիւնները մի հատորով: Ներկայումս վաղաժամ է խօսել այդ հրատարակութիւնների մանրամասնութիւնների մասին: Հայ-վրացական արձանագրութիւնների այդ ժողովածուները լոյս ընծայելը մասնաժողովի վերջնական նպատակն է:

2) Այդ ժողովածուները կազմելու համար պէտք է նախօրօք իբրև նիւթ հրատարակուեն հայ-վրացական արձանագրութիւնները առանձին պրակներով ոչ պարբերաբար, այլ երբ ժողովուրի բաւականաչափ նիւթ:

3) Արձանագրութիւնները՝ ցանկալի է, որ բոլորն էլ դուրս բերուեն լուսանկարով կամ էստամպաժով, և յամենայն դէպս այդ ձևը պարտաւորեցուցիչ է մինչև տասներորդ դարի արձանագրութիւնների համար (ժողովը բարձր համարեց մեծացնել չրջանը մինչև XIV դարը):

4) Ցանկալի է, որ մասնաւոր նուիրատուութիւններ հանդէս գային աջակցելու մասնաժողովի ձեռնարկութեան:

5) Մասնաժողովի առաջին գործերը պէտք է լինեն սկսել կազմել արձանագրութիւնների պատճէնները լուսանկարով և էստամպաժով և զործին նպաստելու նպատակով կազմել ցուցակ այն գրական ցուցումների, որ գոյութիւն ունեն արդէն լոյս տեսած հրատարակութիւնների մէջ:

Այնուհետև Մարրը զեկուցեց մասնաժողովի կազմակերպութեան ծրագիրը:

(«Մշակ»)

Մայիսի 10-ին հրատարակուած է նոր օրէնք հրէական հողատիրութեան մասին, որով հրէաներին արգելուած է անշարժ կաջք ձեռք բերել քաղաքներից դուրս այն նահանգներում, որոնք ընդհանուր հրէական բնակչութեան չրջանի մէջ չեն մտնում:

Ռուսաստանի ազնականութիւնն ստանում է մի նոր անձնաչնորում — ազնականութեան խնդիրքի համաձայն՝ ազնական հասարակութիւնների միջոցներով ու պետական գանձարանի օժանդակութեամբ հիմնում են ազնական կառնետեան ուսումնարաններ: Իւրաքանչիւր ուսումնարանին գանձարանից տրւում է 150 հազար ռ. միանուագ շինութեան կառուցման և սկզբնական ծախքերի համար. բայց այդ՝ մշտապէս տրւում է այդ գործոցների պահպանութեան համար կազմուած ծախքերի $\frac{1}{2}$ — $\frac{3}{4}$:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Չեմքերենի նոր իմպերիալիստական ծրագիրը.—Անգլիայի ստեղծագործական ոգին.—Պարլամենտական շնորհաբանները Դեմոկրատիայում.—Հակամաշտակական ցույցեր Խորվաթիայում եւ հակա-աւստրիական ցույցեր Իսպանիայում.—Բուլղարիայի եւ Թիւրքիայի յարաբերութիւնները.—Սերբիական յեղափոխութիւնը.—Երկրաշարժը Թիւրքաց հայաստանում:

Հարաւային Աֆրիկայի պատերազմից յետոյ էլ Չեմքերենը շարունակում է գրաւել ոչ միայն Անգլիայի, այլ և ամբողջ քաղաքակիրթ աշխարհի ուշադրութիւնը իր նոր իմպերիալիստական ծրագրներով: Խրախուսուելով այն աջակցութիւնից, որ ցույց տուին անգլո-բուլղարական պատերազմի ժամանակ անգլիական անկախ դադութիւնները՝ իրանց յօժար կամքով ուղարկելով մայր երկրին թէ զօրք և թէ դրամ, այժմ,—երբ Հարաւային-Աֆրիկայում բրիտանական գերիշխանութեան վտանգը հետաքրքուած է երկու անկախ հանրապետութիւնների պարտութեամբ, Չեմքերենը մտածում է յարստի գարձնել դադութիւնների և մայր երկրի մէջ տաքացած առնչութիւնը՝ խաղաղ տնտեսական հողի վրայ զննելով նրան: Սակայն չը պէտք է մոռանալ, որ ինչքան և խոշոր լինի Չեմքերենի տաղանդը, Անգլիայի նման երկրում իշխանութիւն ունեցող անհատի ծրագրները անկարող են իրականանայ, եթէ հասարակական կարծիքը չը համոզուի այդ ծրագրների անհրաժեշտութեան և օգտակարութեան մէջ: Անգլիայում երկրի ղեկավարները, մինիստրները կարող են զանազան ծրագրներ կազմել, սակայն որպէսզի այդ տենչանքները օրէնքի ձև ստանան, պէտք է համոզել ազատ անգլիացիներին մեծամասնութիւնը, պէտք է ծրագիրը դիմանայ ամեախիտ քննադատութեան: Շատ էլ ցանկանայ Չեմքերենը, և իր համախոհները հաւատացած լինեն նոր սխտեմի անհրաժեշտութեան կամ օգ-

տակարութեան մէջ,— բաւական չէ զբանց կամբը, այլ պէտք է զբանց պատճառաբանութիւնները՝ այնքան զօրեղ լինեն, որ բըրիտանացիների մեծամասնութիւնը ևս նոյն եղբակացութեան գայ: Հետեւեալ, Չեմբերլենի պրոտեկցիոնական քաղաքականութիւնը եթէ ընդունուի, այդ նշանակում է, որ նրա բերած առարկութիւնները այնքան համոզեցուիչ չեն, որ թէ անգլիացիները և թէ կանադացիները, աւստրալիացիները, նոր-զելանդացիները և ամերիկացիները մեծամասնութիւնը համակիր դարձան նրա ծրարներին: Հակառակ դէպքում Չեմբերլենի առաջարկելիք բիլլերը նոյն հետեւեալը կ'ունենան, ինչ որ ունեցաւ գաղութական բիլլը, որ անխնայ քննադատութեան բովից անյնկեղով հիմնովին փոխութեայ:

Այդպէս ահա չը նայած որ Անգլիան երբեք չի ունեցել յօդուած առ յօդուած գրուած մի սահմանադրական կանոնադրութիւն, չը նայած որ նա միապետութիւն է և ոչ հանրապետութիւն, բայց և այնպէս ոչ մի սահմանադրական երկրում ազատութիւնը այնպէս չէ առահովուած, ինչպէս «Նենգ Սլըիոնի» հայրենիքում: Դարերի ընթացքում անգլիացին այնպէս է դատարարակուել ազատութեան միջնորդութեամբ, որ իւրաքանչիւրի սրտումն է գրուած սահմանադրութեան ոգին:

Այդ ոգին կամաց-կամաց տիրապետող է դառնում և Գերմանիայում, ուր Վիլհելմ կայսրի կողմից՝ իր կամքը օրէնք յատարարելու վստահաւոր փորձերը բուռն դժգոհութիւն յարուցին գերմանական ազգի մեծամասնութեան մէջ: Գերմանական կայսրի բեմիմի գէմ բողոքի արտայայտութիւն պէտք է համարել և վերջին պարլամենտական ընտրութիւնները: Ինչպէս հեռագիրները հաղորդեցին, 11½ միլիոն ընտրողներից 8 միլիոնը միայն մասնակցեց ձայնաւութեան, և այդ թւից 3 միլ. 87 հազարը ձայն տուին սոցիալ-դեմոկրատների կուսակցութեան: Ընտրութիւնների վերջնական արդիւնքը հետեւալն էր. կենտրոնը սաացաւ 99 տեղ՝ նախկին 101-ի փոխարէն, սոցիալիստները—82, նախկին 58-ի տեղ. պահպանողականները—52, ինչպէս առաջ. նացիոնալ-լիբերալները—50, փոխարէն 53-ի. ազատ պահպանողական կուսակցութիւնը—17, փոխարէն 20-ի. ազատ խորհող ժողովրդական կուսակցութիւնը—21, փոխարէն 28-ի. ազատ խորհող դաշնակցութիւնը—9, փոխարէն նախկին 15 տեղի. հարաւ-գերմանական ժողովրդական կուսակցութիւնը—5, փոխարէն 7-ի. լեհերը—17, փոխարէն 14-ի. հակասեմիտականները—9, փոխարէն 12-ի. էլզասցիները—7, փոխարէն 10-ի:

Այդպէս ուրեմն զժողո՞ տարրերը՝ սոցիալ-դեմոկրատները

և լեհացիները՝ սաստիկ ուժեղացան զերմանական բայխստագուս, և նոր հինգամեակի օրէնադրական ուղղութեան վրայ այդ հանգամանքը պէտք է որոշ ազդեցութիւն անի:

Դժգոհութիւնը տիրող բեմիմիջ նոյն իսկ արիւնալի ցոյցերով արտայայտուեց Ունգարիայի հետ կապուած Խորվաթիայում, ուր չը նայած սահմանադրութեամբ երաշխաւորուած որոշ ինքնավարական արտօնութիւններ, վարչական կամայականութիւնները միայն մաջառական չովինիզմի հետ՝ առօրինակ էր դնում խորվաթական ազգի իրաւունքները: Եւ նոյն այն կուսակալը կամ քա՛ն-ը, որ մի շարք բռնութիւններ գործեց Խորվաթիայում, այժմ, մինիստր-նախագահ Սելլի հրաժարականից յետոյ, դառել է Ունգարիայի մինիստր-նախագահը. բան Կուէն Գեղերվարի մաջառական ծայրայեղ չովինիզմը այդքան բարձրացրեց նրան կոչուտեանների աչքում...

Միևնոյն ժամանակ, երբ հակամաջառական ցոյցեր էին կատարում Խորվաթիայում, Աւստրիայի այն մասերում, ուր իտալական տարրն է տիրապետողը, տեղի էին ունենում հակաւստրիական ցոյցեր, սակայն այն տարբերութեամբ, որ սահմանի միւս կողմում, Իտալիայում, արծաղանք էր գտնում աւստրիական իտալացիների Abbasse l' Austria սպառնական կոչը: «Կորչի Աւստրիան» ազադակներով Իտալիայի զանազան քաղաքներում հրապարակով այրում էին դաշնակից պետութեան դրօշակները, — այնքան զայրացել էր իտալական ժողովուրդը — Աւստրիայում իր արիւնակիցների արդի դրութիւնը տեսնելով՝ մտաբերում էր իր մօտիկ անցեալը, երբ աւստրիական լուծի տակ էր հեծում իր հայրենիքը:

Հակաւստրիական ցոյցերը չը խանդարեցին, որ Իտալիան ևս պլատոնական համակրանք յայտնի Մակեդոնիային և Հայաստանին. Հռոմում, Միլանում և այլ քաղաքներում միտինգներ կազմակերպուեցին, ճառեր արտասանեցին, որոշումներ կայացրին... Սակայն այդ բոլորը գեղեցիկ լինելով հանդերձ՝ գործնական նշանակութիւն չ'ունեն. զիպլոմատիան չի ազդում այդ տեսակ բաներով... Դրան ապացոյց այն, որ Մակեդոնիայի դըրութիւնը ոչ միայն չի բարօքւում, այլ օրէցօր վտաթարանում է: Բուլղարիայում Դանելի մինիստրութիւնը փոխուեց, մինիստր նախագահ Բաջօ Պետրովը փորձեց Ելլիզ-Քետչիկ հետ անմիջական բանակցութիւններ սկսել՝ Մակեդոնիայի դրութիւնը բարեօքելու հարցում. Սոֆիայից Կ. — Պոլիս ուղարկուեց նախկին մինիստր Նաչեվիչը: Սուլթանը իբրև ճարպիկ արեւելեան դիպլոմատ՝ սիրալիր խոստումներով ճանապարհ զրեց բուլղարական կառավարութեան ներկայացուցչին և միաժա-

մանակ չարունակեց ուժեղացնել իր բանակը եւրոպական վիլայէթներում: Երկու կողմից լարուած դրութիւնը կարող է յանկարծակի պայթել, և փոքրիկ Բուլղարիան, որի աղգաբնակութեան ամբողջ թիւը հաւասար է 3,744,716 հոգու (այդ թւում 539,000 թիւք), պէտք է մեն-մենակ պատերազմ վարի, չը նա-յած որ Մակեդոնիայի հարցում շահադրժուած են և Յունաստանը, և Չերնոգորիան, և վերջապէս Սերբիան:

Այս վերջին երկիրը այժմ դրաւել է ամբողջ աշխարհի զարմացն ու հետաքրքրութիւնը: Մօտ 100 տարի է, որ այդ սլաւոնական փոքրիկ երկիրը ազատուել է օսմանեան լծից. սակայն հարազատ թագաւորների բռնակալական բեժիմը յաճախ է սերբին յիշեցրել թիւք փաշաների կամայականութիւնները: Երկու ընտանիքների՝ Կարադէորգիւիւհները և Օբրենովիչները՝ մեծ դեր են կատարել սերբ ազգի քաղաքական վերածնութեան գործում. սակայն կարծես ի տրիտուր այդ ծառայութեան՝ դըրանք պահանջում էին, որ սերբը ծախի դրանց եսական քմահաճօքներին այնքան զոհաբերութիւններով ձեռք բերած ազատութիւնը: Երկպառակութիւնները, դաւադրութիւնները, սպանութիւնները այդ երկու ընտանիքների մէջ՝ լքցնում էին թիւք-քական դաժան լուծից նոր ազատուած Սերբիայի պատմութեան էջերը, ջլատում այդ երկրագործ ժողովրդի ոյժերը, արգելք լի-նում նրա առաջադիմութեան: Ծայրայեղ քմահաճ լիտութեան հասած սերբիական արքունիքի արարքները զապաթնակէտին հասան, մանաւանդ Միլան Օբրենովիչի օրով, որի վատ յատկու-թիւնները ժառանգեց և նրա որդի Ալեքսանդրը: Ահա ինչպէս է նկարագրում զրա ստեղծած բեժիմը Գենչիչը, ներկայ յեղա-փոխութեան գլխաւոր կաղծակերպողներից մէկը, խօսակցու-թիւն ունենալով «Daily Telegraph» լրագրի թղթակցի հետ.

«Բացատրեցէք բրիտանական հասարակութեան, որ Ալեք-սանդը թագաւորի 13-ամեայ թագաւորութեան ընթացքում բո-լոր ազգերը հայհոյում էին Սերբիային նրա համար, որ նա են-թարկւում է մի դինաստիայի, որը իր յանցանքներով և անմը-տութիւններով անպատեկ իրան և կորստեան դուռը հասցրեց սկսութիւնը:

«Ալեքսանդրը ժառանգեց միայն իր հօր պակասութիւննե-րը՝ առանց նրա առաքինութիւնների: Նա սկսեց հիւրասիրու-թեան օրէնքները խախտել՝ ճաշի հրաւիրելով մինիստրներին և նրանց կալանաւորելով սեղանատան մէջ: Դրանից յետոյ նա այն աստիճան մոռացաւ բնական սէրը դէպի իր ծնողները, որ հրաման արձակեց դնդակահար անել իր հօրը, եթէ նա երեւայ Սերբիայի սահմաններում: Այդ հրամանը երիտասարդ թագա-

ւորը տուեց հէնց այն զօրքին, որը ստեղծուած էր նրա հօր ձեռքով: Մօրը հասցրեց նա այն բանին, որ նա չը կամեցաւ այլ ևս իր որդու դաւանակիցը լինել: Տառնեքեք տարիների ընթացքում այդ երիտասարդը ծաղրի առարկայ էր չինել երկիրը՝ խախտելով երգումը երգման ետևից, ժողովրդական իրաւունքները ոտի տակ տալով, արհամարհելով արդարադատութիւնը և մարդասիրութիւնը: Այդ տառնեքեք տարիների ընթացքում նա հինգ անգամ coup d'état կատարեց և փոխեց ²⁴ մինիստրութիւններ, կամայական կալանաւորութիւնների և մահուան պատիժների երկար շարքը պէսք է պսակուէր Սերբիայի ¹⁵⁰ լաւագոյն զաւակների սպանութեամբ, և զօրքի միջամտութիւնը միայն այդ արիւնհեղութեան առաջն առաւ: Այն ինչ եւրոպական ազգերը այժմ սարսափում են այն դործողութիւնից, որը քաղաքացիական պատերազմի և Սերբիայի կորստի առաջն առաւ: Բրիտանական հասարակութիւնը տեղեակ չէ ճշմարտութեան, այլապէս փոխանակ դատատապարտելու՝ կը չնորհաւորէր մեզ, որ վերականգնեցինք խաղաղութիւնը երկրի մէջ:

«Արտասահմանում չը վրասն սիրելիական այդ շարժման հողերանական պատմութիւնը: Ալեքսանդրի ամուսնութիւնը Դրագայի հետ վախճանի սկիզբն էր: Ես այն ժամանակ ներքին դործերի մինիստր էի և աղաչում էի թագաւորին դա՛ն չը բարձրացնել արատաւոր կնոջը, որը նախ քան նրա սիրուհի դառնալը՝ շատերի ձեռքումն է եղել: Սերբիական ժողովուրդը դիտէ, որ Լուսնովիցները ոչինչ ծառայութիւն չեն մատուցել հայրենիքին: Դրագայի պապը խոզավաճառ էր, նրա հայրը մեռաւ դժանոցում, մայրը յաճախ հարբած ընկած էր լինում փողոցներում: Ինքը Դրագան մի տարօրինակ խայտառակ անցեալ է ունեցել... Ես սկզբում համոզում էի թագաւորին պսակուել մի օտարազգի պրինցուհու հետ և վերջ ի վերջոյ ասացի. «Թագաւոր, պսակուեցէք գոնէ մի ազնիւ զեղջուկու հետ, ևս կը ծածկեմ ձեզ իմ մինիստրական պատասխանատւութեամբ, թէկուզ դա իմ կեանքի գնով լինէր»: Դուք դիտէք, թէ՛ դրա հետեւանքն ինչ եղաւ: Ես դատի ենթարկուեցի և դատապարտուեցի ութամեայ բանտարկութեան դաւաճանութեան համար: Ապա մինիստրութիւնը հրաժարական տուեց, և թագաւորը չը կարողացաւ կարգին ժառանգել զանել, որոնք մինիստրութիւն կազմէին: Երեք օր պալատական կառքերը իզուր պտտում էին՝ որոնելով մարդկանց՝ նոր մինիստրութիւն կազմելու համար: Յուսահատութեան մէջ թագաւորը վճռեց խորհուրդ հարցնել օֆիցերներից և եթէ հնարաւոր է, նրանց հաւանութիւնն ըստանալ: Նրանք հրաւիրուեցին պալատ առաւօտեան, բայց

նախընթաց օրը մեծեցին միաձայն բողոքել Դրագայի հետ ամուսնանալու դէմ և եթէ իրանց բողոքը անհետեանք մնայ, զրցել իրանց սրերը թագաւորի ոտների առաջ, հետանալ զօրքից: Այդ ժամանակամիջոցում Ալեքսանդրը կազմեց մինիստրութիւնը ստորին կարգի մարզկանցից, որոնք բոլորովին յայտնի չէին երկրին: Եւր օֆիցերները եկան պալատ, նա փոխանակ նրանց հետ խորհրդակցելու՝ առաջ, թէ լսել եմ, որ ձեր մէջ զժողոհներ կան և յիշեցնում եմ, որ ես զօրքի գլուխն եմ, որին դուք երգուել էք հնազանդուել: Եւ մէջքը շուռ տալով՝ դուրս գնաց ընդունարանից:

«Պատկազրութիւնը կատարուեց իր կարգով: Եթէ Դրագան համատ կին լինէր, եթէ բաւականանար նա կնոջ գերով,—չատ կարելի է Ալեքսանդրը այժմ ևս կենդանի կը լինէր: Բայց նա ցանկանում էր ոչ միայն թագուհի լինել, այլ և ապագայ թագաւորի մայր: Այդ նպատակով նա ուղեց զիւզական նորածին մանուկին իր արգանդի պտուղը ցոյց տալ: Ամեն բան սարքուած էր, և մտադրութիւնը համարեա թէ աջողուեց: Բայց նրա առաջին ամուսնու ընտանիքը զիտէր, որ նա հիւանդ է և չէ կարող մայր լինել: Հիւանդութեան փաստը հրապարակ ելաւ և յայտնի դարձաւ օտար ղեսպանութիւններին... Ռուսաստանից ուղարկուեց պրոֆեսսոր Մնեղիբեով քննելու համար թագուհու առողջական դրութիւնը: Դա նրա համար մեծ հարուած էր: Գաւառներում արդէն պատրաստուում էին ընծաներ նորածնին և տօնախմբութիւններ ի պատիւ նրա:

«Մենք զեռ յոյս ունէինք, որ թագաւորը կը հանգստացնէ ժողովուրդը, կը բաժանուի նրանից: Բայց Դրագան ամուր բռնած ունէր նրան իր ձեռքերում և ուղեց թագաժառանգ յայտարարել տալ իր եղբայրներից մէկին (Նիկողոս՝ Լուսնովիցին): Սակայն ոչ զինուորականները, ոչ էլ քաղաքացիները լսել անգամ չէին ուզում այդ բանի մասին:

«Վերջին երկու տարիները Ալեքսանդրը երբէք միայնակ չէր: Երբ նա ունկնդրութիւն էր տալիս, Դրագան կամ ինքն անձամբ ներկայ էր լինում այնտեղ, կամ հարկան սենեակումն էր լինում և այնպէս ուղարկում էր նրան տոմսակներ ցուցմունքներով, թէ ինչպէս պէտք է պահէ իրան: Նա համոզեց Ալեքսանդրին խախտել սահմանադրութիւնը, փոխել թագաժառանգութեան օրէնքը, մոցնել թաւուհու խնամակալութեան վերաբերեալ կէտը: Վերջին քայլը նրա Բուրիկոնն էր: Բոլորի աչքերը բացուեցին, բոլորն էլ յոյսները կորցրին»:

Բոլոր երկրները լրագրները զեռ շարունակում են նորա-

նոր մանրամասնութիւններ տպել Բելլորադի արքունիքում տեղի ունեցած արիւնալի անցքի մասին: Մեր տեսութեան մէջ մենք կը բաւականանանք արձանագրելով այն կողմերը, որոնք կարող են բնորոշել այժմեան դրութիւնը:

Մայիսի 29-ին կատարուած Սերբիայի պետական յեղափոխութեան մասին տպուած հէնց առաջին հեռագրի մէջ յայտնուած էր, որ զօրքը թաղաւոր է հրատարակել Պետար Կարադէորգիւնէին—այժմ բնաջինջ արուած Օբրենովիչների ձեռքով Սերբիայից քստորուած իշխան Ալեքսանդրի որդուն, որը այժմ մօտ 58 տարեկան է:

Նշանաւոր է այն հանգամանքը, որ զօրքը զինուորական յեղափոխութիւն կատարելով՝ չ'ուղեց իր ձեռքում պահել ժամանակաւոր կառավարութիւնը, այլ երկրի ղեկը յանձնեց յայտնի քաղաքական գործիչներից կազմուած մինիստրութեան: Արքունիքում կատարուած արիւնալի անցքից յետոյ դաւադիրները իսկոյն մուկետիկներ ուղարկեցին Բելլորադում եղած նշանաւոր քաղաքական գործիչների մօտ՝ հրաւիրելով նրանց սլալատ և խնդրելով ստանձնել ժամանակաւոր կառավարութեան լիազօրութիւնները: Այդ բանում դաւադիրները մեծ հեռատեսութիւն և տակաւ ցոյց տուին:

Նոր կառավարութեան դրոշմ անցաւ չափաւոր լիբերալ Աւվակուժովիչը, իբրև մինիստր-նախագահ: Մինիստրութեան միւս անդամներն էին. Կալիկիչ—արտաքին գործերի, Պրոտիչ—ներքին, Գենչիչ—առևտրի, գեներալ Ստանցկովիչ—զինուորական, Վրկովիչ—ֆինանսների, զնդապետ Մաչիչ—հանրային աշխատանքների, պրոֆեսոր Ստոկանովիչ—ժողովրդի լուսաւորութեան, Ժիվկովիչ—արդարադատութեան:

Նոր կառավարութիւնը նախ և առաջ վերականգնեց 1901 թ. սահմանադրութիւնը, որ մայիսի 25-ին ինքնազուլուս դադարեցրել էր Ալեքսանդր Օբրենովիչը, որպէսզի աւելի հեշտութեամբ կարողանայ հրադործել իր և Դրագայի քմահաճոյքները և թագաժառանգային հարցը: Նոր կառավարութիւնը նշանակեց յունիսի 2-ին ազգային ժողովի նիստ: Պէտք էր, որ ազգային ժողովն ընտրի նոր թագաւորին: Միևնոյն ժամանակ յայտնի էր դառել, որ Պետարը կ'ընդունի սերբիական թագը միայն այն ժամանակ, երբ միաձայն ընտրուի:

Մինիստրների նախապատրաստական ժողովներում պարզուեց, որ աւելի արմատականների ցանկութիւնն է՝ Սերբիան հանրապետութիւն հրատարակել: Սակայն Աւվակուժովիչը և աւելի չափաւոր տարրերը անխոհմտութիւն էին համարում այդ քայլը, որովհետև նախ՝ մեծ պետութիւնները կարող էին չ'ըն-

դուներդ կառավարութեան այդ ձեռք Սերբիայում, երկրորդ՝ դժբանքով չէր վերջանալ ղինաստիական հարցը, քանի որ Կարազէորգիեւելները միշտ պէտք է իրանց սերբիական դահի թեկնածուն համարէին: Պէտք էր ի նկատի ունենալ և այն, որ օֆիցերները որոշել էին ենթարկուել ազգային ժողովի որոշման այն դէպքում, եթէ նոր րեփիմի հիմքում անխուփփ մնայ թագաւորի իշխանութեան սկզբունքը: Արմատականները համակերպուեցին այն պայմանով, որ վերականգնուի 1888 թւականի սահմանադրութիւնը, որ աւելի է սահմանափակում թագաւորի իշխանութիւնը և ազատութեան աւելի մեծ երաշխաւորութիւններ է ներկայացնում: Այդ սահմանադրութիւնը գործում էր Սերբիայում մինչև 1894 թւականը: Նախապատրաստական խորհրդակցութիւններից յետոյ սենատոր Վելիմիրովիչի նախագահութեամբ դումարուեց յունիսի 2-ին սկուպչինան, ուր ներկայ էին բոլոր սենատորները և 119 պատգամաւորներ: Կէսօրին արդէն յայտնի դարձաւ, որ սկուպչինան միաձայն ընտրել է սերբիական թագաւոր Պետար Կարազէորգիեւելին: «Живео Краљ Петаръ Караджорджевичъ!» բացականչութիւններով ողջունեց այդ որոշումը Բելգրադի ազգաբնակչութիւնը, որ հաւաքուած էր պալատի շուրջը և սպասում էր իր ներկայացուցիչների պատմական նիստի արդիւնքին: Ժրնի ուղարկուեց յատուկ պատգամաւորութիւն նորընտր թագաւորի մօտ յունիսի 10-ին: 45 տարի հայրենիքից դուրս անցկացրած Պետար Կարազէորգիեւելը հանդիսաւոր մուտք գործեց Բելգրադ:

Եւրոպական դիպլոմատիան սկզբում տատանում էր, բայց շուտով հաշտուեց կատարուած եղելութեան հետ և յանցաւորներին պատժելը բարւոք համարեց «Սերբիայի ներքին գործ» ճանաչել: Յունիսի 12-ին սենատորների և պատգամաւորների ներկայութեամբ Պետար I-ինը բերաւ իր արքայական երգումը սահմանադրութեան և ապա հրատարակեց իր անդրանիկ հրովարտելը հետեւեալ բովանդակութեամբ.

«Իմ թանկագին ժողովրդին.

Նշանակելի է ինչպէս ինձ, նոյնպէս և երկրի համար այն մոմենտը, երբ ես առաջին անգամ իբրեւ թագաւոր ղիմում եմ սերբ ժողովրդին: Ազգային ներկայացուցչութիւնը միաձայն սերբիական թագաւոր ընտրեց ինձ համաձայն իր ազգի զպամունքների և ցանկութիւնների: Ընդունելով ընտրութիւնը՝ ես այսօր երգուեցի սահմանադրութեան ժողովրդի ներկայացուցչութեան առաջ իբրեւ Սերբիայի թագաւոր: Այժմ յայտարարում եմ իմ թանկազին ժողովրդին, որ այս օրուանից ևս ստանձնում եմ իմ արքայական իրաւունքները և պարտաւա-

նութիւնները: Ասածու կամքով և ժողովրդի ցանկութեամբ, որոնց շնորհիւ 100 տարի առաջ բնտրուած էր իմ պապ կարա-
 Գէսրզը սերբիական ժողովուրդը ղեկավարելու ազատութեան
 սրբազան կուում, և ես այժմ հասայ սերբիական թաղաւորու-
 թեան պահին, որի վրայ 16 տարի կառավարում էր իմ հայր
 իշխան Ալեքսանդրը իբրեւ ժողովրդի ընտրեալը: Սովոր լինելով
 խօսել և վարուել միշտ անկեղծօրէն ու բացարձակ և վճռած
 լինելով զործ պնել ջանքերս ժողովրդի բախտաւորութեան և
 բարօրութեան համար, առաջին պարտականութիւնս եմ համա-
 րում այս հանդիսաւոր և նշանակելի ղէպքում արտայայտել եմ
 աւետանակեղծ համոզումը, թէ վեհապետը պէտք է լինի
 իր ժողովրդի ազատութեան և առաջադիմութեան կրողը:
 Ես ուզում եմ լինել Սերբիայի իսկական սահմանադրական թա-
 ղաւորը: Ինձ համար սահմանադրական երաշխաւորումները,
 ժողովրդի ազատութիւնը և իրաւունքները, — այդ իւրաքան-
 չիւր կանոնաւոր, բախտաւոր զարգացման, ինչպէս և իւրաքան-
 չիւր ազգային առաջադիմութեան պետական կեանքի հիմունքը
 — կազմում են սրբութիւններ, որոնց ես միշտ կատարեալ կեր-
 պով պէտք է պաշտեմ, և ես պահանջում եմ ամեն մէկից, որ
 նա նոյնքան անխնայ պիտի սկզբունքներով առընդունուի՝ ես ան-
 ցեալը մոռացութեան եմ առիս և թողնում եմ պատմութեան՝
 իւրաքանչիւրին դատել նրա արժանիքների համեմատ: Հաւա-
 տարիմ մնալով սերբ ժողովրդի և նախնիքների աւանդութիւն-
 ներին, ես պէտք է արտաքին քաղաքականութեան մէջ ղեկա-
 վարուեմ սերբ ժողովրդի հինաւորից, ձգտումներով և միաժա-
 մանակ պահպանեմ բարեկամական յարաբերութիւններ, որ պա-
 հանջում է եւրոպական միութիւնը, մասնաւոր հարեան ազգե-
 րի հետ: Իմ քաջասիրտ զօրքը, որին ես յայտնում եմ արքայա-
 կան երախտադիտութիւնը առաջուայ վաստակների և հայրենիքի
 զոհաբերութիւնների համար, ես կը բարձրացնեմ սերբ ժողո-
 վրդի պատուարի աստիճանը: Այդ մտքերով և զգացումներով
 հանգերձ ես միանգամայն դիտակցում եմ իմ միապետա-
 կան պարտականութիւնների ծանրութիւնն ու ահազնութիւնը:
 Սակայն ես հաւատացած եմ ժողովրդի կողմից անկեղծ աջակ-
 ցութեան և յոյս ունեմ, որ Ասածու և իմ ժողովրդի օգ-
 նութեամբ կը տանեմ Սերբիան դէպի բարօրութիւն, առաջա-
 դիմութիւն և բախտաւոր յաջողութիւն»:

Ինչպէս տեսնում էք, ազատ Շվեյցարիայի միջնորդութեամբ
 չէ ազդել կարագէտրգիւիւի աշխարհահայեցողութեան վրայ...

Թիւրքաց Հայաստանի դրութիւնը օրէյօր վատթարանում է. ինչպէս յայտնում են արտասահմանեան թերթերը, ջարդեր են պատրաստում Սասունում և այլ տեղերում: Ոչ միայն վատթար ընկերացի, այլ և բնական արհաւիրքներից է քարուքանդ լինում թշուառ երկիրը: Սասունի երկրաչարժ է տեղի ունեցել էրզրում, Վան, Բիթլիս, Դիարբէքիւր, Բայազէթ, Թուրակ-Կալէ, Մանազկերտ և 14 չրջակայ գիւղերում: Շատ տեղ գետերը փոխել են իրանց ընթացքը: Փլատակների տակ թաղուած զոհերի թիւը ահագին է:

Լ. Ս.

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

«Вѣстникъ Европы», մայիս:—Այս համարում Խ. Խնսարով վերջացնում է իր հետաքրքրաշարժ յօդուածը *)—«Թիւրքիա եւ Մակեդոնիա»:

—«...2ի կարելի չը խոստովանել, ասում է նա, որ Թիւրքիայի վարչական օրէնսդրութիւնը համարձակ կարող է համեմատուել Եւրոպայի առաջաւոր երկրների օրէնսդրութեան հետ: Բայց Թիւրքիայում մի ահագին անդունդ կայ դրուած օրէնքի և երկրի կառավարութեան իրական կարգերի մէջ, որ և ցոյց է տալիս, թէ օսմանեան պետութիւնը որքան անընդունակ է ժամանակակից քաղաքակրթութեան պահանջներին: Չափազանցութիւն կը լինի ասել, թէ Թիւրքիայի բանորդութեանը ոչ մի օգուտ չեն բերել քրիստոնեաներին: Մինչև Գիւլստանէի հատի ձէրիֆը (1839 թ.) քրիստոնեաները՝ այսպէս ասած՝ օրինական գոյութիւն չ'ունէին: Նրանք պարապում էին վաճառականութեամբ կամ երկրագործութեամբ, անշարժ կայքեր էին ձեռք բերում, բայց ոչ անձամբ, այլ թիւրք բէկերի ու նշանաւոր անձանց մոտով: Առաջին անգամ Գիւլստանէի հատին ընդունեց քրիստոնեաների քաղաքացիական իրաւունքները՝ թոյլ տալով նրանց ամեն տեսակ ունեցուածք ձեռք բերելու և ապառ ու անկախ կերպով պա-

րագելու վաճառականութեամբ, երկրագործութեամբ և արհեստներով: Սակայն այդ իրաւունքներով օգտուեցին գլխաւորապէս քաղաքացի քրիստոնեաները...

Բայց քրիստոնեաներին տուած այդ մի քանի քաղաքացիական իրաւունքները աւելի թեթեւ քաշ ունէին ուժեղացած պետական ճշման համեմատութեամբ: Բանը նրանումն է, որ բարենորոգումների միջոցով, տեղական բռնակալներին ոչնչացնելու պատրուակով՝ Բ. Գուրը մեծ մասամբ աշխատում էր ուժեղացնել կենտրոնական իշխանութիւնը... Տեղական բռնակալները շարունակում էին իրանց գոյութիւնը, և նրանց կոնտինգենտը աւելի մեծանում էր կենտրոնական իշխանութեան մի քանի նորաստեղծ ներկայացուցիչներով: Բարենորոգումները բաց արին քրիստոնեաների առաջ տնտեսական զարգացման ճանապարհը, բայց դրա հետ միասին աւելի մեծ շափով ենթարկեցին պետական ճնշման:

Դրանից յետոյ հեղինակը կանգ է առնում Թիւրքական բարենորոգումների վրայ, վերլուծում է այն շարժառիթները, որոնք ծնունդ տուին հատի ձէրիֆին, ընդգծում է Բէշիգ փաշայի և նրանից յետոյ Միդհատ փաշայի եռանդուն գործունէութիւնը, համառօտակի յիշում է երիտասարդ Թիւրքերի ձգտումներն ու ջանքերը և այդ բոլորից յետոյ ընդոռնում է ներ-

*) Տես «Մուրճ» № 5.

կայ սուլթան Արզուլ Համիդի ներքին և արտաքին քաղաքականութիւնը: «Պէտք է խոստովանել, ասում է նա, որ սուլթան Մահմուդից յետոյ թիւրքիւն երբէք չէ ունեցել այնպիսի ճարպիկ իշխանաւոր, որպիսին Աբդուլ Համիդն է: Թիւրքիայի զործերին լաւ ծանօթ մարդիկ պնդում են, որ այժմեան սուլթանը իւր ձեռքն է հաւաքել կառավարութեան լսուր ճիւղերը... Այժմ նոյն իսկ ամենաշնչին հարցերի լուծման համար պէտք է դիմել սուլթանի կանցլիարին: Նրա անձնական քաղաքականութիւնը իրանց ազդեցութեամբ աւելի ուժեղ են, քան թէ մեծ վէզիրը: «Կարելի է պահել, գրում էր Կ.-Պոլսի ֆրանսիական դեսպան Կամբոնը 1895 թ., լի է արդէն փաստ է, որ սուլթանի արքունիքն է կառավարում երկրի գործերը և ոչ թէ Բ. Դուռը: Բայրը պաշտօնեաները այլևս կանոնաւոր չ'ունեն նախարարներից, այլ անմիջական յարաբերութեան մէջ են սուլթանի քարտուղարի հետ: Յաճախ պատահում է, որ նրանք շեն են թարկում նոյն իսկ մեծ վէզիրի կարգադրութիւններին»:

—Սուլթան Համիդի ներքին քաղաքականութիւնը, շարունակում է պ. Խնսարով, հիմնուած է հալածանքի վրայ: Հալածանք թէ երիտասարդ թիւրքերը և թէ քրիստոնեաների վերաբերմամբ:

Դեռ Բէշիդ փաշայի ժամանակ էլ «երիտասարդ թիւրքեր» կային. բայց նրանք միայն վաթսուներկան թուականների վերջերում՝ Աբդուլ Ազիզի թագաւորութեան ժամանակ ասպարէզ մտան իբրեւ առանձնացած մի խմբակ: 1868 թ. լոյս տեսաւ կուսակցութեան առաջին հրովարտակը, որ կազմել էր Վէլէդին փաշան՝ «Օսմանեան կայսրութեան համար անհրաժեշտ բարենորոգումները» վերնադրով: Երիտասարդ թիւրքերի գլխաւոր նպատակն էր սահմանափակել սուլթանի լիազօր իշխանութիւնը: «Մի անձնաւորութեան կառավարութիւնը, գրում է Վէլէդին փաշան իւր զբոյգիւում, վտանգաւոր է, որ-

քան բարձր յատկութիւններ էլ որ ունենայ միապետը»:

Եօթնամեակն թուականների սկզբում երիտասարդ թիւրքերի գլուխն անցաւ յայտնի Միդհատ փաշան: Թէև շատ ազատամիտ դադափառներ էին յայտնում երիտասարդ թիւրքերը, բայց և այնպէս իրանք էլ չէին կարողանում բաժանուել շատ ինտինկտներից—նախապաշարմունքներից, որ նրանց վերայ պատուաւստել էր թիւրքական միջավայրը: Այդ փաստը ամենից լաւ ստուգել կարելի է հէնց Միդհատ փաշայի վրայ: Դաւանդեան վիլայէթում (Բուլգարիա) նա շատ լաւ հետքեր է թողել իբրեւ վարչական անձնաւորութիւն: Բայց հէնց այդ միևնոյն անձնաւորութիւնը 1868 թ. ազատամբական շարժման ժամանակ ցոյց տուեց այնպիսի դաժանութիւն, որպիսին յատուկ է միայն սահական սադրապներին... Նա Բուլղաւում երեք օր շարունակ կախողանի վրայ պահեց ապստամբների զիտկները, որպէսզի դրանով սարսափ ազդէ ժողովրդի վրայ:

Ահա այդ Միդհատ փաշան իբրեւաւ կուսակցութեան գլուխն էր կանգնած: Նա աջակցեց Աբդուլ Ազիզի գահընկէց լինելուն, որպէսզի նրա յաջորդին հրատարակել տայ սահմանադրութիւն: Աբդուլ Համիդը սկզբում մի քանի զիջումներ արեց: Միդհատ փաշան մեծ վէզիր դարձաւ, և 1876 թ. դեկտեմբերին հրատարակուեց սահմանադրութիւնը: Բայց երկու ամիս չ'անցած՝ Համիդը ուշնայրեք սահմանադրութիւնը և նրա հեղինակին էլ արսորեց Փոքր Ասիա: Բայց եթէ նոյն իսկ Միդհատ փաշան մնար իբրեւ մեծ վէզիր և սահմանադրութիւնը շարունակէր իր գոյութիւնը, այնուամենայնիւ Թիւրքիայի քրիստոնեայ ազգաբնակչութեան համար դժուար թէ մի նոր դարազուլի սկսուէր: Ազատամիտ կազմը պահպանելու համար հարկաւոր էր մի որեւէ հասարակական ոյժ, որից զուրկ էին երիտասարդ թիւրքերը:

Թիւրքիայի բոլոր բարենորոգումները ապարդիւն են մնացել, որովհետև

նախ՝ պաշտօնեաներ չը կային նրանց իրազործելու համար, և երկրորդ՝ այդ բարենորոգումների իրազործումը միշտ մոլեռանդ ամբողջի բացարձակ թշնամութեանն էր հանդիպում: Այդ բանը խոստովանում են նոյն իսկ թիւրքասէր մարդիկ, ինչպէս օրինակ Վամբերին, որ քառասուն տարի շարունակ ուսումնասիրել է թիւրքիայի կեանքը: Սահմանադրական կեանքի բնորոշակ միակ տարրը քրիստոնեաներն էին, բայց զրանց էլ հեռու էին պահում, որպէս զի մեծ ազդեցութիւն ձեռք չը բերէին: Ենչ վերաբերում է քրիստոնեաներին, ասում էր Միդհատ փաշան, ներանց մասին յետոյ կը խօսենք:» «Քրիստոնեաները, ասում էր նորահաստատ պետական խորհրդի նախագահը, կարող են յոյս դնել միայն մեր կրօնական համբերատարութեան վրայ...» Եւ երիտասարդ թիւրքերը, ինչպէս երեւում է Մուրադ Բէյի խօսքերից, այժմ էլ չեն ընդունում, որ քրիստոնեաները մահմեդականներին հետ համահասարակ իրաւունքներ ունենան: Ներանք քրիստոնեաների վրայ նայում են իբրեւ հպատակների վրայ: Այդպիսի պայմաններում սահմանադրական թիւրքին կը դառնար պաշտօնեաների մի օլեղաբլիւս, որը կը շարունակէր նախկին շարագործութիւնները, միայն աւելի համարձակ ձեռով:

Բայց Արդուլ Համիդը ուզում էր անսահման իշխանութիւն, և՛ իհարկէ՝ այդպիսի բեժիմը նրա համար ցանկաւի չէր, ուստի նա խիստ հալածանք սկսեց երիտասարդ թիւրքերի դէմ...

Քրիստոնեաների վերաբերմամբ Արդուլ Համիդի քաղաքականութեան ներպատակն էր՝ ճնշել նրանց այն ինքնուրոյնութիւնը, որ ստացել էին Հատի չիւմայիւնից յետոյ: Արդելի լրագրերն ու ամսագրերը, փակել զսլոյցներն ու եկեղեցիները, միմեանց յետևից ոչնչացնել նրանց իրաւունքները—սահայն միջոցները, որոնցով ելդիզ Բէնսկը աշխատում էր խեղդել քրիստոնեաների բողոքի ձայնը և դրա անհրաժեշտ հետևանք կազմող քաղաքական միջամը-

տութիւնը եւրոպայի կողմից: «Դեռ 1882 թ., գրում է Մուրադ Բէյը *), հրատարակուեցին շրջաբերականներ հայերին հալածելու մասին: Պաշտօնեաները յատուկ հրահանգներ էին ստանում հայոց զբաղանակաւ և քաղաքական հրատարակութիւնները կը բնաւ տեղի, ժողովրդին հալածելու, և նոյն իսկ եթէ կարելի է՝ թալանելու մասին: Բայց այնպիսի զգուշութեամբ թալանել, որ զանգատների առիթ չըլինի: Իբրեւ լուսաւորութեան նախաբարութեան բարձր խորհրդի անդամ, ես վկայ էի լինում այն վրդովեցուցիչ վերաբերմունքին, որ ցոյց էին տալիս դէպի հայ մամուլը: Ես նոյն իսկ բողոքեցի լուսաւորութեան նախարարին, միևնոյն ժամանակ բողոքեցի նաև իմ ընկերներին՝ խորհրդում, բայց նախաբարը ինձ ցոյց տուեց ալքոնիքի շարքերականը, որ հրատարակուած էր սուլթանի հրամանով:»

Զը նայելով այդ բոլոր միջոցներին, հայերը այնուամենայնիւ բողոք արտայայտեցին, և այդ ժամանակ նրանց վրայ գործադրեցին այն սարսափելի զտանութիւնները, որոնք դեռ չեն մոռացուած: Այդ կոտորածների մէջ, որ արինով ծածկուեցին փոքր Ասիայի քաղաքների և նոյն իսկ սուլթանի մայրաքաղաքի փողոցները, բնորոշ է Կ. Պոլսի բոլոր զեսպանների կողմից հաստատուած վաստը, թէ կոտորածները տեղի են ունեցել բարձրագոյն հրամանով: Կ. Պոլսում դազանութիւններ կատարող խմբերի մէջ կային ոստիկանական օֆիցերներ և իլդիզ Բէնսկի գործակալներ: Կոտորածից դեռ երեք օր առաջ Կ. Պոլսի ոստիկանութիւնը հաւաքում էր ասպազայ Գմարդասպաններին: Դեսպանատնում ծառայող թիւրքերը վկայել են, որ նրանց փող են առաջարկել, որպէսզի ուժեղացնեն շորերը փողած ոստիկան-

*) Mourad Bey: „la Force et faiblesse de la Turquie“ p. 50

ների շարքերը *): Վերջիններս օգնութեան են հասել և կանոնադրութի օֆիցերները: Քրիստոնեաներին ուժաթափ անելու համար Արդուլ Համիդը մի ուրիշ միջոցի էլ դիմեց, այսինքն աշխատեց արհեստական կերպով ուժեղացնել մահմեդական տարրը քրիստոնէական բնակավայրերում: Նոյն իսկ մի յատուկ դրամադուխ յատկացւեց, որպէսզի նպաստեն Ռումէիայից և մանաւանդ Բուլղարիայից դադլթող թիւրքերին: Գաղթական թիւրքերը հողեր էին ստանում քրիստոնէական գաւառներում: Բայց դրանից՝ նոյնաման արտօնութիւններ ստացան և քիւրդերը: Այդ աւագակային ցեղին գտնելու և կարգաւորելու պատրուակով սուլթանը կաղմակերպեց քիւրդական կաւաւերիս—«Համիդիէ», որ այնքան ցաւալի դեր է կատարել փոքր Ասիայի կոտորածների ժամանակ: Մակեդոնիայում քիւրդերի դերը կատարում են ալբանացիները...

Թիւրք աղդարնակութեան վրայ աղդելու սովորական միջոցներից մէկն էլ կրօնական միաստիներն են, որ սուլթան Համիդն ուղարկում է մշ միայն Թիւրքիայի բոլոր ծայրերը, այլ և ամբողջ մահմեդական աշխարհին: Այդ միաստիներների քարոզը ոչ միայն կրօնական, այլ և քաղաքական բնուրուութիւն ունի... այգալիսի միջոցը բարձրացնում է սուլթանի պրեստիժը Թիւրք ամբոյի աշքում: Նա հաւատում է իր խալիֆի հզօրութեանը:

Մեզ մնում է ընդոռնել Արդուլ Համիդի քաղաքականութիւնը եւրոպական պետութիւնների վերաբերմամբ: Լա իմանալով, թէ եւրոպայում հասարակական կարծիքը ուրան մեծ ազդեցութիւն ունի պետութիւնների քաղաքականութեան վրայ, սուլթանը աշխատել է իր կողմը գրաւել կամ գոնէ լռեցնել աւել մամուլի ձայնը Թիւրքական հարցերի վերաբերմամբ: Յայտնի

է, որ հայկական անկարգութիւնների ժամանակ Փրանսիայում 17 լրագրի նպաստ էին ստանում թիւրք կառավարութիւնից*): Սակայն այդ միջոցով միշտ չի յաջողում թաղցնել զործերի իսկական դրութիւնը...

Համիդի քաղաքականութիւնը համառօտակի ընդոռնելուց յետոյ պ. Ինսարով նորից վերադառնում է բարենորոգումների խնդրին և այս անգամ կանգ է առնում նրա վերջին ֆազիսի վրայ, այսինքն 1878 թուականից մինչև օրերս: Նա զեղեցիկ կերպով ցոյց է տալիս, որ այդ ֆազիսում էլ Թիւրքական բոլոր բարենորոգումները մնացել են միայն թղթի վրայ՝ իբրև մեռած տառ, որ եւրոպան անհրաժեշտ սպիւպողական միջոցներ ձեռք չէ առել իր առաջարկութիւնները կատարել տալու համար, որ նոյնիսկ բարենորոգումների էութիւնը շատ երկմիտ բնուրութիւն է ունեցել և Թիւրքական կամայականութեանը շատ մեծ ասպարէզ է թողել: Թիւրքիան միշտ էլ համաձայնել է եւրոպայի առաջադրած բարենորոգումներին, բայց միշտ էլ անկատար է թողել նրանց: Զատ իրաւացի է եւրոպական պետութիւնների քննիչ պատգամաւորների եզրակացութիւնը, թէ «Թիւրքիայում զեղեցիկ օրէնքներ շատ կան, բայց նրանք երբէք չեն իրագործուում...»

Ինչն է արդեօք մակեդոնական շարժման շարժառիթն ու հիմունքը:

—Նոյն գործօնները, սրտիք աստիակ տարիներ առաջ ոտքի կանգնեցրին սերբերին, յոյներին, բուլղարներին: Նոյն պատճառները, սրտիք ծնունդ են տուել և հայկական շարժմանը:

Հեղինակը հակիրճ ձևով յիշում է մակեդոնական շարժման գանաղան ելակէշները, նրա զեղաւարների գործունէութիւնը, յոյների և սլաւոնական տարբեր ազգերի վերաբերմունքը դէպի

*) Ministère des affaires étrangères. 1897.

*) Victor Berard: „La Turquie et le Sultan“.

այդ շարժումը, թիւրք կառավարութեան ձեռք տուած զաղանային միջոցները, վերջին արինապահդ անցքերը, և այդ բոլորից յետոյ եղբայրական է յօդուածը այսպիսի խօսքերով.

— «Այժմ բոլորն էլ պահանջում են, որ Մակեդոնիայում «մնայուն կարգ» հաստատուի «լուրջ բարենորոգումներին» միջոցով: Բայց մեր տեսութիւնից երևաց, որ լուրջ կարելի է համարել միայն այն բարենորոգումները, որոնք կ'առաջացնեն կազմակերպուած եւրոպական հակադուշին Թիւրքիայի ներքին գործերի վրայ և քրիստոնեաների համար լիովին մատչելի կը դարձնեն իշխանութիւնը:»

«Вѣст. Европы» այս միևնոյն համարում բաւական ուշադրութեամբ է նաև ն. Բեազանցիի յօդուածը՝ «Հոգեւոր պարոնգները եւ նրանց ներկայ դրութիւնը» վերնագրով:

Հեղինակը բաւական մանրամասն քննում է հոգեւոր ճեմարանները և սեմինարիաները ուսումնական և վարչական կազմը, մատնանիշ է անում նրա պակասաւոր կողմերը և առաջարկում է մի շարք միջոցներ, որոնք նրա կարծիքով կարող են թերութիւնները վերացնել:

«Миръ Божій», մայիս. — «Ինտելիգենցիան եւ ժողովուրդը:» Նոր չէ այդ հարցը: Տարիներ, տասնեակ տարիներ է, որ այս կամ այն ձևով քննում է, թէ ինտելիգենցիան որպիսի պարտականութիւններ ունի ժողովրդի վերաբերմամբ, թէ նա ինչ դեր է կատարում և թէ ինչ պէտք է անէ իր կոչման բարձրութեան վրայ կանգնելու համար: Արտայայտուած կարծիքներէր շատերն են մեղադրանք կադրացի ինտելիգենցիայի հասցէին, շատերն են դատաւարտել նրան: Ահա մի այդպիսի մեղադրական գրութիւն է Սմիլեազիւնի «Ինտելիգենցիա և ժողովուրդ» անունով աշխատութիւնը, որ լոյս է տեսել մօտ ժամանակներս:

Հաճապանց իրիտ է պ. Սմիլեազիւնի դատավճիռը ինտելիգենցիայի վե-

րաբերմամբ: Նրա կարծիքով ինտելիգենցիայի յանցանքն է, որ «ժողովուրդը դուրս է եկել իր նահապետական կեանքից, կորցրել է իր կրօնական ըզգացմունքը, փշացել է բարոյապէս, կոպտացել է», որ «ժողովրդական դրաբոցները բթացնում են իրանց աշակերտներին, ճնշում են տաղանդ ունեցողներին, սովորեցնում են անկարգապահութիւն և անհանգանդութիւն» և այլն և այլն:

Ահա այդ անծայր մեղադրանքների դէմ բուռն բողոք է բարձրացնում յիշեալ ամսագրի քննադատ Ա. Բ.

— Ամեն ինչ վատ է, ասում է նա, և ամեն ինչ պէտք է ոչնչացնել, այդ շատ հեշտ է ասել, բայց ինչով փոխարինել ոչնչացրածը: Դրա համար հարկաւոր է ունենալ զոնէ մի փոքրիկ, բայց զբաղւած ծրագիր, որը գոնէ ընդհանուր կերպով բնորոշէր այն բարեկարգութեան հիմունքները, որ երևում է յետադիմական քննադատի երևակայութիւնը: Դպրոցը վատ է, ծրագիրը նեղ է, մեռած, անհամապատասխան կեանքի պահանջներին: Ինտելիգենցիան վաղուց արդէն ցոյց է տուել այդ դժբութիւնները և առաջարկել է հիմնական բարենորոգումներ... Գիւղական տնտեսութիւնն ընկնում է, գիւղական կեանքի պայմաններն անտանելի են, և ինտելիգենցիան վաղուց արդէն մատնանիշ է արել այդ փաստը, վիճակագրական տեղեկութիւններով հաստատել է անկումը, գեղարուեստական երկերով պատկերացրել է ժամանակակից գիւղին իր ցաւալի երկոյթներով: Այդ բոլորի հետ միասին նա ցոյց է տուել մի շարք միջոցներ շարքին ուղղելու համար... Իսկ յետադիմական քննադատներն աշխատում են ոչնչացնել այդ ամենը, առանց մի այլ բան տալու փոխարէնը:»

Միանգամայն իրաւացի դիտողութիւն: Ամեն ազգերի մէջ էլ՝ իհարկէ՝ ինտելիգենցիան ունի իր թերութիւններն ու առաւելութիւնները: Այդ թերութիւնները քննադատելը գեղեցիկ զործ է, սակայն նա չափազանցու-

թեան ու միակողմանիութեան չը պէտք է հասնի, գործնական կեանքից, գրականութիւնից չը պէտք է հեռանայ: Բաւական չէ ասել, թէ ինտելիգենցիան թոյլ է, ընկած է, անպէտք է, այլ անհրաժեշտ է որոնել այդ երևոյթի պատճառները և դրական միջոցներ առաջարկել դրանց դէմ, անհրաժեշտ է միշտ յիշել, որ ինտելիգենցիան այն երկրի, այն միջավայրի արտադրութիւնն է, որտեղ սնուի և մեծացել է: Նրա լիբերալիզմն ուղղելու համար հարկաւոր է այդ միջավայրի պայմանները փոխել, նորն ստեղծել: Հսկառակ գէպը ուժ յարձակումներն ու մեղադրանքները կը մնան միայն դատարկ խօսք՝ առանց դրական հետեանքի:

«ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ», յունիս.— «Յիսնամեայ յորեղեան հանդէս հաստատրեան վսնասան Միխրարեանց որ Այսըն:» Այս խորագրի տակ գետնուած է մի թղթակցութիւն, որը մանրամասնօրէն նկարագրում է այն շքեղ հանդէսը, որ տեղի է ունեցել մայիսի 3-ին Փոքր-Ասիայի Այտըն քաղաքում՝ Միլիթարեան վանատան յիւնամեայ գոյութեան յորեղեանի տօնութով:

Թղթակիցը նախ համառոտակի պատմում է այդ վանատան անցեալը, զանազան միաբաններ (ղետեղուած են դրանցից 6-ի պատկերները) գործադրած ջանքերը և ապա անցնում է բուն հանդիսի նկարագրութեան:

Միայն ձմիւռնիայից եկած հայ և

օտարազգի հիւրերի թիւը հասել է մօտ 600, չը հաշուով տեղական հանդիսականներին: Հիւրերի թիւում եղել են ի միջի այլոց ձմիւռնիայի կաթհայոց առաջնորդ Գ. Հ. Ծ. Վ. Աւդերեան, ձմիւռն. աստրիական փոխհիւպատ. M. Haller, իտալական փոխհիւպատ. M. F. Mazzini, Ֆրանս. փոխհիւպատ. ներկայացուցիչը, անգլիական փոխհիւպատոսը, աստրիական վաճառականութեան գործակատար Վանդերգէ, մուսսուսարիֆ փաշայի ներկայացուցիչը, Այտընի քաղաքապետը, ոստիկանապետը և ուրիշ բարձրաստիճան անձինք:

Տեղի է ունեցել հանդիսաւոր պատարագ, ճաշկերոյթ և զբօսանք:

Նոյնաման մի ուրիշ շքեղ հանդէս տեղի է ունեցել Կ.-Պոլսում՝ Միլիթարեան միաբան և յայտնի բանասէր Հ. եղիշէ Ծ. Վ. Գաֆրանեանի յիսնամեայ գործունեութեան յորեղեանի տօնութով մայիսի 4-ին: Պատարագին և հանդիսին ներկայ են եղել Կ.-Պոլսի բոլոր Միլիթարեանները, Օրմանեան պատրիարքի ներկայացուցիչը, Աստրիայի դեսպանատան ներկայացուցիչը, բազմաթիւ ուսուցիչներ, զրադէտներ, խմբագիրներ և յարգողների խումբ բազմութիւն: Բոլորն էլ դրուատել են յորեղեանի քրտնաշխատ ջանքերն ու մեծ ծառայութիւնը հայոց գրականութեանը:

Ստացուած են նաև բազմաթիւ շնորհաւորական նամակներ, հեռագիրներ և նուէրներ:

Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն Ն Ե Ր

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆ. Ստ. Զ.—Ձեր թարգմանութիւնը վերադարձրել ենք

Ձեր յանձնարարութեամբ մեզ դիմած մի պարոնի ծնօքով:

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ. Յ. Ար.— Աշնանը:

ԺԸՆԵՒ. Մ. Յ.— Ստացել ենք:

Վ Ր Ի Պ Ա Կ

Անցեալ համարում «Ջէյթունի ներկայէն եւ անցեալէն»
դրքի յայտարարութեան ներքեւում դրած հասցէն սխալ է. պէտք
է լինի.

Դիմել՝ Թիֆլիս, «Դուտտենքերզ» գրաւաճառանոցին:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

«ՄՈՒՐՃԻ» այս տարուայ բաժանորդագիւնն է

№ 4-ից սկսած

Ռուսաստանում 7 ռուբլի

Արտասահմանում 8 ռուբլի

Բուլղարիայում և Ռումանիայում «Մուրճի» գործակալն է պ.
Գառնիկ Մազմանեան.

Հասցէն՝ Roustchouk (Bulgarie) Karnig Mazmanian.

ԱՄԲՈՂՁ 1902 Թ. „ՄՈՒՐՃ“

ԱՐԺԷ 8 ՐՈՒԲԼԻ,

Ճանապարհածախսով 9 ռ.

Ն Ո Յ Ն

ԹԻԱԿԱՆԻ „ՄՈՒՐՃԻ“

Ղատ-ղատ համարների գիւնն է (բացի № 4) 50 կոպ.,
ճանապարհածախսով՝ 65 կոպ.

ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳԻ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

Վաճառում են

ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆՑԻ՝ ԺՈՂՈՎՐԴԻ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ. — 20 կոպ.

» » ՀԻՆ ՑԱԻ. — 30 »

» » ԱՅՑ ԹԻՒՐԲԱՑ-ՀԱՅԱՍՏԱՆԻ (սպառ.) — — —

» »

Կ. ԿՈՒՍԻԿԵԱՆԻ } ՄԱՅՐԵՆԻ ԽՕՍԲ. — 70 »

Բացում է ըստանորդագրութիւն

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆՅԻ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Մեծ դիրքով մօտ 350 էջ

Չքեզ թղթի վրայ, հեղինակի պատկերով և

Փառակազմ 10 ռ.

Լաւ թղթի վրայ. . . 3 ռ.

Բաժանորդագրութիւնը կը փակուի յունիսին, և դրբերը կը սը-
պուեն բաժանորդներին թւով:

Թրփիխում դիմել—Իշխանուհի Մ. Թումանեանցին (Барятин., 8)
և Փ. Վարդազարեանին (Вельямин., 24)

Բազու՝ ինժեներ Միխիթար Տէր-Անդրէասեանին (Т-во Андре-
никъ) և Արամ Նազարէթեանին (К-ра Шагиданова)

1903 թ. „ՀԱՆԴԵՍ ԱՄՍՈՐԵԱՅ“ 1903 թ.

Ժէ. տարի

ԲԱՐՈՅԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ, ԱՐՈՒԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԴԻՆԸ

Տարեկան 10 ֆր. ոսկի—4 ռ.:

Վեցամսեայ 6 » » —2 » :

Մէկ թիւ կ'արժէ 1 ֆր.—50 կոպ.:

Հասցէն՝ VIENNE (Autrich) VII/2 Mechitharistengasse 4.
Pedaction de la Revue „HANDESS“

ԲԱՅՈՒԱՆ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„Բ Ա Զ Մ Ա Վ Է Պ“^Ի

1903 տարւոյ

ՈՒՂՂՈՒԹԻՒՆ.—«Բաղմալէսը օրէ օր կը ձգտի ըլլալ զուտ ժողովրդական-գրական թերթ մը. իր նպատակն է ազգային գրականութիւնը ժողովրդականացնել:

Պարսկահայք և Ռուսահայք կրնան գիմել մեր Ռուսաստանի գործակալներուն.

ԹԻՖԼԻՍ.—M. Kaloust Kaloustian, TIFLIS.

ՌՈՍՏՈՎ.—M. Michel de Roman Timindjian, ROSTOFF.

(Sur le Don)

ԲԱԳՈՒ.—M. Grégoire Ter-Ovanessian, BAKOU.

Մեր հասցէն է՝ „Pazmaveb“ (St.-Lazare), VENISE (Italie).

ՊԱՅՄԱՆՆԵՐ.—Ա. Ուղղակի մեզ գիտող բաժանորդները Բաժնեգինը Նանխիկ պէտք են վճարեն. հակառակ պարագային չեն կրնար թերթս ստանալ:

Բ.—Ոչ ապահովագրեալ թերթ մը բաժանորդը չը ստանալու՝ կրկին յղելու պարտական չենք:

Գ.—Ապահովեալ թերթը պարտական ենք անպատճառ բաժանորդին հասցնել:

1903 թ. „Ա Ն Ա Հ Ի Տ“ V-րդ տարի

ԸԶԴՍԵՐՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒՆՍԵԱԿԱՆ ԸՄՍԸԹԵՐԹ

Տարեկան բաժնեգինն է 10 ֆրանկ ֆրանսայի և 12 ֆր. օտար երկիրներու համար, 5 ռուբլի Ռուսիոյ, և 2 տոլար՝ Ամերիկայի համար:—Բաժանորդագինը պէտք է ԿԱՆԽԻԿ վճարել:

Հասցէ՝ A. Tchobanian, 17 Rue La Bruyère, Paris.

ԲԱՅՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ԱՌՈՂՋԱՊԱՀԻԿ ԹԵՐԹ“

ԵՐԿՀԱՐԱԹԵԱՅ ԱԿԱՏԿԵՐԱՂԱՐՈՂ ՀԱՆՈՒՆԻ

1903-4 ԹԻՒՎԱՆԻ ՀԱՄԱՐ

Իբրև յաւելուած, բաժանորդները կը ստանան ծրիապէս
4-ից մինչև 6 պատկերազարդ գրքոյկներ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆ Է 2 ր. 50 կ. (ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ—10 ֆրանկ)
Կարելի է վճարել եւ մաս-մաս, սկզբում 1 ր. 50 կ. յունուարին—1ր.:
Հրատարակութիւնը սկսուելու է սեպտեմբերին: Տարին սեպ-
տեմբերից—սեպտեմբեր է:

Աշխատակցելու են շատ հայ բժիշկներ թէ Ռուսաստանի և թէ
Թիւրքիայի ու Պարսկաստանի:

Բաժանորդագրութեան համար թէ Թիֆլիսի մէջ և թէ գաւառնե-
րից պէտք է գիմել կամ Թերթիս խմբադրատունը (Сергиевская
ул. д. № 12), կամ «Գուտտենբերգ» գրաւաճառանոցը (Книжная
торговля „Гуттенберг“):

Բազում կարելի է գրուել «Պրոմէթէոս» գրաւաճ. (Товарище-
ство „Прометеусь“), Պարսկաստանում գիմել Դ-ր Փաշայեանին
(Թաւրիզ):

Մեր հասցէն Тифлисъ, Редакция „Арогджапайкъ Тертъ.“
Արտասահմանից. Tiflis. Redaction „Arogdjapahik Tert“.
Խմբ.-Հրատ. բժշ. Վ. Արծրունի

Լ յ յ ա է տ ե ս ե լ

Ձ է Յ Թ Ո Ն Ն Յ Ո Ն

„ԶԷՅԹՈՒՆԻ ԱՆՅԵԱԼԵՆ ԵՒ ՆԵՐԿԱՅԵՆ“

Բ. մասն

Գինը 1 րուբլի Ռուսաստանի համար:
Դիմել՝ Թիֆլիս, «Գուտտենբերգ» գրաւաճառանոցին:

Տպագրում են

Ե. Թ Ո Փ Չ Ե Ա Ն Ի

Խմբագրութեամբ

„Լ Ո Յ Ս“

սեղանի (1 ր.), պատի (50 կ.), և ծոցի (20 կ.) պատկերազարդ օրացույցներ 1904 թ., վիճակագրական, գիտական և պետարևեստական հարուստ յաւելումներով:

Աշխատակիցներն են՝ Ահարոնեան Ա., Առաքելեան Հ., բժ. Արծրունի Վ., Ա-Դօ, Բաշինջաղեան Դ., բժ. Բուդուղեան Ա., Թումանեան Յ., Իսահակեան Ա. Լէօ, Ծատուրեան Ա., ատամնարոյժ Կաճկաճեան, Ղազարեան Գ., Մալխասեան Ստ., Մանուէլեան Լևոն, ատամնարոյժ Մակարեան Պ., Մեծատուրեան Գ., Յո, հաննիսեան Տ., նիկողոսեան ներսէս. քահ., Զիրվանզադէ, Չոբանեան Ա., Պոսեան Պ., Զամբաղեան Վ., Սերովբեան Բ., Տէր-Մինասեան Արշ. քահ., Տէր-Միբաքեան Յով., բժ. Օհանեան Քր., Փափաղեան Վ., Դ-ը Փաշայեան, Ե. Փրանգեան և այլք:

«Լոյսն» իր չքեղ արտաքինով (բաղմամբիւ պատկերներ) և բաղմակողմանի բովանդակութեամբ լինելու է ամենմի ընթերցողի խորհրդատու ընկերը, ամեն մի ընտանիքի սեղանի գեղեցիկ զարդը:

Այժմեանից գումարով դնողներին ձեռնառու զիջումն կը լինի:

Սեղանի օրացույցում կը տպագրուեն նաև յայտարարութիւններ բոլոր լեզուներով. վճարը՝ երեսը ($6 \times 4 = 24$ քառ. վերջ.)—25 ր., $\frac{1}{2}$ եր.—15 ր., $\frac{1}{4}$ եր.—8 ր. $\frac{1}{8}$ եր.—5 ր.:

Միայն մի հասցէ (բժիշկների, փաստաբանների) տպելու համար—1 ր.

Դիմել՝

Тифлисъ, Троицкая, № 11. Е. Топчяну.

Արտասահմանից՝ Tiflis. Troïzkaia, № 11. E. Toptschian. կամ «Մուրճի» խմբագրատուն, Ե. Թոփչեանին:

Յայտարարութիւններ ընդունում են նաև պ. Ս. Մարիկեանցի մօտ.—Тифлисъ, Головинскій пр., Табачн. магаз. „Гаванна“.

ՇՍՐՈՒՆԱԿԻՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„Մ Ձ Ա Կ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

(31-րդ տարի)

ՆԵՐԿԱՅ 1903 ԹԻԱԿԱՆԻՆ

«Մշակը» հրատարակուելու է նոյն պրոգրամով եւ նոյն ուղղութեամբ

Ամեն օր քացի տօներին յաջորդող օրերից:

Բաժանորդագինը. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասնամեկ և տասն ամսուանը՝ 9 ռ., ինն և ութ ամսուանը՝ 8 ռ., եօթն ամսուանը՝ 7 ռ., վեց ամսուանը՝ 6 ռ., հինգ ամսուանը՝ 5 ռ., չորս ամսուանը՝ 4 ռ., երեք ամսուանը՝ 3 ռ., երկու ամսուանը՝ 2 ռ. և մի ամսուանը՝ 1 ռուբլի:

Արտասահմանեան քաժանորդագրութիւն. Ամերիկայի ժանորդները պէտք է վճարեն տարեկան 7 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի:

«Մշակին» գրուել կարելի է Խմբագրատանը (Բազմապա և Բարոնսկայա փողոցների անկիւն), իսկ Բազում—ն. Դաւթեանի մօտ:

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «Մշակին» գրուելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս՝ պէտք է գիմել հետեւեալ հասցէով. ТИФ-ЛИСТЪ, Редакция «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւններն ընդունուում են բոլոր լեզուներով:

Ապստիկ քաժանորդագրութիւն չէ ընդունուում:

Ժամանակաւոր պատասխանատու-խմբագիր՝

Յ. ՍՊԵՆԴԻԱՐԵԱՆ

Հրատարակիչ՝ Կ. Կրասիկինկեան

ների հետ. — Պատահական գրականություններ եւ մամուլի
 յատուկ մշտներ. — Ուսուցչութիւնը կատարած գրական
 պորձունէութեան հետ. — Կրթական ֆոնդ եւ հոնորար. —
 Մեր թեմ. դպրոցների տնտեսականը. — Կոր-հախիջեա-
 նի թեմ. դպրոցի հարաք. մի որոշումը. — Կերպիս. դպր-
 քիւղժէն. — Կամայական բեմի մի նոր արտայայտու-
 թիւն մեր թեմ. դպրոցներում. — Կերպիս. դպր. տեսչա-
 կան հարցը, Լ. Ս.

Աշակերտին ծեծելու համար պատժուած հայ
 ուսուցիչ. — Ժողովրդական ծրի շրջիկ գրադարան-
 ներ. — Սոսկաւական ուս. աւարտածներին տարր ուս.
 ուսուցչի վկայական յատկացնելը. — Բաթումի առանձին
 շրջան. — Մարմնական պատժի ամենամանր տեսակնե-
 րի վերացումը. — Կաղզուանի ոճիրը. — Թիֆլիսում ներ-
 քին հիւանդութիւնների քաղաքային հիւսնդանոց բա-
 նալու հարցը. — Գաղաքային ուսումնարանների ուսու-
 ցիչների համաժողով. — Մասնաւոր ուսումնարանների
 ծրագրի հարցը. — Հայ-վրացական արձանադրութիւննե-
 րի հրատարակութեան մասնաժողովը. — Հրէական հողա-
 տիրութիւնը սահմանափակող նոր օրէնք. — Աղնական
 կապիտանն ուսումնարաններ 136

19. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. — Ձեմբերլենի նոր իմպերալիստա-
 կան ծրագիրը. — Անդլիայի սահմանադրական ողին. —
 Պարլամենտական բնորութիւնները Պերմանիայում. —
 Հակամաշտտական ցոյցեր Խորվաթիայում եւ հակա-աւ-
 ստրիական ցոյցեր Իտալիայում. — Բուլղարիայի եւ Թիւր-
 քիայի յարաբերութիւնները. — Անրբիական յեղափոխու-
 թիւնը. — Երկրաշարժը Թիւրքաց Հայաստանում, Լ. Ս. 150

20. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ 160

21. ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ. 166

22. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ 167

23. ՅԱԻԵԼՈՒԱԾ, Ա. Ըօլլէսի՝ Հրաշալի դար, Թարգմ.

Սա. Լիսիցեանի 97—128.

ՇԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ Է

1903

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՍՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՄՍԱԳՐԻ

(Նոր չրջան, III-րդ տարի)

Խմբագրութեան անդամների եւ աշխատակիցների նոյն կազմով:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆ

Թուստեսանում	տարեկան	10 րուր.	Արսասանումում	12 րուր.
"	կէս տարին	6 "	"	7 "
"	1 ամսուան	1 "	"	1 " 20 կ.

«Մուրճ» ամսագրին կարելի է բաժանորդ գրուել.

Թիֆլիսում—խմբագրատանը (ձախձախձեան փողոց, տ. № 16):

Պայտրեբեան այլ ձեռերից պէտք է գիմել՝ Тифлисъ, въ редакцію
журнала „МУРЧЪ“.

Արսասանումից՝ Tiflis, Rédaction de la revue „MOURTCH“.

Բայի տղ, «Մուրճին» կարելի է գրուել նաեւ՝

Թիֆլիսում—«Դուտտեներգ» զրախձառանցում:

Ծանօթութիւն. Թուսաստանի բաժանորդներին նրանք, որոնք դժուարա-
նում են տարեկան բաժանորդակինք (10 ա.) վճարել միանուագ՝ կարող են տալ
մ ա ս - մ ա ս. սկզբում 5 ա., մայիսի 1-ին 3 ա. և յուլիսի 1-ին 2 ա.:

Ոչ-Թիֆլիսի բաժանորդները հասցէն փոխելու համար պէտք է ուղար-
կեն 40 կոպ.

Ձեռագիրները և նամակները պէտք է ուղղել խմբագրու-
թեան, ՂԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆԻ անունով: